ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

*ԹԵՄԱ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇԱՐԺԱՌԻԹԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ*

*ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՆԱՆՅԱՆ ԱՆՆԱ*

*ՂԵԿԱՎԱՐ ՄԻՐԱԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ*

*ՎԱՆԱՁՈՐ 2023*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ………………………………………………………………….……..3
2. ԳԼՈՒԽ 1. ՈւՍՈՒՄՆԱԿԱՆ ՇԱՐԺԱՌԻԹԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՄԱՍ…………………………………………………………………5
1.1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇԱՐԺԱՌԻԹԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ……………………………………………………5
1.2. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇԱՐԺԱՌԻԹԻ ՁևԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ…………………………….….9
3. ԳԼՈՒԽ 2. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՈՏ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇԱՐԺԱՌԻԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ՀՆԱՐՆԵՐԸ………………………...…..13
4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ………………………………………….………………17
5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…………………………………………………………19
6. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ………………………………………………...21

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հասարակության մեջ արագորեն զարգանում են գիտություններն ու նոր տեխնոլոգիաները: Եվ արագ զարգացող և փոփոխվող աշխարհում չափազանց կարևոր է կրթության շարունակական բնույթը, որը դառնում է անհրաժեշտություն: Եվ դպրոցի գլխավոր նպատակն է դառնում երեխաներին ոչ թե փոխանցել լոկ կոնկրետ գիտելիքներ, այլ սովորեցնել նրանց ինքնուրույն գտնել իրենց անհրաժեշտ գիտելիքը և օգտագործել այն: Այս պայմաններում ժամանակակից հանրակրթական դպրոցի հիմնական խնդիրն ինտեգրման գործընթացի կազմակերպումն է, սովորողների կողմից նոր գիտելիքների յուրացումն ու ներառումը երեխայի կենսափորձի մեջ` սովորել սովորելու կարողունակության ձևավորման հիման վրա: Հանրակրթական դպրոցի առաջնահերթ խնդիրից է` դպրոցականների մոտ կրթական նպատակներ դնելու և դրանց հասնելու կարողության ձևավորումն ու զարգացումն է, սեփական ձեռքբերումների գնահատումը: Եվ այստեղ կարևոր դեր է խաղում ուսումնական շարժառիթի ձևավորումն ու զարգացումը: Նշանավոր մանկավարժ Ա.Վ.Սուխոմլինսկին գրել է. «Դաստիարակ-ուսուցչի խնդիրն այն է, որ յուրաքանչյուր աշակերտի գիտակցության մեջ չմարի գիտելիքների ծարավի հուրը: Այդ հուրը լուսավորում է մարդուն…»: [ 1, էջ 45]

Շարժառիթը խիստ կարևոր է արդյունավետ աշխատելու համար: Այն մեզ ստիպում է գործեր ձեռնարկել, ներքին ցանկություն է առաջացնում կատարելու այնպիսի բաներ, որոնք կարևոր են նպատակներին հասնելու համար : Շարժառիթը կարևոր գործոն է թիմային աշխատանքում, ուսման, աշխատանքի մեջ հաջողության հասնելու համար:

**Սույն թեման արդիական է,** քանի որ այս պահին նորովի աճում է հետաքրքրությունը շարժառիթի ձևավորման առանձնահատկությունների նկատմամբ, որը հանդիսանում է մարդու վարքի, մասնավորապես` ուսուցման շարժիչ ուժը: Անհրաժեշտ է մանուկ հասակից երեխաների մոտ սերմանել սեր ուսման նկատմամբ, ձևավորել ուսւոմնական շարժառիթ:

**Աշխատանքի հիմնական նպատակն է**` ուսումնասիրել կրտսեր դպրոցականների ուսումնական գործընթացի առանձնահատկությունները և մանկավարժական պայմանները, որոնք կնպաստեն ուսումնական շարժառիթի ձևավորմանը:

**Աշխատանքից բխող խնդիրները՝**

- բացահայտել շարժառիթի էությունը,
- նկարագրել կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները,
- վերլուծել կրտսեր դպրոցականների ուսումնական շարժառիթի հիմքում ընկած դրդապատճառները,
- ներկայացնել ուսումնական շարժառիթի ձևավորման արդյունավետ հնարներ:

Հետազոտական աշխատանքի **տեսական նշանակությունն** այն է, որ հետազոտական տվյալների մշակմամբ ստացված արդյունքները հնարավորություն են ընձեռնում ընդլայնելու գիտելիքները կրտսեր դպրոցականների ուսումնական գործունեության շարժառիթների ձևավորման վերաբերյալ:

Սույն աշխատանքի **գործնական նշանակությունն** այն է, որ արդյունքները կարող են օգտագործվել դասվարների, ծնողների կողմից՝ նպաստելով համարժեք ուսումնական շարժառիթների ձևավորմանը:

Հետազոտության համար հիմք են ծառայել համապատասխան տեսական գրականության ուսումնասիրումը, համեմատական վերլուծությունն, առաջավոր փորձի ուսումնասիրումն ու ընդհանրացումը, ինչպես նաև սեփական դիտարկումներն ու փորձը:

**Սույն աշխատանքը կառուցված է՝** ներածությունից, երկու գլխից, երկու ենթագլխից, հետազոտությունից, եզրակացությունից, գրականության ցանկից:

Աշխատանքի **ծավալը՝ 21** տպագիր էջ:

# ԳԼՈՒԽ 1.
# ՈւՍՈՒՄՆԱԿԱՆ ՇԱՐԺԱՌԻԹԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՄԱՍ

## 1.1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇԱՐԺԱՌԻԹԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ



**Շարժառիթ** կամ **դրդապատճառ, մոտիվացիա**՝ այն է, ինչը մղում է մարդկանց դեպի նպատակը, խթանում է նրանց առաջ գնալուն, այսինքն շարժառիթն ինչ-որ բանի հասնելու ցանկությունն է:

**Ուսումնական շարժառիթն** ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչներից է և այն հիմնական գործոնը, որը խթանում է աշակերտին և նրան մղում որոշակի արարքների, վարքի ձևերի և գործունեության: Ուսումնական շարժառիթին անդրադարձել են շատ մանկավարժներ, հոգեբաններ, այդ թվում՝ Ա. Լեոնտևը, Ա. Մարկովան, Լ. Բոժովիչը, Վ.Սուխոմլինսկին, Ե. Իլյինը, Ի. Պոդլասի և ուրիշներ: Հարկ է նշել, որ մանկավարժական հոգեբանության մեջ չկա «ուսումնական շարժառիթ » հասկացության ընդգրկուն և միանշանակ սահմանում, որի պատճառը թերևս « շարժառիթ », «մոտիվացիա» կամ «դրդապատճառ» հասկացությունների ոչ միանշանակ մեկնաբանություններն են հոգեբանական տարբեր ուղղություններում: Այսպես, հայտնի հոգեբան Ա.Կ. Մարկովան դրդապատճառը սահմանում է որպես առարկայի տարբեր կողմերի նկատմամբ սովորողի ուղղվածություն [ 3, էջ 11], իսկ անվանի հոգեբան, մանկավարժ Ա.Ն. Լեոնտևի կարծիքով առանց շարժառիթի գործունեություն չի լինում, և դրդապատճառները ձևավորվում են այն ժամանակ, երբ մարդու պահանջմունքները հանդիպում են օբյեկտի հետ, որի միջոցով մարդը կարող է բավարարել այդ պահանջմունքը, այսինքն, դրդապատճառը առարկայացված պահանջմունք է, որի ձևավորման հետ միասին ձևավորվում է նաև նպատակ: Եթե նպատակը հիմնականում գիտակցված է, դրդապատճառը պարտադիր չէ, որ լինի գիտակցված, և այս դեպքում լինում է այնպես, որ նպատակին հասնելուց հետո մարդը չի գտնում բավարարվածություն հասած նպատակից: Ըստ Լեոնտևի դրդապատճառը կատարում է երկու ֆունստիկցիա՝ *դրդող* և *իմաստավորող*: Եթե դրդապատճառը այդ երկու ֆունկցիաներն էլ կատարում է, մարդու գործունեությունն ավելի հարուստ է իր կառուցվածքով և բովանդակությամբ: Նա առաջարկեց

անձնային իմաստի գաղափարը՝ դրդապատճառների հարաբերակցությունը նպատակին՝ երբ մարդը կարողանում է իսատավորել իր նպատակի խորքում ընկած իմաստը: [ 2, էջ 13-20]

Ուսումնական շարժառիթը՝ լինելով գործունեության բարդ ձևի առանցքային բաղադրիչ, կապված է այն բոլոր գործոնների, պայմանների ու բաղադրիչների հետ, որոնք ուղղակի կամ անուղղակի առնչվում են ուսումնական գործունեությանը: Շարժառիթը ցույց է տալիս մարդու ներքին հոգեկան վիճակը, որն անմիջականորեն կապված է առարկայի օբյեկտիվ բնութագրերի հետ, ինչին էլ ուղղված է ակտիվությունը:

Ինչպես անձի գործունեության, այնպես էլ ուսումնական շարժառիթները կարող են դասակարգվել **ըստ տարբեր չափանիշների:**

Առանձնացնում են **ուսումնական շարժառիթի 5 մակարդակ**՝

1. ***բարձր,*** պատասխանատու, ակտիվ վերաբերմունք ուսման նկատմամբ, սովորողները հստակորեն կատարում են ուսուցչի բոլոր հրահանգները, պարտաճանաչ են և պատասխանատու;
2. ***լավ,*** աշակերտների մոտ կան ճանաչողական շարժառիթներ և գիտելիքների ձեռքբերման մեթոդների նկատմամբ հետաքրքրություն;
3. ***դրական,*** երբ աշակերտը դրսևորում է դրական վարք, հարգալից վերաբերմունք դասընկերների,դպրոցի նկատմամբ, սակայն կրթական գործընթացը նրանց քիչ է գրավում;
4. ***ցածր*** , կան նաև ապամոտիվացված աշակերտներ, որոնց մոտ արտաքին որոշ գործոններ (առողջական, ընտանեկան և այլ խնդիրներ) առաջացնում են հետաքրքրության և աշխատունակության անկում;
5. ***բացասական,*** երբ աշակերտի մոտ բացակայում է հետաքրքրությունն ուսման հանդեպ: Այս դեպքում գերիշխող շարժառիթը պատժից խուսափելն է: Արդյունքում առաջանում է ինքնավստահության պակաս, դժգոհություն ինքն իրենից:

Ուսումնական շարժառիթները լինում են՝

- ***ներքին,*** եթե դրդիչն իրականացնում է միայն ճանաչողական պահանջմունք , և աշակերտը սովորում է հետաքրքրությունից դրդված, երբ դասը հաճույք է պատճառում նրան, երբ ավելի շատ գիտելիք է ցանկանում ստանալ, այսինքն որպես դրդապատճառ օգտագործվում են նրա անձնական ձգտումներն ու հետաքրքրությունները:

- ***արտաքին***, եթե դրդիչն իրականացնում է ոչ ճանաչողական պահանջմունք, և ներգործում են արատաքին գործոններ՝ ծնողներին գոհացանել, բարձր գնահատական կամ պարգև ստանալ, վախը և այլն:

  Լ.Ի.Բոժովիչի դասակարգման համաձայն, **ըստ տեսակի** բոլոր մոտիվները կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝

1. **ճանաչողական**՝ շարժառիթներ, որոնք առաջանում են հենց կրթական գործունեության արդյունքում՝ • դասավանդման բովանդակության հետ կապված մոտիվներ, աշակերտի սովորելուն դրդում է նոր փաստեր սովորելու, գիտելիքներ ձեռք բերելու; • ուսուցման գործընթացի հետ կապված մոտիվներ, աշակերտը խրախուսվում է սովորել ինտելեկտուալ ակտիվ լինելու, տրամաբանելու, խնդիրների լուծման գործընթացում խոչընդոտները հաղթահարելու ցանկությամբ:
2. **սոցիալական**` • հասարակության, դասի, ուսուցչի, ծնողների և այլնի հանդեպ պարտքի և պատասխանատվության մոտիվներ; • ինքնորոշման մոտիվներ (հասկանալով ապագայի համար գիտելիքի կարևորությունը) , •ինքնակատարելագործման (ուսուցման արդյունքում զարգանալ); • նեղ անձնական մոտիվներ; • հավանություն ստանալու ցանկություն, լավ գնահատականներ (բարեկեցության մոտիվացիա); • առաջին աշակերտը լինելու, ընկերների մեջ արժանի տեղ զբաղեցնելու ցանկություն (հեղինակավոր մոտիվացիա); • բացասական մոտիվներ՝ ուսուցիչների, ծնողների, դասընկերների կողմից անախորժություններից խուսափելու ցանկություն (դժբախտությունից խուսափելու դրդապատճառ):

Կրտսեր դպրոցականների ուսումնական շարժառիթները կարող են նաև լինել ***դրական*** / Օրինակ՝ գիտելիքների նկատմամբ կայուն ձգտում, բարձր գնահատական ստանալու ցանկություն, ուսուցչի և ծնողների կողմից խրախուսանքի արժանանալու ցանկությունը, ինքնահաստատվելու ցանկություն, և այլն/, կամ ***բացասական*** /սովորել չցանկանալը , անկարգապահությունը, ընդունակությունների պակասը, ուսման մեջ հետ մնալը, տարեկիցների բացասական ազդեցությունը, ընտանեկան անբարենպաստ միջավայրը, սոցիալական անբարենպաստ պայմանները և այլն/: [ 5]




Շարժառիթը գործընթաց է, որը բաժանված է մի քանի **հիմնական փուլերի**:
Նշանավոր հոգեբան Ե.Պ.Իլյինը ներկայացրել է շարժառիթի ձևավորման հետևյալ փուլերը՝

***1-ին փուլ***՝ պահանջմունքների առաջացում և ընդունում /ներքին լարվածություն, հոգեկան որոշակի վիճակ, զգացողություն, ծագած զգացողությունից ազատվելու ցանկություն/, և այդ պահանջմունքն անձից պահանջում է ամբողջությամբ հնարավորությունների վերհանում;

***2-րդ փուլ***՝ պահանջմունքի բավարարման առարկայի գիտակցում /նպատակին հասնելու պայմանների հաշվառում, հակումներ, հետաքրքրություններ, բարոյական վերահսկողություն, սեփական հնարավորությունների հաշվառում/: Առաջանում է գործելու,ինչ-որ բան անելու ցանկություն;

***3-րդ փուլ***՝ նպատակների սահմանում/ «Ինչ պետք է անեմ ,որպեսզի ստանամ այն,ինչ ուզում եմ», «Որքանով կարող եմ ստանալ այն, ինչ ուզում եմ», այսինքն կոնկրետ նպատակի ընտրություն և մտադրության ձևավորում: [ 7]

Փաստորեն, դրդապատճառը դիտարկվում է որպես նշված բոլոր հոգեկան գործընթացների արդյունք: Այս հոգեկան գործընթացի (շարժառիթի) արդյունքում ձևավորվում է արարքի (վարքագծի) դրդապատճառը, որը փաստորեն բարդ մի երևույթ է և իր մեջ ներառում է թե՛ արդիականացված պահանջմունք, թե՛ նպատակ, թե՛ նպատակին հասնելու միջոցների ընտրություն, թե՛ անձնային հատկություններ, թե՛ մտադրություն ու մղում:

Իսկ «Սովորելը հեշտ է» գրքի հեղինակ և մանկավարժ Գ.Ա.Ենյուտինան առանձնացրել է ուսումնական շարժառիթի հետևյալ հոգեբանական հիմքերը՝

1. ***Գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման զգացում***. «Ես հասկացա, սովորեցի, ինքս հորինեցի»:
2. ***Ընտրության ազատության զգացում.*** «Ես կարող եմ ընտրել»:
3. ***Հաջողության զգացում/կոմպետենտություն/***. «Ես կարող եմ դա անել»: [ 6

## 1.2. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇԱՐԺԱՌԻԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Կրտսեր դպրոցական տարիքը (6-10 տարեկան) անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել, տարբեր պահանջներ իրականացնել: Այս շրջանում հակասության մեջ են մտնում երկու հիմնական դրդապատճառ՝ անհրաժեշտության և ցանկության: Ընդունվելով դպրոց՝ երեխան նոր դիրք է զբաղեցնում հասարակության մեջ: Մի կողմից՝ առաջնորդվելով անհրաժեշտության պահանջմունքով, երեխան բացահայտում է հասուն կյանքը, իսկ մյուս կողմից՝ դրդված լինելով ցանկության պահանջմունքով, երեխան ցուցաբերում է այնպիսի վարք, որը վերադարձնում է իրեն մանկության աշխարհ, որտեղ չկան որոշակի պարտականություններ և պահանջներ:

Կրտսեր դպրոցականի զարգացման ընթացքում հստակ երևում են զարգացման որակական փոփոխությունները: Այդ իսկ պատճառով երեխաներն առաջին դասարան են գալիս մեծ ոգևորությամբ, բայց որոշ ժամանակ անց երեխաների մի մասի մոտ ընկնում է հետաքրքրությունը դպրոցի նկատմամբ, կան նույնիսկ դեպքեր, երբ աշակերտը չի ցանկանում դպրոց գնալ: Որքան մեծանում է աշակերտը, այնքան ավելի շատ է արտահայտում չսովորելու ցանկություն: Ուսումնական շարժառիթի բացակայությունը վատ անդրադարձ է թողնում աշակերտի կրթական գործունեության վրա, դպրոցը, գիտելիքը չի հրապուրում նրան:

Ինչո՞ւ է դա տեղի ունենում: Ինչպե՞ս դարձնել ուսումնական գործընթացը գրավիչ ուսուցման ողջ ժամանակահատվածում: Այս հարցերը վաղ թե ուշ կանգնում են յուրաքանչյուր ուսուցչի առջև:

Ուսուցման շարժառիթի ձևավորման ուսումնասիրումը սկսվում է աշակերտի հոգեբանական ուսումնասիրությունից: Ուսումնական շարժառիթի ուսումնասիրումը նպատակ ունի բացահայտելու աշակերտի իրական ներուժը, հնարավոր զարգացման մակարդակը: Այստեղ շատ մեծ է դասվարի դերը և գործունեությունը: Երեխայի ուսումնական գործունեության ողջ ընթացքի բարձր որակն ապահովելու շուրջ աշխատանքները պետք է սկսել ուսումնական գործունեության հենց առաջին օրվանից՝ նրա մեջ դրական վերաբերմունք ձևավորելով դպրոցի, ուսման, ուսուցչի նկատմամբ, ստեղծելով նպաստավոր պայմաններ: Ուսուցիչը հոգեբանորեն պետք է

վերլուծի ստեղծված իրավիճակը, արդյունավետ տարբերակներ գտնի, որոնց օգնությամբ կկարողանա երեխային դուրս բերել այդ վիճակից:

Կրտսեր դպրոցականների մոտ պետք է ձևավորել ուսման մոտիվացիա և օգնել հաղթահարելու ուսումնական գործընթացում հանդիպող իմացական և հոգեբանական դժվարությունները: Անհրաժեշտ է երեխայի մոտ ձևավորել ինքնավստահություն, խթանել ինքնաճանաչումը, զարգացնել իմացական ոլորտը (ուշադրություն , հիշողություն), ոգևորել և խթանել ազատ արտահայտվելու կարողությունը ինչպես դպրոցում ,այնպես էլ ընտանիքում: Անհրաժեշտ է ուսման նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորել: Ուստի, և՛ ծնողը , և՛ մանկավարժը պետք է կարողանան հասնել նրան, որ երեխան կարողանա ինքնուրույն ճանաչողական վերաբերմունք ձևավորի աշխարհի նկատմամբ :

Սովորողների ուսումնական շարժառիթի ձևավորման վրա ազդում է ոչ միայն ուսուցչի մանկավարժական գործունեությունը, այլ նաև ընտանեկան դաստիարակությունը: Այսպես, ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ հաջողության հասնելու շարժառիթը գերակշռում է այն ընտանիքների երեխաների մոտ, որտեղ նրանց վերաբերվել են սիրով, ջերմությամբ և փոխըմբռնմամբ: Այն ընտանիքներում, որտեղ տիրում է խիստ վերահսկողություն կամ անտարբերություն, երեխաների մեջ ձևավորվում է ոչ թե հաջողության հասնելու, այլ տհաճություններից խուսափելու մոտիվացիա, ինչն էլ ուղղակիորեն հանգեցնում է ցածր ուսումնական մոտիվացիայի: Ծնողները երեխաներին պետք է սովորեցնեն չհուսահատվել, շարունակել պայքարել որոշակի արդյունքների հասնելու համար, հավատալ սեփական ուժերին : Ծնողները պետք է խրախուսեն երեխայի նույնիսկ ամենափոքր հաջողությունները, գնահատեն նրա ձեռքբերումները՝ փորձելով հնարավորինս ճիշտ գնահատել երեխայի գիտելիքներն ու հաջողությունները: Ուսումնական շարժառիթի ձևավորման գործում կարևոր նշանակություն ունեն տնային հանձնարարություններն ու դրանց կատարումը, ինչպես նաև ծնողների վերաբերմունքն այդ ամենի նկատմամբ:

Ի.Պ. Պոդլասին պնդում է. «Կրտսեր դպրոցականների ուսուցման լիարժեք շարժառիթ ձևավորելու համար կարևոր է ապահովել հետևյալ պայմանները. բավարարել աշակերտների ճանաչողական հետաքրքրությունները, կազմակերպել հետաքրքիր շփում երեխաների միջև; խրախուսել դժվարություն առաջացնող առաջադրանքների կատարումը, ցուցաբերել հավասար և մարդասիրական վերաբերմունք բոլոր երեխաների նկատմամբ, ձևավորել իրենց ինքնագնահատականը, ձևավորել ինքնազարգացման, ինքնակատարելագործման կարողությունները, խրախուսել երեխաների նախաձեռնությունները, քաջարելել

ուսումնական դժվարություններ ունեցող աշակերտներին, դաստիարակել ուսման նկատմամբ պատասխանատու վերաբերմունք, կիրառել դասավանդման բազմազան մեթոդներ և հնարներ»: [ 4, էջ138]

Ուսուցիչը պետք է անընդհատ ուսումնասիրի իր աշակերտների ուսումնականան շարժառիթներն ու վարքագիծը: Նա պետք է լավ իմանա դպրոցականների մոտ հետաքրքրություն առաջացնելու մեթոդները, կարողանա կիրառել դրանք՝ կախված իրավիճակից:

Ուսումնական գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է դրական շարժառիթներիների առկայությամբ: Այդ իսկ պատճառով դրական դրդապատճառներն անհրաժեշտ է ձևավորել և ծավալել դրանք ամրապնդելու գործողություններ: Նախ և առաջ անհրաժեշտ է հմուտ կերպով խթանել աշակերտների ուսումնական գործունեությունը՝ փորձելով հասկանալ նրանց ցանկությունները, խոսելով նրանց հետաքրքրող թեմաների մասին, ընդունել անհաջողությունները և այլն: Ուսումնական դրդապատճառներից առավել կարևորն ու հիմնականը ուսումնառության հանդեպ սովորողների հետաքրքրությունն է: Ճանաչողական հետաքրքրությունը դրսևորվում է ուսումնական նյութի հանդեպ աշակերտի հուզական վերաբերմունքով: Ուստի այս կամ այն ուսումնական նյութն ուսումնասիրելուց առաջ ուսուցիչը պետք է նախ աշակերտի մեջ առաջացնի դրա հանդեպ կայուն հետաքրքրություն: Իսկ այն աշակերտների հետ, որոնց մոտ առաջանում է հետաքրքրության և աշխատունակության անկում, ցանկալի է աշխատել խմբային մեթոդով, ներառել խմբում կամ շարքում, բացահայտել՝ ինչ թեմաներ են նրանց հետաքրքում, թույլ տալ նրանց օգտագործել իրենց կարողությունները, պետք է նրանց քաջալերել և բացատրել անհասկանալի թեմաները:

Ուսումնական գործընթացի նկատմամբ կրտսեր դպրոցականների հետաքրքրությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- աշակերտների գիտելիքների մակարդակով և որակով: Այսինքն՝ որքան աշակերտը շատ գիտելիքներ ունի տվյալ առարկայից, այնքան շատ նոր գիտելիքներ է ցանկանում ձեռք բերել;
- ուսուցչի հանդեպ նրանց անձնային վերաբերմունքով:

Ուսման հանդեպ կրտսեր դպրոցականների մեջ հետաքրքրություն առաջացնելու համար ուսուցիչը պետք է.

- ✓ դասարանում ստեղծի բարոյահոգեբանական բարենպաստ մթնոլորտ,
- ✓ սիրի և հարգի իր յուրաքանչյուր սանին,
- ✓ դրսևորի համբերատարություն և մանկավարժական տակտ,
- ✓ յուրաքանչյուր աշակերտի համար ստեղծի հաջողության իրավիճակներ,
- ✓ ապահովի աշակերտների միջանձնային արդյունավետ հաղորդակցում,
- ✓ ուսումնական նյութի ուսումնասիրության գործընթացը դարձնի հետաքրքիր և հագեցած զննական պարագաներով,
- ✓ ընտրի և կիրառի ուսուցման արդիական մեթոդներ, հնարներ,
- ✓ քաջալերի և խրախուսի աշակերտների յուրաքանչյուր առաջխաղացումը,
- ✓ կարևորի աշակերտի ինքնագնահատականը և ձգտի նպաստել նրա բարձրացմանը:

# ԳԼՈՒԽ 2

# ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՈՏ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇԱՐԺԱՌԻԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ՀՆԱՐՆԵՐԸ



Կրտսեր դպրոցականների գործունեության հիմնական ձևը ուսուցումն է, հետևաբար, անհրաժեշտ է փնտրել ուղիներ այս գործընթացում նրանց ակտիվությունը բարձրացնելու համար, ինչը ոչ միայն կբարելավի ուսման որակը, այլև կնպաստի անձի ձևավորմանը:

Ինչպես ցույց են տալիս բազմաթիվ ուսումնասիրությունները, եթե չկա ներքին մոտիվացիա, ապա ցանկացած գործ դառնում է անհետաքրքիր, ձանձրալի: Մոտիվացիան ապահովում է ուսումնական առաջընթաց: Առանց ուսման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու և ներքին շարժառիթի ուսուցում ու յուրացում տեղի չեն ունենում: Ճիշտ մեթոդների ու նորագույն տեխնոլոգիաների օգտագործումը կարևոր են այսօր դասապրոցեսը ավելի հետաքրքիր դարձնելու համար:

Մանկավարժական պրակտիկայում օգտագործվում են ակտիվացման տարբեր եղանակներ, մեթոդներ, որոնք առաջացած իրավիճակներում բարձրացնում են կրտսեր դպրոցականների կրթական շարժառիթի մակարդակը: Այդ նպատակով կարելի է կիրառել հետևյալ **մեթոդները**` :

«**Դիդակտիկ խաղեր**»` որոնց հիմնական նպատակն է` խթանել ճանաչողական գործընթացը, ավելի հեշտ ինտեգրվել դասապրոցեսին;

«**Հաջողության իրավիճակ**»` նպատակաուղղված այնպիսի պայմանների ստեղծում, որի դեպքում հնարավոր է հասնել նշանակալի արդյունքների գործունեության մեջ, ինչի շնորհիվ ձևավորվում է վստահություն սեփական ուժերի հանդեպ;

«**Մրցույթ**»` ստեղծելով առողջ մրցակցային մթնոլորտ: Իրար հետ մրցելով` դպրոցականների մոտ արագորեն ձևավորվում է սոցիալական վարք, զարգանում են ֆիզիկական, բարոյական, գեղագիտական որակներ: Մրցակցությունը հատկապես կարևոր է նրանց համար, ովքեր հետ են մնում և համեմատում են իրենց արդյունքներն ընկերների ձեռքբերումների հետ` նրանք ամի նոր խթաններ են ստանում և սկսում ավելի շատ ջանքեր գործադրել;

«**Նախագիծ**»` տարրական դպրոցում նախագծային աշխատանքները նպաստում են սովորողների ճանաչողական հմտությունների և ստեղծագործական մտածողության զարգացմանը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառելու, խնդիր տեսնելու և

լուծելու կարողության վրա, ինչպես նաև զարգացնում է սովորողների մոտ ինչպես ինքնուրույն, այնպես էլ թիմային աշխատանք կազմակերպելու հմտություն: Կրտսեր դպրոցականների նախագծային գործունեության ձևերից են՝ գրքույկ, ներկայացում, պատմության կամ հեքիաթի հորինում, պատի թերթ, հուշանվեր պատրաստում: Կարևոր է, որ նախագծի թեման հետաքրքրություն առաջացնի երեխաների մոտ: Նրանք պետք է իրականացնեն իրենց սեփական հետազոտությունները, հավաքեն և վերլուծեն տեղեկատվությունը, սեփական եզրակացություններ անեն: Տարրական դպրոցում անհրաժեշտ է իրականացնել կարճատև ուսումնասիրություններ: Հակառակ դեպքում երեխաները հոգնում են, և մոտիվացիան կորում է:

«**Խնդրահարույց իրավիճակ ստեղծելու մեթոդ**»՝ խնդրահարույց իրավիճակի ստեղծումը հնարավոր է խնդրահարույց հարցերի, առաջադրանքների, որոնման բնույթի առաջադրանքների ձևակերպման միջոցով: Դասի յուրաքանչյուր փուլում կարելի է օգտագործել խնդրահարույց հարցեր՝ որոնցում կան հակասություններ, պահանջում է գտնել նմանություններ և տարբերություններ:

Կարևոր է աջակցել ուսումնաճանաչողական մոտիվացիային ամբողջ դասի ընթացքում: Այդ նպատակով կարելի է կիրառել հետևյալ **հնարները**՝

«**Գրավիչ նպատակ**»՝ սովորողների առջև դրվում է պարզ, հասկանալի և գրավիչ նպատակ, որին հասնելու ընթացքում նրանք կամա թե ակամա կատարում են ուսուցչի կողմից ծրագրավորած գործողությունը: Դասի նկատմամբ սովորողների հետաքրքրությունը խթանելու համար նպատակահարմար է դասի սկզբում կամ վերջում աշակերտներին առաջադրել հանելուկ-խնդիրներ կամ զարմանալի փաստեր դասի թեմայի վերաբերյալ;

«**Կանխագուշակում**» սովորողներին ակտիվացնող,նրանց արտահայտած գաղափարները կիրառելու միջոցով տեքստի բովանդակությունը կանխագուշակող մեթոդ է:

«**Հռետոր**»՝մեկ րոպեյվա ընթացքում համոզել զրուցակցին, որ տվյալ թեմայի ուսումնասիրումը ուղղակի անհրաժեշտություն է;

«**Ճշմարիտ- ոչ ճշմարիտ** »՝ նոր նյութի հաղորդման փուլում աշակերտներին ներկայացնել թեմայի շուրջ մի քանի արտահայտություն, իսկ երեխաներն ընտրում են «ճիշտ» նախադասությունները ՝ հիմնվելով սեփական փորձի վրա կամ պարզապես գուշակելով: Մրցակցության տարրը թույլ է տալիս սովորողների ուշադրությունը պահել մինչև դասի ավարտը, իսկ դասի վերջում պարզաբանվում է, թե որ արտահայտություններն էին ճշմարիտ:

«**Բռնի՛ր սխալը** »՝ բացատրելով նյութը, դիտավորյալ սխալվել: Նախ, աշակերտները

նախապես զգուշացվում են այդ մասին: Երբեմն նրանք կարող են դիտավորյալ սխալը հայտնաբերելու դեպքում արձագանքել  ինտոնացիայով կամ ժեստով: Անհրաժեշտ է սովորեցնել աշակերտներին ակնթարթորեն կանխարգելել սխալները պայմանական նշանով կամ բացատրությամբ, եթե դա պահանջվում է: Պետք է խրախուսել  սովորողների ուշադրությունը :

«**Նայի՛ր աշխարհին ուրիշի աչքերով** »՝ ոչինչ  չի խթանում մտքի աշխատանքը, ինչպես անսովորը: Օրինակ՝  «Ջրի շրջանառությունը» թեմայի ուսումնասիրման ժամանակ կարելի է աշակերտին առաջարկել  պատկերացնել, որ իրենք ծյան փաթիլներ են: Սովորողները պետք է նկարագրեք այն բոլոր իրադարձությունները, որոնք տեղի են ունենում նրանց հետ:

**Խաղային տեխնոլոգիաներ**՝ երեխաները սիրում են երազել ու խաղալ, հանելուկներ լուծել, գաղտնիքներ բացահայտել, իսկ միատեսակ աշխատանքն արագ հոգնեցնում է նրանց: Ուստի  անհրաժեշտ է զուգակցել ուսուցումն ու խաղը: Այս հնարը ուսումնական դրդապատճառ է հանդիսանում նոր նյութն ուսումնասիրելու համար,քանի որ կրտսեր դպրոցականները  ցանկանում են գուշակել հանելուկի պատասխանը, կատարել բացահայտումներ, հեքիաթի հերոսի դեր խաղալ և այլն: Հին նյութն ամրապնդելու ընթացքում  օգտագործել այնպիսի հնարներ, որ առաջադրանքը կատարելու ժամանակ աշակերտն ինքնուրույն և յուրովի արտահայտի սովորածը: Օրինակ՝ աշակերտները կազմում են մի շարք հարցեր, որոնց պատասխանները թույլ են տալիս համալրել նյութը նոր  գիտելիքներով: Ինքնագնահատման փուլում դպրոցականների կրթական և ճանաչողական մոտիվացիան բարձրացնում է զույգերով աշխատանքը կամ տետրերի, աշխատանքների փոխադարձ ստուգումը:

**Տնային առաջադրանքներ**՝ սովորողները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում այն տեղեկատվության նկատմամբ, որն օգնում է նրանց լուծել կյանքի խնդիրները: Ուստի ուսուցումը պարտադիր պետք է կապված լինի աշակերտի գործնական կարիքների հետ:

Նաև կարևոր է ունենալ դասն ավելի հետաքրքիր դարձնելու հստակ մշակված ռազմավարություն.

- Աշակերտի մոտ ուսումնական շարժառիթ  կարող է առաջանալ **հստակ պլանավորված դասից**, երբ ուսուցիչը ներկայացնում է այդ դասի կոնկրետ անելիքը, այսինքն աշակերտն ունենում է իր առջև դրված խնդիր, որը պետք է հաղթահարի:

- Մյուս ռազմավարությունն առաջարկում է տարբեր թեմաների, նաև **առօրյային վերաբերող թեմաների ներառումը դասապրոցեսի մեջ**՝ ավելի հետաքրքիր դարձնելու նպատակով: :
- Զարգացնել աշակերտի մոտ **կարդալու կարողությունը**, քանի որ այն աշակերտները, որոնք ունեն խնդիր կարդալու հետ, ունեն նաև խնդիր սովորելու հետ: Սկզբնական շրջանում ընդհանրապես մոտիվացիա չունեցող աշակերտներն ինքնուրույն կարող են ընտրել ընթերցանության նյութը:

# ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

1. Լերմոնտովյի Ե.Ուդալցովի անվան միջնակարգ դպրոցի 2-4-րդ դասարանների աշակերտներին առաջարկվեց ուսումնական առարկաների ցանկից ընտրել իրենց ամենասիրած առարկան:
Նպատակը՝ բացահայտել աշակերտների հետաքրքրությունները:




2. Կրտսեր դպրոցականների ուսումնական շարժառիթների վերլուծություն՝ ըստ նշանավոր հոգեբան Լ.Ի. Բոժովիչի դասակարգման :

Նպատակը՝ պարզել, թե որ դրդապատճառներն են ձևավորված աշակերտների մոտ: Կրթաճանաչողական դրդապատճառները ձևավորված են սովորողների 30% մոտ: Նրանք դատում էին հետևյալ կերպ.« Ինձ դուր է գալիս, երբ ուսուցիչը հետաքրքիր բան է պատմում», «Ես սիրում եմ նոր բաներ սովորել»; բարեկեցության շարժառիթ՝ 55%, դատողությունները՝ «Ուզում եմ լավ գնահատականներ ստանալ», «Ուզում եմ արժանանալ ուսուցիչների և ծնողների գովասանքին»; հեղինակավոր շարժառիթ՝ 8%, աշակերտների դատողությունները՝ «Ես ուզում եմ լինել դասարանի լավագույն աշակերտը» , «Ուզում եմ, որ իմ պատասխանները միշտ լինեն լավագույնը»; անհաջողություններից խուսափելու դրդապատճառ՝ 2%, դատողությունները՝ «Չեմ ուզում վատ գնահատականներ ստանալ» , «Չեմ ուզում եմ, որ ուսուցիչներս կամ ծնողներս բարկանան»; պարտքի և պատասխանատվության դրդապատճառներ՝ 5%, սովորողները դատում էին. «Աշակերտը պետք է լավ սովորի»:

Ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ այն աշակերտներն, ում մոտ ձևավորված են կրթաճանաչողական և պատասխանատվության շարժառիթներն՝

ունեն լավ առաջադիմություն, իսկ այն աշակերտներն, ում մոտ ձևավորված են բարեկեցության և անհաջողություններից  խուսափելու շարժառիթներ` ունեն բավարար կամ ցածր առաջադիմություն:




3. Առաջադիմության մակարդակի վերլուծություն  2-րդ  դասարանում.
տարեսկզբին  և ակտիվացման տարբեր եղանակներ և մեթոդներ կիրառելուց հետո:






# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական գործունեությունը զբաղեցնում է անձի կայացման գրեթե բոլոր տարիները, և կրթություն ստանալը ցանկացած անձի համար պարտադիր պահանջ է: Ժամանակակից կրթական համակարգի հիմնախնդիրներից է՝ ուսումնական գործունեություն այնպիսի կազմակերպում, որը կնպաստի սովորելու, ինքնազարգացման և ինքնակատարելագործման կարողության ձևավորմանն ու զարգացմանը:

Ելնելով աշխատանքի հիմնական նպատակից, ուսումնասիրեցի կրտսեր դպրոցականների ուսումնական գործընթացի առանձնահատկություններն ու մանկավարժական պայմանները, որոնք կնպաստեն ուսումնական շարժառիթի ձևավորմանը և պարզեցի, որ ուսումնական շարժառիթի խնդիրն առանցքային է մանկավարժության և մանկավարժական հոգեբանության մեջ, իսկ հանրակրթության նոր չափորոշիչն ավելի լայն հնարավորություններ է ստեղծում անձի զարգացման, սեփական կյանքի կառուցման և ինքնաիրացման համար:

Ելնելով աշխատանքից բխող խնդիրներից, առաջին գլխում ներկայացրեցի շարժառիթի էությունն ու դերը կրթական գործընթացում, նկարագրեցի կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները և ուսումնական շարժառիթի հիմքում ընկած դրդապատճառներն ու ձևավորման առանձնահատկությունները: Ընդհանրացնելով նյութը, հանգեցի այն եզրակացությանը, որ շարժառիթն ուսումնական գործունեության բազմակողմանի խնդիր է, և աշակերտի ուսումնական գործունեությունը մղվում է ոչ թե մեկ շարժառիթով, այլ մի շարք դրդապատճառներով, որոնք լրացնում են միմյանց : Ուսուցման շարժառիթները ձևավորվում են ուսումնական գործունեության ընթացքում:Շարժառիթների ձևավորումը տեղի է ունենում աստիճանաբար: Հոգեբանամանկավարժական հետազոտությունների տվյալները վկայում են այն մասին, որ կրտսեր դպրոցական տարիքն ունի ուսուցման շարժառիթի ձևավորման մեծ հնարավորություն: Կրտսեր դպրոցական տարիքը շարժառիթային ուսուցման սկիզբն է, որից մեծապես կախված է նրա հետագա գործունեությունը դպրոցական տարիքի ողջ ընթացքում:

Աշխատանքի երկրորդ գլխում ներկայացրեցի սովորողների մոտ ուսումնական շարժառիթի ձևավորման արդյունավետ մեթոդներն ու հնարները: Ուսումնական շարժառիթի ձևավորման ուղիները մի քանիսն են, և դրա կայացման համար

անհրաժեշտ է կիրառել ոչ թե մեկ, այլ բոլոր ուղիները որոշակի համակարգով, քանի որ դրանցից ոչ մեկը, ինքն իրենով, առանց մյուսների, չի կարող խաղալ որոշիչ դեր բոլոր սովորողների ուսումնական շարժառիթի ձևավորման մեջ:

Իմ դիտարկումների ընթացքում ես հանգել եմ այն եզրակացության, որ առանց շարժառիթի կամ թույլ շարժառիթով ուսումնական գործունեությունը կա՛մ ընդհանրապես չի իրականացվում, կա՛մ ծայրաստիճան անկայուն է լինում:

Ամփոփելով կատարված աշխատանքը, կցանկանայի նշել, որ միայն մեթոդների և հնարների ճիշտ ընտրությունը, դրանց ողջամիտ համադրությունը և մեթոդաբանական գիտելիքների իմացությունը, կարող են նպաստել կրտսեր դպրոցականների ուսումնական շարժառիթի ձևավորմանը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1.Սուխոմլինսկի Վ.Ա. «Քաղաքացու ծնունդը», «Լույս, Երևան, 1978 , 343

2. Леонтьев А.Н., Потребности, мотивы и эмоции. М: МГУ, 1971, 41

3. Маркова А.К., Формирование мотивации учения в школьном возрасте, М: Просвещение, 1983, 96

4.Подласый И. П. Педагогика: 100 вопросов — 100 ответов: учеб. пособие для студентов вузов. М.: Изд-во ВЛАДОС-ПРЕСС, 2006, 365

5. Божович Л.И. О мотивации учения, https://www.gumer.info/bibliotek_Buks/Pedagog/hrestomatia/28.php7.

6.Енютина Г. 3 Кита учебной мотивации, http://enutina.ru/blog/3-kita-motivacii/

7. Ильин Е.П.. Мотивация и мотивы, https://bookap.info/book/ilin_motivatsiya_i_motivy/

ՀՀԿՐԹՈՒԹՅԱՆԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻԵՎՍՊՈՐՏԻՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻՀ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻԱՆՎԱՆՊԵՏԱԿԱՆՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

# *ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ*

*ԹԵՄԱ՝ Հայտորոշիչ և ամփոփիչ թեստերի կազմման սկզբունքները*

*ԿԱՏԱՐՈՂ՝ Լիաննա Աբազյան*

*ՂԵԿԱՎԱՐ՝ Լուսինե Միրաբյան*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ........................................................................................................................3

ԳԼՈՒԽ 1. ԹԵՍՏԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ 4

**1.1** Գնահատում, տեսակները.........................................................................................................4

**1.2** Թեստը, դրա տեսակներն ու հատկորոշիչները.........................................................................8

Գլուխ 2.Հայտորոշիչ և ամփոփիչ թեստերի կազմման սկզբունքները..........................................12

**2.1 Հայտորոշիչ և ամփոփիչ թեստերի կազմման սկզբունքները**...................................12

**2.2 Փորձարարական մաս**..............................................................................................................15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ..........................................................................................................18

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.........................................................................................20

**Հավելված 1**..............................................................................................................................21

**Հավելված 2**..............................................................................................................................24

**Հավելված 3**..............................................................................................................................27

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր կրթական համակարգում տեղի ունեցած բարեփոխումները հիմք դարձան նոր կրթական չափորոշիչների ներդրմանը:Արդյունքում հանրակրթական պետական նոր չափորոշչով սահմանվել է սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման նոր սկզբունքներ, ներդրվել է գնահատման նոր մեթոդաբանություն, որն էլ հիմք է հանդիսացել գնահատման նոր տեսակների կիրառմանը:Գնահատումն ուսումնական գործընթացի անբաժանելի մաս է, և ըստ նոր չափորոշիչների ուսումնական գործընթացի ճիշտ պլանավորման և արդյունավետ իրականացման համար որևէ նոր թեմա ուսումնասիրելուց առաջ պետք է իրականացվի նախնական հայտորոշում, որը նպատակ ունի բացահատել սովորողների նախնական գիտելիքները, հմտությունները, արժեհամակարգն ու վերաբերմունքը:

Թեմայի վերաբերյալ նախնական գնահատումն իրականացվում է հայտորոշիչ թեստերի միջոցով , ինչը նպատակ ունի վեր հանել երեխայի գիտելիքները ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ :Թեստը դիտարկվում է որպես չափման գործիք:Առանց հայտորոշիչ թեստերի արդյունքների ուուցիչը զրկված է կրթական գործընթացում աշխատանքի արդյունավետ տարբերակն ընտրելու հնարավորությունից, քանի որ հայտորոշիչ թեստի միջոցով ուսուցիչը ստանում է անհրաժեշտ տեղեկատվություն տվյալ թեմայի վերաբերյալ սովորողների գիտելիքների վերաբերյալ, իսկ ամփոփիչ թեստերի միջոցով չափվում է տվյալ թեմայի վերաբերյալ աշակերտի զրանցած ակադեմիկական աճը:

Թեմայի ուսումնասիրության նպատակն է՝

- Ուսումնասիրել գնահատման համակարգը,

Խնդիրներն են՝

- Մշակել հայտորոշիչ և ամփոփիչ թեստերի կազմման սկզբունքներ,
- պարզել հայտորոշիչ և ամփոփիչ թեստերի կիրառման նպատակները,
- վեր հանել թեստերի կազման սկզբունքները:

Աշխատանքը բաղկացած է 20 էջից՝ ներածությունից, բովանդակությունից,2 գլուխներից, օգտագործված գրականությունից, եզրակացություններից և 3 հավելվածից:

## ԳԼՈՒԽ 1. ԹԵՍՏԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

### 1.1 Գնահատում, տեսակները

Գնահատումը սովորողի մասին տեղեկություն ստանալու, հավաքելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության բովանդակային և կազմակերպչական աշխատանքներն իմի բերելու և վերահսկելու գործընթաց է : Գնահատման հիմնական նպատակը սովորողների գիտելիքների կարողությունների և հմտությունների յուրացման ու տիրապետման աստիճանի, նրանց անձնային որակների ստուգումն է, ինչպես նաև ուսման որակի բարելավումն ու վերահսկումն է: Հիմք ընդունելով հանրակրթության բովանդակությանը ներկայացվող պահանջները , ուսումնական գործընթացի կազմակերպման ու վերահսկման բարեփոխված մոտեցումները և մեթոդները՝ սովորողների ընթացիկ գնահատման համար սահմանում են հետնյալ առաջնային նպատակները : [1 ]

- Հանրակրթական պետական կրթակարգով և չափորոշիչներով ամրագրված հանրակրթության բովանդակային բաղադրիչների յուրացման ընթացքի բացահայտումը,
- դրանց փուլային ստուգումն ու գնահատումը:

Գնահատման համակարգերի հիմքում ընկած են հավաստիության, հիմնավորվածության, հուսալիության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները:Ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափորոշիչների գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձևավորման աստիճանի, այն միտված է յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեության խթանմանը, ուսուցման և ուսումնառության վերահսկմանը, բարելավմանը և շարունակական զարգացմանը և գնահատման գործընթացի հիմքում ընկած են հավաստիության, հուսալիության, օբյեկտիվության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները:

Ուսուցման և ուսումնառության գործընթացում շատ կարևոր է և անհրաժեշտ սովորողի գնահատումը՝ պարզելու, թե ինչ աստիճանի է հասել նրա գիտելիքների մակարդակը: Հանրակրթության ոլորտում պայմանականորեն տարանջատում են գիտելիքի ներքին և արտաքին միավորային գնահատման ձևեր:

**Ներքին գնահատում**

Կիրառվում է դասի ընթացքում ՝ հարցման, ուսուցողական, ստուգողական միջոցով, դասընկերների և ուսուցիչների առօյա շփումների, ուսումնական գործունեության ամփոփման ընթացքում: Այս ձևով գնահատվում են ոչ միայն յուրաքանչյուր սովորողի ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները, այլ նրա զարգացման ընթացքը:

**Արտաքին գնահատում** Իրականացվում է դպրոցից դուրս գործող համապատասխան կազմակերպությունների կողմից: Սովորողների գիտելիքների կողմից ամփոփիչ գնահատման դրական արդյունքները հիմք են դառնում շրջանավարտին կրթական ավարտական փաստաթուղթ տալու, որակավորում շնորհելու, կամ մասնագիտական ուսումնական հաստատության ընդունելությանը մասնակցելու համար:
Արտաքին գնահատմամբ բացահայտվում են ուսումնական գործընթացի ամբողջական արդյունքները, ինչպես նաև՝ որոշակի առարկայի յուրացման մակարդակը առանձին դպրոցում, մարզում կամ հանրապետության ողջ տարածքում:[6 ]

Ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.

1) հայտորոշիչ գնահատում,
2) ձևավորող գնահատում,
3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):

Ձևավորող գնահատումն ուսումնական գործընթացի բաղադրիչ է, որի նպատակն է՝ բացահայտել յուրաքանչյուր սովորողի կամ ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները՝ ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար:
Ձևավորող գնահատման խնդիրն է ապահովել՝

1) ներառական, փոխներգործուն ու համագործակցային ուսուցման և ուսումնառության միջավայրի ստեղծումը.

2) սովորողի զարգացմանը նպաստող կառուցողական հետադարձ կապը.

3) սովորողի կողմից ինքնագնահատման և ինքնավերլուծության հմտությունների ձեռքբերումը:

Ձևավորող գնահատումը չի ենթադրում տարբեր սովորողների ուսումնական արդյունքների համեմատումայլ ապահովում է սովորողի՝ տվյալ պահի անհատական ուսումնական ձեռքբերումների համեմատությունը նրա նախկին ձեռքբերումների հետ և իրականացվում է 1-12-րդ դասարաններում:[4]

Ձևավորող գնահատման ձևերն ու մեթոդներն ընտրում է ուսուցիչը, այն քննարկվում է առարկայական մեթոդական միավորման նիստում, հաստատվում տնօրենի հրամանով և կարող է լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում, իսկ գնահատման ձևերն ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները, ուսուցանվող նյութի բովանդակությունը և սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

Կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.

1) գրավոր կարճ հարցում (թեստ).

2) բանավոր հարցում.

3) գրավոր աշխատանք.

4) գործնական (լաբորատոր) աշխատանք.

5) տնային աշխատանք.

6) նախագծային աշխատանք.

7) քննարկում, բանավեճ և այլն:[1]

| **Միավորային գնահատում** | **Ձևավորող գնահատում** |
|---|---|
| Իրականացվում է ուսուցման փուլի ավարտին | Իրակացվում է ուսւոցման ողջ ընթաքում |
| Գնահատումն իրականացնում է ուսուցիչը | Գնահատմանը մասնակցում է թե՛ ուսուցիչը, թե՛ սովորողը |
| Գնահատման արդյունքում տրվում է առաջադիմության թերթիկ | Գնահատման արդյունքում տրվում է սովորողի բնութագիրը |
| Ամրագրում է ուսուցման փուլի արդյունքը | Բացահայտովում է սովորողի ուժեղ և |

| | |
|---|---|
| | թույլ կողմերը, բարելավում է ուսումնական գործընթացը |
| Գնահատվում է նույն հաստատուն՝ 1-10 սանդղակով | Գնահատումն յիրականացվում է տարբեր գործիքների կիրառությամբ |

## 1.2 Թեստը, դրա տեսակներն ու հատկորոշիչները

Թեստը որոշակի նպատակով կազմված, ուղղորդող ցուցումներով հարցերի շարք է, սովորողներին գնահատելու և նրանց ուսումնական գործունեությունը արժևորելու համար: Թեստը որոշակի նպատակով բարեխղճորեն ընտրված առաջադրանքն է կամ առաջադրանքների խումբ, որի նպատակն է հնարավորինս ճիշտ գնահատել սովորողների ձեռքբերումները և արժևորել նրանց ուսումնական գործունեությունը: Թեստ կազմելիս շատ կարևոր է պարզ պատկերացնել այն ուսումնական նպատակը, որի համար այն նախատեսված է: Թեստի միջոցով ստուգում են սովորողի գիտելիքը, կարողությունները, հմտություններն ու արժեքային համակարգը:

Թ եստ ը պետք է լինի՝

- **հուսալի**: Հուսալիություն ասելով հասկանում ենք, որ թեստի ստուգման արդյունքները, անկախ հանգամանքներից, պետք է հաստատուն լինեն: Տարբեր պայմաններում, տարբեր ստուգողների կողմից նույն թեստի ստուգման և գնահատման արդյունքները գնահատման նույն սկզբունքները հանդես բերելու դեպքում տարբերություն գրեթե չպետք է լինի:
- **հավաստի:** Հավաստիություն նշանակում է, որ թեստը պետք է ծառայի իր նպատակին, այսինքն պետք է ստուգի այն գիտելիքներն ու հմտությունները, որոնք նախատեսված էր ստուգել: Հավաստի թեստը ապահովում է կոնկրետ նպատակին հասնելու հաջողությունը: Թ եստ ը հավաստի է, եթե դրա բարդության աստիճանը համապատասխանում է սովորողի պատրաստվախության մակարդակին: Համապատասխանություն նշանակում է, որ միջին պատրաստվածություն ունեցող սովորողի համար թեստը ոչ շատ հեշտ և ոչ էլ շատ դժվար պետք է լինի: Այն պետք է լինի միջին բարդության: Եթե թեստը սովորողի համար շատ հեշտ է, կամ' շատ բարդ, նշանակում է թեստը հուսալի չէ
- **արդյունավետ:** Արդյունավետ է համարվում այն թեստը, որը արդյունավետ է չափում սովորողի գիտելիքը, կարողություններն ու հմտությունները: Բովանդակության տեսակետից արդյունավետ է այն թեստը, որը ընդգրկում է

ստուգվող թեմայի կամ թեմաների հիմնական կարևոր հարցերը: Թեստը արդյունավետ է, եթե թեստի դժվարության աստիճանը համապատասխանում է սովորողի պատրաստվածության մակարդակին:

- **գործնական կամ իրականանալի**, թե՛ տեխնիկական, թե' ֆինասական, թե' ժամանակի տեսակետից:

Թեստը կազմելիս առաջադրանքները ներառվում են գիտելիքի պարզ իմացություն, ըմբռնում, կիրառում և ավարտվում բարձրակարգ ճանաչողական հմտություններով' վերլուծություն, համադրում և արժևորում:[3; էջ 4]

Թեստում կարող են ներառվել առաջադրանքների տարբեր տեսակներ, որոնցից են՝

- պատասխանի ընդարձակ շարադրմամբ,
- ճիշտ պատասխանի ընտրությամբ, կարճ պատասխան պահանջող,
- ապացուցում պահանջող,
- գործնական, կիրառական նշանակություն ունեցող,
- կառուցվածքի փոփոխություն պահանջող,
- գծապատկերի կազմման պահանջով,
- համապատասխանեցման պահանջով և այլն:

Թեստը պետք է ունենա հստակ հատկորոշիչնրե, որոնք հետևյալներն են՝

- ո՞ր դասարանի համար է նախատեսված,
- ի՞նչ նպատակ է հետապնդում, որ թեմայից կամ թեմանեից են ստուգվում սովորողի գիտելիքներն ու հմտություններ,
- առաջադրանքների քանակը,
- թեստի գնահատման առավելագույն միավորը,
- հատկացված ժամանակը,
- գնահատման չափանիշների միավորային աղյուսակ(ռուբրիկ), որտեղ տրվում է յուրաքանչյուր առաջադրանքի համարը, այդ առաջադրանքի առավելագույն միավորը և դրա գնահատման յուրաքանչյուր քայլի միավորը:

Ունենալով թեստի հատկորոշիչները՝ ուսուցիչը հեշտությամբ կարող է ստեղծել բազմաթիվ թեստեր, որոնց համար կարևոր է մշակել նաև ստուգման համար արագ և արդյունավետ տարբերակներ:Գործընթացը մեթոդապես ճիշտ կազմակերպելու դեպքում հնարավոր կլինի խնայել և՛ ժամանակ, և՛ ջանքեր:[1]

Ըստ նպատակի թեստը կարող է լինել.

1. Ամփոփիչ թեստեր(ընդհանուր գիտելիքների ստուգման), որը տրվում է կիսամյակի կամ յուրաքանչյուր թեմայի վերջում՝ ուսումնական նյութի յուրացման մակարդակը ստուգելու համար:
2. Հայտորոշիչ թեստ, որ տրվում է պարբերաբար ՝ հայտորոշելու սովորողների ուժեղ և թույլ կողմերը:
3. Տեղակայման թեստ, որը տրվում է դասընթացի սկզբում՝ սովորողներին տեղակայելու ՝ըստ իրենց գիտելիքի և կարողությունների:[3; էջ 5]

**Ընդհանուր գիտելիքների ստուգման թեստերը** տրվում են սովորողների ծրագրային նյութի յուրացման մակարդակը ճշտելու և ստուգելու նպատակով: Ընդհանուր գիտելիքների ստուգման թեստի հիմնական նպատակը' տվյալ առարկայից սովորողի չսվտրոշչային պահանջների և ամբողջ ծրագրային նյութի յուրացման մակարդակի ճշգրտումն ու գնահատումն Այդպիսի թեստերից են դպրոցի պետական ավարտական և ընդունելության քննությունների թեստերը, տարրական դպրոցի 4-րդ դասարանի գիտելիքների ստուգման թեստերը, և այլն: Այս թեստերը կազմվում են ոչ թե դպրոցի, այլ մեկ ուրիշ կազմակերպությունների կողմից:

**Հայտորոշիչ գնահատման** նպատակն է՝ բացահայտել սովորողի նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքներն ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա, կիսամյակի, առարկայի, դասընթացի, նոր թեմայի ուսումնասիրման մեկնարկից առաջ: Փուլի ընտրությունը թողնվում է ուսուցչի հայեցողությանը: [3; էջ 5]

Հայտորոշիչ թեստի միջոցով ուսուցիչը՝

- Կարողանում է բացահայտել ուժեղ և թույլ կողմերը,
- Վեր է հանվում բացթողումները և մշակվում դրանց վերացման ուղիները:/կցնակ

- Բացահայտել տվյալ թեմայի վերաբերյալ սովորողների ակադեմիական գիտելիքների մակարդակը
- Ապահովել հետադարձ կապ»՛
- Հայտորոշիչ թեստի բնութագրիչ առանձնահատկություններն են՝
- Բոլոր առաջադրաքներն ուղղված են նույն գիտելիքի, կարողության կամ
- հմտության ստուգմանը։ Սովորողների մեծ մասի համար թեստը մատչելի է։
- Թեստը կարճ ժամանակի համար է, արագ է ստուգվում։
- Արդյունքները հեշտ վերլուծելի են։
- Թեստի կատարման համար միավորային գնահատական չի դրվում։
- Թեստի արդյունքները գնահատվում են բառային ձևակերպմամբ։[6]

Ամփոփիչ գնահատման նպատակն ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատումն է՝ դասի, թեմայի, կիսամյակի, ուսումնական տարվա ավարտին, ինչպես նաև կրթական աստիճանի ավարտին՝ ամփոփիչ ատեստավորման միջոցով։Ամփոփիչ գնահատումն իրականացվում է միավորային կամ բնութագրող գնահատման միջոցով, որի արդյունքների հիման վրա ձևավորվում է կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատման արդյունքների հիման վրա՝ տարեկան ամփոփիչ գնահատականը։

Հաստատության 1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում սովորողի կիսամյակային ամփոփիչ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով։ Յուրաքանչյուր սովորողի համար կազմվում է ուսումնական առաջադիմության բնութագիր, իսկ 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակից մինչև 12-րդ դասարանը ներառյալ ամփոփիչ գնահատումն իրականացվում է միավորային գնահատման միջոցով։Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը, որոնք քննարկվում են առարկայական մեթոդական միավորման նիստում, հաստատվում տնօրենի հրամանով և կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում։[4]

## Գլուխ 2.Հայտորոշիչ և ամփոփիչ թեստերի կազմման սկզբունքները

### 2.1 Հայտորոշիչ և ամփոփիչ թեստերի կազմման սկզբունքները

Հայտորոշիչ թեստերը հիմնականում նպատակ ունեն խթանել և օգնել սովորողին բարելավելու իր առաջադիմությունը: Դրանք հնարավորություն են տալիս պարզել ինչպես յուրաքանչյուր սովորողի, այնպես էլ ամբողջ դասարանի ձեռքբերումներն ու բացթողումները՝ ուսումնական գործընթացում ապահովելով հետադարձ կապ, և բարելավել ուսուցումը: Ուսուցանող նպատակով կարելի է օգտագործել կարճ ժամանակի համար նախ ատեսվող հայտորոշիչ թեստեր, որոնց արդյունքները միավորներով չեն գնահատվում: Դրանց իրական նպատակը ուսումնասիրած թեմայից կամ թեմայի մի մասից սովորողների ոչ թե միավորային գնահատումն է, այլ յուրաքանչյուր սովորողի կողմից նյութի յուրացման աստիճանի պարզումը, նյութը վատ յուրացրած կամ չյուրացրած սովորողների բացահայտումը՝ նրանց գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մասին տեղեկություն ստանալն է, որը հնարավորություն կտա ժամանակին կատարել անհրաժեշտ շտկումներ և բարելավել նրանց ուսուցումը, նպաստել նրանց առաջընթացին: Այն պետք է նաև ուսուցչին, որպեսզի բացահայտի բացթողումները և կարողանա ճիշտ պլանավորել իր հետագա աշխատանքը: Կարճ ժամանակի համար նախատեսվող հայտորոշիչ թեստերն ավելի ճկուն են, և դրանց արդյունքներն ավելի օբյեկտիվ, հուսալի և արդար են վերլուծությունների համար:

Նման թեստերում ընդգրկվող առաջադրանքների հարցերը լինում են հիմնականում հետևյալ տեսակների

- ընտրովի պատասխանով,
- կարճ պատասխանով,
- համապատասխանեցման,
- բաց թողածը լրացնելու հարցերով:

Հա յտ որոշիչ թեստի առավելություններն են՝ ,

- արդյունքները արագ են ստուգվում և արժևորվում,
- արդյունքները թույլ են տալիս մեկնաբանել սովորողի առաջադիմության աստիճանն ու կարիքները,
- արդյունքների վերլուծությունից, մեկնաբանությունից հետևում է օժանդակություն ըստ անհրաժեշտության:

Հայտորոշիչ թեստը տրվում են յուրաքանչյուր սովորողի կողմից տվյալ դասանյութի յուրացման աստիճանը պարզելու և նրա հետ հետադարձ կապի հաստատման նպատակով: Գրավոր կամ բանավոր արժևորման ժամանակ կարևորվում են ուսուցչի հետևությունները, մեկնաբանությունները: Աշխատանքը վերլուծելիս անհրաժեշտ է յուրաքանչյուր սովորողի ներկայացվի նյութի յուրացման իր մակարդակը, նկատված բացթողումները:

Այսպիսով հայտորոշիչ թեստերի կազման սկզբունքներն են՝

- Թեստը կազմել այնպես, որ այն ստուգի մեկ հիմնական գիտելիք կամ ունակություն
- Հարցերը ձևակերպել պարզ, հստակ, կարճ
- Ընտրել տվյալ թեմայի ուսուցման նպատակներից բխող առաջադրանքներ
- Առաջադրանքները պետք է լինեն միջին բարդության՝ դասարանի մեծ մասի համար հաղթահարելի
- բոլոր առաջադրանքներն ուղղված են նույն գիտելիքի, կարողության կամ հմտության ստուգմանը,
- նախատեսել կարճ ժամանակի համար 15-20 ր

Ամփոփիչ թեստերը հիմնականում ստուգողական բնույթի են: Ստուգումը կարող է իրականացվել տարբեր նպատակներով: Ամփոփիչ թեստի հիմնական նպատակը ամբողջական թեմայի կամ կիսամյակի ընթացքում անցած ծրագրային նյութի յուրացման մակարդակի ստուգումն ու ամվտվումն է առարկայական չափորոշչի և ծրագրի պահանջներին համապատասխան: Ամփոփիչ թեստեր անցկացվում են.

- որևէ կոնկրետ թեմա, ենթաթեմա կամ մի քանի փոքր թեմաներ ստուգելու և ամփոփելու նպատակով, որն իր մեջ պետք է ընդգրկի այդ թեմայի (թեմաների) կարևոր առանցքային հարցերը,
- կիսամյակը ամփոփելու նպատակով, որը տրվում է կիսամյակի վերջում՝ բացահայտելու կիսամյակի ընթացքում ուսումնասիրած ծրագրային ամբողջ նյութի յուրացման աստիճանը,
- տնօրինության կողմից վերհսկողություն ապահովելու նպատակով:

Ամփոփիչ թեստի առանձնահատկություններ են՝

• տրվում է ուսուցման փուլի վերջում,

• ստուգում և գնահատում են ավելի խորը գիտելիքներ ու հմտություններ: [3; էջ 7]

Այսպիսով ամփոփիչ թեստերի կազման սկզբունքներն են՝

- հարցերը ձևակերպել պարզ և մատչելի,
- առաջադրանքներն ընտրել այնպես, որ այն ստուգի ավելի խորը գիտելիքներ և հմտություններ,
- սահմանել հստակ հատկորոշիչներ,
- առաջադրանքները կազմել պարզից դեպի բարդ սկզբունքով,
- ընտրել առաջադրանքների բազմազան տեսակներ,
- նախատեսել առաջադրանքների կատարման համար երկար ժամանակ,
- թեստը պետք է լինի հուսալի , հավաստի, արդյունավետ և օբյեկտիվ:

## 2.2 Փորձարարական մաս

Արդեն մի քանի տարի է ինչ հայտորոշիչ և ամփոփիչ թեստերը կիրառվում են «Դասավանդի՛ր Հայաստան» կրթական հիմնադրամի կողմից:Ես 1 տարի է ինչ աշխատում եմ հիմնադրամում և իմ դասավանդած բոլոր առարկաներից կազմել և անցկացրել եմ թեստավորում:Հիմնադրամի կողմից կիրառվող հայտորոշիչ և ամփոփիչ թեստերը տարբերվում են նոր չափորոշիչներով ներդրված թեստավորումից:Ստորև կներկայացնեմ տարբերությունները, իսկ հավելված 1-ում և 2-ում՝ հայտորոշիչ և ամփոփիչ թեստերի օրինակները։

Հայտորոշիչ թեստը հիմք է հանդիսանում տվյալ առարկայի թեմատիկ պլանավորման համար:Հայտորոշիչ և ամփոփիչ թեստերն անցկացվում են excel հատուկ համակարգ, որը հնարավորություն է տալիս տարվա ավարտի կատարել համեմատում և տեսնել յուրաքանչյուր աշակերտի գիտելիքների, կիրառության և քննական մտածողության աճը կամ հետաճը։

| Հայտորոշիչ թեստ | Ամփոփիչ թեստ |
|---|---|
| Տրվում է ուսումնական տարվա սկզբին | Տրվում է ուսումնական տարվա ավարտին |
| Կազմվում է նախորդ տարվա առարկայական չափորոշիչների հիմնա վրա | Կազմվում է տվյալ տարվա առարկայական չափորոշիչների հիման վրա |
| Հարցերն ընդգրկում են հիմնականում այն թեմաներ, որոնք հաջորդ դասարանում կիրառվելու են կամ հանդիսանում են հիմք | |

Հայտորոշիչ և ամփոփիչ թեստերը բաղկացած են 15 հարցից, հարցերը պետք է բաշխված լինեն հետևյալ հաջորդականությամբ՝

- գիտելիք- 6 հարց
- կիրառություն – 6 հարց
- քննական մտածողություն- 3 հարց

թեստը պետք է կազմել հեշտից-բարդ սկզբունքով՝ սկզբում գիտելիքի ստուգման հարցերը, ապա կիրառության ու քննական մտածողության:հեշտից բարդ սկզբունքը պահպանվում է յուրաքանչյուր մակարդակի դեպքում։

Գիտելիքի մակարդակի առաջադրանքների տեսակներն են՝

- բազմակի ընտրության առաջադրանքներ
- ճիշտ է/սխալ է
- լրացնել բաց թողնված փաստերը
- կարճ պատասխաններով առաջադրանք
- սահմանիր երևույթը
- լրացրու/գրիր սահմանումը
- համապատասխանեցում

Կիրառության մակարդակի առաջադրանքի տեսակներն են՝

- լուծել խնդիրը(կիրառել բանաձևը, թեորեմը)
- կազմել նախադասություններ տրված բառերից
- լրացնել աղյուսակը, գծապատկերը
- դասակարգել իրադարձությունները
- բացատրել նշված իրադարձության պատճառահետևանքային կապը

Քննական մտածողության մակարդակի առաջադրանքի տեսակներն են՝

- վերլուծել նշված իադարձության, երևույթհի հետևանքները,
- սահմանել նշված իրադարձության, երևույթի առավելություններն ու թերությունները,
- ստեղծել նոր սարք, զգծապատկեր,
- գրել էսսե,
- կանխատեսել նշված իրադարձության, երևույթի հնարավոր հետևանքները, արդյունքները,
- նոր վերջաբան մտածել շարադրանքի, պատմվածքի  համար,

- համեմատել,
- ապացուցել դիրքորոշման արդարացիությունը…։

Քննական մտածողության հարցերի և առաջադրանքների առանձնահատկությունն այն է, որ դրանք հնարավոր չէ միանշանակ որակել ճիշտ կամ սխալ։ Անհրաժեշտ է վերլուծել ըստ տրված քննական մտածողության ռուբրիկի չափանիշների, ապա դուրս բերելով աշակերտի ուժեղ և թույլ կողմերը, սահմանել ուսումնառության նպատակներ։[5; էջ 5]

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեսական և փորձարարական ուսումնասիրությունների արդյունքում եկանք հետևյալ եզրակացության.

1. Գահատումը միջոց է, որով որոշվում է  սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձևավորման աստիճանի, այն միտված է յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեության խթանմանը, ուսուցման և ուսումնառության վերահսկմանը, բարելավմանը և շարունակական զարգացմանը և գնահատման գործընթացի հիմքում ընկած են հավաստիության, հուսալիության, օբյեկտիվության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները:
2. Հայտորոշիչ գնահատման նպատակն է՝ բացահայտել սովորողի նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքներն ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա, կիսամյակի, առարկայի, դասընթացի, նոր թեմայի ուսումնասիրման մեկնարկից առաջ: Փուլի ընտրությունը թողնվում է ուսուցչի հայեցողությանը:Ամփոփիչ գնահատման նպատակն ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատումն է՝ դասի, թեմայի, կիսամյակի, ուսումնական տարվա ավարտին, ինչպես նաև կրթական աստիճանի ավարտին՝ ամփոփիչ ատեստավորման միջոցով:
3. Հայտորոշիչ թեստերի կազման սկզբունքներն են՝
   - Թեստը կազմել այնպես, որ այն ստուգի մեկ հիմնական գիտելիք կամ ունակություն
   - Հարցերը ձևակերպել պարզ, հստակ, կարճ

- Ընտրել տվյալ թեմայի ուսուցման նպատակներից բխող առաջադրանքներ
- Առաջադրանքները պետք է լինեն միջին բարդության՝ դասարանի մեծ մասի համար հաղթահարելի
- բոլոր առաջադրանքներն ուղղված են նույն գիտելիքի, կարողության կամ հմտության ստուգմանը,
- նախատեսել կարճ ժամանակի համար 15-20 ր

Այսպիսով ամփոփիչ թեստերի կազման սկզբունքներն են՝

- հարցերը ձևակերպել  պարզ և մատչելի,
- առաջադրանքներն ընտրել այնպես, որ այն ստուգի ավելի խորը գիտելիքներ և հմտություններ,
- սահմանել հստակ հատկորոշիչներ,
- առաջադրանքները կազմել պարզից դեպի բարդ սկզբունքով,
- ընտրել առաջադրանքների բազմազան տեսակներ,
- նախատեսել առաջադրանքների կատարման համար երկար ժամանակ,
- թեստը պետք է լինի  հուսալի , հավաստի, արդյունավետ և օբյեկտիվ:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. «ԿԶՆԱԿ» Հիմնադրամի գնահատման մշակման և զարգացման բաժին – Գնահատում
2. «ԿԶՆԱԿ» Հիմնադրամի գնահատման մշակման և զարգացման բաժին - Հայտորոշիչ թեստ
3. ՀՀ ԿԳՄՍ ազգային ինստիտուտի գիտակրթական ամսագիր, «Մաթեմատիկան դպրոցում» Երևան, 2013 թ,58 էջ
4. ՀՀ ԿԳՄՍ նախարարի N-11Ն որոշում
5. Yendol-Hoppey, D. and Dana, N.F. . *Powerful Professional Development. 2010* California: Corwin.
6. https://krtahartak.am/courses/obligatory/course-013/lessons/%d5%a4%d5%a1/

Հավելված 1

**Հայտորոշիչ թեստի օրինակ**

**Ամիս/ամսաթիվ——————————————————**

**Անուն/ազգանուն——————————————————**

**Ուսուցիչ——————————————**

**Ուղերձ**

Սիրելի՛ աշակերտ, այս թեստում ընգրկված է 15 առաջադրանք, որոնց օգնությամբ կիմանանք, թե որոնք են այն թեմաները, որոնց դու լավ ես տիրապետում և այն թեմաները, որոնք դժվար են քեզ համար: Պատասխանի՛ր հարցերին անշտապ: Կարևոր է, որ պատասխանես բոլոր հարցերին, որպեսզի արդյունքները հավաստի լինեն: Թեստը վերջացնելուց հետո, ստուգի՛ր այն, համոզվիր որ չկան բացթողումներ կամ ուղղագրական սխալներ, ապա հանձնի՛ր թեստը ուսուցչին: Եթե հարցեր ունես, նախ փորձիր գտնել հարցիդ պատասխանն այստեղ, ապա, եթե չես գտնում, դիմի՛ր ուսուցչին:

Հաջողությո՛ւն...

**1.Ո՞րն է ՀՀ պետական խորհրդանիշ:**

- Զինանշան
- Ծիրան
- Կարպետ
- լավաշ

**2.Լրացրու՛ բաց թողնված բառերը:**

Մեր ————————, ազատ, անկախ
Որ ապրել է դարեդար,
Յուր որդիքը արդ կանչում են
Ազատ, անկախ —————————:

**3.Թվարկի՛ր 2 պետական տոն:**

1.————————————————
2.——————————————

**4.Քանի՞ բնակավայր կա ՀՀ տարածքում:**

- 901
- 507
- 49
- 900

**5.Համապատասխանեցրու՛ մարզը մարզկենտրոնին:**

| | |
|---|---|
| Լոռի | Հրազդան |
| Շիրակ | Գյումրի |

| | |
|---|---|
| Տավուշ | Գավառ |
| Գեղարքունիք | Կապան |
| Արագածոտն | Աշտարակ |
| Վայոց Ձոր | Արարատ |
| Սյունիք | Իջևան |
| Արմավիր | Եղեգնաձոր |
| Արարատ | Արմավիր |
| Կոտայք | Վանաձոր |

**6.Ո՞ր երգահանն է ՀՀ օրհներգի հեղինակը:**

- Միքայել Նալբանդյանը
- Բարսեղ Կանաչյանը
- Արամ Խաչատրյանը
- Կոմիտասը

**7. Նկարագրի՛ր ազգային տոներից մեկը:**

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

____________________________________________________________

**8.Նկարագրի՛ր ՀՀ պետականության խորհրդանիշներից մեկը:**

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

____________________________________________________________

**9.Կազմի՛ր ազգային տոների ցանկն ու ժամանակացույցը:**

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

_________________________________________________

**10.Կազմի՛ր քո բնակավայրին մոտ գտնվող գյուղերի և քաղաքների ցուցակը:**

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

_______________________________________________________

**11.Բացատրի՛ր «տուն» և «հայրենի տուն» հասկացությունների տարբերությունը:**

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

_______________________________________________________

12.Պատկերի՛ր քո մարզի քարտեզը:

13.Ինչու՞ են անհրաժեշտ ազգային-պետական տոները:
______________________________________________________________________________
______________________________________________________________________________
____________________________________________________________

14. Ի՞նչ է  հայրենիքն ըստ քեզ:
______________________________________________________________________________
__________________________________________________________________

15.Առաջարկի՛ր  ազգային տոն, որը կցանկանայիր նշել:Մեկնաբանի՛ր պատասխանդ:
______________________________________________________________________________
__________________________________________________________________

Հավելված 2

**Ամփոփիչ թեստի օրինակ**

**Ամիս/ամսաթիվ————————————————————**

**Անուն/ազգանուն———————————————————**

Ուսուցիչ————Լիաննա Աբազյան————————

**Ուղերձ**

Սիրելի՛ աշակերտ, այս թեստում ընգրկված է 15 առաջադրանք, որոնց օգնությամբ կիասկանանք, թե որոնք են այն թեմաները, որոնց դու լավ ես տիրապետում և այն թեմաները, որոնք դժվար են քեզ համար: Պատասխանի՛ր հարցերին անշտապ: Կարևոր է, որ պատասխանես բոլոր հարցերին, որպեսզի արդյունքները հավաստի լինեն: Թեստը վերջացնելուց հետո, ստուգի՛ր այն, համոզվիր որ չկան բացթողումներ կամ ուղղագրական սխալներ, ապա հանձնի՛ր թեստը ուսուցչին: Եթե հարցեր ունես, նախ փորձիր գտնել հարցիդ պատասխանն այստեղ, ապա, եթե չես գտնում, դիմի՛ր ուսուցչին:

Հաջողությո՛ւն...

**1.Ո՞րը ՀՀ պետական խորհրդանիշ չէ:**

- Զինանշան
- դրոշ
- Կարպետ
- օրհներգ

**2.Լրացրու՛ բաց թողնված բառերը:**

Մեր հայրենիք ազատ, անկախ
Որ ապրել է —————,
Ցուր որդիքը արդ կանչում են
——————, անկախ Հայաստան:

**3.Թվարկի՛ր 3 պետական տոն:**

**1.———————————————**
**2.———————————————**
**3. ———————————————**

**4. ՀՀ տարածքում կա 900 ———:**

- բնակավայր
- գյուղ
- քաղաք
- համայնք

**5.Համապատասխանեցրու՛ մարզկենտրոնը մարզին:**

| | |
|---|---|
| Լոռի | Հրազդան |
| Շիրակ | Գյումրի |
| Տավուշ | Գավառ |
| Գեղարքունիք | Կապան |
| Արագածոտն | Աշտարակ |
| Վայոց Ձոր | Արարատ |
| Սյունիք | Իջևան |
| Արմավիր | Եղեգնաձոր |
| Արարատ | Արմավիր |
| Կոտայք | Վանաձոր |

**6.Ո՞վ է գրել ՀՀ օրհներգի բառերը:**

- Միքայել Նալբանդյանը
- Բարսեղ Կանաչյանը
- Արամ Խաչատրյանը
- Կոմիտասը

**7. Նկարագրի՛ր <<Զատիկ>> տոնը:**

**8.Նկարագրի՛ր թե ի՞նչ է պատկերված ՀՀ զինանշանի վրա:**

**9.Կազմի՛ր ազգային 3 տոների ցանկն ու ժամանակացույցը:**

**10 Ներկայացրու՛ ձեր բնակավայրին կից համայնքի անուններ :**

**11.Նկարագրի՛ր «հայրենի տուն» հասկացությունը:**

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________

**12.Ո՞ր մարզի քարտեզն է պատկերված:**

1. Լոռի
2. Վայոց Ձոր
3. Արմավիր
4. Կոտայք

**13.Ի՞նչ նշանակություն ունեն ազգային-պետական տոները :**

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

______________________________________________________________

**14. Ի՞նչ է հայրենիքը քո պատկերացմամբ: :**

________________________________________________________________________________

____________________________________________________________________

**15.Առաջարկի՛ր տոն, որը նշում են այլ երկրներում , սակայն կցանկանայիր նշել:Մեկնաբանի՛ր պատասխանդ:**

________________________________________________________________________________

____________________________________________________________________

**Հավելված 3**

Հայտորոշիչ թեստի օրինակ

Առարկա ———————, դասարան————, Անուն/ազգանուն—————

Թեստը կազմված է 5 հարցից:Աշխատաքնի կատարման համար ունեք 15 ր ժամանակ:Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվելու է 1 միավոր:

1. Ի՞նչ է մակերեսը:

____________________________________________________________

2. Սահմանի՛ր ուղղանկյան մակերեսը գտնելու կանոնը:

____________________________________________________________

3. Սահմանի՛ր քառակուսու մակերեսը գտնելու կանոնը:

____________________________________________________________

4. Հաշվի՛ր 5 սմ երկարություն և 3 սմն լայնություն ունեցող ուղղանկյան մակերեսը:

5. Հաշվիր 5 սմ կողմ ունեցող քառակուսու մակերեսը:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

**Պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում**

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

## ԹԵՄԱ՝ ՀԱՍԿԱՆԱԼՈՎ ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԿԱՏԱՐՈՂ՝ Ս. ԱԹՈՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. Գ. Թ. Լ. ՄԻՐԱՔՅԱՆ

ՎԱՆԱՁՈՐ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ........................................................................................................................3

ԳԼՈՒԽ 1:Հասկանալով կարդալու կարողության ձևավորման գործընթացը…..………4

ԳԼՈՒԽ 2:Կարդալու տեսակները, նրանց դերը կարդալու որակական հատկանիշների ձևավորման գործում………………………………………………………………6

ԳԼՈՒԽ 3:Հասկանալով կարդալու դերը մաթեմատիկայի դասերին……………..…….9

ԳԼՈՒԽ 4: Յուրացման գիտակցականությունը մաթեմատիկայի դասերին……………12

Եզրակացություն ...................................................................................................…....15

Օգտագործված գրականության ցանկ .........................................................................…....16

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անառարկելի է կարդալու և ընթերցանության դերը անձի զարգացման, նրա մասնագիտական կարողությունների ձեռք բերման և հասարակության արժանավոր քաղաքացի դարձնալու գործընթացում: Կարդալը, ընթերցանությունը և նրա նկատմամբ անձի սերը և հակումները մեծ դեր ունեն նրա կյանքում: Կարդալու ընթացքում մարդը ձեռք է բերում ոչ միայն մասնագիտական և անձնային արժեքներ, այլև` հոգեկան բավականություն, թեթևություն, կարիքների բավարարում, արժեհամակարգ և այլն: Այս ամենը հնարավոր է իրականացնել, եթե նա ոչ միայն կարդա, այլև հասկանա իր կարդացածը: Պատահական չէ , որ տարրական դպրոցի մայրենիի չափորոշչում և ծրագրում կարևորված է սովորողների կարդալու կարողությանը զարգացումը, մասնավորապես հասկանալով կարդալու ունակությունը: Այս ունակության ձևավորման ուղղությամբ աշխատանքները հիմնականում իրականացվում են տարրական դպրոցում: Նշված գործընթացն ունի բազմաթիվ դժվարություններ, որոնք ոչ միշտ է հաջողվում հաղթահարել:

**Այսպիսով, իմ ավարտական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է** մարդու կյանքում հավասազոր կարդալու կարողության անհրաժեշտությամբ և տարրական դպրոցում այդ գործընթացում ծագած դժվարություններով ու դրանց հաղթահարման միտված մեթոդիկայի կիրառման անկատարությամբ:Վերոնշյալ հանգամանքներով է հենց պայմանավորված մեր աշխատանքի թեմայի արդիականությունը, որի ուսումնասիրման շրջանակներում կներկայացնեմ դպրոցում սովորողների մոտ ընթերցողական կարողությունների մակարդակը, հմտությունները, ձեռքերումներն ու բացթողումները և դրանց ազդեցությունը մաթեմատիկական ձեռք բերման վրա: Առհասարակ, մարդկության պատմության կարողությունների բոլոր ժամանակներում էլ սերնդի մեջ գիտելիքների, կարդալու որակական հմտությունների և կարողությունների ձևավորումը և այդ կարդացածը հասկանալն եղել է արդիական հիմնախնդիր:

Ժամանակակից պայմաններում  կրթության նկատմամբ նոր մոտեցումներն ու պահանջները իրենց հերթին առաջ են բերել մի շարք քայլեր՝ ուղղված դպրոցում ընթերցողական կարողությունների յուրացման հիմնախնդրի արյունավետ լուծմանը, գրական գիտելիքների մակարդակում համապատասխան կարողությունների և հմտությունների ձևավորմանը միտված ուսումնական արդյունավետ փուլերի մշակմանն ու իրականացմանը:

**Հետազոտության նպատակն է.**

. ուսումնասիրել մասնագիտական գրականության մեջ մեր հիմնախնդիրների ուղղությամբ առկա սկզբունքները և դիտարկել արժեքավոր սկզբունքները:

**Նպատակին հասնելու համար իմ առջև դրել եմ հետևյալ խնդիրները.**

- բացահայտել կրտսեր դպրոցականների հասկանալով կարդալու կարողության ձևավորման դժվարությունները մաթեմատիկայի դասերին և ներկայացնել այդ գործընթացի կազմակերպման ուղղությամբ մեթոդաբանական ցուցումները:

. բացահայտել տարրական դասարանում մայրենիի ծրագրում հասկանալով կարդալու կարողության ձևավորմանը նվիրված աշխատանքների համալիրը:

**Հետազոտության կառուցվածքն ու ծավալը:** Սույն հետազոտությունը կազմված է ներածությունից, 4 գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:Ծավալը 16 էջ է:

## ԳԼՈՒԽ 1: Հասկանալով կարդալու կարողության ձևավորման գործընթացը

Մաթեմատիկայի դերը շրջակա աշխարհի ուսումնասիրության, մարդու հոգեկան աշխարհի զարգացման գործում, կիրառական հսկայական նշանակությունը մաթեմատիկական կրթություն ստացած մարդուն դարձնում են ցանկալի' ինչպես գործնական, այնպես էլ հոգևոր խնդիրների քննարկման և իրականացման տեսակետից: Այդ պատճառով, մաթեմատիկական կրթությունը մեծացնում է ուրիշների կողմից սիրված լինելու հնարավորությունները: Մյուս կողմից, մաթեմատիկայի իմացությունը մեծացնում է նրա նկատմամբ մարդկանց հարգանքի զգացմունքը: Հետևապես, մաթեմատիկական կրթությունը նպաստում է մարդկանց միջև բարոյական ներդաշնակության հաստատմանը[3, էջ 16 ]:

Յուրաքանչյուր ժողովրդի մշակույթի ու դպրոցի պատմությունն սկիզբ է առնում ազգային գրերի ստեղծումից և դրանց ուսուցումից: Այս առումով մանկավարժական գիտություններից ամենից հինը մայրենի լեզվի մեթոդիկան է, իսկ նրանում էլ ամենահինը՝ գրաճանաչության բաժինը: «Հայ դպրոցն ունի գրաճանաչության մեթոդների հարուստ գանձարան, որը վկայում է հայ ժողովրդի, հայ մտավորականների՝ մատաղ սերնդի կրթության, ասել է՝ ազգապահպանման նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի առկայությունը»: Գրաճանաչության մեթոդիկան զբաղվում է գրաճանաչության ուսուցման հարցերով՝ գրուսուցման ժամանակակից մեթոդի, 6-7 տարեկան երեխաների տարիքային առանձնահատկությունների, այբբենարանի կառուցվածքի ու բովանդակությ ան, ուսումնական աշխատանքի գիտական կազմակերպման, երեխաների համակողմանի դաստիրակության խնդիրների ընդգրկումով: Այս առումով էլ գրաճանաչության մեթոդիկան հենվում է ժամանակակից մանկավարժության ու դիդակտիկայի, մանկավարժական

հոգեբանության ու մարդաբանության, մայրենի լեզվի մեթոդիկայի և հայոց լեզվի գիտական հնչյունաբանության վրա, որոնք նրա տեսական հիմունքներն են կազմում՝ յուրաքանչյուրը յուրովի նպաստելով գրաճանաչության ուսուցման գիտական սկզբունքների մշակմանը:

**Հասկանալով կարդալ նշանակում է** կարդացածը հասկանալ, ճշտությամբ վերարտադրել, պահպանել մտքի հաջորդականությունը և տրամաբանական կապը, վերլուծել կարդացածը:Վերլուծելը թերևս այն կարևոր և բարդ կարողություններից մեկն է, որը փորձում ենք ձևավորել տարրական դպրոցում:

**Հասկանալով կարդալու կարողության մշակումը ընթերցանության գերխնդիրն է:**

Կարդացածը հասկանալ նշանակում է տեքստի մտքերը ներհյուսել տվյալ թեմայի վերաբերյալ իր իմացությանը, հաղորդվող տեղեկությունը կիրառել գործնականում, ինչպես նաև կարդացածին սեփական մեկնաբանությունը տալ:Կարդալու ուսուցումը սկսվում է տարրական դպրոցից, որն ուսուցման հետագա օղակներում դառնում է միջոց:Կարդալու և կարդացածը հասկանալու կարողության մշակումը բարդ և աշխատատար գործ է և բավական ճիգ և ջանք է պահանջում:



## ԳԼՈՒԽ 2:ԿԱՐԴԱԼՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ԿԱՐԴԱԼՈՒ ՈՐԱԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

«Մենք դիտարկեցինք կարդալու որակական հատկանիշները, որոնք պիտի ձևավորվեն ու զարգանան տարրական կրթության ողջ ընթացքում: Այս ուղղությամբ աշխատանքը պիտի շարունակվի նաև հիմնական դպրոցում: Բոլոր որակական հատկանիշների պահպանմամբ կարդալու հմտությունը պիտի ամբողջանա հիմնական դպրոցում, որտեղ մայրենիի դասի խնդիրներից է նաև գրական ընթերցանությունը: Տարրական դպրոցում կարդալու որակական հատկանիշների պահպանմամբ ընթերցելու կարողության զարգացումն ու ձևավորումն իրականացվում են նյութի բազմակի ընթերցանության ճանապարհով կիրառելով բազմաբնույթ նպատակներ և կազմակերպման ինքնատիպ ձևեր ունեցող կարդալու տեսակներ: Դրանք ոչ միայն նպաստում են կարդալու որակական հատկանիշների ձևավորմանն այլև մշակում են ընթերցողական կարողություններ, միևնույն ստեղծագործության բազմնակի ընթերցման գործընթացը դարձնում են հետաքրքրական և անձանձիր: Հետևաբար մայրենիի դասերի ժամանակ պիտի կիրառել կարդալու բոլոր տեսակները՝ հաշվի առնելով ստեղծագործության առանձնահատկությունները: Մայրենիի դասագրքերում զետեղված բնագրերի դասարանական ընթերցումը կարելի է իրականացնել մի քանի ձևով՝ ձայնով կամ բարձրաձայն, լուռ կամ մտքում, շարունակելով, մեկնաբանելով կամ կանգառներով ընտրովի, և դերերով: Սրանցից յուրաքանչյուրն ունի իրականացման որոշակի մեթոդիկա:

**Ձայնով կարդալը**, այսպիսի ընթերցումը նպաստում է կարդալու կարողության մշակմանն ու կատարելագործմանը, ինչպես նաև ձևավորում է **կարդացածը հասկանալու** կարողություն: Ձայնով կարդալու միջոցով ուսուցիչն աշակերտներին տալիս է արտահայտիչ կարդալու նմուշ, բացահայտում է երեխայի կարդալու գործընթացի թերությունները:

**Մտքում կարդալը** կրտսեր դպրոցականների համար դժվար է, քանի որ նրանց ուշադրությունը դեռևս կամային չէ, ցրված է, և երեխաներն արագ կարող են շեղվել: Արդյունքում երեխան կարող է մատը տողերի վրայով սահեցնել, սակայն մտքով ուրիշ տեղ լինել:

**Ձայնով կարդալը** լինում է երկու տեսակ՝ **բարձրաձայն և ցածրաձայն**, որոնք հիմնականում օգտագործվում են գործող անձանց հոգեվիճակներն արտահայտելու համար: Օրինակ՝ նկարագրությունները, դանդաղ զարգացող գործողությունները, տխուր մեկնաբանությունները, խորհրդավոր մտքերը պետք է կարդալ ցածրաձայն դանդաղ, իսկ արագ զարգացող գործողությունները բարձրաձայն և արագ: Բարձրաձայն են արտահայտվում ուրախությունը,

զայրույթը, սպառնալիքը, մինչդեռ սերը, փաղաքշանքը, տխրությունը, խորհուրդն արտահայտվում են ցածրաձայն:

**Բարձրաձայն ընթերցանությունը** կոլեկտիվ աշխատանք կատարելու (կարդալ շարունակելով, կանգառներով, ընտրովի, դերերով և այլն) անփոխարինելի միջոց է և ոչ միայն միավորում է տվյալ դասարանի բոլոր աշակերտների ուշադրությունը, այլև ուղղորդումI է ողջ դասարանին՝ կարդալ մտքում (աչքերով)՝ հայացքով հետևելով ընկերների ընթերցանությանը և իմաստավորելով կարդացածը: Եզակի դեպքերում կարելի է նաև դիմել բարձրաձայն խմբովին կարդալուն (հատկապես առաջին դասարանում, երբ որևէ բառ երեխաները դժվարությամբ են արտասանում կամ կարդում) : Մասնավորապես չափածո խոսքը կարելի է անգիր սովորեցնել խմբովին կարդալու միջոցով՝ բանաստեղծության ռիթմը ուսուցանելու համար: Բարձրաձայն ընթերցանությանը տարրական դպրոցում մեծ տեղ է տրվում նաև այն բանի համար, որ այդ ձևով կարդալիս ընքերցանության գործընթացին մասնակցում են երեխաների ոչ միայն աչքերն ու արտասանական կառույցը, այլև ականջները. որքան շատ զգայարան մասնակցի ուսուցման գործընթացին, այնքան այդ գործընթացն արդյունավետ կլինի «Ձայնով կարդալը ոչ միայն մշակում ու զարգացնում է երեխաների կարդալու հմտությունները, այլև սովորեցնում է խոսելու օրգանները, ձայնը և շնչառությունը ճիշտ կառավարելու արվեստը, որը կատարելության է հասնում ասմունքողների մոտ» [ 4, էջ 64]:

Տարրական դասարաններում բարձրաձայն կարդալուն զուգընթաց նաև լուրջ աշխատանք է պահանջվում մտքում կարդալու կարողության մշակման ուղղությամբ:

**Լուռ կարդալը** մտքում կարդալն է, որն իրականացվում է դասարանում՝ ասուցչի հսկողության ներքո (աչքերի շարժումով՝ առանց խոսքի օրգանների մասնակցության) մտքում կարդալուն աշակերտը սկսում է հասկանալ նյութը և յուրացնել է այն ներքին խոսքով: Բայց յուրացնելով նյութը՝ կրտսեր դպրոցականը դժվարանում է բառերով արտահայտել այս կամ հասկացածը՝ հաղորդել ուրիշ մարդկանց: Նման դեպքերում օգտակար է երեխաներին խորհուրդ տալ բարձրաձայն պատմել այն, ինչ կարդացել ու հասկացել են: Մտքում կարդալու նախնական կարողությունն սկսվում է ձևավորվել դեռևս այն ժամանակ, երբ համադասարանային ընթերցման ժամանակ (շարունակելով) մեկը կարդում է, իսկ մնացածն աչքերով հետևում են: «Սրա նպատակն այն է, որ մինչև ուսուցիչը կբացատրի նյութը, աշակերտը ընթերցումով հասցնում է ծանոթանալ տեքստի բովանդակությանը և նրա հետ ակտիվորեն մասնակցում նյութի մեկնաբանմանը: Լուռ ընթերցման առավելությունը նաև այն է, որ առանց արտասանական ապարատների մասնակցության, աչքերով կարելի է կարդալ նյութի բովանդակությունն ըմբռնելով յուրովի ըստ անհատի խառնվածքի, նրա անհատական ու տարիքային առանձնահատկությունների: Աստիճանաբար անհրաժեշտ է երեխաներին

հանձնարարել նախ շշուկով կարդալ ապա մտքում: Այս կարողությունը հետագայում պետք է գալու աշակերտներին երբ շատանան դասավանդվող առարկաները, ընդարձակվի յուրաքանչյուր առարկայի բովանդակությունը, բարձրաձայն կարդալով՝ ոչ միան սովորողները չեն հասցնի ծավալուն նյութն ընթերցել (բարձրաձայն ընթերցանությունը ավելի շատ ժամանակ է պահանջում), այլև այն հոգնեցուցիչ է, երեխաները կհոգնեն իրենց ձայնից: Միաժամանակ չպետք է մոռանալ, որ «Լուռ ընթերցանութունը մեծ կշիռ է ունենում այն դեպքում, երբ աշակերտը բարձրաձայն ընթերցանության կարողություն ունի»[ 2, էջ 27]:

Տարրական դպրոցում միշտ չէ, որ խրախուսվում է մտքում կարդալը: Շարունակելով կարդալ: Կարդալու այս տեսակը շատ արդյունավետ է տարրական դասարաններում, երբ ուսուցչի հանձնարարությամբ աշակերտներից մեկը կարդում է, ամբողջ դասարանը աչքերով (մտքում կարդալով) հետևում է ընկերոջ ընթերցանությանը՝ պատրաստ շարունակելու այն հատվածից, ուր կընդհատի ընթերցողը ուսուցչի պահանջով: Ինչպես նշեցինք, կարդալու այս տեսակի միջոցով միանգամից կարդում է ամբողջ դասարանը: Պետք է նկատի ունենալ, որ շարունակելով կարդալու ժամանակ չի կարելի ընդհատել երեխայի ընթերցանությունը և մեկ ուրիշին պատահական հատվածից շարունակել տալ: Անհրաժեշտ է թույլ տալ, որ կարդացողը հասնի մտքի տրամաբանական ավարտին, դեպքի նկարագրությանը և այլն, նոր հանձնարարել մեկ այլ աշակերտի՝ շարյանակել կարդալը: Շարունակելով կարդալուն պիտի հաջորդի կանգառներով (հատվածաբար) ընթերցանությունը, որի ժամանակ ընթերցած նյութը հատված առ հատված մեկնաբանվում է: Այդ պատճառով էլ կարդալու բարդ տեսակը կոչվում է նաև մեկնաբանել ով ընթերցանություն: Բացատրելով կամ մեկնաբանելով կարդալն իրագործվում է կարդացած նյութի բովանդակությունը կամ մտքերը բացատրելով ու մեկնաբանելով, քննարկելով գործող անձանց վարքը, արդարացնելով կամ մեղադրելով նրանց, բառային աշխատանք կատարելով, բառերի ուղղագրությունը բացատրելով, կետադրությունը մեկնաբանելով և այլն: Այս աշխատանքները նպաստում են նյութի բովանդակության հասկացման կարդալու կարողության կատարելագործմանը, վերլուծական և քննադատական մտածողության զարգացմանը: Սեկնաբանելով ընթերցանության մեթոդապես ճիշտ կազմակերպման համար կարևոր է ուսուցչի կողմից ընթերցվելիք ստեղծագործության տրամաբանական հատվածների (կանգառների) և հենակետային մտքերի որոշումն ու նրանց շուրջ իրականացվող աշխատանքի բովանդակության նախագծումը, ինչպիսի՞ հատվածների պիտի բաժանել ստեղծագործությունը, ո՞ր հենակետային մտքերը պիտի դիտարկել, ի՞նչ հարցեր պետք է առաջադրվեն աշակերտներին.

. ո՞ր բառերն ու արտահայտություններն են օգնում բացահայտելու հիմնական միտքը, բանալի բառերը,

. ո՞ր մտքերն են լուծելու դաստիարակչական խնդիրներ և այլն:

**Մեկնաբանող կամ կանգառներով** ընթերցանությունը մեծապես նպաստում է բնագրի բովանդակության մեջ թափանցելուն, գործող անձանց և կերպարների էությունն ըմբռնելուն, ներկայացվող դեպքերի տրամաբանական և պատճառահետևանքային կապերը հասկանալուն, գաղափարն ու ենթատեքստը բացահայտելուն և մեկնաբանելուն: Սրանք ընթերցողական կարողության հիմնական բնութագրիչներ են:

**Կարդալու բոլոր տեսակներն էլ նպաստում են ընթերցողական կարողության զարգացմանը, սակայն կանգառներով ընթերցանությունն այդ խնդրում առավել ընդարձակ հնարավորություններ ունի:**

## ԳԼՈՒԽ 3 :Հասկանալով կարդալու դերը մաթեմատիկայի դասերին

Մաթեմատիկայի դերը շրջակա աշխարհի ուսումնասիրության, մարդու հոգեկան աշխարհի զարգացման գործում, կիրառական հսկայական նշանակությունը մաթեմատիկական կրթություն ստացած մարդուն դարձնում են ցանկալի' ինչպես գործնական, այնպես էլ հոգևոր խնդիրների քննարկման և իրականացման տեսակետից: Այդ պատճառով, մաթեմատիկական կրթությունը մեծացնում է ուրիշների կողմից սիրված լինելու հնարավորությունները: Մյուս կողմից, մաթեմատիկայի իմացությունը մեծացնում է նրա նկատմամբ մարդկանց հարգանքի զգացմունքը: Հետևապես, մաթեմատիկական կրթությունը նպաստում է մարդկանց միջև բարոյական ներդաշնակության հաստատմանը[3,էջ16]:

Սովորողների մոտ այսպիսի բարձր արժեքներ սերմանելու ևդաստիարակելու համար մաթեմատիկայի դասերին շատ կարևոր է հասկանալով կարդալու կարողության ձևավորումը:

Մաթեմատիկայի դասերին ևս հասկանալով կարդալը նպատակային է և գիտակցված, երբ խնդիրները կամ առաջադրանքների պահանջը կարդալիս սովորողները հանդիպում են անհասկանալի բառերի, հասկացությունների: Ջգտում են հասկանալ ինչի մասին է խոսքը գնում:

Կարդալու ընթացքում ,երբ սովորողը անընդհատ կարդում է առաջադրանքը, այդ ճանապարհով նա ստուգում է իր վարկածը, փորձում է իմաստավորել , հասկանալ իր ստացած տեղեկատվությունը:Արդյունքում սովորողը ոչ թե պասիվորեն ընկալում է այն, ինչ կարդում է, այլ նա իր վրա է վերցնում կարդացածն իմաստավորելու, նրա մեջ գաղափար դնելու առաջատար դերը: Այս ամենից բխում են խնդիրների և առաջադրանքների լուծման ուղիները:

Դպրոցականների մտավոր կարողություններն ու նախասիրությունները, ինչպես նաև մաթեմատիկական մտածողության տարրերը հիմնականում ձևավորվում են դեռևս կրտսեր դպրոցում՝ մաթեմատիկայի դասերին:Հասկանալով կարդալու արդյունքում սովորողներից շատերը նպաստավոր պայմանների առկայության դեպքում կարող են մտավոր կարողությունների անսպասելի դրսևորումներ ցուցաբերել: Նրանք կարողանում են ինքնուրույն դատողություններ անել, նկատել որոշակի օրինաչափություններ, որոնել խնդիրների լուծման նոր, ոչ ստանդարտ եղանակներ:

Ժամանակակից մանկավարժության տեսական և գործնական խնդիրներից կարևորագույններից մեկը տարրական դասարանների աշակերտների ուսուցման գործընթացի կատարելագործումն է:

Տարրական դասարաններում սովորողների շրջանում ուսուցման մեջ առաջացող դժվարությունները կարելի է բաժանել 3 խմբի՝

1. կենսաբանական,

2. սոցիալական

3. հոգեբանական:

Բացի ուսուցման ընդհանուր դժվարություններին կան նաև յուրահատուկ՝ մաթեմատիկական նյութի յուրացման դժվարություններ: Ցածր դասարանի աշակերտի համար առաջնային խնդիրներից է համարվում դժվար, վերացական, անհասկանալի մաթեմատիկական տեղեկատվության նկատմամբ վախի հաղթահարումը, վստահության առաջացում նյութի յուրացման հնարավորության մեջ և ուսման մեջ հետաքրքրության առաջացում, աշխատանքի արտադրողականության բարձրացում:

Սովորողի մաթեմատիկական գիտելիքների զարգացման, նրա արժեքային համակարգի, մտածողության ձևավորման գործում մեծ դեր է կատարում ինքնուրույն ընթերցանությունը:

Ընթերցած դասի մեջ կերտված առկա գործողությունները սերտորեն առնչվում են ինչպես աշակերտի ինքնարտահայտման, այնպես էլ ուսումնական-ստեղծագործական գործունեության հիմքերին: Ընթերցելու մեթոդիկայի ճիշտ ընտրությունը նպաստում է մաթեմատիկական գիտելիքների զարգացմանը: Կապակցված խոսքի ստեղծումը, խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների բարձրակետն է, որովհետև այդ ուղղությամբ տարվող աշխատանքների վերջնական նպատակն աշակերտների մեջ կապակցված մաթեմատիկական գիտելիքներ ստեղծելու կարողության ձևավորումն է:

Կարդացածի միջոցով միքտ կառուցելու կարողության մշակման տեսակետից օգտակար են ինքնուրույն ընթերցանությունն ու դրան հաջորդող փուլը՝ պատումը, վերլուծումը, որը հնարավոր է իրականացնել նույնիսկ դասագրքում եղած թեմատիկ վարժությունների շուրջ կապակցված հմտությունների ստեղծման, տեսածի ու լսածի, զգացածի ու խորհածի վերարտադրման միջոցով:

Ինքնուրույն ընթերցանությունը բավականին բարդ գործընթաց է և մաթեմատիկայի դասի դասավանդման կարևոր բաղադրիչ: Աշակերտների մաթեմատիկական մտածողության զարգացման համար անհրաժեշտ երեք բաղադրիչների՝ բառապաշարի. հարստացման ու կատարելագործման, խոսքի արտահայտչականության՝ առոգանության և տրոհության պահպանման և լավ հասկանալու կարողության մշակման աշխատանքները պետք է իրականացնել միաժամանակ, միմյանց հետ սերտորեն կապված: Իսկ դրա լավագույն միջոցը կապակցված միտքն է՝ երեխաներին հարցեր տալը, տեսածի, լսածի ու հսկացածի մասին պատմելը: Խոսելու, արտահայտվելու կամ վերլուծելու ընթացքում որոշակիորեն դրսևորվում է երեխայի բառապաշարը, խոսքի արտահայտչականությունն ու պատմելու կարողությունը, և այն, ինչ թերի է, ուսուցիչն ուղղում, շտկում ու կատարելագործում է կոնկրետ լեզվական նյութի վրա:

Այսպիսով՝ ինքնուրույն ընթերցանությունը և հասկանալու կարողությունը երեխային հնարավորություն է ընձեռում հարստացնել ճանաչողական գործունեության հիմնական փորձը, զարգացնել տրամաբանական, հաղորդակ-ցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և մաթեմատիկական ունակությունները: Իսկ հասկանալով ընթերցանությունն ակտիվացնում է մտածական գործընթացները և կարևոր նախապայման դառնում երեխաների արդյունավետ ուսուցման և ուսումնառության համար:



:

## ԳԼՈՒԽ 4 : Յուրացման գիտակցականությունը մաթեմատիկայի դասերին




Յուրացման գիտակցականություն ասելով՝ հասկացվում է սովորողների կողմից գիտելիքների այնպիսի տիրապետում, որը ենթադրում է յուրացված նյութի խորը ըմբռնում և նոր, կոնկրետ իրավիճակներում դրա կիրառման կարողություն:

Նշված սկզբունքն իրականացնելու դժվարությունները շատ-շատ են: Ըստ էության մանկավարժագիտությունը, ինչպես ենթադրում է Ա. Ա. Ստոլյարը, դեռևս ճշգրտորեն չգիտի, թե ինչ է նշանակում «հասկանալ» (ըմբռնել): Այս հիմնահարցի պատասխանը մասնագետները գտնում են ինտուիտիվ մակարդակում, մոտավորապես հետևյալ կերպ. հորինվում է, որ «եթե աշակերտը հասկացել (ըմբռնել) է տվյալ նյութը, ապա նա պետք է կարողանա պատասխանել ինչ-որ հարցերի և (կամ) կարողանա լուծել ինչ-որ տիպի խնդիրներ: Եվ այստեղից էլ իբր թե հեշտ է պարզել, թե ինչ է նշանակում՝ աշակերտը չի հասկացել նյութը». եթե աշակերտը չի կարողանում պատասխանել այդ հարցերին կամ լուծել այդ խնդիրները, ապա նա չի հասկացել: Նույնիսկ չի պարզաբանվում, թե խոսքը բոլոր հարցերի (խնդիրների) մասին է, և, եթե անգամ այդ հարցերից (խնդիրներից) մեկին էլ չպատասխանի, ապա դարձյալ չի «հասկացել»: Նման պարագայում, ըստ Ա. Ա.

Ստոլյարի, հասկանալու կամ չհասկանալու մասին եզրակացություն անելը լոկ ճշմարտանման է, բայց ոչ հավաստի:

Ուսուցման գործընթացում հետադարձ կապի օգնությամբ մենք անընդհատ պետք է տեղեկություններ ստանանք սովորողների կողմից ուսուցանվող նյութի յուրացման որակի մասին և պարզենք՝ **սովորողը հասկանալո՞վ է կարդացել**, անգի՞ր է արել դասագրքային նյութը կամ ուսուցչի պատմածը, թե՞ նրա գիտելիքները հիմնված են հասկանալու վրա:

Ա. Ա. Ստոլյարը նշում է, որ կհամարենք «մանկավարժորեն նպատակահարմար» է դրված հարցը, եթե աշակերտին մղում է «ակտիվ մտավոր գործունեության», ոչ թե դասագիրքը պատճենահանելուն: Ըստ Ստոլյարի՝ «Որքա՞ն շրջանագիծ կարելի է տանել մի ուղղի վրա չգտնվող երեք կետերով» հարցը մանկավարժորեն նպատակահարմար չէ դնել, որովհետև պատասխանը մաքուր դասագրքային է՝«մեկ»: Իսկ եթե ձևակերպենք այնպես, որ չունենա միարժեք դասագրքային պատասխան, օրինակ՝ «Քանի՞ շրջանագիծ կարելի է տանել երեք կետերով», ապա այս հարցի պատասխանը դասագրքում չկա:

Այսկերպ դրված հարցն արդեն կլինի մանկավարժորեն նպատակահարմար: Այն, թե որ դեպքում է դրված հարցը նպատակահարմար և որ դեպքում՝ ոչ, կախված է հարցի մեջ պարունակվող էնտրոպիաների (անորոշությունների) օպտիմալ քանակից: Եթե հարցը էնտրոպիա չի պարունակում, ապա նրա պատասխանը դասագրքային է և մանկավարժորեն նպատակահարմար չէ (այսինքն՝ պատկանում է «անգիրի» շարքին): Եթե հարցը շատ էնտրոպիա է պարունակում, ապա այն կարող է սովորողի ուժերից վեր լինել և նույնիսկ համարվել մանկավարժորեն ոչ նպատակահարմար կա՛մ բոլոր սովորողների համար, կա՛մ էլ որոշ մասի համար:

Այսինքն, յուրաքանչյուր երեխայի համար պետք է գտնել էնտրոպիաների օպտիմալ քանակությունը, որը, սակայն, անչափ դժվար է և մինչև օրս մանկավարժական չլուծված հիմնախնդիր է: Գիտակցական յուրացումը սկզբունքորեն բացառում է դոգմատիկ դասավանդումը, որի արդյունքը «ձևական (ֆորմալ) գիտելիքներն» են:

Ձևական ուսուցումը գիտակցականի հակադիրն է և, ցավոք սրտի, հաճախ է հանդիպում մաթեմատիկայում՝ պայմանավորված վերջինիս բնույթով: Ձևական գիտելիքների առաջացման պատճառը մաթեմատիկային հատուկ լեզվի ձևականացումն է:
Եվ երբ միակողմանի և ոչ ճիշտ ուսուցման արդյունքում մաթեմատիկայի լեզուն ուսուցանելիս ձևը կտրվում է բովանդակությունից, ուսուցման մեջ առաջանում է ֆորմալիզմ: Ձևական ուսուցման հիմնախնդրով զբաղվել է խորհրդային հայտնի մաթեմատիկոս և մանկավարժ Ա. Յա. Խինչինը: Նա նշված հարցում առանձնացնում էր երկու թերություն՝

ա) ձևական ուսուցում (ֆորմալիզմ),

բ) տեսության խզումը պրակտիկայից, որն առաջանում է մաթեմատիկայի որոշակի աստիճանների միջև եղած կապերի խզումից:

**Ուսուցման գիտակցականության սկզբունքը, ինչպես տեսանք, ենթադրում է** ուսուցման գործընթացում սովորողների ակտիվ մասնակցությունը: Առանց ակտիվ մտավոր գործունեության՝ խոսք անգամ չի կարող գնալ գիտակցված ուսուցման մասին: Մեթոդիկայում զանազանվում են ակտիվ ուսուցման երկու տեսակ՝ լայն իմաստով և նեղ իմաստով:

Լայն իմաստով ակտիվ ուսուցումն այն է, երբ սովորողը ակտիվ մտավոր գործունեություն է ծավալում ընդհանրապես, այսինքն՝ մյուս բոլոր առարկաների ուսուցման ընթացքում:

Նեղ իմաստով ակտիվությունը առանձնահատուկ ակտիվություն է, որը սովորողը ցուցաբերում է մաթեմատիկական գործունեության ընթացքում և յուրահատուկ է մաթեմատիկային: Եթե աշակերտը ցուցաբերում է նեղ իմաստով ակտիվություն, ապա նա կարող է նաև լայն իմաստով ակտիվ լինել: Հակառակը ոչ միշտ է ճիշտ: Երեխան կարող է լայն իմաստով ակտիվ լինել (օրինակ՝ գերազանցիկների զգալի մասը), բայց նրա մտավոր գործունեությունը ոչ միշտ կարող է լինել առանձնահատուկ մաթեմատիկական, այսինքն՝ նեղ իմաստով ակտիվ լինել:

**Դա է պատճառը, որ մաթեմատիկայից առաջադիմող երեխաները, որպես կանոն, առաջադիմում են նաև հանրակրթական մյուս առարկաներից (իհարկե, ցանկության դեպքում):**

Ակտիվ ուսուցման հիմնախնդիրը նոր չէ, սակայն մշտապես **արդիական է**, որովհետև նախևառաջ այն դեռևս հեռու է լուծված համարվելուց, մյուս կողմից՝ մաթեմատիկայի ուսուցման ամեն մի բարեփոխման արդյունքում ակտիվ ուսուցման հիմնախնդիրը կրկին ստանում է նոր երանգ և դառնում արդիական[1,էջ 46]:

Կարևոր է ընդգծել **ԿԱՊԿՈՒ սովորողների** մաթեմատիկայի ուսուցման առանցքային դժվարություններից մեկը՝ սովորողների մտածողության ոչ բավարար զարգացած լինելն է:

Իհարկե, աշակերտների մտավոր արատների շտկմանն ու զարգացմանը զուգահեռ անհրաժեշտ է քննարկել նաև այնպիսի հանձնարարականներ, որոնք պահանջում են գիտելիքների փոխանցում և ստեղծագործական մոտեցում: Միայն այդ պայմաններում է աշակերտների գործունեությունը դառնում պատճառաբանված՝ խթանելով մաթեմատիկական գիտելիքների յուրցմանը:Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում հատկապես կարևորվում է միջառարկայականն կապերն ուշադրության կենտրոնում պահելը մի բան, որ դառնում է գիտելիքները համակարգված ու ամբողջական դարձնելու հուսալի միջոց:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողությունների զարգացումը նպաստում է ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Ճիշտ, սահուն, հասկանալով, արտահայտիչ կարդացող աշակերտներն ավելի լավ են սովորում ցանկացած առարկա, քան կցկտուր կարդացողները: Բանն այն է, որ վատ կարդացողն ընթերցելիս իր ուշադրությունը հիմնականում կենտրոնացնում է կարդալու գործողությանը և չի ըմբռնում կարդացածի բովանդակությունը, հիմնական միտքը և այլն:

Ընթերցանության նկատմամբ հետաքրքրասիրություն աշակերտների մեջ պետք է առաջացնել դեռևս առաջին դասարանից: Այդ իսկ պատճառով այբբենարանն ավարտելուց հետո անգամ պետք է փոքրերի համար կարդալ հետաքրքիր հեքիաթներ և իրենց նույնպես դրդել դրանք կարդալ, հետաքրքրություն առաջացնել կարդալու նկատմամբ:

Կարդալ սովորեցնելու համար պետք է առաջարկել ոչ միայն դասագրքի նյութերը, այլև անծանոթ տեքստեր: Կարդալու կարողության ձևավորմանը և ճիշտ կարդալուն պետք է հետևեն տվյալ դասարանում դասավանդող բոլոր ուսուցիչները:

## ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Այվազյան Է. , Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա-Երևան 2016
2. Գյուլամիրյան Զ. ՙԽմբային աշխատանքը՝ որպես ուսուցման ստեղծագործականհետազոտական ուղղվածության ապահովման միջոց. Իրականացման մեթոդիկա: Նախաշավիղ, 2001 թիվ 3, Էջ 27-32:
3. Մաթեմատիկան դպրոցում:Գիտամեթոդական ամսագիր, ԹԻՎ 5(74), 2010
4. Лийметс Х. И., Групповая работа на уроке. -М., Знание, 1975, N5, - с 64.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# Պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Քննադատական և ստեղծագործական մտածողությունը «Ես և շրջակա աշխարհը» առարկայի միջոցով

ԿԱՏԱՐՈՂ՝ Ալիսա Ամիրխանյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Լուսինե Միրաքյան

ՎԱՆԱՁՈՐ 2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ---------------------------------------------------------------------- 3

1.Քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացումը «Ես և շրջակա աշխարհը» առարկայի միջոցով -----------------------------------------------------8

1.1Բնության պահպանության խնդիրներն ու կանոնները ------------------------- 13

ԳԼՈՒԽ 2 (փորձարարական մաս)----------------------------------------------------15

2.1Բնապահպանական խաղեր ----------------------------------------------------- 15

Եզրակացություն --------------------------------------------------------------------- 16

Օգտագործված գրականություն ------------------------------------------------------ 17

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից դպրոցին առաջադրվող պահանջների իրականացման մեջ կարևոր է հետազոտական մեթոդի կիրառումը,որովհետև այն կնպաստի ուսուցման բովանդակության նորացմանը, կխթանի կրտսեր դպրոցականների ստեղծագործական ներուժը և սովորողներին կզինի հետազոտական աշխատանքներ կատարելու հմտություններով:

«Ինքնուրույն աշխատանքով գիտելիքներ ձեռք բերելու լավագույն մեթոդներից մեկը հետազոտության մեթոդն է: Այն պատրաստի ճշմարտություններ հաղորդելու փոխարեն, օգնում է սովորողին գյուտերի հետքին որոնել տալ ,նրան դնել որոնողի ,գիտելիքներն ինքնուրույն ջանքերով մշակողի դերում»:

**Մ.Մամուրյան/ականավոր մանկավարժ/**

Քննադատական մտածողության զարգացումը այսօր հանդիսանում է կրթության գլխավոր նպատակներից մեկը:

Անհատի իմացական ընկալումը վերափոխելու ամենաարդյունավետ միջոցներից մեկը ինքնուրույն քննադատական մտածողության զարգացումն է:

Արդյունավետ կրթությունը կարող է զարգացնել սովորողի քննադատական մտածողությունը:

Համապատասխանաբար մշակված կրթական ծրագիրն ունի հնարավորություն ազդելու սովորողի ընդունակությունների զարգացման վրա, և հետևաբար զինելու նրան հմտություններով և խորացնելու նրա գիտելիքները:

Քննադատական մտածողությունը հանդիսանում է մարդու իմացական ընկալումը ձևավորող կարևորագույն բաղկացուցիչ, այն երբևէ չի հանդիսացել հետազոտության օբյեկտ:

Քննադատական մտածելակերպը գնահատելն է՝արդյոք ինչ- որ բան ճիշտ է,թե՝ ոչ:

Ստեղծագործական հարցադրումը լիովին տարբերվում է քննադատական հարցադրումներից:

Սովորողը պետք է ակտիվ լինի, եթե միօրինակությունը տիրեց իրեն ,ապա կզրկվի ստեղծագործ մտածելակերպ զարգացնելուց:

Սովորողը պետք է հետաքրքրված լինի շրջակա աշխարհով, լինի հետաքրքրասեր,փորձի նոր բաներ :Եթե հաջողվի թե քննադատաբար, թե կանոնավոր կերպով համագործակցել շրջակա աշխարհի հետ կստացվի, որ բացել է արդեն ստեղծագործականության դուռը:

Ստեղծագործական միտք ունենալու հիմնական տարրը գաղափարների և

դատողությունների առատությունն է: Որքան շատ կուտակի նյութեր և աշխատի հետազայում այդ նյութի վրա, այնքան շատ տարբերակներ կունենա ստեղծագործական մտածողությունը զարգացնելու համար:

Ստեղծագործական մտածողությունը մտածողության միջոց է, որը ստեղծվում է նախկինում գոյություն չունեցող լուծումներ, նոր կամ հին խնդիրների համար:

Ստեղծագործական մտածողության ամենակարևոր բաղադիչներից են

քննադատական մտածողությունը, սոկրատական հարցերը,հեռանկարային փոփոխությունները:

Ստեղծագործական մտածողությունը, ինչպես հուշում է նրա անունը, վերաբերում է, մտածողության այն ձևին, որն ունի ստեղծագործելու ունակություն. այսինքն՝ ունենալով մտածելու ունակություն այնպես, որ սեփական միտքն ունակ լինի նոր բան ստեղծել ,հորինել կամ արտադրել:

Ստեղծագործական մտածողությունը պետք է հիմնված լինի այն գաղափարների որոնման վրա ,որոնք հուսալի կամ օգտակար են:

Ստեղծագործական մտածողության նպատակն է ձեռք բերել մի շարք նոր

գաղափարներ, որոնց արդյունքը հայտնի չէ, բայց որոնք նյութականացվելուց հետո ապացուցում են ,որ ունեն իրենց  արժեքը:

Ստեղծագործական մտածողությունը թույլ է տալիս սովորողին մտքեր առաջացնել և ունենալ նոր գաղափարներ:

Խնդիրներ լուծելու համար ստեղծագործականությունը թույլ է տալիս նաև հայտնաբերել նոր լուծումներ, որոնք օգտակար են ցանկացած խնդիր կանխելու համար:

Ստեղծագործական մտածողությունը զարգացնելու առաջին պահանջը հարմարավետության գոտուց դուրս գալն է:

Ստեղծագործականությունը մտածողության ճկուն ոճ է, որն ընդունակ է կերպարանափոխվելու:

Ուսումնական գործունեության մեջ հետզոտական մեթոդի կիրառումը կնպաստի ուսուցման նորացմանը, և հիմք կդառանա ժամանակակից դպրոցին առաջադրվող պահանջների  իրականացմանը:

Կարևորում եմ ,,Ես և շրջակա աշխարհը,, առարկայի դերը տարրական դասարաններում, քանի որ երեխայի աշխարհաճանաչողությունը սկսվում է շրջակա միջավայրի ճանաչումից, որը կարևոր է սովորողի և միջավայրի այլ անձանց կենսակերպում:

***Հետազոտության արդիականությունը.***

Մանկական սիրտը գիտի՝ ինչն է այրվում , և ինչն է մարել:

Ոչ թե հանձնարարված դասը,այլ ուսուցչի հետ համատեղ ձգտումն է,որ հրաշալի աշխարհ է բացում:

Արդի ժամանակաշրջանում կարևոր է աշակերտների ինքնուրույն գործունեություն ծավալելու կարողության զարգացումը:

Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործումը նոր պահանջներ է ներկայացնում ուսուցչին:

Նա պետք է ունենա թեմաներ՝ տեսական ու գործնական նյութերով՝ հետագայում դրանք լիարժեք ուսումնասիրելու և ազատորեն գործադրելու նպատակով:

***Հետազոտության նպատակը.***

Ուսումնասիրել «Ես և շրջակա» առարկայի դերը սովորողի ստեղծագործական և քննադական մտածողության զարգացման գործընթացում, թեմային առնչվող գիտական, գիտամեթոդական, գիտատեսական գրականությունը:

***Հետազոտության խնդիրները***

- Նկարագրել քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացման միջոցները «Ես և շրջակա աշխարհը» առարկայի համատեքստում:
- Ներկայացնել բնապահպանական խաղեր և նախագծեր:

## 1.ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ

*Քննադատական մտածողությունը մի ռազմավարություն է, որը մեծացնում է ցանկալի վերջնարդյունք ստանալու հավանականություն:*

**Դ. Խալպեր**

Գիտակցելով մարդկության անընդհատ զարգացումը,տեխնիկայի և ՏՀՏ-ների կիրառումը բոլոր ոլորտներում ,այդ թվում՝ կրթական , միննույն է, ուսուցչի դերը մնում էկարևոր:

Որևէ հարց քննելիս,զննելիս և եզրահանգումներ կատարելիս քննադատական մտածողության խթանման բազմաթիվ մեթոդներից յուրաքանչյուրի արդյունավետ կիրառումը դասարանում ենթադրում է փոխադարձ վստահության մթնոլորտի առ-կայություն:

Ցանկացած գործընթացում ուսուցիչն է ընտրում մեթոդներն ու միջոցները, ուղղորդում աշակերտներին:

Վերջնական արդյունքը ուսուցչի աշխատանքով է պայմանավորված:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասերին յուրաքանչյուր երեխա պետք է ունենա իր փոքրիկ ներդրումը: Սովորողը պետք է լինի ազատ և անկաշկանդ, կարողանա մտածել, ներկայացնել իր տեսակետը, մտքեր փոխանակել ու լսել դիմացինին, հաղորդակցվել:

Դասի ընթացքում սովորողը ընդգրկվում է դասի գործունեության մեջ՝ խթանման, իմաստի ընկալման և կշռադատման փուլում, որի արդյունքում ուսուցչի կողմից կիրառվում է քննադատական և ստեղծագործական մտածողության մեթոդը:

Քննադատական մտածողության կիրառումը նպաստում է որպեսզի յուրացվող գիտելիքները դառնան կիրառելի, օժանդակում է ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, խթնում սովորողների ստեղծագործական մտածողությունը:

Մարդը իր ստեղծագործական մտածողությամբ է առանձնանում կենդանական

աշխարհից:

Յուրաքնչյուր մարդ ինքնաարտահայտվում է ստեղծագործության միջոցով, այն բացահայտում է մարդկության առաջընթացն ու զարգացումը:

Մարդու ստեղծագործական մտածողությամբ հետաքրքրվել են

Հերակլիտը,Դեմոկրատը, Պլատոնը և այլոք:

*«Մենք ոչ միայն ցանկանում ենք իմանալ , թե ինչպես է ստեղծ-*

*ված բնությունը ,/ և ինչպես է տեղի ունենում բնական երևույթները/,*

*այլև հնարավորինս հասնել,թերևս,երևակայական ու հանդուգն նը-*

*պատակին՝այն է, թե ինչու բնությունը հենց այսպիսին է, և ոչ թէ*

*այնպիսին»:*

**Ա. Էյնշտեյն**

Շրջակա միջավայր ասելով հասկանում ենք շրջապատող բնական միջավայրը,

այսինքն բնությունը:

Շրջակա միջավայրը այն վայրն է,որտեղ ապրում ենք: Բնությունը ունի ամենամեծ դերը մարդու կյանքում:Մարդիկ բնության բարիքներով են սնվում և ապրում: Մարդը բնության մասնիկն է, և բնությանը մարդու կողմից հասցված վնասները շատ մեծ ազդեցություն ունեն մարդկության վրա:

Մարդիկ անընդհատ սպառողի դերում են և չեն մտածում , որ ամեն ինչ սահմանափակ է: Բնությանը մեր կողմից պատճառված վնասները պետք է փոխհատուցել՝ կազմակերպել ծառատունկեր, խնայողաբար վերաբերել բնությանը: Ամեն մեկս մեր չափով պետք է մեր դերն ունենանք բնության հիմնախնդիրները լուծելու հարցում ,հասկանալով, որ մենք այս ամենի մասնիկն ենք:

Շրջակա միջավայրը աղտոտումից պաշտպանելու ամենակարճ ու խելացի ճանապարհը այն չաղտոտելն է, բնության հանդեպ պատշաճ վերաբերմունք դրսևորելն է, ինչը հնարավոր է մարդու բավարար էկոլոգիական դաստիարակության և կրթության պայմաններում:

Մենք պետք է մեր շրջապատի մաքրությունն ապահովենք ամենօրյա աշխատաքի միջոցով,որովհետև յուրաքանչյուր քաղաքացու պարտքն է հարգանքով ու հոգատարությամբ վերաբերվել սեփական հայրենիքի և շրջակա միջավայրի ամեն մի անկյունի նկատմամբ: Միայն մաքուր բակ, մաքուր համայնք և մաքուր երկիր ունենալու դեպքում մենք կկարողանանք ունենալ մտածողության այլ տեսակ:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի միջոցով կրտսեր դպրոցականներին տրվող բնապահպանական գիտելիքների ծավալը նրանց հնարավորություն է ընձեռնում ճանաչել ,սիրել ու գնահատել շրջակա աշխարհը, հասկանալ բնության մեջ իրենց ճիշտ դրսևորելու անհրաժեշտությունը,պահպանել որոշակի բարոյական նորմեր և իրենց զգալ բնության մի մասնիկը:

*«Հայրենի բնաշխարհի ճանաչողությունը նույնքան անհրաժեշտ է,որքան մայրենի լեզվի ,սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի իմացու-թյունը: Ով չի ճանաչում իր հայրենիքը ,չի կարող ճշմարտորեն սիրել այն»:*

**Րաֆֆի**

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի ուսումնական նպատակը տարրական դպրոցում աշխարհի իմացության՝ նրա բազմազանության և փոխկապվածությունների, բնության, սոցիալմշակութային օբյեկտների և երևույթների միասնականության ձևավորումն է, ինչպես նաև՝ հոգեկան , ֆիզիկապես առողջ և զարգացող , ստեղծագործ անձի ձևավորումը, որն ունի էկոլոգիական , սեփական գրագիտություն, մարդկանց և

բնության հետ հարաբերություններում բարոյաէթիկական նորմերին համապատասխան, անվտանգ, պատասխանատու վարքային և հայրենասեր քաղաքացու:

«Ես և շրջակա աշխարհը» առարկան նպատակ ունի սովորողներին օգնելու.ունենալ սեփական ինքնությունը՝ որպես անձ ,անհատականություն,ունենալ աշխարհայացք,իմանալ բազմազանության մասին և ընդունել, ինչպես նաև շահավետ հաղորդակցվել, հասկանալ, քննադատաբար վերլուծել տարբեր դրույթներ: Այդպիսիք են.

- Տրամադրել հիմնական բնագիտական տերմիններ և հասկացություններ,որը
- կօգնի նրանց ուսումնառության ընթացքում հասկանալ իր շրջապատող աշխարհը:
- Գնահատել և ընտրել արժանահավատ տեղեկատվություն:
- Կարևորել հասարակական գործընթացները:
- Կրել անձնական և կոլեկտիվ պատասխանատվություն:

## 2.1.ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Բնապահպանությունը պետական ու հասարակական միջոցառումների համալիր է,որի նպատակն է պահպանել բնական հարստությունները,նպաստել դրանց վերարտադրմանը և ապահովել արդյունավետ օգտագործումը, կանխել բնության վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցությունները, ապահովել մարդու և բնության կենսագործունեության ներդաշնակությունը:

**Բնապահպանության խնդիրներն են՝**

- ✓ Ապահովել մարդկանց ապրելուն կենսագործունեության համար պիտանի բնական միջավայր,
- ✓ նպաստել կենդանական ու բուսական աշխարհների հարստությունների վերարտադրմանը,
- ✓ պահպանել բնատարածքային համալիրների էկոլոգիական հավասարակշռությունը և լանդշաֆտների բազմազանությունը,

- ✓ պահպանել և արդյունավետ օգտագործել օգտակար հանածոների պաշարները, ապահովել դրանց համակարգված անթափոն շահագործումը,
- ✓ պահպանել հազվագյուտ բնական համալիրները և ազգային ժառանգություն հանդիսացող պատմամշակույթային ու գեղագիտական բնական արժեքները:

Բնապահպանության հիմնախնդիրներն ընդգրկել է ամբողջ Երկիր մոլորակը:

Հայաստանում բնապահպանության խնդիրներով զբաղվել են դեռևս հնագույն ժամանակներից: Խոսրով Բ թագավորի հրամանով ստեղծվել է Խոսրովի անտառները, որոնք բնակեցվել են որսի կենդանիներով, իսկ այժմ դարձել են արգելոցներ:

Խոսելով բնապահպանությունից չի կարելի անտեսել Կարմիր գրքի գոյությունը:

**Կարմիր գիրք**-բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ անհետացած ու անհետացող, կրճատվող, անորոշ տեսակների հաշվառման գիրք, որը փաստացի տվյալներ է պարունակում դրանց կենսաբանության, թվաքանակի տարածման վայրերի , ձնաբանության վերաբերյալ:

ՀՀ տարածքի բույսերի ու կենդանիների որոշ տեսակներ գրանցվել են նաև բնության պահպանության միջազգային Կարմիր գրքում:

Բնության պահպանության խնդիրները վերացնելու նպատակով հարկ է հետևել մի շարք պարզ կանոնների.

- ❖ զգուշանալ անտառը հրդեհելուց,
- ❖ անհարկի անտառահատում չիրականացնել,
- ❖ կենդանիներին որսալ ժամանակին,
- ❖ չվնասել թռչուններին,
- ❖ թունավոր թափոնները ջուրը չնետել,
- ❖ դեղաբույսերը արմատախիլ չանել,
- ❖ պահպանել հայրենի բնությունը:

## 2.2 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Բնապահպանական դաստիարակության կազմակերպման համար արդյունավետ մեթոդներ են համարվում դիտումները, փորձերը, խաղերը և վարժանքները,որոնք նպաստում են երեխաների դիտողականության , միմյանց և բնության հետ ներդաշնակ շփվելու և հաղորդակցվելու փոխօգնության և համագործակցության կարողությունների զարգացմանը:

Այս մեթոդների միջոցով ընդլայնվում է երեխայի աշխարհընկալումը,հարստանում է երևակայությունը , ձևավորվում և զարգանում են նրբանկատությունը,ճարպկությունը,արագ և ճիշտ կողմնորովելու կարողությունը:Այս մեթոդները իրագործվում են համակարգչային կինոդիտումներով, էքսկուրսիաներով,հետաքրքիր բնապահպանական խաղերով:

***Ներկայացնում եմ բնապահպանական խաղի օրինակներ.***

1.«Ի՞նչ կլինի, եթե…»

Երեխաները բաժանվում են խմբերի :Ամեն մի խմբի առաջարկվում է որևէ հիմնախնդիր: Օրինակ

1.անտառահատում

2.կլիմայի տաքացում

3.անապատացում

4.որսագողություն

5.ջրամբարների աղտոտում

Այնուհետև դրանք գրառվում են գրատախտակին:

Խմբերը հիմնախնդիրները ընտրելուց հետո , մնջախաղի միջոցով ներկայացնում են տվյալ հիմնախնդրի հետևանքով առաջացած երևույթները:

2.Ինչպե՞ս մաքրել շրջապատը

Երեխաներին առաջարկել զույգերով խորհրդակցել և գրանցել այն ամենը, ինչն իրենց կարծիքով աղբ է համարվում, և այն, ինչն է օգտակար:

Դրանք գրել առանձին սյունակներով: Կենդանի աշխարհը և մարդը

| Ի՞նչ կարող է զգալ կենդանին | Ի՞նչ կարող էզգալ մարդը |
|---|---|
| | |
| Կենդանուն բնորոշ հատկանիշներ | Մարդուն բնորոշ հատկանիշներ |
| | |
| | |

**3.Ինքնագնահատման աղյուսակ**

Երեխաներին առաջարկել գծագրել երեք սյունակներից բաղկացած աղյուսակ, «Միշտ» և «Երբեմն» բառերը կլինեն սյունակների խորագրեր: Տրված գործողությունները դասակարգել ըստ խորագրերի.

- ծառը տնկել,
- մեծերին օգնել՝ բույսեր տնկելիս,
- կերակրել շրջապատում ապրող կենդանիներին,
- քանդել թռչունների բները,
- պոկոտել շրջապատի ծաղիկները,

- ջարդել ծաղկած ծառերի ճյուղերը,
- քաղել ու ուտել չհասած մրգերը:

Ժամանակ առ ժամանակ այս աղյուսակը լրացնելով, կարող ենք հետևել, թե, ինչպես է փոխվում երեխայի ինքնագնահատումը:

Խաղը՝ ուսուցանվող ամենադժվար նյութը կարող է դարձնել հաճելի ու մատչելի: Կարևոր է ոչ թե խաղերի քանակը,այլ դրանց նպատակային կիրառումը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումների.

1,Ստեղծագործական և քննադատական մտածողությունը մանկավարժության մեջ ներառում է անհատի բարոյական, հոգևոր, գեղագիտական, մշակութային, ազգային

արժեքների միասնությունը, և սա անհրաժեշտ է նրա համակողմանի ու ներդաշնակ զարգացման համար:

2,Ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացման ձևավորման վրա  ազդեցություն ունեն հիմնականում բոլոր առարկաները , բայց «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դերը անփոխարինելի է:

3, Ուսուցիչը ունի եզակի հնարավորություններ սովորողին ոչ միայն գիտելիքով հարստացնելու, նաև կարևոր դեր կատարելու ստեղծագործական և քննադատական մտածողություն կրող հայ մարդու ձևավորման դժվարին ճանապարհին:

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**


1. Հայաստանի բնաշխարհ- ընտանեկան հանրագիտարան մատենաշար
2. « Ես և շրջակա աշխարհը » 2- 4- րդ դասարանների ուսուցչի ձեռնարկ
3. «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես
4. Վ. Սուխոմլինսկի «Մանկավարժական միտք»

Նյութեր համացանցից

1. https://www.arlis.am/documentview.aspx?docID=180005
2. https://lib.armedu.am
3. https://www.osf.am/wp-content/uploads/2017/

## ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## «ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

## ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

# *ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ*

***ԹԵՄԱ՝*** *Համագործակցային ուսումնառությանը և ստեղծագործական մտածողությանը նպաստող ռազմավարություններ*


***ԿԱՏԱՐՈՂ՝*** *Աննա Մելիքսեթյան*

***ՂԵԿԱՎԱՐ՝*** *Լուսինե Միրաբյան*



*ՎԱՆԱՁՈՐ 2023*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…………………………………………………………………………….............3

§ 1 Համագործակցային ուսումնառությանը նպաստող մեթոդները…………………………..5

§ 1.1 Ստեղծագործական մտածողությանը նպաստող մեթոդները…………………………..9

§ 2 Գործնական աշխատանք՝ համագործակցային և ստեղծագործական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդների կիրառմամբ……………………………………………..12

Եզրակացություններ………………………………………………………………………..15

Գրականության ցանկ………………………………………………………………………16

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*«Այն ինչ երեխաները կարող են անել միասին, վաղը*
*նրանք դա կանեն միայնակ»*
*Լև Վիգոտսկի*

Այսօր համագործակցային խմբերով աշխատանքը դասարաններում շատ առավելություններ ունի: Այն հնարավորություն է ստեղծում ակտիվ և արդյունավետ ուսումնառության, հնարավոր է դառձնում դաստիարակել հարգանք մարդկանց ընդունակությունների, կարողությունների, բնավորության առանձնահատկություն-ների և տարբերությունների նկատմամբ: Հաշվի առնելով այն փաստը, որ կրթության համակարգը մշտապես գործել ու զարգացել է հասարակական միջավայրում, հետևաբար կրթությունը պիտի համաքայլ ընթանա ժամանակի փոփոխություններին:

Այսօրվա մեր հասարակությունում, մեր կրթական համակարգում, դպրոցներում իներցիայի ուժով դեռ գործում է Խորհրդային Միության  կրթական համակարգին բնորոշ ընկալումներ և չափանիշներ, որոնք շատ ու շատ խնդիրների առջև են կանգնցնում ներկայիս կրթական համակարգը: Այս ամենը կարելի է հեշտությամբ վերացնել, եթե փորձենք կիրառել նոր կրթական մեթոդների, մոտեցումների անընդհատ փոփոխվող և կատարելագործվող միտումների ամբողջությունը: Սակայն սա չի նշանակում լիովին հրաժարվել անցյալի դարերով փորձված, ճշգրտված կրթական գաղափարներից: Սա նշանակում է միաժամանակ պահպանելով անցյալի արժեքավոր ավանդները ու ձեռքբերումները, ստեղծել ու արարել նորը, համատեղել այն  հնի հետ, հաշվի առնելով փոփոխվող հասարակությունը և հասարակության պահանջները:

Համագործակցային ուսուցումը, ստեղծագործական մտածողությունը այն մոտեցումներն են, որ այսօրվա կրթական համակարգը պիտի փորձի լայնորեն կիրառել դպրոցներում, այսպիսով դասապրոցեսը դարձնելով ավելի հեշտ, հաճելի, բովանդակալից: Հետևաբար չպետք է վախենալ նորից, փոփոխությունից: Պարզապես ամեն նորից պետք է խելամիտ օգտվել, որպեսզի այն մի կողմից նպաստի ուսուցչի մասնագիտական զարգացմանը, մյուս կողմից ուսուցման արդյունավետության բարձացմանը: Այսինքն, հասարակական, տեխնոլոգիական փոփոխությունները կարծես լավ առիթ են հանդիսանում ուսուցչի համար կրկին վերանայելու, փոփոխելու, հարստացնելու սեփական գիտելիքների, կարողությունների, հմտությունների պաշարը:

Ստեղծագործող մարդկանց հետ աշակերտների համագործակցությունը նպաստում է, որ նրանք տեսնեն այն հնարքները, ռազմավարություններն ու մոտեցումներն, որ մարդիկ կիրառում են ստեղծագործելու ընթացքում:

Հետազոտական աշխատանքի **նպատակն** է՝

- Ուսումնասիրել համագործակցային ուսումնառության և աշակերտների ստեղծագործական մտածողության խթանման մեթոդները:

Այս աշխատանքի **խնդիրներն** են՝

- Լուսաբանել դասապրոցեսում համագործակցային ուսումնառության և աշակերտների ստեղծագործական մտածողության խթանման մեթոդների արդյունավետությունը
- Վերլուծել Դ. և Ռ. Ջոնսոնների մեթոդները և կիրառել այն ստեղծագործական և համագործակցային հմտությունների ներգրավմամբ դասապրոցեսում
- Նպաստել անմիջական և անկաշկանդ պայմանների առկայությանը դպրոցում
- Կատարել եզրակացություններ ստեղծագործական մտածողության և համագործակցային ուսումնառության մեթոդների կիրառման վերաբերյալ դպրոցական համակարգում

## §1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Սկսած 1920-ական թվականներից արդեն կատարվում էին համագործակցության վերաբերյալ սոցիալ-հոգեբանական հետազոտություններ, սակայն համագործակցային ուսումնառության կոնկրետ կիրառման ուսումնասիրությունները դպրոցներում սկսվեցին 70-ականների սկզբներին: Սկսեցին զարգացնել և հետազոտել համագործակցային ուսումնառության մեթոդները: Ժամանակի ընթացքում մեթոդները անընդհատ փոփոխվում, մշակվում և նորացվում էին: Այժմ արդեն գոյություն ունի տարբեր նպատակների հասնելու համար կիրառվող համագործակցային ուսումնռության մեթոդների մի ողջ զինանոց [1, էջ153 ]: Մեթոդների առավելությունը այն է, որ նրանց կարելի է օգտագործել ցանկացած դասարանում, այսինքն կարելի է կիրառել և համասեռ, և օժտված երեխաների և հատուկ կրթության դասարաններում: Այսինքն համագործակցային ուսումնառությունը հնարավորություն է ստեղծում, որ երեխաների կարողությունները և հմարավորությունների տարբերությունները դառնան միջոց, ռեսուրս, այլ ոչ թե՝ հիմնախնդիր:

Համագործակցային ուսումնառության մեթոդները բազմազան են և բազմաբովանդակ, այդ պատճառով նպատակահարմար ենք գտնում ներկայացնել և մեկնաբանել առավել կարևորագույն մեթոդները:

### I. ԹԻՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Թիմային ուսումնառությունը համագործակցային ուսուցման կարևորագուն հնարքներից մեկն է: Այն մի շարք մեթոդների և հնարքների ամբողջություն է: Թիմային ուսումնառույան մեթոդները շեշտը դնում են թիմային նպատակի և թիմի հաջողության գաղափարների վրա, որը հնարավոր է, երբ թիմի բոլոր անդամները յուրացնեն ուսուցանվող նյութը [6, էջ 5 ]: Թիմային ուսումնառության բոլոր մեթոդներում կարևոր են 3 հասկացություն՝ *թիմային պարգևներ, անհատապես հաշվետու լինելը, հաջողության հասնելու հավասար հնարավորությունները:* Անհատապես հաշվետու նշանակում է, որ թիմի հաջողությունը կախված է թիմի բոլոր անդամների անհատական ծեռքբերումներից: Թիմային ուսումնառության մեթոդներից են՝ *թիմային առաջադիմության գնահատումը, թիմեր-խաղեր-մրցամարտեր, խճանկար, թիմային արագացված դասավանդում, համագործակցային ընթերցանություն և շարադրություն մեթոդները:* Թիմային

առաջադիմության գնահատում մեթոդի ժամանակ աշակերտները բաժանվում են տարբեր առաջադիմություն, սեռ, էթնիկական ծագում ունեցող 4-հոգանոց խմբերի: Դասը ներկայացնելուց հետո, աշակերտները աշխատում են թիմերով՝փորձելով,որ թիմի բոլոր անդամները յուրացնեն նյութը: Սակայն նյութին առնչվող հարցերին թիմի անդամները պատասխանում են առանձին:

Համագործակցային ուսումնառության առավել լայնորեն կիրառվեղ մեթոդները մշակվել և հետազոտվել են Դ. և Ռ. Ջոնսոնների և նրանց գործընկերների կողմից Մինեսոթայի համալսարանում:

Ջոնսոնների մեթոդները նման են թիմային ուսումնառության մեթոդներին նրանով, որ օգտագործում են տարասեռ խմբեր և շեշտը դնում են դրական փոխկապվածության և անհատական պատասխանատվության վրա [7, էջ 22]: Սակայն առ ա վել ընդգծում են թիմի ստեղծումը և խմբային ինքնագնահատականը:

Ջոնսոնները մշակել են նաև աշակերտներին <<համագործակցային բանավեճի>> մեջ ներգրավելու մեթոդներ: Բանավեճի ժամանակ կարևոր է, որ աշակերտները հետևեն հետևյալ կանոններին

- Ես քննադատում եմ գաղափարները, ոչ թե մարդկանց
- Ես հիշեւմ եմ, որ բոլորս այստեղ միասին ենք
- Ես քաջալերում եմ յուրաքանչյուրի մասնակցությունը
- Ես լսում եմ բոլորի մտքերը, նույնիսկ եթե համաձայն չեմ դրանց
- Ես վերաձևակերպում եմ ինչ-որ մեկի ասածը, եթե այն հստակ չէ
- Ես փորձում եմ հասկանալ հարցի երկու կողմն էլ
- Սկզբում արտայատում եմ բոկոր գաղափարները, ապա դչանք միացնում իրար

**Քննարկվող խմբեր**

Քննարկվող խումբ կազմելու հիմնական խնդիրն է՝ապահովել խմբի յուրաքանչյուր անդամի մասնակցությունը առաջադրանքի կատարմանը: Եթե խումբը հաշվետվություն է գրում, շատ կարևոր է նաև, որ յուրաքանչյուր անդամ ունենա առաջադրանքի հստակորեն սահմանված իր մասը, որպեսզի ամբողջ աշխատանքը չընկնի խմբի մեկ անդամի ուսերին:

Կարևոր է ընտրել քննարկվող խմբի առաջնորդ, որը պետք է ոչ միայն լավ սովորի, այլև ունենա առաջնորդի համար անհրաժեշտ կազմակերպչական ունակություններ ու հմտություններ: Առաջնորդը պետք է ապահովի, որ բոլորը մասնակցեն, և խումբը չշեղվի առաջդրանքի կատարումից:

Թիմի յուրաքնչյուր անդամի մասնակցությունը ապահովելու հաջող եղանակներից մեկն այն է, երբ նախքան քննարկումը սկսելը խմբի բոլոր անդամները առաջարկում են գրել թեմային առնչվող կարծիք կամ գաղափար: Օրինակ, եթե խումբը քննարկում է մահապատժի կիրառումը վերացնելու կամ չվերացնելու հարցը, կարելի է յուրաքանչյուր աշակերտի առաջարկել նախ գրել այն մասին իր կարծիքը, ապա թվարկել մահապատժի երեք առավելությունները և երեք թերությունները: Այնուհետև աշակերտները կարող են խմբի համար կարդալ առավելությունների և թերությունների իրենց ցանկը, և խումբը հերթով կքննարկի յուրաքանչյուրի գրածը: Այս աշխատանքի էությունն այն է, որ եթե բոլոր աշակերտները կարծիք են ձևավորում, դրանով իրենց ավանդն են բերում խմբային քննարկմանը, և նրանց մասնակցության հավանականությունը մեծանում է:

**Խմբային նախագծեր**

Խմբային հաջող նախագծի հիմքում ընկած է նույն հիմնական սկզբունքը, ինչ քննարկվող խմբերի ժամանակ: Այն է՝ ապահովել յուրաքանչյուրի մասնակցությունը և թույլ չտալ, որ խմբի անդամներից մեկ-երկուսը ստանձնեն ողջ պատասխանատվությունը: Խմբի առաջնորդը նախագծերի դեպքում նույնքան կարևոր է, որքան քննարկումներին, սակայն ուսուցիչը դարձյալ պետք է ընդգծի, որ առաջնորդի դերը խմբի յուրաքանչյուր անդամի մասնակցությունն ապահովելն է և ոչ թե աշխատանքի արդյունքի համար անձնական պատասխանատվությունը:

Խմբային նախագծի դեպքում խմբի յուրաքանչյուր անդամի մասնակցությունն ապահովելու լավագույն ուղիները նույնն են, ինչ խմբային հաշվետվություն նախապատրաստելու դեպքում. Կա՛մ յուրաքանչյուր անդամի պետք է տրվի առաջադրանքի որոշակի մասը, կա՛մ յուրաքանչյուր անդամի հանձնարարել գրել հաշվետվության մի մասը և այն ներկայացնել դասարանին: Եթե խմբի յուրաքանչյուր անդամ անհատական պատասխանատվություն չզգա խմբի աշխատանքի համար, նրա լիարժեք մասնակցությունը քիչ հավանական կլինի:Եթե խմբային նախագիծը հնարավոր

լինի բաժանել մասերի, կարելի է խնդրել, որ դա կատարի խումբը, սակայն նրանց պետք է թույլ տալ դա անել այնպես, ինչպես իրենք են ցանկանում:

Այսպիսով համագործակցային ուսումնառության բոլոր մեթոդների համար էլ ընդհանուր է այն գաղափարը, որ աշակերտները համագործակցում են, որ միասին սովորեն և պատասխանատու են ինչպես իրենց, այնպես էլ իրենց թիմակիցների առջև:

## § 1.2 ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ստեղծագործական մտածողությունը մի կողմից վերաբերմունք է կյանքի նկատմամբ, մյուս կողմից ունակություն է: Առօրյա կյանքում մենք մշտապես ականատես ենք լինում մանկահասակ երեխաների ստեղծագործական մտածողությանը, որն արդեն դժվար է գտնել ավելի բարձր տարիքի երեխաների, առավել ևս՝ մեծահասակների մեջ, քանի որ նրանց ստեղծագործական ներուժը ճնշվում է մի հասարակության կողմից, որը քաջալերում է մտավոր հարմարվողականությունը: Ինչպես նշում է ամերիկացի կրթագետ Ջերոմի Բրուները<< այսօր բավարար չէ երեխաներին բացատրել , թե ինչ անեն: Օրակարգում այն հարցն է, թե ի՞նչ են մտածում իրենց արածի մասի, ի՞նչ պատճառներով են դա անում>>[5, էջ 49 ] :

Աշակերտների ստեղծագործական մտածողությունը զարգացնելու ամենից հզոր ուղին նրանց համար օրինակ ծառայելն է [3, էջ 32]: Այսինքն ուսուցիչներն պետք է իրենց մտքերով և գործողություններով օրինակ ծառայեն աշակերտներին: Այն է, որ ուսուցիչները դասավանդվող բովանդակությունը հավասարակշռում են այն բանի հետ, որ աշակերտներին սովորեցնում են ինչպես մտածել, դատողություններ անել՝այդ բովանդակության մասին և այդ բովանդակության միջոցով:

Համագործակցային ուսուցման մեջ շատ կարևոր է ստեղծագործական վարքագծի օրինակ ծառայելը, որպեսզի աշակերտներն ու գործընկերները նույնպես ստեղծագործական մտածողություն ցուցաբերեն: Ուստի պետք է ուշադիր մտածել մեր արժեքների, նպատակների և այն մասին, թե ինչպես ենք վերաբերվում ստեղծագործական մտածողությանը: Երեխաների ստեղծագործական մտածողությունը զարգացնելու համար նախ և առաջ պետք է հետևողական լինել այն փաստի վրա, որ աշակերտները հետևում են ուսուցչի արածներին այլ ոչ թե ասածներին:

Երեխաների կարողությունների ու հնարավորությունների գլխավոր սահմանափակումը իրենց հնարավորությունների մասին սեփական կարծիքն է, այսինքն այն, թե իրենց կարծիքով ինչ չեն կաչող անել: Աշակերտներին պետք է սերմանել այն, որ իրենք ունակ են դիմագրավել կյանքի բոլոր անակնկալներին ու փորձություններին: Հաճախ որևէ ակնկալիք սահմանելն անգամ բավական է լինում դա իրագործելու համար:

Աշակերտներն իրենց մտադրություններից շատ բան կարող են իրագործել իրենց բնական հնարավորությունների սահմաններում. նրանց ետ պահողը սահմանափակումների մասին սեփական մտքերն են: Այսպիսով, ուսուցչի դրական վերաբերմունքը և ուշադրությունը աշակերտների ստեղծագործական մտածողության զարգացման առաջին պայմաններն են:

## 1. Խնդիրներ սահմանելը և վերասահմանելը

Ստեղծագործական աշխատանքը խթանելու համար պետք է աշակերտներին խրախուսելով սահմանել և վերասահմանել խնդիրներն ու նախագծերը: Պետք է թույլ տալ որ ուսուցչի հավանությամբ աշակերտներն ինքնուրույն ընտրեն թեմաներ, նյութեր կամ գոնե մեկ գրավոր աշխատանք՝ յուրաքանչյուր կիսամյակի համար: Ուսուցչի հավանությունը նշանակում է, որ թեման տեղին է տվյալ դասի համար և կարող է հաջող նախագծի նյութ դառնալ: Հաջող նախագիծը այն է, որ համապատասխանում է դասընթացի նպատակներին, ցույց է տալիս, որ աշակերտները գոնե մասամբ տիրապետում են թեմային և որ դրա հիման վրա կարելի է բարձր գնահատական ստանալ: Իսկ եթե թեման այնքան հեռու է դասընթացի նպատակներից, որ դա կարող է ազդել գնահատականի վրա, կարելի է առաջարկել փոխել նախագծի թեման: Հաճախ աշակերտներն սխալվում են նախագծի թեման կամ իրագործման եղանակներն ընտրելու հարցում: Սակայն ստեղծագործական մտածողության կարևոր մասն վերլուծությունն է , այսինքն աշակերտը պետք է սովորի ճանաչել և ուղղել իր սխալը [5, էջ 18]: Այսինքն աշակերտներին պետք է տալ իրենց ընտրությունն վերանայելու, վերասահմանելու առիթն ու հնարավորությունը:

## 2. Ստեղծագործաբար դասավանդելը և գնահատելը

Աշակերտների ստեղծագործական մտածողությունը խթանելու համար պետք է հանձնարարություններում և ստուգարքներում գոնե որոշ հնարավորություններ ներառել ստեղծագործական մտքի համար: Պետք է այնպիսի հարցեր առաջադրել, որոնք պահանջում են փաստացի գիտելիքներ, վերլուծական և ստեղծագործական մտածողություն: Ստեղծագործական մտախողության զարգացումը պետք չէ սահմանափակել գրավոր հանձնարարություններով: Աշակերտները չեն փորձի ստեղծագործական մտածողություն գործադրել, քանի դեռ դասարանում խթանող հարցեր չեն տրվել:Բոլոր հնարավոր դեպքերում պետք է քաջալերել աշակերտներին

ստեղծագործաբար մտածել՝ խնդրելով երևակայել, ենթադրել, ստեղծագործել, հորինել, վարկածներ առաջադրել և դատողություններ անել:

3. **Ինքնակարգավորման խթանում**

Աշակերտները պետք է կարողանան ինքնուրույն կառավարել իրենց գործունեությունը: Ստեղծագործական աշխատանքի նախնական արդյունքը ստանալուց և աշակերտների մեջ ստեղծագործելու բերկրանքն արթնացնելուց հետո նրանց պետք է սովորեցնել ինքնավերահսկման և ինքնակարգավորման ռազմավարություններ: Նմանատիպ ռազմավարություններից են՝

1. Հանձնարարության համար առաջարկել ոչ թե մեկ, այլ՝ բազմաթիվ գաղափարներ:
2. Ծանրութեթև անել ստեղծագործական աշխատանքի համար ընտրված մի շարք գաղափարներ և, ի վերջո, կանգ առնել դրանցից մեկի վրա:
3. Պաշտպանել կատարված ընտրությունը:
4. Առաջադրանքը կատարելու համար ծրագիր մշակել, այդ թվում որտեղ և ինչպես գտնել տեղեկություններ, երբ և ինչպես պետք է ավարտել նախագիծը:
5. Կատարել ամենօրյա գրառումներ հաջողությունների, խոչընդոտների և այն մասին, թե ինչպես հաղթահարվեցին խնդիրները:

Ստեղծագործական մտածողության խթանումը դժվարին խնդիր է: Կարևոր է հիշել, որ ստեղծագործական միտքն ինքնաբուխ է, ուստի կառավարման ռազմավարությունները պետք է բխեն անհատից:

4. **Ուժերի առավելագույն գործադրում**

Աշակերտներին պետք է բացատրել, որ առավելագույնս գործադրեն իրենց ուժերը: Օգնելով աշակերտներին ստուգել-պարզել իրենց տաղանդները, նրանց համար հնարավորություն է ստեղծվում դրսևորելու և օգտագործելու դրանք:

5. **Օրինակներին հետևելը**

Օրինակներին հետևելը ենթադրում է, որ ստեղծագործող անհատների կերպարների, նրանց օրինակի և փորձառության ուսումնասիրումը աշակերտներին մեծ հնարավորություն է տալիս օգտագործել գոյություն ունեցող տեղեկությունները՝ իրենց գիտելիքները ու փորձը լրացնելով նախապես ամբարված ինֆորմացիայով:

## § 2 ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՝ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

Գործնական աշխատանքը, որը իր մեջ ընդգրկում է համագործակցային և ստեղծագործական մեթոդների կիրառումը աշակերտների հետ, կատարվել է՝

Վանաձորի Ազատ Խլղաթյանի անվան թիվ 18 միջնակարգ դպրոց

3 Ա դասարան

Դասվար՝ Մելիքսեթյան Աննա

Հետևյալ դասարանում համագործակցային և ստեղծագործական ունակությունների զարգացման նպատակով աշակերտների հետ անցկացվել է խմբային աշխատանք, որը կատարվել է Կարուսել մեթոդի շրջանակներում:

Դասարանը բաղկացած էր 31 աշակերտից, սակայն տվյալ օրը ներկա էր միայն 25 աշակերտ: Խմբային աշխատանքի ժամանակ կատարվեցին մի շարք քայլեր համաձայան ըստ ընտրված մեթոդի:

**1-ին քայլի** ժամանակ կազմվեցին 5-ական խմբեր՝ հետևաբար յուրաքանչյուր խմբում 5-ական մասնակցով: Աշակերտներին բաժանվեցին A4 ձևաչափի թղթեր, և մատիտներ: Այնուհետև աշակերտներին տրվեց 10 րոպեանոց առաջադրանք, այն է՝ ըստ իրենց ցանկության թղթերի վրա որև նկար նկարել: Առաջադրանքը կատարելու ժամանակ խմբերում հստակ բաժանվեցին նկարողի, ժամանակը պահողի, խորհրդատուի դերերը ըստ ցանկության ՝ապահովելով յուրաքանրյուր աշակերտի ակտիվ գործունեությունը աշխատանքի մեջ:

**2-րդ քայլի** ժամանակ խմբերը փոխանակեցին միմյանց աշխատանքները նմանեցնելով այն կարուսել խաղին: Արդյունքում յուրաքանչյուր խումբ ունեցավ այլ խմբի աշխատանք: Այնուհետև աշակերտներին նորից տրվեց 10 րոպե ժամանակ այս անգամ արդեն նկարին համապատասխան գրելու 5 ածական, 5 գոյական և 5 բայ: Այս փուլում աշակերտներից ամեն մեկը ըստ ցանկության իր վրա վերցրեց բառապաշարի ամեն մի հատվածը լրացնելու գործը:

**3-րդ քայլի** ժամանակ կրկին աշակերտները փոխանակեցին միմյանց աշխատանքները և արդյունքում յուրաքանչյուր խմբի մոտ կրկին հայտնվեցին այլ խմբի աշխատանքներ: Այս անգամ աշակերտներին հանձնարարվեց որոշել վերնագիր համապատասխան նկարի և բառապաշարի: Աշխատանքը կատարելու համար տրվեց 5 րոպե ժամանակ:

**4-րդ քայլի** ժամանակ աշակերտները դարձյալ փոխանակեցին միմյանց աշախատանքները, որի արդյունքում յուրաքանչյուր խումբ ստացավ իր նախնական աշխատանքը: Այս անգամ տրվեց 10 րոպե ժամանակ գրելու որևէ պատմություն՝ համապատասխան նկարի, բառապաշարի և վերնագրի:

Գործնական աշխատանքի **5-րդ փուլում** յուրաքանչյուր խմբի մասնակիցներից որևը մեկը ըստ ցանկության ներկայացրեց արդեն պատրաստի աշխատանքը:

Հետևյալ գործնական աշխատանքից կարող ենք եզրակացնել, թե ինչ դրական արդյունքներ կարող է ապահովել համագործակցային և ստեղծագործական մեթոդների կիրառումը դպրոցում: Ինչպես նաև աշխատանքի կատարման ժամանակ արդեն ի հայտ էին գալիս տվյալ ոլորտում առկա խնդիրները, այն գործընթացները, որոնցում աշակերտները առավել դժվարությունների էին հանդիպում:Անշուշտ, անմիջապես նկատվեց դասպրոցեսում նմանատիպ աշխատաքներ կատարելու պակաս, ցույց տալով, որ ներկայիս դասապրոցեսում քիչ են կիրառվում նոր և առավել արդյունավետ մեթոդներ: Հետաքրքրական էր նաև այն հանգամանքը, որ երբ երեխաները իմացան, որ իրենց աշխատանքը պիտի փոխանակվի ուրիշ խմբերի հետ, բավականին տխրեցին՝ ցույց տալով, որ դպրոցներում հիմնականում կատարվում են ինքնուրույն տիպի աշխատանքներ: Այսպիսով երեխաները կարծես թե զրկվում են միմյանց հետ համագործակցելու, ստեղծագործաբար մտածելու հմտություններից: Այդ ամենը դասպրոցեսում զգացվեց աղմուկի որոշակի առկայությամբ՝ ցույց տալով երեխաների չամրապնդված սոցիալական հմտությունները, խուճապը ինչ որ բան առանց ուսուցչի օգնությամբ անելու: Սակայն առաջին մի քանի քայլից հետո, աշակերտները որոշ չափով մտան գործընթացի մեջ, սկսեցին հասկանալ առաջադրանքների բուն իմաստը, և խմբերից մի քանիսի մոտ արդեն կատարցեվին համապատասխան աշխատանքներ: Այս ամենը ապացուցում է, որ նմանատիպ դասերի կիրառումը պետք լինի հաճախակի, քանի որ աշակեևտները վերջնական փուլում արդեն բավականին խանդավառված էին իրենց

աշխատանքներով, և նրանց համար դասապրոցեսը թվաց ավելի հեշտացված, ավելի ակտիվ, այն է բոլորի մասնակցությամբ՝առանց հաշվի առնելու երեխաների ունակությունները և կարողությունները: Դասը երեխաներին առվել հետաքրքիր էր, և կարևոր էր այն, որ ցածր կարողություններով երեխաները լցվեվին նորոնոր զգտումենրով դեպի դասապրոցեսը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետևյալ թեմայի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ երբ արդեն տիրապետում ենք համագործակցային ուսումնառությանը նպաստող մեթոդներին, ստեղծագործական մտածողության զարգացման հնարներին, պետք է այն դարձնենք ամենօրյա զենք և կիրառենք այն: Այն որ հարկավոր է ստեղծել մի շարք պայմաններ, որոնք կխթանեն համագործակցային ուսուցմանը և ստեղծագործական մտածողությանը, պարզ դաձավ ուսումնասիրության գործնական հատվածում, որտեղ և հնարավոր դարձավ լուծել ի սկզբանե թվարկված խնդիրները: Դասապրոցեսում աշակերտների մեջ խթանվեց ստեղծագործաբար մտածելու և համագործակցելու կարողությունները, ինչը նպաստեց անմիջական և անկաշկանդ միջավայրի ստեղծմանը: Այս մեթոդի կիրառումը անշուշտ հեշտացրեց և ավելի արդյունավետ դարձրեց դասաժամը:

Հետևյալ նյութի ուսումնասիրության ժամանակ, նկատելի դարձան մի շարք պայմանների առկայության անհրաժեշտությունը դպրոցներում, որը կխթանի համագործակցային և ստեղծագործական ունակությունների զարգացմանը դպրոցում:

Այստեղից պարզ է դառնում, թե որքան կարևոր է ներկայիս կրթական համակարգ համագործակցային և ստեղծագործական ունակություններ զարգացնող ռազմավարություններ ներմուծելը:

Հայ հասարակության մեջ բազմաթիվ խնդիրների պատճառ կարող է դառնալ և հանդիսանում են հենց այս հմտությունների պակասը: Կրթական համակարգը պիտի համահունչ քայլի ժամանակակից աշխարհի պահանջներին, որը ապահովելու միակ ձևը դպրոցական համակարգում նորագույն մեթոդների ներդրումն է, ինչ էլ հետագայում կտա իր ակնկալվելիք արդյունքները, որոնք իրականում կգործեն ի նպաստ պետության:

Այսպիսով՝ այսօրվա հասարակության համար մեծ նշանակություն ունի հանրակրթության մեջ նպաստել ստեղծագործաբար մտածելու, վերլուծելու, կշռադատելու, համագործակցելու ունակությունները, որպեսզի ունենանք ավելի զարգացած աշակերտներ, ավելի աշակերտակենտրոն կրթություն, որն էլ իր հերթին կբերի հետաքրքիր և արդյունավետ դասապրոցեսի:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Զոհրաբյան Ա., Հովհաննիսյան Գ., Արնաուդյան Ա. և ուրիշներ, «Ուսուցման կոնստրուկտիվիստական մեթոդաբանություն» Այրեքս, Երևան 2002
2. Հովհաննիսյան Ա., Խրիմյան Ս., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում Ձեռնարկ, Երևան 2005
3. Վարդումյան Ս., Հովհաննիսյան Ա., Վարելլա Գ., «Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Մասնագիտական զարգացում», Երևան, «Նոյան Տապան» հրատ., 2003
4. Վարդումյան Ս., Հարությունյան Լ., Ջաղինյան Ն., Վարելլա Գ., «Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ»
5. J.Bruner, “The Culture of Education”  1996
6. David W. Johnson and Roger T. Jonson. “An Overview of Cooperative Learning”
7. D. Jonson, R. . Jonson, "Learning Together and Alone" Boston 1999

## URLs

1. www.studygs.net/cooplearn.htm
2. www.sedl.org/pubs/classroom-compass/cc_v1n2.pdf
3. http://www.hbdi.com/uploads/100024_articles/100151.pdf
4. http://www4.ncsu.edu/unity/lockers/users/f/felder/public/Papers/CLStrategies(JCCCT).pdf

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

## Պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

# *ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ*

ԹԵՄԱ՝ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ԿԱՏԱՐՈՂ՝ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. Գ. Թ. Լ. ՄԻՐԱԲՅԱՆ

*ՎԱՆԱՁՈՐ 2022*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ --------------------------------- 3
ԳԼՈՒԽ 1:Գործնական աշխատանք ------------------------------------------------------------------------------ 3
1.1.Գործնական աշխատանքը որպես տարրական դպրոցում կիրառվող վերահսկողության ձև --- 5
1. 2:Գործնական աշխատանքը որպես ամփոփիչ/միավորային գնահատման տեսակ ------------------ 6
1.3. Գործնական աշխատանքը որպես ձևավորող գնահատման տեսակ ----------------------------------- 7
ԳԼՈՒԽ 2:Գործնական աշխատանքի գնահատում --------------------------------------------------------- 9
ԳԼՈՒԽ 3:Փորձարարական մաս--------------------------------------------------------------------------------------12
Եզրակացություն-----------------------------------------------------------------------------------------------14
Գրականության ցանկ--------------------------------------------------------------------------------------------15

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը գիտելիքների քանակը չէ, այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ կիրառումն այն ամենի, ինչ գիտես:

ԱԴՈԼՖ ԴԻՍՏԵՐՎԵԳ

Գնահատել նշանակում է ստեղծագործել:

ԳՅՈԹԵ

Արդիականություն:Կրթության նոր չափորոշիչները ներառում են կրթության կառուցվածքի և բովանդակության, նպատակների և խնդիրների զգալի փոփոխություններ:Ուսուցչից պահանջվում է մի կողմից աշակերտին գիտելիքներով զինել, մյուս կողմից՝ զարգացնել նրա ընդհանուր կրթական հմտությունները որպես ուսումնական գործունեության հիմք (հետազոտություն, գործնական, ստեղծագործական աշխատանք և դրական վերաբերմունք առարկայի նկատմամբ):

Գործնական աշխատանքը տարրական դպրոցում ուղղված է սովորողի հուզականերևակայական, գեղարվեստական մտածողության ձևավորմանը, որն աճող անհատականության մտավոր և հոգևոր գործունեության ձևավորման համար կարևոր նախապայման է:

Աշակերտի ձեռք բերած գիտելիքները հիմնավոր և օգտակար են այնքանով, որքանով նա կարող է դրանք կիրառել: Այդ գիտելիքների կիրառության կարողությունը զարգացնելու նպատակով նախատեսվում են գործնական աշխատանքներ: Ելնելով ուսումնական առարկայի առանձնահատկություններից՝ գործնական աշխատանքները կարող են լինել տարբեր՝ տեղանքում կողմնորոշվելու, գործիքներով աշխատելու կարողություն, լաբորատոր պայմաններում փորձ, տեսական կիրառություններ կամ մոդելավորում, մակետների կազմում և նոր տեխնոլոգիաների յուրացում և այլն:

Հետազոտության նպատակը՝

-Ուսումնասիրել գործնական աշխատանքների գնահատման ձևերը

Հետազոտության խնդիրները.

- բացահայտել գործնական աշխատանքները տարրական դասարանում որպես վերահսկողության ձև,

- նկարագրել գործնական աշխատանքը որպես գնահատման տեսակ,

-իրականացնել փորձարարական աշխատանք,

-կատարել եզրահանգումներ:

Հետազոտության կառուցվածքն ու ծավալը:Սույն հետազոտությունը կազմված է ներածական մասից, 3 գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:Ծավալը 15 տպագիր էջ է:

**ԳԼՈՒԽ 1:Գործնական աշխատանք**

Տվեք երեխային հետաքրքրասիրություն: Գիտելիքը ն ա կգտնի ինքը: Անատոլի Գի

Գործնական աշխատանքի ժամանակ կրտսեր դպրոցական տարիքի երեխան բնական է, անկաշկանդ, ազատ միջավայրում կիրառում է իր գիտելիքները, հմտություն է ձեռք բերում, զարգանում է երևակայությունը, կարողանում է ազատ արտահայտել իր միտքը, կարողանում է կողմնորոշվել և կատարել համապատասխան գործողություններ՝ բանավոր խոսքի միջոցով հիմնավորելով, ներկայացնելով իր երևակայությամբ ստեղծած միտքը:

Ուսուցչից պահանջվում է ձևավորել գիտելիքներ միասնականության և ընկերասիրության մասին, երեխայի ստեղծագործական երևակայության զարգացում, խոսքի զարգացում, անհատականության դրսևորում, նախաձեռնելու, ակտիվ գործելու մղումների ակտիվացում, կերպավորման, կերպարանափոխության հմտությունների զարգացում, իմպրովիզ անելու կարողության զարգացում, խմբով աշխատելու կարողության զարգացում, վերլուծելու, համադրելու ունակության ձեռքբերում, գեղարվեստական մտածողության, գեղագիտական ճաշակի զարգացում, միմիկայի զարգացում:

Երեխաները հանպատրաստից պիեսներ են հորինում, անհրաժեշտ բեմական միջոցներն իրենց ձեռքով պատրաստում, որպես դերասաններ հանդես գալիս՝ տրված թեմայով իմպրովիզացիա են անում, հանդիսատեսներին ներկայացման մեջ ներքաշում, և այստեղ թատրոնը կյանքի պահ է, ոչ թե ապրածի վերարտադրություն: Դա հորինող երեխային օգնում է ընդլայնելու իր մտահորիզոնը: Առաջին իմպրովիզացիաներից հետո, զարգացում ապահովելու նպատակով, այն պետք է ինչոր բանով հագեցնել, հարստացնել: Առաջանում է դերային խաղի պահանջը՝ խաղարկային իրավիճակ և ներկայացում՝ խաղ-աշխատանքի ընթացքում ծնված սցենարով: Խաղարկային իրավիճակների վերարտադրումը «տունտունիկ» խաղի նման է, դերային խաղ՝երեխային լավ ծանոթ, ապրված իրավիճակներով և հարաբերություններով: Ամեն մեկն իր դերն է ընտրում ու խաղում: Նա միաժամանակ սոցիալական հարաբերությունների մեջ է մտնում հասակակիցների հետ, վերարտադրում հասարակության մեջ գործող սոցիալական հարաբերությունները, հասարակության մեջ ընդունված օրենքները, ապրում այդ օրենքներով: Առաջին հայացքից թվում է, թե նա ընդամենը պասիվ ընդօրինակող է: Իրականում նա նոր տարրեր է ներմուծում, այլ կերպ է մեկնաբանում իրավիճակն ու հարաբերությունները, նոր երանգ է ներմուծում սովորական առօրյան վերարտադրող իրավիճակի մեջ՝ ելնելով իր կենսափորձից, աշխարհընկալումից: Նրա համար այդ խաղը ոչ թե նմանակում է, այլ կյանքի պահ: Դրա արդյունքը փոքրիկ էտյուդներն են: Խաղարկային իրավիճակները կարող են նաև քիչ կապ ունենալ կամ ընդհանրապես կապ չունենալ առօրյայի, կենցաղի հետ, դրանց ստեղծողը երեխայի երևակայությունն է, այս դեպքերում նրա մտածողությունն ավելի ազատ է, անկաշկանդ:

Ներկայացնում եմ աշխատանքիս ընթացքում կիրառվող մեթոդներ.

- Խաղային մեթոդ
- Գործնական ուսուցման մեթոդ

• Ակտիվ ուսուցման մեթոդ

• Ընդհանուր հարց ու պատասխանի մեթոդ

• Հարցադրումների մեթոդ

• Հետազոտական մեթոդ

Ներկայացում-խաղը օգնում է իմանալ փոքրիկի ամենազաղտնի հույզերն ու անհանգստությունները, որոնք նա երբեմն չի հասկանում ու որոնց հետ ինքնուրույն պայքարել չի կարող:

«Բզեզի դպրոցը»-խաղ-ներկայացում՝ ըստ Թումանյանի «Բզեզի դպրոցը» ստեղծագործության: Երեխաներին գրավում է նաև դեկորացիան և իրենց հագուստը: Միասին պատրաստում ենք մեր թատրոնին հարկավոր իրերը:

Սուտասանը - երեխաներն անչափ սիրում են կատարել դերային խաղեր: Բազմաթիվ դերեր եմ փորձել 6-10 տարիքային խմբերում երեխաների հետ, սակայն ամենատպավորիչը եղել է «Սուտասանը» հեքիաթը: Երեխաները հրաշալի խաղացին այդ հեքիաթը: Արձանագրեցի՝ նրանց մոտ զարգացավ գեղագիտական ճաշակ ՝ գեղարվեստական գրականության նկատմամբ: Հեքիաթը հագեցած էր դերային կերպարներով, գեղեցիկ հագուստներով, դեկորներով, որոնք պատրաստեցինք ինքներս: Այդ հեքիաթը երեխաներին զվարճացրեց, հասկացան հնարամտությունը, սկսեցին իրենք հնարել նորանոր ստեր ու ծիծաղել: Ընտրեցին իրենց համար կերպարներ, սովորեցին արտահայտիչ խոսել:

## 1.1.Գործնական աշխատանքը որպես տարրական դպրոցում կիրառվող վերահսկողության ձև.

Ժամանակակից տարրական դպրոցում կիրառվող վերահսկողության ձևերն են.

♦բանավոր հարցում,

♦գրավոր հարցում,

♦տնային աշխատանքների ստուգում,

♦գործնական վերահսկողություն,

♦թեստային վերահսկողություն,

♦թղթապանակի ներկայացում:

Գործնական վերահսկողության միջոցով հնարավոր է պարզել որոշակի ուսումնական նյութից սովորողների ձեռք բերած կարողությունների ու հմտությունների ձևավորվածության մակարդակը:

**1. 2:Գործնական աշխատանքը որպես ամփոփիչ/միավորային գնահատման տեսակ**

Հանրակրթության դերը պայմանավորված է նաև նրա գործնական–կիրառական նշանակությամբ: Ժամանակակից պայմաններում ուսուցման կարևոր նպատակներից մեկն է՝ աշակերտին սովորեցնել ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կիրառել կյանքում հանդիպող տարբեր գործնական խնդիրներ լուծելիս:

Գործնական անվանենք սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները, որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին (ենթադրվում է նաև չափիչ սարքերի կամ համակարգչի կիրառություն): Գործնական կարող ենք համարել այն աշխատանքները, որոնց կատարման համար թուղթ ու գրիչից բացի օգտագործվում են նաև այլ միջոցներ: Գործնական աշխատանքներ են ուսումնական փորձերն ու լաբորատոր աշխատանքները, ինչպես նաև ուսումնական գործընթացում նախատեսվող ֆիզիկական պատրաստվածությունն ու այլ ֆիզիկական աշխատանքներ:

Սովորողներին ներկայացվող չափորոշչային և ծրագրային պահանջների համաձայն, նախատեսվում են տարբեր բնույթի ու տիպի գործնական աշխատանքներ.

-հարցումների, դիտարկումների միջոցով տվյալների հավաքում և օգտագործում աղյուսակների և գծապատկերների տեսքով, մոդելների, ձևանմուշների և մանրակերտերի (մակետների) պատրաստում,

-դասավանդման համար անհրաժեշտ ուսումնական նյութերի ստեղծում (պաստառներ, ցուցափեղկեր (ստենդներ), տեսաֆիլմեր, էլեկտրոնային ներկայացումներ և այլն), լաբորատոր աշխատանքների կատարում:

Գործնական աշխատանքներ կարող են հանձնարարվել ինչպես տանը, այնպես էլ դպրոցում կատարելու համար:

Գործնական աշխատանքները հիմնականում անցկացվում են երկու ձևով:

I- սովորողը դասընկերների ներկայությամբ կատարում է որոշակի գործնական առաջադրանք, որն ուղեկցվում է բացատրություններով: Մյուս սովորողները անհրաժեշտության դեպքում կատարում են համապատասխան շտկումներ կամ մեկնաբանություններ:

II- սովորողների կարողությունների ու հմտությունների ստուգումը կատարվում է միաժամանակ՝ յուրաքանչյուր սովորողին տալով անհատական կամ տարբերակված առաջադրանք: Այս դեպքում նախընտրելի է, որ աշխատանքները կատարվեն դրանց համար նախատեսված առանձին տետրում, որն ուսուցիչն ստուգում և գնահատում է դասի ընթացքում կամ դասերից հետո:

Տեղանքում իրականացվող գործնական աշխատանքներն անցկացվում են խմբային մեթոդների կանոններով:

**1.3. Գործնական աշխատանքը որպես ձևավորող գնահատման տեսակ**

Ձևավորող գնահատման հնարները թույլ են տալիս զարգացնելու այնպիսի որակներ, որոնք ինքնին նպաստում են սովորողի գիտակցության մեջ կրթության և ինքնակրթության կարևորության ձևավորմանն ու ամրապնդմանը: Սովորելու վրա ազդող ամենակարևոր գործոնն այն է, ինչ սովորողն արդեն գիտի[1, էջ 77]:

ՀՀ Հանրակրթության պետական չափորոշիչների համաձայն՝ գործում են գնահատման 2 փոխկապակցված ձևեր՝ ձևավորող (ուսուցանող) և միավորային(ստուգող):Ազդեցիկության և որոշիչ լինելու առումով, անխոս գերակշռում է միավորային գնահատումը[2, էջ 73 ]:

Ձևավորող գնահատման նպատակը ուսումնական գործընթացում ուսուցիչների և սովորողների գործունեության ճշգրտումն ու շտկումն է՝ հիմնվելով ուսումնառության ընթացիկ արդյունքների վրա: Գործունեության շտկումը ենթադրում է ուսուցչի և սովորողների առջև դրված ուսումնական խնդիրների համատեղ լուծում՝ արդյունքները բարելավելու նպատակով: Առանց հայտորոշման ուսուցիչները չեն կարող անհրաժեշտ մակարդակով կիրառել ձևավորող գնահատումը, իսկ ձևավորող գնահատման որակն իր հերթին ազդում է միավորային գնահատման արդյունքների վրա:

Պահպանելով գնահատման իրականացման հետևողականությունը՝ կարելի է հասնել ուսումնառության արդյունքների բարձր մակարդակի:

ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ Ձևավորող գնահատումը ուսուցչի կողմից գնահատման 5 բաղադրիչների պլանավորված և պարբերական օգտագործումն է ամենօրյա աշխատանքում .

• Ուսուցչի կողմից արդյունավետ հետադարձ կապի ապահովում:

• Սովորողների ակտիվ մասնակցություն սեփական ուսումնառության գործընթացին:

• Ուսուցման գործընթացի ճշգրտում և շտկում՝ հաշվի առնելով գնահատման արդյունքները:

• Գնահատման՝ սովորողների մոտիվացիայի և ինքնագնահատականի վրա խորքային ազդեցության գիտակցում, որն իր հերթին կարևոր ազդեցություն ունի ուսուցման արդյունավետության վրա:

• Սովորողների կողմից իրենց գիտելիքները ինքնուրույն գնահատելու ունակության ձևավորում: Գծապատկեր 1 Ձևավորող գնահատման առանձնահատկությունն այն է, որ գնահատման հնարները կիրառվում են յուրաքանչյուր դասին: Նշանակում է՝ ուսուցիչը և սովորողները կարող են արդեն ամենավաղ փուլերից սկսած՝ ազդեցություն ունենալ ուսուցման և առհասարակ կրթության որակի բարելավման վրա: Ձևավորող գնահատումը կիրառվում է թե՛ ուսուցչի, թե՛ սովորողի համար ընդունելի հնարներով: Ուսուցման գործընթացում գնահատման օբյեկտը սովորողի գործունեությունն է (ոչ թե սովորողը), որն ուղղված է սովորողի ուսումնառության նպատակի իրագործմանը: Հետևաբար, գնահատման բոլոր ձևերի ու տեսակների հիմքը ուսուցման նպատակի ձևակերպումն է: Դասի հիմքը ուսուցման նպատակն է. և՛ ուսուցչի և՛ սովորողի ողջ գործունեությունը պետք է ուղղված լինի այդ նպատակի իրագործմանը: Նպատակով են պայմանավորվում դասի ընթացքը, մեթոդների, միջոցների ու գնահատման ընտրությունը:

Յուրաքանչյուր դասին ուսուցչի համար կարևոր է խորհել հետևյալ հարցերի շուրջ.

• Որքանո՞վ են սովորողները հասկացել անցած նյութը:

• Ինչպե՞ս կարող եմ ստուգել:

• Ո՞ր առաջադրանքն էր դժվար սովորողների համար:

- Եթե առաջադրանքը դժվարություն է առաջացրել, ապա ի՞նչ պետք է փոխել դասավանդման մեթոդներում: Գոյություն ունեն սովորողների ակտիվության մի քանի ուղղություններ.

- ուսուցման նպատակների և արդյունքների ընկալում,

- սովորողների կողմից գնահատման չափանիշների ընկալում,

- ուսուցչի կողմից համապատասխան հնարների կիրառում: Դասի նպատակի ընկալումը թույլ է տալիս սովորողին դառնալ գործընթացի կազմակերպման գործուն մասնակիցը:

Վերջնարդյունքները ևս պետք է հասկանալի լինեն սովորողներին՝ նրանց դարձնելով գնահատման չափանիշների մշակման մասնակից: Նպատակներն ու ակնկալվող արդյունքները պետք է ակնառու ներկայացված լինեն (գրատախտակին, պաստառին, էկրանին և այլն), որպեսզի ուսուցիչն ու սովորողները հնարավորություն ունենան անդրադառնալու դրանց և ստուգելու իրենց ձեռքբերումները: Ձևավորող գնահատումը ուսուցչի և սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է՝ երկկողմ գործունեության ճշգրտման, ուսուցման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով: Հետադարձ կապը ուսուցչին հնարավորություն է տալիս պատկերացնելու, թե ինչպես է ընթանում ուսուցման գործընթացը, տեղեկատվություն է տրամադրում սովորողների ձեռքբերումների և դժվարությունների մասին:

Ուսուցանող գնահատման ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետությունը կարելի է պարզել միավորային ու կիսամյակային ամփոփիչ աշխատանքների արդյունքների հիման վրա, դրանց դինամիկայի և համեմատական վերլուծությունների միջոցով:

Ուսուցանող գնահատման համար կարելի է օգտագործել խրախուսական միջոցներ, բայց առավել կարևոր են մեկնաբանությունները:

**ԳԼՈՒԽ 2:Գործնական աշխատանքի գնահատում**

Գործնական աշխատանքի գնահատման սկզբունքներն են՝ արդարությունը, օբյեկտիվությունը, հուսալիությունը, անկողմնակալությունը, հավաստիությունը, հիմնավորվածությունը, մատչելիությունը, թափանցիկությունը և այլն: Բացի նշված համակարգից, կիրառվում են նաև գնահատման որակական եղանակներ՝ բնութագրային և ստուգարքային:

Կրտսեր դպրոցականի գնահատման հիմնական հայտորոշիչ համակարգը կազմակերպում եմ գունային լուծման եղանակով՝ իմ կողմից մշակված առաջադիմության քարտերի տեսքով: Դրանց վրա ընդարձակածավալ ներկայացված են այն բնութագրիչները, որոնք արտացոլում են աշակերտի հիմնական հատկանիշները.

♦ակտիվությունը, աշխատունակությունը, աշխատասիրությունը,

♦բարեխղճությունը, իմացական գործունեության ձգտումը,

♦տեսական գիտելիքների առկայությունը և դրանք կիրառելու կարողությունը, ♦հաղորդակցական և համագործակցային ունակությունները,

♦տարաբնույթ գործունեություն ծավալելու ունակություններն ու հմտությունները, ♦հանձնարարված աշխատանքի կատարման արագությունը,

♦բարեկիրթ վարվելաձևի, փոխօգնության ունակությունները,

♦ստանձնած գործի նկատմամբ պատասխանատվության զգացումը,

♦գործունեության տարբեր ոլորտներում դրսևորած ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունը, մտքի ճկունությունը,

♦հոգեկան գործընթացների զարգացվածությունն ու բազմաշերտությունը:

Նշված բնութագրիչներն ընտրված են որպես մշակված, ժամանակի և փորձառության բովով անցած, հղկված և սոցիալական նշանակություն ունեցող վարքի և գործունեության գնահատման չափանիշներ: Սրանցից յուրաքանչյուրը բնութագրում է անձի գործունեության որոշակի ոլորտները: Հատկանիշների առանձնացումն իրականացվել է մանկավարժական գրականության վերլուծության, ծնողների և աշակերտների միջավայրում իրականացրած անկետայի հարցման, ուսուցիչների և աշակերտների հետ անցկացրած զրույցների, դիտումների, փորձարարական գնահատումների հիման վրա:

Գնահատման առաջարկվող մոդելը տարրական դպրոցում նախատեսված է մայրենիից, մաթեմատիկայից, օտար լեզուներից, կերպարվեստից, տեխնոլոգիայից համեմատաբար ավարտուն թեմաների յուրացումն արժևորող գնահատման համար: Այդ մեթոդի իրականացման ժամանակ կիրառվում են գնահատման գործընթացի մեջ սովորողներին ներգրավելու մանկավարժական

մրջոցներ և երկխոսություններ: Մեթոդը պայմանականորեն կոչվում է «,Արևիկ,,, արևի ճառագայթները աշակերտի զարգացող հատկանիշներն են, իսկ կենտրոնում՝ նրա «,Ես,,-ը: Որպես զարգացնող հատկանիշներ գործածվում են սովորողների առաջադիմության գնահատման բազմագործոնային համակարգում արդեն իսկ նշված որակներն արտացոլող քարտեր, աշխատանքի կատարման արագություն (կապույտ), ինքնուրույնություն (մոխրագույն), ակտիվություն (կանաչ), պատասխանատվություն (վարդագույն) և այլն: Ուսուցիչը պետք է ունենա տասը գունավոր քարտ, որոնցից յուրաքանչյուրում ներկայացված է աշակերտի որևէ հատկանիշ: Տարբեր առարկաների համար այն պահանջում է որոշակի ստեղծագործական մոտեցում, կարելի է միայն փոփոխել քարտերի ձևը, որպեսզի աշակերտի համար լինի ավելի հետաքրքիր և գրավիչ: Դրան կարող են մասնակցել նաև սովորողները: Օրինակ՝ մայրենիի դասին, երբ աշակերտներն ուսումնասիրում են Մայրենի 2 դասագրքի «Իմ հայ լեզու, իմ ուժն ես դու,, թեմատիկ խմբի նյութերը, քարտերը կարող են տառերի տեսք ունենալ: Աշնանը վերաբերող թեմաների համար՝ մրգերի, ձմռանը՝ փաթիլների, գարնանը՝ ծաղիկների և այլն: Քարտերը կարելի է գունավորել կամ կտրատել կերպարվեստի և տեխնոլոգիայի ժամերին: Եթե աշակերտը դրսևորում է անձնային այս կամ այն որակը, ապա ուսուցիչը նրան տալիս է համապատասխան գույնով քարտ:

Դասընթացի որոշակի փուլի ավարտին երեխան պետք է կտրի տվյալ գույնի քարտերի քանակին համապատասխան երկարության ճառագայթ և գնահատման իր անհատական պաստառի վրա փակցնի «,Արևիկ,,: Պաստառը A3 չափի թղթի վրա պատկերված արև է, որի կենտրոնում երեխան կարող է փակցնել իր լուսանկարը: Տվյալ մեթոդը աշակերտներին հնարավորություն է ընձեռում պատկերավոր դարձնելու նրա բարոյահոգեբանական Ես-ի բարդ համակարգը: Աշակերտի այդ հատկանիշներից մի քանիսը կարող են առավել զարգացած լինել, մյուսները՝ պակաս, այնուհանդերձ, նրանք հանգում են այն եզրակացության, որ անձը որոշակի հատկանիշների ներդաշնակ ամբողջություն է, և պետք է համարժեքորեն գնահատվեն բոլորը: Բացի դրանից, մեթոդը ինչպես ուսուցչի, այնպես էլ աշակերտի համար տեսանելի է դարձնում սովորողի անձի ուղղվածությունը, ակտիվությունը, աշխատունակությունը, ինքնուրույնությունը, ուսումնական և վարքային դրդապատճառները, արժեքային կողմնորոշումները, իմացական պահանջմունքները և այլն: Սովորողների ուսումնական գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանք ավելի ակտիվ ու ինքնուրույն են դառնում կիրառված մանկավարժական ներգործության շնորհիվ: Նրանց մեջ ձևավորվում են ուսումնաիմացական դրդապատճառներ, զարգանում իր և այլոց արարքները վերլուծելու ունակություն, նախաձեռնողականություն:

Ուսուցիչը, որն իր գործունեության մեջ իրականացնում է առաջարկվող գնահատման մոդելը, պետք է ունենա գնահատման չափանիշները աշակերտներին և ծնողներին չպարտադրելու ունակություն, զրույցի և դիտումների ընթացքում աշակերտներին սովորեցնի սեփական տեսակետ ձևավորել և գնահատել: Սա նշանակում է, որ ուսուցիչն առաջին հերթին ինքը պետք է աշակերտի վերաբերյալ գնահատողական կարծիք ունենա, որպես իրեն իրավահավասարի՝ վերլուծի առկա բոլոր կարծիքները և արդյունքում դրանք ամբողջացնի որակական մեկ միավորի մեջ, որն էլ հենց բնութագրում է գնահատվող աշակերտի անձնային որևէ ոլորտը: Մեր կարծիքով՝ այս աշխատանքի նշանակալի նվաճումը սովորողների պատասխանատվության գիտակցման մակարդակի աճն է այն գնահատականի նկատմամբ, որն ստանում էնա հատկապես ուսուցչի կողմից: Աշակերտը տեսնում ու գիտակցում է, որ գնահատականը արտացոլում է իր նվաճումը, և միայն ինքն է ի զորու փոխել այն:Ռուբրիկը հստակ սահմանում է սովորողի ուսումնական արդյունքների գնահատման չափանիշները: Այն կարող ե կազմվել սովորողների խմբային, անհատական, ընդհանուր աշխատանքները ստուգելու և գնահատելու համար՝ բնութագրելով աշակերտների մասնակցությունը, նյութի իմացցությունը, ինքնուրույնությունը, ակտիվությունը, կարգապահությունը, մտքի ճկունությունը և այլն[3, էջ 61]:

**ԳԼՈՒԽ 3:ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ:**

**Գործնական դասի պլան**

Առարկա՝ Մայրենի ( ԻՆՔՆ. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ)

Դասարան՝ երրորդ

Աշակերտների քանակ՝28

Տևողություն՝ 45 րոպե

Դասի տիպը՝ գործնական

Դասի թեման՝ Շեկոն / Ստեփան Զորյան

Դասի նպատակները՝

Ակադեմիական - Ստուգել, թե որքանով են յուրացրել տրված գիտելիքները և կարողացե՞լ են ժամանակակից տեղեկատվական միջոցներից օգտվել ու տեղեկություն քաղելթեմայի վերաբերյալ (տեղեկություն Ս․Զորյանի կյանքի, գործունեության, ստեղծագործական ուղու մասին):

Հմտությունների զարգացման -Աշակերտների մոտ ձևավորել առաջադրանքը համագործակցելով կատարելու հմտություններ: Ցույց տալ խմբային աշխատանքի առավելությունները: Կարողանալ գնահատել իր և ընկերոջ աշխատանքը: Կարողանալ խոսել հայեցի , կիրթ, մտքերնարտահայտել դիպուկ և նկարել ստեղծագործության բովանդակությունը:

Արժեքային համակարգը- Կկարողանան ապրումակցել կենդանիներին և խնամել :

Դաստիարակչական – Կսովորեն, որ ոչ միայն միմյանց հանդեպ կարող են օգտակար լինել, այլև՝ կենդանիների:

Դասի անցկացման վայրը-Ստեփան Զորյանի տուն-թանգարանն

ու բակը:

Հաջողության չափանիշները – Խմբի բոլոր անդամներըպետք է կարողանան բացատրել իրենց աշխատանքը,

.պատասխանել իրենց ուղղված հարցերին, բնութագրել ևնկարել գլխավոր հերոսին:

Վերահսկում, միջամտում – Անընդհատ մոտենալ խմբերին, հետևել նրանց աշխատանքին և պատասխանել այնհարցերին, որոնք առաջացել են խմբի անդամների մոտ:

Առաջադրանքների ներկայացում- Պատմվածքի դրվագներն ըստ հաջորդականության ներկայացվում են խմբի անդամների կողմից:

Գնահատումը – Խմբի յուրաքանչյուր անդամի գնահատում են խմբի անդամները, իսկ

խմբին՝ դիտորդները:Դասին առավել ակտիվ աշակերտներըներկայացվում են խրախուսանքի և գնահատվում են :

Դասի ընթացքը

Ուսուցիչ՝ պատմվածքի ընթերցում, աշխատանքի համակարգում,

Աշակերտներ՝ նկարչություն, համագործակցություն,

Ամփոփում,

Գնահատում

Ներկայացնում եմ իմ պրակտիկայում բազմիցս կիրառելի գնահատման մի հնար.

Յուրաքանչյուր կատարված հանձնարարության մեջ ուսուցիչը առանձնացնում է 2, 3, կամ 4 բան, որը սովորողը լավ է կարողանում կատարել:Ընդ որում, կարևոր է, որ այդ ,,լավ,, բնորոշումը տրվի ոչ թե ի համեմատ մյուս աշակերտների, այլ ի համեմատ տվյալ աշակերտի մինչ այդ գործադրած ջանքերի և գրանցված արդյունքների[2,էջ 76]:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Մասնագիտական գրականության ուսումնասիրության, փորձարկումների արդյունքում ներկայացնում եմ հետևյալ եզրահանգումները.

• գործնական աշխատանքը ուսուցման այնպիսի ձևն է, որը ներառում է կրտսեր տարիքի սովորողների գործունեության համարյա բոլոր ձևերը: Սովորողների ցանկացած գործունեություն ներկայացում է, դերախաղ. երեխան ստանձնում է մի միտք ու խաղում: Դասասենյակը դառնում է փորձասենյակ, սաները՝ գյուտարարներ, դերասաններ, իսկ ուսուցիչները կազմակերպում և հետևում են այդ գործունեությունը, ուղղորդում և գնահատում,

• ուսուցիչը գնահատում է սովորողների գործնական գիտելիքները(ձևավորող կամ միավորային), խաղը, դերախաղը, բեմականացումը սովորողների զարգացման հրաշալի միջոց են, մասնավորապես իրավիճակային դերախաղերը, որոնք նաև իմպրովիզացիայի մեծ հնարավորություն են տալիս երեխային՝ զարգացնելով նրաև նրա մտածողությունն ու սոցիալական հմտությունները:

• արդի հանրակրթության գործընթացում կիրառվում են գնահատման նոր՝ աշակերտակենտրոն ձևեր, եղանակներ, որոնցից բավականաչափ արդյունավետ են ռուբրիկները (սանդղակ, սանդղակաշար):

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1.Մովսիսյան Ն., Միջազգային առցանց կրթական համաժողովը և մենք, Երևան 2020.

2.Սոցիալական հավասարությունը և արդարությունը դպրոցում.մանկավարժական ձեռնարկ, Երևան 2020

3.Տարրական կրթության մանկավարժություն, դասընթացի փաթեթ

https://innostud.am/application/library/61279671.pdf

4.https://krtahartak.am/courses/obligatory/course-

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

## Պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Թեմա՝**

**Ինքնուրույն ընթերցանության ժամերի կազմակերպման մեթոդները**

**Կատարող՝ Ա. Համբարձումյան**

**Ղեկավար՝ Մ. Գ. Թ. Լ. Միրաբյան**

ՎԱՆԱՁՈՐ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն-----------------------------------------------------------------------------------------------------3

ԳԼՈՒԽ1:Ընթերցանությունը որպես կրտսեր դպրոցականի ուսումնադաստիարակչական աշխաանքների կազմակերպման միջոց ---------------------------------------------------------------- 4

ԳԼՈՒԽ 2:Ինքնուրույն ընթերցանության ժամերի կազմակերպման մեթոդները ----------------- 6

ԳԼՈՒԽ 2:1Ինքնուրույն ընթերցանության ժամերին կիրառվող մեթոդների արդյունավետությունը-----------------------------------------------------------------13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ------------------------------------------------------------------------------------ 16

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ-------------------------------------------------------------------------------------------17

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Արդի աշխարհում տեխնիկայի և գիտության սրընթաց զարգացումը նոր խնդիրներ է դնում կրթության առջև: Ահա այդ է պատճառը, որ հանրակրթական դպրոցում հայոց (մայրենի) լեզվի ուսուցումը և ուսումնառությունը ևս հիմնավոր փոփոխության կարիք ունեն: Մայրենի լեզվի ուսումնառության շեշտադրումը պիտի լինեն որոշակի կարողությունների և հմտությունների, ինչպես նաև սովորողի վերաբերմունքի, արժեքային համակարգի ձևավորումը, զարգացումը և կատարելագործումը[4]:

Մարդու բազմակողմանի զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցում: Տարրական դասարանների մայրենի լեզվի դասընթացում առաջատար տեղ է գրավում ընթերցանությունը: Դրա նպատակն է՝ զարգացնել աշակերտների կարդալու և պատմելու կարողությունները, խոսքը, հարստացնել նրանց ճանաչողական գիտելիքներն ու բառապաշարը:

Ժամանակի հետ համահունչ գնալու համար շատ կարևոր է արդյունավետ մեթոդներով կազմակերպել ինքնուրույն ընթերցանության դասերը:

Վերոնշյալ նպատակների իրականացման հիմնական ճանապարհներ են՝ լսել և դիտել, խոսել, կարդալ, գրել, ցուցադրել և այլն՝ նկատի ունենալով նաև ուսումնառության համընդհանուր ձևավորման մոդելը [4]:

Հետազոտության նպատակն է.

. ուսումնասիրել ինքնուրույն ընթերցանության դասերի կազմակերպման մեթոդներ:

Հետազոտության խնդիրն է.

.նկարագրել ինքնուրույն ընթերցանության դասերի կազմակերպման մեթոդները,

.բացահայտել ընթերցանության կարևորությունը սովորողների առաջադիմության գործընթացում,

. կատարել եզրահանգումներ

Հետազոտության կառուցվածքն ու ծավալը:Սույն հետազոտությունը կազմված է ներածությունից, 2 գլխից, եզրակացությունից և գրականության ցանկից:Ծավալը 17 տպագիր էջ է:

**ԳԼՈՒԽ 1:Ընթերցանությունը որպես կրտսեր դպրոցականի ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման միջոց**

Այսօր պետությունը դպրոցին լուրջ հանձնարարություն է տվել. հասարակությունը ուսուցման արդյունքում պետք է ստանա զարգացած, կիրթ, բարոյապես ձևավորված և սոցիալապես ակտիվ քաղաքացիներ, որոնց համար սովորելու ձգտումը անհատի կայուն որակներից է: Բոլոր ժամանակների և ժողովուրդների հանճարեղ գրողներին ու բանաստեղծներին մտահոգություն է պատճառել մարդկանց բարքերի անկումը, և նրանք միայն մի դեղ են առաջարկել` ինքնակատարելագործում: Դաստիարակչական գործընթացը կառավարել նշանակում է ոչ միայն զարգացնել ու կատարելագործել մարդու մտավոր ու ֆիզիկական բնածին ունակությունները, այլև ձևավորել անընդհատ ինքնակատարելագործման պահանջմունք: Այդ պահանջմունքի բավարարումն անհնար է առանց ընթերցանության: Կարևորագույն խթանը ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելն է: Եթե աշակերտը ունի դրդապատճառներ, ուրեմն ուսումնական գործունեությունը կհաջողվի:

Մայրենիի դասավանդման ընթացքում ուսուցողական նպատակներից բացի լուծվում են նաև դաստիարակչական լուրջ խնդիրներ` գեղագիտական ճաշակի, աշխատասիրության, ազնվության, ճշտապահության, բարոյական ու կամային մի շարք հատկանիշների դաստիարակում և դրանում իր ուրույն տեղն ունի նաև ինքնուրույն ընթերցանությունը:

Ընթերցանությունը, որպես խոսքային գործունեության գրավոր ձև, հաղորդակցման ամենակարևոր տեսակներից մեկն է: Ընթերցանության մեջ ընդգրկվում է նրա կարդացվելիք նյութի բովանդակությունը և իրականացման ընթացքը: Բովանդակությունը գործունեության արդյունքն է, իսկ ընթացքը` նրա իրականացման տարրերի ամբողջությունը:

Ընթերցանությունը պետք է ծառայի արժեքային համակարգի ձևավորման, մարդկային բարձր արժեքների ուսուցման համար: Կարելի է ընտրել այնպիսի բնագրեր, որից աշակերտը կիմանա, կճանաչի ազգային արժեքներն ու մշակութային գանձերը, կգնահատի գրքի դերը անհատի ու

ժողովրդի կյանքում, կձգտի սիրով, խնամքով և հոգածությամբ վերաբերվել գրքին, իմանալ գրադարանից օգտվելու կանոնները, խնամքով վերաբերվել գրադարանի գրքերին: Արժևորի համախմբվածությունն ու միասնությունը, կարևորի ուրիշին հարգելու հատկանիշը, գնահատի արդարամտությունը: Մերժի բացասական հատկանիշները, անտարբերությունը, եսասիրությունն ու վերաբերմունք դրսևորի դրանց նկատմամբ:

Տարրական դասարաններում առավել նախընտրելի է հանձնարարել աշակերտներին ընթերցել հեքիաթներ, առակներ, բանաստեղծություններ, անվանի մարդկանց մասին և նրանց մասին ասույթներ, պատմվածքներ, հայրենիքի նշանավոր մարդկանց մասին տեղեկություններ, լեգենդներ, ավանդազրույցներ և այլ փոքր ծավալի ստեղծագործություններ:

Ինքնուրույն ընթերցանության դասաժամերի նպատակներն են՝

- ծանոթացնել սովորողներին մանկական գրականության նմուշներին, որոնք կարելի է ներառել ժամանակակից կրտսեր դպրոցականի ընթերցողական շրջանակի մեջ,
- հետաքրքրություն ձևավորել գրքի՝ որպես գիտելիքների աղբյուրի նկատմամբ, զարգացնել գիրք կարդալու ցանկություն և սովորություն,
- կատարելագործել սովորողների գրքերի ինքնուրույն ընտրելու և ընթերցելու կարողությունները, այսինքն՝ ձևավորել ընթերցողական արդյունավետ գործունեություն (կարողություն և սովորություն խորհելու գրքի շուրջ մինչև տեքստի ընթերցումը, ընթերցման ընթացքում և ընթերցումից հետո),
- մշակել ընթերցողական մտահորիզոն և դաստիարակել դրական վերաբերմունք գրքի՝ որպես հասարակական արժեքի նկատմամբ

Ընթեցելու կարողությունը հնարավոր է զարգացնել՝ օգնելով երեխային տեքստն ընկալել քայլ առ քայլ: Հենց սա էլ անում է մեթոդը: Այն հնարավորություն է տալիս մոդելավորել ընկալումը խթանող ընթերցանության գործընթաց՝ երեխաների հետ քայլ առ քայլ առաջ գնալով տեքստի հատվածներով, վերլուծելով և եզրահանգումներ անելով:

Այս մեթոդով աշխատելու համար շատ կարևոր է ընտրել այնպիսի տեքստ, հեքիաթ կամ պատմություն, որին երեխաները ծանոթ չեն: Տեքստը պետք է բաժանել տրամաբանական մի քանի մասերի, յուրաքանչյուր մասից հետո դադար է տրվում, որի ժամանակ պետք է որոշակի հարցադրումներով խթանել քննարկումը: Կարևոր է, թե որտեղ կընդհատվի հեքիաթը, որպեսզի

սովորողը կարողանա հետաքրքիր ընթացք հորինել և հետաքրքրությամբ ու անհամբերությամբ սպասել հաջորդ հատվածին: Իր գրածը և բնագիրը համեմատելու ցանկությունը սովորողի մոտ հեքիաթի շարունակությունը ընթերցելու լրացուցիչ խթան է հանդիսանում:

Երեխաների միտքը և երևակայությունը անսահման են, հորինած պատմությունները՝ հետաքրքրի ու անսովոր: Կարևոր է, որ երեխան կարողանա սեփական միտքը ձևակերպել՝ գտնել համապատասխան բառեր, արտահայտություններ, ապա գրանցել, իսկ հետո՝ ներկայացնել: Երեխաները պակաս հետաքրքրությամբ չեն լսում իրենց հասակակիցների հորինած պատմություններն ու հեքիաթները: Երեխաներին հասակակիցների ստեղծագործություններն ավելի են հետաքրքրում ու զարմացնում, ծիծաղեցնում ու ոգևորում: Հորինած պատմությունը գրելուց հետո երեխան այն ներկայացնում է՝ կարդում, նկարում, պատրաստում իր հեքիաթի նկարազարդ էջը: Մյուս երեխաները հետաքրքրությամբ լսում են, հարցեր տալիս հենց հեղինակին: Հեքիաթի հորինումը կարելի է կազմակերպել կշռադատման փուլում, երբ երեխաները ամփոփում են իրենց ընթերցած պատմությունը կամ հեքիաթը և վեր են հանում հանում գլխավոր միտքը:

**ԳԼՈՒԽ 2:Ինքնուրույն ընթերցանության ժամերի կազմակերպման մեթոդները**

Ընթերցանության ժամանակ և գրքի հետ աշխատելիս կարելի է կիրառել տարբեր մեթոդներ, կախված նյութի բովանդակությունից և նպատակից:

Ինքնուրույն ընթերցանության ժամանակ, ինչպես և մայրենիի դասավանդման ընթացքում կարելի է կրրառել հետևյալ մեթոդները՝

- Ուղղորդված ընթերցանություն
- Ընտրովի ընթերցանություն
- Կրկնակի գրառման օրագիր
- .Ընդհատված ընթերցանություն
- Բացատրական ընթերցանություն:

Մեթոդի ընտրությունը կախված է թեմայից և նպատակից: Նույն թեման ուսումնասիրելիս կարելի
է կիրառել տարբեր մեթոդներ՝ կախված նպատակից, բայց նպատակահարմար է կիրառել բացատրական մեթոդը:

Տեքստի հիմնական գաղափարը հասկանալն ու առանձնացնելը ամենակարևոր հմտություններից է, իսկ տեքստի կառուցվածքային- իմաստային մասերը՝ սկիզբ, ընթացք, ավարտ տարբելակելը պարտադիր է յուրաքանչյուր երեխայի համար:

Երեխաները պետք է տարբերակեն նաև կարդացած տեքստի հնչերանգները՝ պատմողական է, հարցական, հրամայական, թե բացականչական: Աշակերտների միջև պետք է ծավալել զրույց, որպեսզի կիսվեն իրենց տպավորություններով: Այդպիսի զրույց կարդացածի շուրջ կարելի է կազմակերպել թե՛ դասի ընթացքում, թե՛ դասից դուրս: Կարելի է կազմակերպել հետաքրքիր մտքերի փոխանակման մթնոլորտ, այնպես, որ երեխաները հարգեն միմյանց կարծիքներն ու տեսակետները:

Ուսուցումը տեղի չի ունենում որևէ բան կարդալով կամ պատմելով: Աշակերտը կարիք ունի ոչ միայն գիտելիքների և տեղեկությունների, նաև մտածողության, տեղեկատվության, մշտական և համագործակցային հմտությունների:

Հայտնի փաստ է, որ ընթերցանության կարողությունների ձևավորման համար հիանալի միջոց է բարձրաձայն ընթերցումը, որը հնարավորություն է տալիս լսելու և գնահատելու սեփական խոսքը, բարելավելու նրա արտահայտչականությունը: Խոսքի արտահայտչականության զարգացման գործում անգնահատելի է դերերով կարդալը և բնագրի դրվագների, խնդուկների, մանրապատումների բեմադրությունը: Նպատակն է նպաստել աշակերտների կարդալու կարողությունների զարգացմանը, ինչպես նաև դյուրամարս և սահուն դարձնել ընթերցվող նյութի միավորների աստիճանականացումը՝ տառ- բառ- բառակապակցություն- նախադասություն, ինչպես նաև լուռ ընթեցումից բարձրաձայնին անցումը:

Դասարանում կատարվող յուրաքանչյուր նյութի ուսումնասիրությունը մենք ավարտում ենք ամփոփումով: Բնագրի վրա տարվելիք աշխատանքներն ավարտելուց հետո այն ամփոփում ենք՝ հիմնականում կանգ առնելով երեք կարևոր հարցերի վրա, դրանք են՝

ա) նյութի ուսումնասիրությունից ստացած գիտական, ճանաչողական նոր տեղեկությունները,

բ) նյութից հանվող դաստիարակչական-բարոյական հետևությունները,

գ) նյութի լեզուն՝ բառերը, դարձվածքները, արտահայտությունները:

Ընտրովի ընթերցանություն: Այս դեպքում արդեն ընտրված ստեղծագործությունից առանձնացվում է մի հատված կամ պարբերություն: Ընտրովի ընթերցանության ժամանակ

աշակերտը ուսուցչի հանձնարարությամբ առանձնացնում է այս կամ այն հերոսի խոսքերը կամ այն հատվածը, որը իրեն ավելի է դուր գալիս և այլն: Սա ստիպում է աշակերտին ոչ թե մեխանիկորեն կարդալ, այլև մտածել կարդացածի շուրջ, օգնում է ևս մեկ անգամ վերլուծել նկարագրված դեպքերը տրամաբանել ու նոր ընտրել ու կարդալ տեքստի որոշակի հատվածը:

Պետք է ուշադրություն դարձնել կարողություններին և հմտություններին, որպեսզի աշակերտը կարողանա սահուն և հասկանալով ընթերցել հանձնարարված նյութը, տրամաբանական հաջորդականությամբ վերարտադրել պատմության դեպքերը, նկարագրել և բնութագրել գործող անձանց, տրամաբանված ինքնուրույն խոսք կառուցի, ներկայացնի իր հնարավոր գործողությունները համանուն իրավիճակում, գործնականում կիրառի բառակազմական հմտությունները: Կարևոր է կարդացած գրականությունից նրա մոտ ձևավորվի ճիշտ արժեքային համակարգ. գնահատի գործող անձանց հատկանիշները, վերաբերմունք դրսևորի դրանց նկատմամբ, կարևորի մարդասիրությունը, ազնվությունը, սրտացավությունը, ուրիշին օգնելու ձգտումը, ձգտի ազնիվ ու մարդկային լինել իր արարքների մեջ, գնահատի ուրիշին օգնելու պատրաստակամությունը:

Աշակերտների տրամաբանական, զգացմունքային և արտահայտիչ ընթերցելու կարողությունը մեծապես կախված է այն բանից, թե նրանք խորությամբ և ճշտությամբ ընկալել և հասկացել են ընթերցած ստեղծագործության գաղափարը, բովանդակությունը, ենթատեքստը, տեղի ունեցող դեպքերը, դրանց մեջ պատճառահետևանքային կապերը, ինչպես և հեղինակի վերաբերմունքը հերոսների նկատմամբ:

Ինքնուրույն ընթերցանության կազմակերպման բոլոր մեթոդները օգնում են սովորողի գործուն մասնակցությանը, բանավոր և գրավոր խոսքի, ստեղծագործական մտքի զարգացմանը: Մեթոդները նպաստում են լեզվական կարողությունների ու հմտությունների զարգացմանը: Ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության մեջ և յուրաքանչյուր մեթոդ պետք է ծառայեցնի նյութի լավ յուրացմանը: Ի վերջո կարող են ծագել նաև չնախատեսված կամ անսպասելի հանգամանքներ, որոնք կթելադրեն ուսուցչին փոխել նախապես ընտրված մեթոդը՝ ստեղծված իրավիճակը շտկելու կամ հաղթահարելու նպատակով:

Այս բոլոր մեթոդների կիրառումը հնարավորություն է տալիս ուսուցիչներին և աշակերտներին փոխգործակցել միմյանց հետ: Ուսուցիչներն ու աշակերտները շփվում են միմյանց հետ դասի ժամանակ և սովորողները այլևս պասիվ ունկնդիրներ չեն, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Եթե պասիվ մեթոդի ժամանակ դասի հիմնական գործող անձը ուսուցիչն է, ապա այստեղ ուսուցիչաշակերտ փոխազդեցությունը հավասար մակարդակի վրա են:

Ընթերցանության նկատմամբ սերը ձևավորվում է դպրոցում, ուրեմն պետք է օգտագործել բոլոր հնարավորությունները՝ գրականություն սիրող, հասկացող ու գնահատող, մշտապես կարդացող, իր հմտությունները կյանքում կենսագործող մարդ դաստիարակելու համար: Ընթերցանության ճիշտ կազմակերպված դասերն աշակերտների մեջ սեր են արթնացնում ընթերցանության նկատմամբ, բացահայտում երեխաների հետաքրքրություններն ու հակումները, դաստիարակում ընկերասիրություն, հայրենասիրություն, ձևավորում գեղագիտական հայացքներ, բարոյական արժեքներ, ընդլայնում ու խորացնում այն գիտելիքները, որ նա ստացել է ինքնուրույն ընթերցանության դասերին:

Այս բոլոր մեթոդների կիրառման շնորհիվ մենք զարգացնում ենք ոչ միայն երեխաների մոտ ընթերցանությունը, այլ նաև սովորեցնում ենք վերարտադրել ընթերցած նյութը, արտահայտելով միաժամանակ իր սեփական մտքերն ու դատողությունները: Ակտիվ մեթոդների օգնությամբ կարելի է վեր հանել աշակերտների ունեցած գիտելիքները և սովորեցնել այդ գիտելիքները դարձնել կարողություններ և հմտություններ:

Որպեսզի երեխան սիրի գիրքը և կարդա, պետք է ուսուցիչը լավ կարդալ սովորեցնի աշակերտներին ու օգնի նրանց հաղթահարելու կարդալու ընթացքում առաջացած դժվարությունները:

Բացատրական ընթերցանության հիմնական նպատակներից է կարդալ սովորեցնելը, որովհետև կարդալու ուսուցումը լեզվի ուսուցման ամենահիմնական ու պատասխանատու բաժինն է:

Ա. Ղարիբյան

Ինքնուրույն ընթերցարաններում զետեղված ստեղծագործությունների ընթերցումը կամ մշակումը կատարվում է տարբեր մեթոդներով՝ տարրական դասարաններում այս գործընթացը իրականացվում է բացատրական ընթերցանության մեթոդով, իսկ ավագ դպրոցում՝գրական ընթերցանության մեթոդով: Դրանց խնդիրներն ու նպատակները միանգամայն այլ են, դրա համար

էլ ստեղծագործության ուսումնասիրման ընթացքում առաջադրվող պահանջներն էլ տարբեր են լինում: Այդ տարբերությունները պայմանավորված են ոչ միայն աշակերտների տարիքային առանձնահատկություններով ու ընդհանուր զարգացման մակարդակով, որոնք անկասկած նույնպես որոշակի դեր են խաղում ստեղծագործության ուսումնասիրման ձևերի ընտրության գործում, այլև՝ գլխավորապես ծրագրային պահանջներով, որոնք ուսման տարբեր օղակներում միանգամայն տարբեր խնդիրներ և նպատակներ են դնում մայրենի լեզվի դասընթացի այս կարևոր բաժնի առջև: Ընդ որում՝ պետք է նշել, որ ինքնուրույն ընթերցանությունը կարևոր դերակատարում ունի աշակերտների ընթերցանության կարողությունների զարգացման գործում[2,էջ 85 ]: կարդալու գործողության վրա:

Վերոհիշյալ մեթոդներից ցանկանում եմ առանձնացնել բացատրական ընթերցանության մեթոդը(բաղադրամասերն են՝ զրույց, կարդալ, բառային աշխատանք, պատմել, ամփոփել), որի կիրառումը ամենաարդյունավետն է ինքնուրույն ընթերցանության դասերին:

Ներկայացնում եմ ինքնուրույն ընթերցանության ժամերի կազմակերպման մի շարք պահանջներ.

-Մշակել ու զարգացնել սովորողների կարդալու տեխնիկան՝ իր որակական բոլոր հիմնական հատկանիշներով;

-Գործնականորեն հարստացնել երեխաների բառապաշարը, մշակել և զարգացնել նրա լեզվական կարողությունները :

-Աշխարհաճանաչողական տարրական տեղեկություններ տալ շրջապատի բնական և հասարակական երևույթների, մարդկանց և նրանց աշխատանքային գործունեության մասին :

-Իրականացնել երեխաների բարոյական, գեղագիտական ու գաղափարական դաստիրարակության ուղղությամբ դպրոցի առջև դրված խնդիրները:

Բանն այն է, որ կրտսեր դպրոցական տարիքում կարդացած գիրքն ամբողջ կյանքում հիշվում է և ազդում մարդու մտավոր զարգացման վրա: Այս խնդիրը հատուկ նշանակություն է ստանում տարրական դպրոցում: Երեխայի համար շատ դժվար է կարդալու տեխնիկային տիրապետելը: Իսկ ավելի դժվար է ձևավորել իսկական ընթերցող: Չէ՞ որ տառերի կապակցմամբ բառ կազմելը և կարդալը դեռևս չի նշանակում դառնալ ընթերցող: Գլխավորը՝ կարդալու գործընթացի

կազմակերպումն է այնպես, որ այն խթանի անձի զարգացումը: Իսկ զարգացած անձը մշտապես կարիք է զգում ընթերցանության: Այս իմաստով,ինքնուրույն ընթերցանությունը մեծ դեր և նշանակություն ունի կարդալու տարրական կարողության ձևավորման գործում: Տարրական դասարաններում ինքնուրույն ընթերցանության նպատակը կարդալու կարողությունների ձևավորման գործում դպրոցականների բառապաշարի մաքրումն ու հարստացումն է, խոսքի հղկումն է ու զարգացումը, արտահայտվելիք մտքին համարժեք բառեր ընտրելու, դրանք ուղղախոսության կանոններին համապատասխան արտաբերելու և կապակցված խոսք (բանավոր և գրավոր) կառուցելու կարողության մշակումը: Բնականաբար, այս խնդիրների արդյունավետ լուծումն անհնար է առանց ինքնուրույն ընթերցանության կարողության առկայության՝ խոսքում օգտագործելու համար կարևոր ունակությունների :

Բոլոր առարկաների յուրացումն ապահովվում է աշակերտի կարդալու հմտությամբ: Անհնարին է ծանոթանալ որևէ գիտության հիմունքներին, առավել ևս դառնալ ժամանակակից կուլտուրայի պահանջների բարձրության վրա կանգնած մարդ, եթե կարդալ չգիտես: Կարդալու ուսուցման որակից է կախված մյուս առարկաների ուսուցման հաջողությունը, իսկ կարդալու հմտության հիմնական որակը որոշվում է կարդալու ուսուցմամբ տարրական դասարաններում:

Կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողությունների զարգացումը նպաստում է ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Ճիշտ, սահուն, հասկանալով, արտահայտիչ կարդացող աշակերտներն ավելի լավ են սովորում ցանկացած առարկա, քան կցկտուր կարդացողները: Բանն այն է, որ վատ կարդացողն ընթերցելիս իր ուշադրությունը հիմնականում կենտրոնացնում է կարդալու գործողությանը և չի ըմբռնում կարդացածի բովանդակությունը, հիմնական միտքը և այլն: Լավ կարդացողն արագ է ըմբռնում հասկանում բնագիրը, որովհետև նա ժամանակ չի ծախսում

Կարդալու կարողության յուրացումը նպաստում է նաև աշակերտների ճանաչողական կարողությունների, տրամաբանական մտածողության և լեզվամտածողության զարգացմանը: Այս կարողության յուրացման գործընթացում երեխաներն իրականացնում են այնպիսի տրամաբանական գործողություններ, ինչպիսիք են վերլուծությունն ու համադրումը, դրանց հիման

վրա գտնում են երևույթների միջև գոյություն ունեցող տարբերություններն ու ընդհանրությունները, կատարում են դատողություններ, փորձում են ընկալել բազմաթիվ վերացական երևույթներն և այլն:

Այս ամենը զարգացնում է սովորողների մտածողությունը, այդ թվում՝ վերացական մտածողությունը, որը ճանաչողության բարձրագույն աստիճանն է: Կարդալու կարողության ձևավորման գործընթացում ուսուցիչը պետք է որոշի ոչ միայն այն, թե ինչպիսի աշխատանք պիտի կատարեն ինքն ու աշակերտները, այլև այն մեթոդներն ու հնարները, որոնք արդյունավետ են:Ընդ որում՝ պետք է կարևորել ոչ միայն դիդակտիկ նյութերի ու լեզվական խաղերի կիրառումը, այլև այն, թե ի՛նչ չափաբաժնով, երբ և ինչպես դրանք պետք է կիրառվեն: Ինքնուրույն ընթերցանությունը մայրենի լեզվի տարրական դասընթացի հիմնական բաժիններից մեկն է: Այդ բաժնի նյութի յուրացման միջոցով են ամփոփվում և իրականացվում սովորողների կարդալու տեխնիկայի զարգացման, գործնական ճանապարհով մայրենի լեզվի ուսուցման, աշխարհաճանաչողական տարրական գիտելիքների հաղորդման ծրագրային պահանջները: Հենց այդ նկատառումներով էլ ինքնուրույն ընթերցանությունը տարրական դասարաններում աշակերտների մտավոր զարգացման ու բարոյական դաստիարակության ամենակարևոր և անփոխարինելի միրջոցներից մեկն է :

Միշտ էլ դպրոցի հիմնական խնդիրներից մեկը եղել և մնում է իր սաներին սովորեցնել սիրել գիրքը, օգտվել նրանից, անընդհատ նոր գիտելիքներ քաղել այնտեղից:

Իսկ դրան կարելի է հասնել մշակելով աշակերտների լավ կարդալու կարողությունը,որովհետև այն
մարդու մտավոր զարգացման ու առաջընթացի հիմնական նախապայմանն է: Որքան ամուր և հաստատուն դրվեն աշակերտների լավ կարդալու կարողության մշակման հիմքերը, այնքան կարդալը երեխայի համար ավելի շուտ կդառնա գիտելիքների ձեռքբերման կարևոր ու
անփոխարինելի միջոց: Հետևաբար, դեռևս գրաճանաչության փուլում յուրաքանչյուր նոր տառի ուսուցումը, իսկ հետագայում՝ յորաքանչյուր նոր բնագրի մշակումը պետք է դառնա երեխաների կարդալու կարողության մշակման ու զարգացման միջոց, որպեսզի տարրական դասընթացի վերջում այն վերածվի որոշակի հմտության:

Տարրական դասարաններում իրականացվող ինքնուրույն ընթերցանության դասն իր կարևոր տեղն ունի ոչ միայն դասարանային, այլև, ողջ ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքում: Ինչպես մայրենիի, այնպես էլ ինքնուրույն ընթերցանության դասերին

գեղարվեստական լավագույն ստեղծագործությունների միջոցով աշակերտների մեջ սեր է արթնանում մեր ժողովրդի ու հայրենիքի հանդեպ, նրանք հաղորդակից են դառնում հայոց լեզվի ճոխությանը, գեղեցկությանն ու ճկունությանը: Սա առավել ազատ դասագործընթաց է, որը մեծ հնարավորություն է տալիս ուսուցչին՝ լրացնելու և խորացնելու աշակերտների գիտելիքները, որի արդյունքում երեխաները մղվում են դեպի գիրքն ու ընթերցանությունը, դեպի ինքնուրույն, որոնողական գործունեությունը, փորձում են հաղթահարել կարդալու դժվարությունները:

**ԳԼՈՒԽ 2:1**Ինքնուրույն ընթերցանության ժամերին կիրառվող մեթոդների արդյունավետությունը

Տարրական դասարաններում ինքնուրույն ընթերցանության դասերին ընտրված արդյունավետ մեթոդների կիրառումը ապահովում է հասկանալով և արտահայտիչ ընթերցանության կարողության ձևավորումը:Արդյո՞ք աշակերտները հասկացել են տեքստի գաղափարը (հիմնական միտքը): Աշակերտները պետք է բացահայտեն կարդացած նյութի բովանդակությունը, տարբերակի կարդացած տեքստի տեսակները՝ պատմողական, նկարագրական, դատողական, տարբերակի տեքստի կառուցվածքային-իմաստային մասերը՝ սկիզբ, ընթացք, ավարտ: Պահանջել, որ աշակերտը վերարտադրի կարդացած տեքստի բովանդակությունը. համեմատել, հակադրել և գնահատել գործող անձանց արարքները, համադրել փաստերը և ընդհանրացնել:

Ընթերցանության կարևոր պահանջներից է արտահայտիչ կարդալու կարողության ձևավորումը:

Բարձրաձայն ընթերցանությունն արտահայտիչ է համարվում, եթե այն ունկնդրի մեջ առաջացնում է ուշադրություն և հետաքրքրություն: Իսկ դա կարող է տեղի ունենալ, երբ ընթերցողը բավականաչափ հստակորեն արտահայտում է ստեղծագործության մեջ հեղինակի առաջադրած մտքերը, խոհերը, զգացմունքները, թափանցում է ստեղծագործության գաղափարական ու կերպարային բովանդակության մեջ և, ամենակարևորը, ցանկություն է արթնացնում՝ մինչև վերջ լսելու ընթերցվող նյութը:

Տեքստի հիմնական գաղափարը հասկանալն ու առանձնացնելը ամենակարևոր հմտություններից է, իսկ տեքստի կառուցվածքային-իմաստային մասերը՝ սկիզբ, ընթացք, ավարտ, տարբերակելը պարտադիր է յուրաքանչյուր երեխայի համար:

Երեխաները պետք է տարբերակեն նաև կարդացած տեքստի հնչերանգները ՝ պատմողականան է, հարցական,հրամայական,թե ՝ բացականչական :

Հաճախ երեխաներին հանձնարարում ենք դերերով կարդալ, որի ժամանակ երեխաները հստակ առանձնացնում են յուրաքանչյուր դերը և տարբերակում այն հեղինակի խոսքից:

Աշակերտների միջև պետք է ծավալել զրույց, որպեսզի կիսվեն իրենց տպավորություններով: Այսպիսի զրույց կարդացածի շուրջ կարելի է կազմակերպել թե՛ դասի ընթացքում, թե՛ դասից դուրս: Պետք է ուսուցիչն էլ գործուն մասնակցություն ունենա այդ լսումների ժամանակ:

Ինչպես մայրենիի, այնպես էլ ինքնուրույն ընթերցանության դասերին գեղարվեստական լավագույն ստեղծագործությունների ընթերցանության միջոցով աշակերտների մեջ սեր է արթնանում մեր ժողովրդի ու հայրենիքի հանդեպ, նրանք հաղորդակից են դառնում հայոց լեզվի ճոխությանը, գեղեցկությանն ու ճկունությանը: Սա առավել ազատ գործընթաց է, որը մեծ հնարավորություն է տալիս ուսուցչին՝ լրացնելու և խորացնելու աշակերտների գիտելիքները, որի արդյունքում երեխաները մղվում են դեպի գիրքն ու ընթերցանությունը, դեպի ինքնուրույն, որոնողական գործունեությունը, փորձում են հաղթահարել կարդալու դժվարությունները:

Տարրական դասարանների ‹‹Ինքնուրույն ընթերցանության նյութեր›› ուսումնական ձեռնարկներում ընդգրկված արձակ և չափածո գրական ստեղծագործություններն արծարծում են բազմապիսի թեմաներ, որոնք հնարավորություն են տալիս այդ դասերի ընթացքում տարամակարդակ աշխատանքներ կազմակերպել՝ հաշվի առնելով աշակերտների հետաքրքրությունները:

Ինքնուրույն ընթերցանությունը նպաստում է նաև կենդանի, գեղեցիկ ու ճիշտ կառուցված խոսքի ընդօրինակմանը:Ղեկավարվելով մայրենի լեզվի ծրագրով և գործածելով ընթերցարանների գործնական նյութերը՝ ուսուցիչը ինքնուրույն ընթերցանության միջոցով աշակերտներին զինում է շրջապատի բնական ու հասարակական երևույթների ճիշտ ճանաչողությամբ, ռեալ ու բազմակողմանի տեղեկություններ է տալիս կյանքի մասին՝ ձևավորելով նաև դրանց մասին կապակցված խոսքով ներկայացնելու կարողություն,մշակելով գեղարվեստական ճաշակ, սեր դեպի գեղեցիկն ու լավը, ազնիվ ու բարի հակումներ, վեհ ու խորապես մարդկային զգացմունքներ: Թե՛ մեկ և թե՛ մյուս տիպի նյութերի միջոցով երեխաների մեջ մշակում է լեզվական բարձր մշակույթ, որպեսզի նրանք կարողանան իրենց տեսածն ու լսածը, իրենց խոհերն ու ապրումները պարզ, անպաճույճ, հստակ, մաքուր ու գեղեցիկ հայերենով և տրամաբանված ձևով արտահայտել:

Համառոտակի սրանք են այն նպատակներն ու խնդիրները, որ ունի ինքնուրույն ընթերցանությունը դպրոցում:

Ուսուցման առաջին փուլում ինքնուրույն ընթերցանության միջոցով զարգացվում է աշակերտների տառերը ճանաչելու, դրանք կապակցելու, բառերը վանկերով ընթերցելու, բառակապակցություններ կազմելու կարողությունները: Ինչպես նաև աշակերտների՝ բառում հնչյունի անջատում կատարելու, տրված հնչյունով, տառակապակցությամբ, վանկով նոր բառեր կազմելու կարողությունը, այսինքն՝ լեզվական նախագիտելիքների միջոցով զարգացվում է աշակերտների նախնական բառապաշարը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով համապատասխան գրականություն՝ իմ կատարած հետազոտության արդյունքում հանգում եմ հետևյալ եզրակացությանը.

Ինքնուրույն ընթերցանության դասերին արդյունավետ մեթոդների կիրառմամբ .

-ճիշտ, սահուն, հասկանալով, արտահայտիչ կարդացող աշակերտներն ավելի լավ են սովորում ցանկացած առարկա, նրանց մոտ ձևավորվում է գեղեցիկ և սահուն խոսք,

- աշակերտը սովորում է վերլուծել, համադրել, հակադրել , ինքնուրույն եզրահանգումներ կատարել, զարգացնում է ուշադրությունը, երևակայությունը,

- մեծանում է երեխաների հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ:

Ընթերցանության նկատմամբ սեր արթնացնելու գործում կարևոր է նաև բանավոր խոսքի զարգացումը(այս տեխնոլոգիան պետք է կիրառել սկսած գրաճանաչության փուլից): Անչափ կարևոր է ուսուցչի ամենօրյա հետևողական աշխատանքը , թե՛ արտահայտիչ ընթերցելու, թե՛ հասկանալով , դերերով , լուռ ու բարձրաձայն կարդալու կարողություններ զարգացնելու համար: Չէ՞ որ գիտելիքի հիմքը հենց ընթերցանությունն է: Ընթերցանության շնորհիվ կարող ենք ունենալ խելացի, կիրթ, դաստիարակված սերունդ:

Գրականություն

1. Գյուլամիրյան Զ., Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան, 1998 թ., էջ 84:

2. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Ընթերցանության դասաժամերի դերը ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործում // «Նախաշավիղ», Երևան, 2010 թ., N6, էջ 85:

3.Մայրենիի 1-4 դասարանների չափորոշիչ և ծրագրեր մայրենի առարկայի չափորոշիչ

4.ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2021 թվականի (ապրիլի 30-ի NN 08-Լ- 27-Լ, մայիսի 7-ի 28-Լ ) հրամաններ - ՀՀ ԿԳՄՍՆ (escs.am)

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

## ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

# *ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ*

*ԹԵՄԱ* ‹‹ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ›› առարկայի դաստիարակչական նպատակները

*ԿԱՏԱՐՈՂ՝* Լուսինե Էդիկի Ապերյան

*ՂԵԿԱՎԱՐ՝* Մ.Գ.Թ. Լ. Միրաբյան

*ՎԱՆԱՁՈՐ* 2023

## Բովանդակություն

Ներածություն........................................................................................................................ 3 էջ

ԳԼՈՒԽ 1.«Ես և շրջակա աշխարհը» առարկայի դաստիարակչական նպատակները........................................................................................................................ 6 էջ

Եզրակացություն........................................................................................................................ 14 էջ

Օգտագործված գրականության ցանկ........................................................................................ 16 էջ

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Երեխան իր ճանաչողության գործընթացում հետզհետե բացահայտում է իրեն շրջապատող աշխարհը, և նրա առջև բացվում են բնության գեղեցկությունները: Գեղեցիկը նկատելու կարողության ձևավորմանը զուգընթաց հարկավոր է երեխաներին սովորեցնել բնության մեջ ներդաշնակության խորհուրդն ըմբռնելու արվեստը և ձգտում առաջացնել՝ չխաթարելու այն :[2,էջ8]

«Բնապահպանական կրթությունը արժեքների ճանաչման և ընկալումների պարզաբանման մի գործընթաց է: Այն կոչված է զարգացնելու մարդուն անհրաժեշտ այնպիսի հմտություններ ու վերաբերմունք, որոնք պետք են նրան իր մշակույթի և կենսաֆիզիկական շրջապատի փոխհարաբերությունները հասկանալու և գնահատելու համար»:ԱՄՆ, Նևադա նահանգ, 1970, (USN/UNESCO)-ի համաժողով:[1,էջ6]

Վերջինս կոչված է դաստիարակելու, ձևավորելու այնպիսի հասարակություն, որը ոչ միայն տեղյակ է բնապահպանական հիմնախնդիրներին ու հարակից հարցերին և մտահոգված է դրանցով, այլ նաև ունի որոշակի գիտելիքներ, հմտություններ, շարժառիթներ ու նվիրում՝ թե անհատապես, թե միասնական ջանքերով ընթացիկ խնդիրները լուծելու և նորերը կանխելու համար: Ինչպես տեսնում ենք, այն ենթադրում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների ձևավորում, այլ նաև պրակտիկ կարողությունների զարգացում: Այն սովորողներին հնարավորություն է ընձեռում բնության պահպանության խնդրում ձեռք բերել մասնակցային փորձառություն: Այս է պատճառը, որ սովորողը պետք է ուսում առնի ոչ միայն դաս սերտելով, այլ նաև հետազոտություններ և գործնական աշխատանքներ կատարելով: Այսօր մարդկանց քաղաքացիական ակտիվությունը կարելի է ապահովել միայն նրանց՝ խնդիրների լուծման գործընթացներին մասնակից դարձնելու միջոցով:

Բնապահպանական կրթությունն ունի մի շարք կարևոր առանձնահատկություն ևս. այն չի սահմանափակվում միայն մեկ առարկայի կամ մեկ գիտության շրջանակներում: Իրականում այն ինտեգրալ կրթություն է, որը ներառում է գիտելիքներ ինչպես տարբեր առարկաների և գիտությունների, այնպես էլ կյանքի տարբեր բնագավառների՝ տնտեսության, առողջապահության, տեղեկատվական տեխնոլոգիաների, քաղաքականության վերաբերյալ:[1, 7էջ]

Հետևաբար, հանրակրթության պետական չափորոշչի համաձայն՝ «Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկան «Բնական գիտություններ» և «Հասարակական գիտություններ» ուսումնական բնագավառները ներկայացնող ինտեգրված պետական պարտադիր առարկա է 2-4-րդ դասարանների համար: Տարրական դպրոցում բնության տարրերի ու երևույթների ուսումնասիրությունը, սովորողի աշխարհայացքի համակարգված ձևավորմանը զուգահեռ, պետք է հնարավորություն ընձեռի բնության մեջ, դասարանում կամ տանը դիտումների, փորձերի և այլ տարաբնույթ գործնական աշխատանքների միջոցով սովորողի մեջ զարգացնելու Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված ճանաչողության մեթոդները:

7-10 տարեկան հասակը լավագույն տարիքն է համագործակցության, փոխըմբռնման, մարդու իրավունքների հիմնախնդիրները հասկանալու համար: Դա մարդու կյանքում սոցիալական ինքնագիտակցության աճի ժամանակաշրջանն է, և անհրաժեշտ է, որ հենց այս տարիքում ուսումնական գործընթացում քննարկման հիմնական թեմա դառնան յուրաքանչյուրի նկատմամբ արդարացի վերաբերմունքի, սեփական արժանապատվության զգացումի, հանդուրժողականության, շրջապատի մարդկանց նկատմամբ բարյացակամության ձևավորմանն ուղղված հարցերը: Երեխայի համար շատ կարևոր է հենց այս տարիքում ընդունված լինել կոլեկտիվի կողմից, լինել նրա լիիրավ անդամը:

Հանրակրթության նպատակների և կրթական բարեփոխումների խնդիրների տեսանկյունից կարևոր է առարկայի բովանդակության մեջ այնպիսի թեմաների ներառումը, որոնք կապահովեն երեխայի՝ որպես աճող անհատականության սոցիալականացման, ինչպես նաև աշխարհաճանաչման և մարդկային հասարակության նկատմամբ սեփական դիրքորոշումը և հարաբերությունները ճշտելու, դրա միջոցով դեպի իրավական պետություն տանող ճանապարհի առաջին քայլերն անելու, իր երկրի արժանավոր քաղաքացի դառնալու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

Աշխատանքի նպատակը: Աշխատանքի նպատակն է ներկայացնել «Ես և շրջակա աշխարհը›› առարկայի դաստիարակչական նպատակները: Ուսումնասիրել բնապահպանական վերաբերմունքի ձևավորմանը միտված գոյություն ունեցող տեսական մոտեցումները և դրանց գործնական դրսևորումները:

Նպատակից բխող խնդիրներից են՝

1.Գտնել բնապահպանական խնդիրների, դրանց լռծումների և «Ես և շրջակա աշխարհը» առարկայի միջև եղած կապը:

2.Ի՞նչ մեթոդներով կարելի է իրականացնել բնապահպանական դաստիարակությունը:

3.Ի՞նչ խնդիրների ենք բախվում կրտսեր դպրոցական տարիքի երեխաների շրջանում բնապահպանական դաստիարակության կազմակերպման ընթացքում:

Աշխատանքի մեթոդական և տեղեկատվական հիմքերը: Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար մեթոդական հիմք են ծառայել մի շարք հեղինակների կողմից իրականացված հետազոտությունները, հրապարակված գիտական աշխատությունները և դրանցում ներկայացված տեսակետները: Աշխատանքի իրականացման համար առավել կարևոր նշանակություն են ունեցել մանկավարժության ոլորտի վերաբերյալ հայտնի հետազոտությունները և մենագրությունները:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, մեկ գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքային տեքստը կազմում է 16 տպագրական էջ:



# ԳԼՈՒԽ 1.

# «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Կրտսեր դպրոցում ուսուցումը պիտի նպաստի անձի համակողմանի զարգացմանն ու դաստիարակությանը:

Այն տեսակետը, որ յուրաքանչյուր ուսուցիչ առարկան դասավանդելիս պետք է առաջին հերթին այն լավ իմանա, դեռ չի ապահովում ուսուցչի լիակատար դասավանդումը: Ուսուցիչը կարող է լինել հիանալի մասնագետ, սակայն դպրոցում չկարողանա իր գիտելիքներն արդյունավետ փոխանցել աշակերտներին:

Տվյալ առարկայի ուսուցման մեթոդիկան որոշում է գիտական հիմունքների ներկրման շրջանակներն ու չափաբաժինը դպրոցական դասընթացում: Դրա համար պետք է հստակեցնել, թե ինչ է անհրաժեշտ իմանալ միջնակարգ կրթություն ստացող սովորողին և անհրաժեշտ նյութից որը նա կարող է ընկալել տվյալ տարիքում:

Դպրոցական կրթության բովանդակության մշակման համար առարկայի մեթոդիկան օգտագործում է գիտությունների հիմունքները: Առարկայի ուսուցման հիմունքներն ընդգրկում են ընդհանուր հարցեր, որոնց ուսումնասիրումը պետք է հանգեցնի ընդհանուր առարկայի օրինաչափությունների վերաբերյալ հասկացությունների ձևավորմանը: Առարկայի շրջանակներում դպրոցում ուսումնասիրում է հարցեր, որոնք վերաբերում են.

- ուսուցման բովանդակությանը (ինչ սովորեցնել),
- ուսուցման կազմակերպման ձևերին ու մեթոդներին (ինչպես սովորեցնել),
- ուսուցման միջոցներին (ինչի օգնությամբ սովորեցնել),
- սովորողների կողմից գիտելիքների յուրացման, նրանց մտավոր զարգացման և դաստիարակության հարցերին:

Առարկայի առաջին խնդիրն է՝ ինչ սովորեցնել տվյալ առարկայի շրջանակներում: Խնդիրը ներառում է՝ ծրագրային նյութի ընտրություն, այդ նյութի բովանդակության խորության ու ընդգրկման սահմանների որոշում, նյութի գիտականության ապահովում, աշխարհագրության դասընթացի կատարելագործում (կատարելագործել դասընթացը՝ նշանակում է արդիականացնել նրա բովանդակությունը):

Այսօր անհրաժեշտ է նաև ցույց տալ սովորողին մատուցվող նյութի արդիականությունն ու կիրառելիությունը առօրյա կյանքում, որպեսզի նա հասկանա, թե ինչ իմաստ ու նշանակություն ունի աշխարհագրական գիտելիքը հասարակական կյանքում:

Հետևաբար՝ «ինչ սովորեցնել» խնդրից անցնում է «ինչի համար սովորեցնել» առարկան դպրոցում խնդիրը, ինչ նպատակով նյութն ընտրել և ինչ սկզբունքով այն մատուցել, որ օգտակար լինի սովորողին իրական կյանքում այսօր և ապագայում:

Ուսուցման մեթոդիկայի երկրորդ խնդիրն է՝ «ինչպես սովորեցնել» առարկան դպրոցում: Այն ներառում է ուսուցման կազմակերպման ձևերի, դասավանդման մեթոդների ընտրությունն ու հիմնավորումը, արտադասարանական աշխատանքների կազմակերպումը, որի արդյունքում ձևավորվում է գիտելիքների, կարողությունների և հմտությունների համակարգ, զարգանում են սովորողի մտավոր կարողություններն ու ստեղծագործական մտածողությունը:

Առարկայի ուսուցման մեթոդիկայի երրորդ խնդիրն է՝ «ինչի օգնությամբ սովորեցնել» առարկան դպրոցում (ուսուցման միջոցների ընտրությունը): Ուսուցման միջոցների ընտրությունն այսօր կարևոր խնդիր է, քանի որ ուսուցման միջոցների հայտնի ավանդական համակարգը համալրվել է նոր միջոցների կիրառում: Այսօր դպրոցում կիրառվում են համակարգչային դասեր և որպես ուսուցման միջոց ավանդական միջոցներին գումարվել են նաև համակարգիչները, էլեկտրոնային դասագրքերը և այլ համակարգչային սարքավորումները:

Առարկայի ուսուցման մեթոդիկան սերտորեն կապված է հարակից գիտությունների հետ և որոշակի տեղ ու դեր ունի գիտությունների համակարգում: Մշակելով կրթության ու դաստիարակության իր տեսությունը, հիմնվում է դիդակտիկայի և գիտական բովանդակության վրա, կապված է մանկավարժության, հոգեբանության, փիլիսոփայության, բնապահպանության– բնօգտագործման և հարակից գիտությունների մեթոդիկաների հետ:

Հանրակրթության պետական չափորոշչի համաձայն՝ «Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկան «Բնական գիտություններ» և «Հասարակական գիտություններ» ուսումնական բնագավառները ներկայացնող ինտեգրված պետական պարտադիր առարկա է 2-4-րդ դասարանների համար:

Տարրական դպրոցում բնության տարրերի ու երևույթների ուսումնասիրությունը, սովորողի աշխարհայացքի համակարգված ձևավորմանը զուգահեռ, պետք է հնարավորություն ընձեռի բնության մեջ, դասարանում կամ տանը դիտումների, փորձերի և այլ տարաբնույթ գործնական աշխատանքների միջոցով սովորողի մեջ զարգացնելու Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված ճանաչողության մեթոդները:

Բնության անկենդան և կենդանի տարրերի, մարդու, Երկիր մոլորակի՝ որպես մարդկության ընդհանուր տան, ուսումնասիրությունը անհրաժեշտ է իրականացնել.

- սովորողի շրջապատում (տուն, բնակավայր, բնական լանդշաֆտ) դիտվող բնության տարրերի և երևույթների դիտարկումների, պարզունակ փորձերի նկարագրության,
- սովորողի կողմից սեփական օրգանիզմը ճանաչելուն, առողջության պահպանմանը և անվտանգ կենսագործունեություն ծավալելուն ուղղված ուսումնական գործունեության տեսակների իրականացման,
- իր շրջապատը հետազոտելու տարրական կարողությունների ու դրանց վերաբերյալ ինքնուրույն եզրահանգումների կատարման ապահովման,
- Հայաստանի բնության բազմազանության, բնական ու հասարակական օբյեկտների ու երևույթների վերաբերյալ տարրական գիտելիքների ձևավորման,
- մայրցամաքների հայտնագործման ու հետազոտության մասին պատմությունների միջոցով:

7-10 տարեկան հասակը լավագույն տարիքն է համագործակցության, փոխըմբռնման, մարդու իրավունքների հիմնախնդիրները հասկանալու համար: Դա մարդու կյանքում սոցիալական ինքնազիտակցության աճի ժամանակաշրջանն է, և անհրաժեշտ է, որ հենց այս տարիքում ուսումնական գործընթացում քննարկման հիմնական թեմա դառնան յուրաքանչյուրի նկատմամբ արդարացի վերաբերմունքի, սեփական արժանապատվության զգացումի, հանդուրժողականության, շրջապատի մարդկանց նկատմամբ բարյացակամության ձևավորմանն ուղղված հարցերը: Երեխայի համար շատ կարևոր է հենց այս տարիքում ընդունված լինել կոլեկտիվի կողմից, լինել նրա լիիրավ անդամը:

Հանրակրթության նպատակների և կրթական բարեփոխումների խնդիրների տեսանկյունից կարևոր է առարկայի բովանդակության մեջ այնպիսի թեմաների ներառումը, որոնք կապահովեն երեխայի՝ որպես աճող անհատականության սոցիալականացման, ինչպես նաև աշխարհաճանաչման և մարդկային հասարակության նկատմամբ սեփական դիրքորոշումը և հարաբերությունները ճշտելու, դրա միջոցով դեպի իրավական պետություն տանող ճանապարհի առաջին քայլերն անելու, իր երկրի արժանավոր քաղաքացի դառնալու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

Տարրական դպրոցի 2-4-րդ դասարաններում «Ես և շրջակա աշխարհը» առարկայի նպատակն է.[էջ213]

- սովորողներին ծանոթացնել իրենց շրջապատող աշխարհին, այնտեղ կատարվող բնական-հասարակական երևույթներին ու օբյեկտներին, մարդկային հարաբերություններին,
- սովորեցնել ճանաչել սեփական օրգանիզմը, ծանոթացնել օրգանիզմի խնամքի և հիգիենայի հիմնական կանոններին,
- սովորեցնել արդյունավետ հաղորդակցվել և համագործակցել ուրիշ մարդկանց հետ, նրանց մոտ ձևավորել իրենց և շրջակա աշխարհը ճանաչելու հմտություններ,
- նպաստել սեփական արժանապատվության զգացումի, հանդուրժողականության, շրջապատի մարդկանց նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի ձևավորմանը,
- օգնել դառնալու աշակերտական կոլեկտիվի լիիրավ անդամ, ձևավորել և զարգացնել ինքնուրույն որոշումներ կայացնելու, սեփական արարքները վերահսկելու, դրանց համար պատասխանատու լինելու գիտակցություն,
- նպաստել աշակերտների ինքնադրսևորման ու ինքնարտահայտման հմտությունների ձևավորմանը,
- ձևավորել առողջ ապրելակերպին նպաստող վարքագիծ, բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի անհրաժեշտության գիտակցում,
- նպաստել սեփական երկրի պատմամշակութային արժեքների ժառանգորդը լինելու գիտակցմանը:

Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացը կոչված է օգնելու երեխային ճանաչել իրեն ոչ միայն որպես անհատ, այլև որպես հասարակության մասնիկ:

Դասընթացի օգնությամբ կրտսեր դպրոցականը սկսում է «կառուցել» իր սեփական աշխարհը՝ գծելով իր պատկերացումների, զգացողությունների, մտքերի ու նախասիրությունների շրջանակը:

Թեմաներն ընտրված են այնպես, որ աշակերտի մեջ քայլ առ քայլ ձևավորվի այն գիտակցությունը, որ ինքն աշխարհում մենակ չէ, որ իր սեփական ցանկություններից ու երազներից այն կողմ կան ուրիշ մարդիկ, որոնք իրեն նման չեն, և, ինչպես ինքը, անկրկնելի անհատականություն են, ուստի նույնպես արժանի են հարգանքի:

Կրտսեր դպրոցականի պատկերացումները ընդլայնվում են շրջակա աշխարհի հետ ծանոթացման շնորհիվ:

Երեխաներն ուսումնասիրում են իրենց բակը, քաղաքը, մարզը, հայրենիքը, նրա ներկան և անցյալը, պատմամշակութային արժեքները, ծանոթանում են տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց, սովորում են հասարակական վայրերում օրինակելի վարքագիծ դրսևորել, ձեռք են բերում հաղորդակցական հմտություններ, առողջ և անվտանգ ապրելակերպի համար անհրաժեշտ կարողություններ:

Տարրական դպրոցում սովորողի գիտելիքները սերտորեն առնչվում են մայրենիին, մաթեմատիկային և այլ ուսումնական առարկաների: Շատ կարևոր է նկատի ունենալ, որ այս դասընթացի արդյունքում ձեռք բերված գիտելիքները, կարողությունները և հմտությունները արժեքավոր են որպես հենք նոր գիտելիքների համար: Դասընթացի բոլոր թեմաների ուսումնասիրության ժամանակ կարևոր է ապահովել բազմաբնույթ գործնական աշխատանքների կիրառումը:

Ներկայացվող պահանջներն արտահայտվում են սովորողի՝ որպես անձի և քաղաքացու ցուցաբերած վերաբերմունքի, դիրքորոշման, վարքի և գործելակերպի միջոցով:

- «Ես և շրջակա աշխարհը» դասընթացի ուսումնասիրման արդյունքում սովորողը պետք է հետաքրքրասիրություն հանդես բերի աշխարհի նկատմամբ իր ողջ բազմազանությամբ,
- հանդուրժող և բարյացակամ վերաբերմունք դրսևորի այլ մշակույթների նկատմամբ,
- հոգատար լինի կենդանի էակների հանդեպ,
- գիտակցի բնական պաշարների սահմանափակ լինելը,

- խնայողական վերաբերմունք ունենա բնական պաշարների հանդեպ, սիրի բնությունը, գնահատի նրա գեղեցկությունը,
- պատասխանատու վարքագիծ ունենա բնության հանդեպ,
- սիրի հայրենիքը, պատասխանատու վարքագիծ ունենա հայրենիքի հանդեպ, կարևորի իր հայրենիքի պատմամշակութային արժեքները,
- լինի ընկերասեր, կարևորի փոխօգնությունն ու համագործակցությունը, գնահատի ուրիշների աշխատանքը և հաջողությունները,
- կարևորի բարեկիրթ հաղորդակցման դերը միջանձնային հարաբերություններում,
- կարողանա համագործակցել, լինի ազնիվ, արդարամիտ, բարի, պարտաճանաչ, պատասխանատու, չհանդուրժի կեղծիքը, իրավունքների ոտնահարումը և անարդարությունը, գիտակցի սեփական կարծիքը հստակ ձևակերպելու,
- ուրիշներին հասկանալու անհրաժեշտությունն ու կարևորությունը փոխըմբռնման համար: Տարրական դպրոցի 2-4-րդ դասարաններում «Ես և շրջակա աշխարհը» առարկայի նպատակն է. • սովորողներին ծանոթացնել իրենց շրջապատող աշխարհին,
- այնտեղ կատարվող բնական-հասարակական երևույթներին ու օբյեկտներին, մարդկային հարաբերություններին,
- սովորեցնել ճանաչել սեփական օրգանիզմը, ծանոթացնել օրգանիզմի խնամքի և հիգիենայի հիմնական կանոններին, սովորեցնել արդյունավետ հաղորդակցվել և համագործակցել ուրիշ մարդկանց հետ, նրանց մոտ ձևավորել իրենց և շրջակա աշխարհը ճանաչելու հմտություններ, նպաստել սեփական արժանապատվության զգացումի,
- հանդուրժողականության, շրջապատի մարդկանց նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի ձևավորմանը,
- օգնել դառնալու աշակերտական կոլեկտիվի լիիրավ անդամ,
- ձևավորել և զարգացնել ինքնուրույն որոշումներ կայացնելու, սեփական արարքները վերահսկելու, դրանց համար պատասխանատու լինելու գիտակցություն,

- նպաստել աշակերտների ինքնադրսևորման ու ինքնարտահայտման հմտությունների ձևավորմանը, ձևավորել առողջ ապրելակերպին նպաստող վարքագիծ,
- բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի անհրաժեշտության գիտակցում, նպաստել սեփական երկրի պատմամշակութային արժեքների՝ ժառանգորդը լինելու գիտակցմանը: Ուսուցման գործընթացում, կախված թեմայից, դասի նպատակից, դասարանից, սովորողների առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից, տվյալ դասի կամ դասի առանձին հատվածի համար ըստ նպատակահարմարության կարող են ընտրվել ուսումնական գործունեության հետևյալ տեսակները.

• ուսումնական նյութի բացատրում, լուսաբանում ինչպես ուսուցչի այնպես էլ աշակերտների կողմից,

• երևույթների դիտարկում, մեկնաբանում,

• տեղանքի ուսումնասիրում, իրադրությունների հետազոտում,

• նկարների, ֆիլմերի դիտում, քննարկում,

• ուսումնական ձեռնարկների և այլ աղբյուրների ուսումնասիրում,

• գործնական և փորձնական աշխատանքների կատարում,

• գրաֆիկական աշխատանքների կատարում,

• արվեստի ստեղծագործությունների դիտում և հետազոտում,

• հիմնահարցերի հետազոտում,

• հիմնահարցերի հետազոտում

, • կոնֆլիկտային իրավիճակների քննարկում,

• ստեղծագործական աշխատանքների կատարում, ներկայացում,

• տեխնիկական սարքերով և գործիքներով աշխատանքների կատարում,

• խաղերի, մրցույթների, հանդեսների անցկացում,

• բանավեճերի, քննարկումների, դերային խաղերի կազմակերպում,

• իրավիճակների դիտարկում և արդյունքների վերլուծում,

• հաշվետվությունների պատրաստում, ներկայացում

• նոր տեխնոլոգիաների, համակարգչային ծրագրերի օգտագործում,

• անհատական և խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքներ կատարում:



# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն աշխատանքում պարզեցի՝

•Կրտսեր դպրոցում ուսուցումը պիտի նպաստի անձի համակողմանի զարգացմանն ու դաստիարակությանը:

• Այսօր անհրաժեշտ է խորապես ճանաչել և ներդաշնակ ապրել բնության հետ:

•Սովորողները բացահայտում են բնության հրաշքները՝ համադրելով արվստի և բնական գիտությունների ընձեռած հնարավորությունները;

•Կրտսեր դպրոցականի պատկերացումներն ընդլայնվում են շրջակա աշխարհի հետ ծանոթացման շնորհիվ:

• Տարրական դպրոցում բնության տարրերի ու երևույթների ուսումնասիրությունը, սովորողի աշխարհայացքի համակարգված ձևավորմանը զուգահեռ, պետք է հնարավորություն ընձեռի բնության մեջ, դասարանում կամ տանը դիտումների, փորձերի և այլ տարաբնույթ գործնական աշխատանքների միջոցով սովորողի մեջ զարգացնելու Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված ճանաչողության մեթոդները:

• 7-10 տարեկան հասակը լավագույն տարիքն է համագործակցության, փոխըմբռնման, մարդու իրավունքների հիմնախնդիրները հասկանալու համար: Դա մարդու կյանքում սոցիալական ինքնագիտակցության աճի ժամանակաշրջանն է, և անհրաժեշտ է, որ հենց այս տարիքում ուսումնական գործընթացում քննարկման հիմնական թեմա դառնան յուրաքանչյուրի նկատմամբ արդարացի վերաբերմունքի, սեփական արժանապատվության զգացումի, հանդուրժողականության, շրջապատի մարդկանց նկատմամբ բարյացակամության ձևավորմանն ուղղված հարցերը: Երեխայի համար շատ կարևոր է հենց այս տարիքում ընդունված լինել կոլեկտիվի կողմից, լինել նրա լիիրավ անդամը:

• Հանրակրթության նպատակների և կրթական բարեփոխումների խնդիրների տեսանկյունից կարևոր է առարկայի բովանդակության մեջ այնպիսի թեմաների ներառումը, որոնք կապահովեն երեխայի՝ որպես աճող անհատականության սոցիալականացման, ինչպես նաև աշխարհաճանաչման և մարդկային հասարակության նկատմամբ սեփական դիրքորոշումը և հարաբերությունները ճշտելու, դրա միջոցով

դեպի իրավական պետություն տանող ճանապարհի առաջին քայլերն անելու, իր երկրի արժանավոր քաղաքացի դառնալու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

•Կարևոր է այն փաստը, որ այս դասընթացի արդյունքում ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները արժեքավոր հենք են նոր գիտելիքների համար:



# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1.Բնապահպանական կրթության ձեռնարկ  ուսուցիչների համար <<Միտք սերմանի՛ր, ծառ տնկի՛ր>>,Երևան, Նոյան Տապան,2010, 6-9էջ:

2. Գիտամեթոդական հանդես ,Նախաշավիղ,2013,8-11 էջ:

3. Գ. Հովհաննիսյան և ուրիշներ, Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները.   Տիգրանմեծ, Երևան, 2004, 364 էջ:

4.  Հանրակրթության պետական կրթակարգ: Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, 2004, 152 էջ:

5.Հանրակրթության պետական չափորոշիչ, 2020:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

# *ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ*

*ԹԵՄԱ* ‹‹ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ›› առարկայի դաստիարակչական նպատակները

*ԿԱՏԱՐՈՂ՝* Լուսինե Էդիկի Ապերյան

*ՂԵԿԱՎԱՐ՝* Մ.Գ.Թ. Լ. Միրաբյան

*ՎԱՆԱՁՈՐ 2023*

## Բովանդակություն

Ներածություն........................................................................................................................ 3 էջ

ԳԼՈՒԽ 1.«Ես և շրջակա աշխարհը» առարկայի դաստիարակչական նպատակները........................................................................................................................ 6 էջ

Եզրակացություն........................................................................................................................ 14 էջ

Օգտագործված գրականության ցանկ........................................................................................................................ 16 էջ

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Երեխան  իր ճանաչողության գործընթացում հետզհետե բացահայտում է իրեն շրջապատող աշխարհը, և նրա առջև բացվում են բնության գեղեցկությունները: Գեղեցիկը նկատելու կարողության ձևավորմանը զուգընթաց հարկավոր է երեխաներին սովորեցնել բնության մեջ ներդաշնակության խորհուրդն ըմբռնելու արվեստը և ձգտում առաջացնել՝ չխաթարելու այն :[2,էջ8]

«Բնապահպանական  կրթությունը արժեքների ճանաչման  և ընկալումների պարզաբանման  մի  գործընթաց է: Այն  կոչված է զարգացնելու մարդուն անհրաժեշտ այնպիսի հմտություններ ու վերաբերմունք, որոնք պետք են նրան իր մշակույթի և կենսաֆիզիկական շրջապատի փոխհարաբերությունները հասկանալու  և գնահատելու համար»:ԱՄՆ, Նևադա նահանգ, 1970, (USN/UNESCO)-ի համաժողով:[1,էջ6]

Վերջինս կոչված է դաստիարակելու, ձևավորելու այնպիսի հասարակություն, որը ոչ միայն տեղյակ է բնապահպանական հիմնախնդիրներին ու հարակից հարցերին և մտահոգված է դրանցով, այլ նաև ունի որոշակի գիտելիքներ, հմտություններ, շարժառիթներ ու նվիրում՝ թե անհատապես, թե միասնական ջանքերով ընթացիկ խնդիրները լուծելու և նորերը կանխելու համար: Ինչպես տեսնում ենք, այն ենթադրում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների ձևավորում, այլ նաև պրակտիկ կարողությունների զարգացում: Այն սովորողներին հնարավորություն է ընձեռում բնության պահպանության խնդրում ձեռք բերել մասնակցային փորձառություն: Այս է պատճառը, որ սովորողը պետք է ուսում առնի ոչ միայն դաս սերտելով, այլ նաև հետազոտություններ և գործնական աշխատանքներ կատարելով: Այսօր մարդկանց քաղաքացիական ակտիվությունը կարելի է ապահովել միայն նրանց՝ խնդիրների լուծման գործընթացներին մասնակից դարձնելու միջոցով:

Բնապահպանական կրթությունն ունի մի շարք կարևոր առանձնահատկություն ևս. այն չի սահմանափակվում միայն մեկ առարկայի կամ մեկ գիտության շրջանակներում: Իրականում այն ինտեգրալ կրթություն է, որը ներառում է գիտելիքներ ինչպես տարբեր առարկաների և գիտությունների, այնպես էլ կյանքի տարբեր բնագավառների՝ տնտեսության, առողջապահության, տեղեկատվական տեխնոլոգիաների, քաղաքականության վերաբերյալ:[1, 7էջ]

Հետևաբար, հանրակրթության պետական չափորոշչի համաձայն՝ «Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկան «Բնական գիտություններ» և «Հասարակական գիտություններ» ուսումնական բնագավառները ներկայացնող ինտեգրված պետական պարտադիր առարկա է 2-4-րդ դասարանների համար: Տարրական դպրոցում բնության տարրերի ու երևույթների ուսումնասիրությունը, սովորողի աշխարհայացքի համակարգված ձևավորմանը զուգահեռ, պետք է հնարավորություն ընձեռի բնության մեջ, դասարանում կամ տանը դիտումների, փորձերի և այլ տարաբնույթ գործնական աշխատանքների միջոցով սովորողի մեջ զարգացնելու Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված ճանաչողության մեթոդները:

7-10 տարեկան հասակը լավագույն տարիքն է համագործակցության, փոխըմբռնման, մարդու իրավունքների հիմնախնդիրները հասկանալու համար: Դա մարդու կյանքում սոցիալական ինքնագիտակցության աճի ժամանակաշրջանն է, և անհրաժեշտ է, որ հենց այս տարիքում ուսումնական գործընթացում քննարկման հիմնական թեմա դառնան յուրաքանչյուրի նկատմամբ արդարացի վերաբերմունքի, սեփական արժանապատվության զգացումի, հանդուրժողականության, շրջապատի մարդկանց նկատմամբ բարյացակամության ձևավորմանն ուղղված հարցերը: Երեխայի համար շատ կարևոր է հենց այս տարիքում ընդունված լինել կոլեկտիվի կողմից, լինել նրա լիիրավ անդամը:

Հանրակրթության նպատակների և կրթական բարեփոխումների խնդիրների տեսանկյունից կարևոր է առարկայի բովանդակության մեջ այնպիսի թեմաների ներառումը, որոնք կապահովեն երեխայի՝ որպես աճող անհատականության սոցիալականացման, ինչպես նաև աշխարհաճանաչման և մարդկային հասարակության նկատմամբ սեփական դիրքորոշումը և հարաբերությունները ճշտելու, դրա միջոցով դեպի իրավական պետություն տանող ճանապարհի առաջին քայլերն անելու, իր երկրի արժանավոր քաղաքացի դառնալու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

Աշխատանքի նպատակը: Աշխատանքի նպատակն է ներկայացնել «Ես և շրջակա աշխարհը›› առարկայի դաստիարակչական նպատակները: Ուսումնասիրել բնապահպանական վերաբերմունքի ձևավորմանը միտված գոյություն ունեցող տեսական մոտեցումները և դրանց գործնական դրսևորումները:

Նպատակից բխող խնդիրներից են՝

1.Գտնել բնապահպանական խնդիրների, դրանց լոծումների և «Ես և շրջակա աշխարհը» առարկայի միջև եղած կապը:

2.Ի՞նչ մեթոդներով կարելի է իրականացնել բնապահպանական դաստիարակությունը:

3.Ի՞նչ խնդիրների ենք բախվում կրտսեր դպրոցական տարիքի երեխաների շրջանում բնապահպանական դաստիարակության կազմակերպման ընթացքում:

Աշխատանքի մեթոդական և տեղեկատվական հիմքերը: Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար մեթոդական հիմք են ծառայել մի շարք հեղինակների կողմից իրականացված հետազոտությունները, հրապարակված գիտական աշխատությունները և դրանցում ներկայացված տեսակետները: Աշխատանքի իրականացման համար առավել կարևոր նշանակություն են ունեցել մանկավարժության ոլորտի վերաբերյալ հայտնի հետազոտությունները և մենագրությունները:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, մեկ գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքային տեքստը կազմում է 16 տպագրական էջ:



# ԳԼՈՒԽ 1.

# «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Կրտսեր դպրոցում ուսուցումը պիտի նպաստի անձի համակողմանի զարգացմանն ու դաստիարակությանը:

Այն տեսակետը, որ յուրաքանչյուր ուսուցիչ առարկան դասավանդելիս պետք է առաջին հերթին այն լավ իմանա, դեռ չի ապահովում ուսուցչի լիակատար դասավանդումը: Ուսուցիչը կարող է լինել հիանալի մասնագետ, սակայն դպրոցում չկարողանա իր գիտելիքներն արդյունավետ փոխանցել աշակերտներին:

Տվյալ առարկայի ուսուցման մեթոդիկան որոշում է գիտական հիմունքների ներկրման շրջանակներն ու չափաբաժինը դպրոցական դասընթացում: Դրա համար պետք է հստակեցնել, թե ինչ է անհրաժեշտ իմանալ միջնակարգ կրթություն ստացող սովորողին և անհրաժեշտ նյութից որը նա կարող է ընկալել տվյալ տարիքում:

Դպրոցական կրթության բովանդակության մշակման համար առարկայի մեթոդիկան օգտագործում է գիտությունների հիմունքները: Առարկայի ուսուցման հիմունքներն ընդգրկում են ընդհանուր հարցեր, որոնց ուսումնասիրումը պետք է հանգեցնի ընդհանուր առարկայի օրինաչափությունների վերաբերյալ հասկացությունների ձևավորմանը: Առարկայի շրջանակներում դպրոցում ուսումնասիրում է հարցեր, որոնք վերաբերում են.

- ուսուցման բովանդակությանը (ինչ սովորեցնել),
- ուսուցման կազմակերպման ձևերին ու մեթոդներին (ինչպես սովորեցնել),
- ուսուցման միջոցներին (ինչի օգնությամբ սովորեցնել),
- սովորողների կողմից գիտելիքների յուրացման, նրանց մտավոր զարգացման և դաստիարակության հարցերին:

Առարկայի առաջին խնդիրն է՝ ինչ սովորեցնել տվյալ առարկայի շրջանակներում: Խնդիրը ներառում է՝ ծրագրային նյութի ընտրություն, այդ նյութի բովանդակության խորության ու ընդգրկման սահմանների որոշում, նյութի գիտականության ապահովում, աշխարհագրության դասընթացի կատարելագործում (կատարելագործել դասընթացը՝ նշանակում է արդիականացնել նրա բովանդակությունը):

Այսօր անհրաժեշտ է նաև ցույց տալ սովորողին մատուցվող նյութի արդիականությունն ու կիրառելիությունը առօրյա կյանքում, որպեսզի նա հասկանա, թե ինչ իմաստ ու նշանակություն ունի աշխարհագրական գիտելիքը հասարակական կյանքում:

Հետևաբար՝ «ինչ սովորեցնել» խնդրից անցնում է «ինչի համար սովորեցնել» առարկան դպրոցում խնդիրը, ինչ նպատակով նյութն ընտրել և ինչ սկզբունքով այն մատուցել, որ օգտակար լինի սովորողին իրական կյանքում այսօր և ապագայում:

Ուսուցման մեթոդիկայի երկրորդ խնդիրն է՝ «ինչպես սովորեցնել» առարկան դպրոցում: Այն ներառում է ուսուցման կազմակերպման ձևերի, դասավանդման մեթոդների ընտրությունն ու հիմնավորումը, արտադասարանական աշխատանքների կազմակերպումը, որի արդյունքում ձևավորվում է գիտելիքների, կարողությունների և հմտությունների համակարգ, զարգանում են սովորողի մտավոր կարողություններն ու ստեղծագործական մտածողությունը:

Առարկայի ուսուցման մեթոդիկայի երրորդ խնդիրն է՝ «ինչի օգնությամբ սովորեցնել» առարկան դպրոցում (ուսուցման միջոցների ընտրությունը): Ուսուցման միջոցների ընտրությունն այսօր կարևոր խնդիր է, քանի որ ուսուցման միջոցների հայտնի ավանդական համակարգը համալրվել է նոր միջոցների կիրառում: Այսօր դպրոցում կիրառվում են համակարգչային դասեր և որպես ուսուցման միջոց ավանդական միջոցներին գումարվել են նաև համակարգիչները, էլեկտրոնային դասագրքերը և այլ համակարգչային սարքավորումները:

Առարկայի ուսուցման մեթոդիկան սերտորեն կապված է հարակից գիտությունների հետ և որոշակի տեղ ու դեր ունի գիտությունների համակարգում: Մշակելով կրթության ու դաստիարակության իր տեսությունը, հիմնվում է դիդակտիկայի և գիտական բովանդակության վրա, կապված է մանկավարժության, հոգեբանության, փիլիսոփայության, բնապահպանության– բնօգտագործման և հարակից գիտությունների մեթոդիկաների հետ:

Հանրակրթության պետական չափորոշչի համաձայն՝ «Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկան «Բնական գիտություններ» և «Հասարակական գիտություններ» ուսումնական բնագավառները ներկայացնող ինտեգրված պետական պարտադիր առարկա է 2-4-րդ դասարանների համար:

Տարրական դպրոցում բնության տարրերի ու երևույթների ուսումնասիրությունը, սովորողի աշխարհայացքի համակարգված ձևավորմանը զուգահեռ, պետք է հնարավորություն ընձեռի բնության մեջ, դասարանում կամ տանը դիտումների, փորձերի և այլ տարաբնույթ գործնական աշխատանքների միջոցով սովորողի մեջ զարգացնելու Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված ճանաչողության մեթոդները:

Բնության անկենդան և կենդանի տարրերի, մարդու, Երկիր մոլորակի՝ որպես մարդկության ընդհանուր տան, ուսումնասիրությունը անհրաժեշտ է իրականացնել.

- սովորողի շրջապատում (տուն, բնակավայր, բնական լանդշաֆտ) դիտվող բնության տարրերի և երևույթների դիտարկումների, պարզունակ փորձերի նկարագրության,
- սովորողի կողմից սեփական օրգանիզմը ճանաչելուն, առողջության պահպանմանը և անվտանգ կենսագործունեություն ծավալելուն ուղղված ուսումնական գործունեության տեսակների իրականացման,
- իր շրջապատը հետազոտելու տարրական կարողությունների ու դրանց վերաբերյալ ինքնուրույն եզրահանգումների կատարման ապահովման,
- Հայաստանի բնության բազմազանության, բնական ու հասարակական օբյեկտների ու երևույթների վերաբերյալ տարրական գիտելիքների ձևավորման,
- մայրցամաքների հայտնագործման ու հետազոտության մասին պատմությունների միջոցով:

7-10 տարեկան հասակը լավագույն տարիքն է համագործակցության, փոխըմբռնման, մարդու իրավունքների հիմնախնդիրները հասկանալու համար: Դա մարդու կյանքում սոցիալական ինքնագիտակցության աճի ժամանակաշրջանն է, և անհրաժեշտ է, որ հենց այս տարիքում ուսումնական գործընթացում քննարկման հիմնական թեմա դառնան յուրաքանչյուրի նկատմամբ արդարացի վերաբերմունքի, սեփական արժանապատվության զգացումի, հանդուրժողականության, շրջապատի մարդկանց նկատմամբ բարյացակամության ձևավորմանն ուղղված հարցերը: Երեխայի համար շատ կարևոր է հենց այս տարիքում ընդունված լինել կոլեկտիվի կողմից, լինել նրա լիիրավ անդամը:

Հանրակրթության նպատակների և կրթական բարեփոխումների խնդիրների տեսանկյունից կարևոր է առարկայի բովանդակության մեջ այնպիսի թեմաների ներառումը, որոնք կապահովեն երեխայի՝ որպես աճող անհատականության սոցիալականացման, ինչպես նաև աշխարհաճանաչման և մարդկային հասարակության նկատմամբ սեփական դիրքորոշումը և հարաբերությունները ճշտելու, դրա միջոցով դեպի իրավական պետություն տանող ճանապարհի առաջին քայլերն անելու, իր երկրի արժանավոր քաղաքացի դառնալու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

Տարրական դպրոցի 2-4-րդ դասարաններում «Ես և շրջակա աշխարհը» առարկայի նպատակն է.[էջ213]

- սովորողներին ծանոթացնել իրենց շրջապատող աշխարհին, այնտեղ կատարվող բնական-հասարակական երևույթներին ու օբյեկտներին, մարդկային հարաբերություններին,
- սովորեցնել ճանաչել սեփական օրգանիզմը, ծանոթացնել օրգանիզմի խնամքի և հիգիենայի հիմնական կանոններին,
- սովորեցնել արդյունավետ հաղորդակցվել և համագործակցել ուրիշ մարդկանց հետ, նրանց մոտ ձևավորել իրենց և շրջակա աշխարհը ճանաչելու հմտություններ,
- նպաստել սեփական արժանապատվության զգացումի, հանդուրժողականության, շրջապատի մարդկանց նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի ձևավորմանը,
- օգնել դառնալու աշակերտական կոլեկտիվի լիիրավ անդամ, ձևավորել և զարգացնել ինքնուրույն որոշումներ կայացնելու, սեփական արարքները վերահսկելու, դրանց համար պատասխանատու լինելու գիտակցություն,
- նպաստել աշակերտների ինքնադրսևորման ու ինքնարտահայտման հմտությունների ձևավորմանը,
- ձևավորել առողջ ապրելակերպին նպաստող վարքագիծ, բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի անհրաժեշտության գիտակցում,
- նպաստել սեփական երկրի պատմամշակութային արժեքների ժառանգորդը լինելու գիտակցմանը:

Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացը կոչված է օգնելու երեխային ճանաչել իրեն ոչ միայն որպես անհատ, այլև որպես հասարակության մասնիկ:

Դասընթացի օգնությամբ կրտսեր դպրոցականը սկսում է «կառուցել» իր սեփական աշխարհը՝ գծելով իր պատկերացումների, զգացողությունների, մտքերի ու նախասիրությունների շրջանակը:

Թեմաներն ընտրված են այնպես, որ աշակերտի մեջ քայլ առ քայլ ձևավորվի այն գիտակցությունը, որ ինքն աշխարհում մենակ չէ, որ իր սեփական ցանկություններից ու երազներից այն կողմ կան ուրիշ մարդիկ, որոնք իրեն նման չեն, և, ինչպես ինքը, անկրկնելի անհատականություն են, ուստի նույնպես արժանի են հարգանքի:

Կրտսեր դպրոցականի պատկերացումները ընդլայնվում են շրջակա աշխարհի հետ ծանոթացման շնորհիվ:

Երեխաներն ուսումնասիրում են իրենց բակը, քաղաքը, մարզը, հայրենիքը, նրա ներկան և անցյալը, պատմամշակութային արժեքները, ծանոթանում են տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց, սովորում են հասարակական վայրերում օրինակելի վարքագիծ դրսևորել, ձեռք են բերում հաղորդակցական հմտություններ, առողջ և անվտանգ ապրելակերպի համար անհրաժեշտ կարողություններ:

Տարրական դպրոցում սովորողի գիտելիքները սերտորեն առնչվում են մայրենիին, մաթեմատիկային և այլ ուսումնական առարկաների: Շատ կարևոր է նկատի ունենալ, որ այս դասընթացի արդյունքում ձեռք բերված գիտելիքները, կարողությունները և հմտությունները արժեքավոր են որպես հենք նոր գիտելիքների համար: Դասընթացի բոլոր թեմաների ուսումնասիրության ժամանակ կարևոր է ապահովել բազմաբնույթ գործնական աշխատանքների կիրառումը:

Ներկայացվող պահանջներն արտահայտվում են սովորողի՝ որպես անձի և քաղաքացու ցուցաբերած վերաբերմունքի, դիրքորոշման, վարքի և գործելակերպի միջոցով:

- «Ես և շրջակա աշխարհը» դասընթացի ուսումնասիրման արդյունքում սովորողը պետք է հետաքրքրասիրություն հանդես բերի աշխարհի նկատմամբ իր ողջ բազմազանությամբ,
- հանդուրժող և բարյացակամ վերաբերմունք դրսևորի այլ մշակույթների նկատմամբ,
- հոգատար լինի կենդանի էակների հանդեպ,
- գիտակցի բնական պաշարների սահմանափակ լինելը,

- խնայողական վերաբերմունք ունենա բնական պաշարների հանդեպ, սիրի բնությունը, գնահատի նրա գեղեցկությունը,
- պատասխանատու վարքագիծ ունենա բնության հանդեպ,
- սիրի հայրենիքը, պատասխանատու վարքագիծ ունենա հայրենիքի հանդեպ, կարևորի իր հայրենիքի պատմամշակութային արժեքները,
- լինի ընկերասեր, կարևորի փոխօգնությունն ու համագործակցությունը, գնահատի ուրիշների աշխատանքը և հաջողությունները,
- կարևորի բարեկիրթ հաղորդակցման դերը միջանձնային հարաբերություններում,
- կարողանա համագործակցել, լինի ազնիվ, արդարամիտ, բարի, պարտաճանաչ, պատասխանատու, չհանդուրժի կեղծիքը, իրավունքների ոտնահարումը և անարդարությունը, գիտակցի սեփական կարծիքը հստակ ձևակերպելու,
- ուրիշներին հասկանալու անհրաժեշտությունն ու կարևորությունը փոխըմբռնման համար: Տարրական դպրոցի 2-4-րդ դասարաններում «Ես և շրջակա աշխարհը» առարկայի նպատակն է. • սովորողներին ծանոթացնել իրենց շրջապատող աշխարհին,
- այնտեղ կատարվող բնական-հասարակական երևույթներին ու օբյեկտներին, մարդկային հարաբերություններին,
- սովորեցնել ճանաչել սեփական օրգանիզմը, ծանոթացնել օրգանիզմի խնամքի և հիգիենայի հիմնական կանոններին, սովորեցնել արդյունավետ հաղորդակցվել և համագործակցել ուրիշ մարդկանց հետ, նրանց մոտ ձևավորել իրենց և շրջակա աշխարհը ճանաչելու հմտություններ, նպաստել սեփական արժանապատվության զգացումի,
- հանդուրժողականության, շրջապատի մարդկանց նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի ձևավորմանը,
- օգնել դառնալու աշակերտական կոլեկտիվի լիիրավ անդամ,
- ձևավորել և զարգացնել ինքնուրույն որոշումներ կայացնելու, սեփական արարքները վերահսկելու, դրանց համար պատասխանատու լինելու գիտակցություն,

- նպաստել աշակերտների ինքնադրսևորման ու ինքնարտահայտման հմտությունների ձևավորմանը, ձևավորել առողջ ապրելակերպին նպաստող վարքագիծ,
- բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի անհրաժեշտության գիտակցում, նպաստել սեփական երկրի պատմամշակութային արժեքների՝ ժառանգորդը լինելու գիտակցմանը: Ուսուցման գործընթացում, կախված թեմայից, դասի նպատակից, դասարանից, սովորողների առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից, տվյալ դասի կամ դասի առանձին հատվածի համար ըստ նպատակահարմարության կարող են ընտրվել ուսումնական գործունեության հետևյալ տեսակները.

• ուսումնական նյութի բացատրում, լուսաբանում ինչպես ուսուցչի այնպես էլ աշակերտների կողմից,

• երևույթների դիտարկում, մեկնաբանում,

• տեղանքի ուսումնասիրում, իրադրությունների հետազոտում,

• նկարների, ֆիլմերի դիտում, քննարկում,

• ուսումնական ձեռնարկների և այլ աղբյուրների ուսումնասիրում,

• գործնական և փորձնական աշխատանքների կատարում,

• գրաֆիկական աշխատանքների կատարում,

• արվեստի ստեղծագործությունների դիտում և հետազոտում,

• հիմնահարցերի հետազոտում,

• հիմնահարցերի հետազոտում

, • կոնֆլիկտային իրավիճակների քննարկում,

• ստեղծագործական աշխատանքների կատարում, ներկայացում,

• տեխնիկական սարքերով և գործիքներով աշխատանքների կատարում,

• խաղերի, մրցույթների, հանդեսների անցկացում,

• բանավեճերի, քննարկումների, դերային խաղերի կազմակերպում,

• իրավիճակների դիտարկում և արդյունքների վերլուծում,

• հաշվետվությունների պատրաստում, ներկայացում

• նոր տեխնոլոգիաների, համակարգչային ծրագրերի օգտագործում,

• անհատական և խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքներ կատարում:



## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն աշխատանքում պարզեցի՝

•Կրտսեր դպրոցում ուսուցումը պիտի նպաստի անձի համակողմանի զարգացմանն ու դաստիարակությանը:

• Այսօր անհրաժեշտ է խորապես ճանաչել և ներդաշնակ ապրել բնության հետ:

•Սովորողները բացահայտում են բնության հրաշքները՝ համադրելով արվստի և բնական գիտությունների ընձեռած հնարավորությունները;

•Կրտսեր դպրոցականի պատկերացումներն ընդլայնվում են շրջակա աշխարհի հետ ծանոթացման շնորհիվ:

• Տարրական դպրոցում բնության տարրերի ու երևույթների ուսումնասիրությունը, սովորողի աշխարհայացքի համակարգված ձևավորմանը զուգահեռ, պետք է հնարավորություն ընձեռի բնության մեջ, դասարանում կամ տանը դիտումների, փորձերի և այլ տարաբնույթ գործնական աշխատանքների միջոցով սովորողի մեջ զարգացնելու Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված ճանաչողության մեթոդները:

• 7-10 տարեկան հասակը լավագույն տարիքն է համագործակցության, փոխըմբռնման, մարդու իրավունքների հիմնախնդիրները հասկանալու համար: Դա մարդու կյանքում սոցիալական ինքնագիտակցության աճի ժամանակաշրջանն է, և անհրաժեշտ է, որ հենց այս տարիքում ուսումնական գործընթացում քննարկման հիմնական թեմա դառնան յուրաքանչյուրի նկատմամբ արդարացի վերաբերմունքի, սեփական արժանապատվության զգացումի, հանդուրժողականության, շրջապատի մարդկանց նկատմամբ բարյացակամության ձևավորմանն ուղղված հարցերը: Երեխայի համար շատ կարևոր է հենց այս տարիքում ընդունված լինել կոլեկտիվի կողմից, լինել նրա լիիրավ անդամը:

• Հանրակրթության նպատակների և կրթական բարեփոխումների խնդիրների տեսանկյունից կարևոր է առարկայի բովանդակության մեջ այնպիսի թեմաների ներառումը, որոնք կապահովեն երեխայի՝ որպես աճող անհատականության սոցիալականացման, ինչպես նաև աշխարհաճանաչման և մարդկային հասարակության նկատմամբ սեփական դիրքորոշումը և հարաբերությունները ճշտելու, դրա միջոցով

դեպի իրավական պետություն տանող ճանապարհի առաջին քայլերն անելու, իր երկրի արժանավոր քաղաքացի դառնալու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

•Կարևոր է այն փաստը, որ այս դասընթացի արդյունքում ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները արժեքավոր հենք են նոր գիտելիքների համար:



# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Բնապահպանական կրթության ձեռնարկ ուսուցիչների համար <<Միտք սերմանի՛ր, ծառ տնկի՛ր>>,Երևան, Նոյան Տապան,2010, 6-9էջ:

2. Գիտամեթոդական հանդես ,Նախաշավիղ,2013,8-11 էջ:

3. Գ. Հովհաննիսյան և ուրիշներ, Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները. Տիգրանմեծ, Երևան, 2004, 364 էջ:

4. Հանրակրթության պետական կրթակարգ: Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, 2004, 152 էջ:

5.Հանրակրթության պետական չափորոշիչ, 2020:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

## ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ՝** Կրտսեր դպրոցականի իմացական զարգացման տարիքային առանձնահատկությունները

**ԿԱՏԱՐՈՂ՝** Գոհար Առաքելյան

**ՂԵԿԱՎԱՐ՝** Լուսինե Միրաքյան

ՎԱՆԱՁՈՐ 2023

## Բովանդակություն

Ներածություն……………………………………………………………………………….2

Կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկությունները……………………..5

Ճանաչողական հետաքրքրությունների առաջացումը կրտսեր դպրոցականների մոտ…………………………………………………………………………………………7

Դիդակտիվ խաղերի ուսուցողական նշանակությունը կրտսեր դպրոցականի մոտ…………………………………………………………………………………....10

Եզրակացություններ………………………………………………………………………17

Օգտագործված գրականության ցանկ……………………………………………………..18

## Ներածություն

Կրտսեր դպրոցական տարիքը ամենակարևոր շրջանն է անձի կայացման և զարգացման համար, այն կախված է երեխային շրջապատող ֆիզիկական և սոցիալական միջավայրից, դրանք են ընտանիք, դպրոց, ընկերներ: Կրտսեր դպրոցական տարիքում երեխան արդեն ունակ է ճանաչելու առարկաների նմանությունը և տարբերությունն, ելնելով նրանց առանձնահատկություններից: Կրտսեր դպրոցում պետք է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ կզարգանան սովորողների դեռևս նոր ձեռք բերած անձնային հատկանիշները՝ ինքնուրույնություն, ինչ-որ նոր բան սովորելու հակում, հետաքրքրասիրություն: Որն էլ պիտի հիմք հանդիսանա երեխայի «ես»-ի հետագա ամրացմանն ու կայունացմանը: Այս տարիքից պետք է ակտիվորեն զարգացնել երեխայի համարձակ ստեղծականությունն ու երևակայությունը, ուշադրությունն ու մտածողությունը: Այս տարիքում երեխաները հիմնականում ընկալում են զգայարանների միջոցով, ուստի կարելի կազմակերպել այնպիսի խաղեր, որոնք կլինեն տեսողական, զգայական, դիդակտիկ:

Հետազոտական աշխատանքի ***արդիականությունը*** պայմանավորված է նրանով, որ մերօրյա կրտսեր դպրոցներում խաղը օտարել են երեխաններից: Սակայն , ուսուցիչը պետք է քաջ գիտակցի, որ վեց տարին նոր լրացած երեխայի մոտ առաջատար գործունեությունը դեռ խաղն է և ուսուցիչը պետք է պահպանի նրա համար այն ուրախությունները, որոնք երեխան ուներ մինչև այդ և տարրական դասարաններում ուսուցումը կազմակերպելիս պետք է հաճախ ստեղծել խաղային իրավիճակներ: Եվ մենք մեր աշխատանքում կամենում ենք ցույց տալ, որ երեխայի զարգացման գործընթացում չպետք է օտարել խաղերը:

Հետազոտական աշխատանքի հիմնական ***նպատակն*** է, ուսումնասիրել կրտսեր դպրոցականների իմացական կարողությունների և դրանց զարգացման առանձնահատկությունները: Աշխատանքի նպատակններից է նաև ներկայացնել դիդակտիկական խաղերի կարևորությունը կրտսեր դպրոցականի ճանաչողական գործունեության բարելավման գործում:

Աշխատանքի նպատակից բխում են հետևյալ ***խնդիրները.***

1. ուսումնասիրել կրտսեր դպրոցականի տրամաբանական ունակությունների զարգացման ուղիները,
2. բացահայտել կրտսեր դպրոցականի ինքնուրույնության զարգացման ձևերը ,
3. վեր հանել կրտսեր դպրոցականի հիշողության ամրապնդման միջոցները,
4. գտնել կրտսեր դպրոցականի հիշողության զարգացմանը նպաստող հնարները,

5. բացահայտել որքանով են ուսուցման խաղային տեխնոլոգիաները նպաստում նրանց ուշադրության, մտածողության և երևակայության զարգացմանը։

***Աշխատանքի կառուցվածքը:*** Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք թեմաներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից։ Հետազոտական աշխատանքը կազմում է 18 էջ։

## Կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկությունները

Կրտսեր դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել, տարբեր պահանջներ իրականացնել: Այս շրջանում հակասության մեջ են մտնում երկու հիմնական դրդապատճառ՝ անհրաժեշտության և ցանկության: Մի կողմից, առաջնորդվելով անհրաժեշտության պահանջմունքով, երեխան բացահայտում է հասուն կյանքը, իսկ մյուս կողմից, դրդված լինելով ցանկության պահանջմունքով, երեխան ցուցաբերում է այնպիսի վարք, որը վերադարձնում է իրեն մանկության աշխարհ, որտեղ ամենը ապահով է, ծանոթ, իրականանալի, չկան որոշակի պարտականություններ և պահանջներ: Մի կողմից, երեխան իմպուլսիվ է, անհանգիստ, ունի ոչ կայուն ուշադրություն, իսկ մյուս կողմից, քանի որ նրա մոտ արդեն ձևավորվում է պահանջմունքների նոր մակարդակ, նա սկսում է գործել, առաջնորդվելով որոշակի նպատակներով, արժեքներով, զգացմունքներով: Կրտսեր դպրոցականի զարգացման ընթացքում հստակ երևում են զարգացման որակական փոփոխություններ: Երեխայի հոգեկան զարգացման կենտրոնում է հայտնվում կամածինության ձևավորումը /պլանավորում, գործողությունների զարգացման ծրագիր, վերահսկողության իրականացում/: Այս տարիքի երեխայի զարգացման հիմնական բնութագրերից է այն, որ թեև կտրուկ փոխվում է գործունեության հիմնական ձևը, դեռևս պահպանվում է խաղալու պահանջմունքը: Այդ իսկ պատճառով դպրոցական կյանքի սկզբնական շրջանում չափազանց կարևոր է ուսումնական գործընթացում խաղային էլեմենտների առկայությունը, ինչը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը ուսման հանդեպ: Մեծ է նաև շարժվելու պահանջմունքը, հետևաբար, ուսուցիչը ուսումնական գործընթացը կազմակերպելիս պետք է կիրառի շարժողական խաղեր, որոնք նպաստում են երեխայի ուշադրության զարգացմանը, կենտրոնանալու կարողությանը: Ուսուցիչը նաև կարող է հմտորեն կազմակերպել երեխաների հանգիստը՝ ներառելով խաղեր և շարժողական վարժություններ, որոնց ընթացքում երեխան լիցքաթափվում է և կարողանում արդյունավետ շարունակել ուսումը: Կրտսեր դպրոցականի համար նաև չափազանց կարևոր է նոր տպավորություններ ստանալու պահանջը, որի հիման վրա ձևավորվում են գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելու պահանջը: Այս պահանջը առաջնորդում է երեխայի զարգանալու, դրդապատճառների նոր համակարգ ձևավորելու ընթացքը: Ողջ համակարգում կարևոր դեր են խաղում սոցիալական դրդապատճառների ձևավորումը, որը ի հայտ է գալիս 2-3 դասարաններում: Աշակերտի համար կարևորվում են ուսուցչի

գովասանքը, գնահատականը, ավելի ուշ հասակակիցների կարծիքը իր անձի վերաբերյալ: Այս ամենը նպաստում է երեխայի կողմից սոցիալական իր նոր դերերի գիտակցմանը, իր Ես-ի ինքնահաստատմանը: Երեխայի դրդապատճառների առաջացման, հետաքրքրության պահպանման, Ես-ի ինքնահաստատման գործընթացում չափազանց կարևորվում է ուսուցչի դերը: Կրտսեր դպրոցականի մոտ առաջնային են նաև բարոյական դրդապատճառների ձևավորումը, ինչում կարևոր դեր են խաղում իդեալների ձևավորումը, որոնք կրում են շատ հստակ բնույթ /հիմնականում տարբեր գրքային կամ հեռուստատեսային հերոսներ/, փոփոխական են և ազդում են իրենց արտաքին կողմերով: Կրտսեր դպրոցի առաջին տարիներին ուսուցիչը երեխայի համար միակ և անկոտրում հեղինակությունն է: Աշակերտի շփումը հիմնականում ուղղված է նրան, համադասարանցիներին նա ընդունում է ուսուցչի միջոցով, արժևորում է այն համադասարանցիներին, ում գնահատում է ուսուցիչը: Այդ պատճառով, ուսուցիչը որպես հեղինակություն կարող է ուղղորդել երեխայի հասարակական շփումները: Հետզհետե մեծանում է հասակակիցների հետ շփվելու պահանջը, որի բավարարման ընթացքում երեխան սկսում է հասկանալ առկա կանոնները, միջանձնային շփման նրբությունները: Ուսումնական գործունեությունը փոխում է երեխայի զգացմունքների բովանդակությունը, նրանք դառնում են ավելի գիտակցված և զսպված: Դրական զգացմունքերը այժմ առաջանում են որ միայն հաճելի խաղ խաղալուց և հաճույք ստանալուց, այլ որոշակի մտավորգործունեություն կատարելուց, դժվարություններ հաղթահարելուց, մրցակցությունից: Երեխան ծանոթանում է կյանքի տարբեր սոցիալական դերերի, նրա մոտ զարգանում են բարոյական զգացմունքները: Տեղի է ունենում առկա բարոյական նորմերի, կանոնների ինտենսիվ ներքնայնացնում: Այս գործընթացում կարևորվում է մեծահասակի դերը, որը կարող է ներկայացնել երեխային ընդունելի վարքաձևեր, նորմեր, կանոններ, զարգացնել բարոյական ինքնագիտակցությունը: 8-9 տարեկանում ի հայտ է գալիս զգացմունքների տարբերակում՝ վատն ու լավը փախարինվում են տարբեր զգացմունքների գիտակցմամբ և արտահայտմամբ: Զարգանում են ինտելեկտուալ զգացմունքները՝ հետաքրքրությունը, զարմանքը, կասկածը, ճանաչման հաճույքը և այլն[1]:

## Ճանաչողական հետաքրքրությունների առաջացումը կրտսեր դպրոցականների մոտ

Դաստիարակի նպատակը պետք է լինի երեխաների բնածին հետաքրքրությունը վերածել հետաքրքրասիրության, բայց քանի որ այդ բանը կատարվում է միայն դանդաղորեն, ուսման ու դաստիարակության ամբողջ պրոցեսով, ապա դաստիարակը պետք է հոգ տանի, որ գործարար հետաքրքրասիրության գոյացումից առաջ չճնշվի մանկական հետաքրքրությունը, ինչը պատահում է կա՛մ այն ժամանակ, երբ, հաճախ հարուցելով հետաքրքրությունը, հրաժարվում են այն բավարարելուց, կա՛մ թեթևակի, հարևանցիորեն բավարարելով հետաքրքրությունը, երեխային ընտելացնում են այն մտքին, թե չարժե հետաքրքրվող լինել: Եթե երեխայի հետաքրքրության առարկան այնպես է, որ դեռևս չի կարող շահագրգռել նրան, ապա պետք է երեխային ուղղակի պատասխանել, որ նա դեռևս չի հասկանա այդ առարկան: Դաստիարակը վատ է վարվում, երբ շարունակ հրաժարվում է բավարարել երեխայի հետաքրքրությունը, բայց դա ավելի լավ է , քան երբ երեխային շրջապատում են բազմաթիվ ամենաբազմազան առարկաներով, փոփոխում այդ առարկաները և դրանցից ամեն մեկի մասին երեխային հաղորդում մակերեսային , միանգամայն կցկտուր տեղեկություններ: Դաստիարակը պետք է ջանք թափի, որքան հնարավոր է , երեխայի հետաքրքրությունը հարուցել բուն դասավանդման ժամանակ և , ավելացնելով միանման հետքերի թիվը , իսկ դրա հետ միասին՝ նաև հետաքրքրությունը դեպի առարկան, հետաքրքրույունն աստիճանաբարվերածելհետաքրքրասիրության[1]:

Դպրոցական կյանքի սկզբնական շրջանում չափազանց կարևոր է ուսումնական գործընթացում խաղային էլեմենտների առկայությունը, ինչը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը ուսման հանդեպ: Մեծ է նաև շարժվելու պահանջմունքը, հետևաբար, ուսուցիչը ուսումնական գործընթացը կազմակերպելիս պետք է կիրառի շարժողական խաղեր, որոնք նպաստում են երեխայի ուշադրության զարգացմանը, կենտրանանալու կարողությանը: Ուսումնական գործունեության ընթացքում որակապես փոխվում են իմացական բոլոր ոլորտները: Այս վերակառուցումը սկսվում է ինտելեկտուալ ոլորտի զարգացմամբ: Մտածողությունը ակնառու-գործունից անցում է կատարում բառատրամաբանականի: Ըստ Լ.Ս. Վիգոտսկու կողմից առաջադրած հիմնադրույթների՝ հոգեբանական գործառույթները զարգացում են օրինաչափորեն, այս տարիքում հիմնական գործառույթ է համարվում մտածողությունը, ինչն արտահայտվում է այլ հոգեկան ոլորտների վրա, որոնք դառնում են գիտակցված և կամածին: Ի տարբերություն նախադպրոցականի, խնդիրներ լուծելու ընթացքում կրտսեր դպրոցականը հաշվի է առնում երևույթների այնպիսի հատկությունները,

որոնք արտացոլում և հիմնվում են կոնկրետ գիտական հասկացությունների վրա: Ուսումնական գործունեության ընթացքում ձևափոխվում են նաև մնացած հոգեկան ոլորտները՝ ուշադրությունը, ընկալումը, հիշողությունը: Առաջինային է համարվում այս հոգեկան գործընթացների կամածնության ձևավորումը, ինչը կարող է տեղի ունենալ կամ տարերայնորեն (ուսումնական գործունեության պայմանների ստերիոտիպային հարմարեցում), կամ էլ նպատակային (կառավարման հատուկ գործողություններիներքնայնացում)[2]:

Առաջին օրվանից սկսած ուսումնական գործունեության ընթացքում դրվում են չափազանց մեծ պահանջներ ուշադրության վրա, հատկապես կամածնության տեսանկյունից: Երեխան ուսուցչի հրահանգով պետք է ուշադրությունը կենտրոնացնի և պահպանի այնպիսի առարկաների վրա, որոնք գրավիչ չեն վերջինիս համար: Հիշողությունը դառնում է գիտակցված, եթե հիմնվում է նյութի տրամաբանական մշակման միջոցների վրա: Կարևոր է երեխային հասկացնել մտապահված նյութի հետ ակտիվ աշխատանքի կարևորությունը: Անհրաժեշտ է երեխային սովորեցնել առանձնացնել խնդիրը և զինել նրան մտապահման միջոցներով:

Որոնցից են.

- Կանխամտածված սովորեցում

- Նյութի ակտիվ մտավոր վերամշակման միջոցներ

- Նյութի մեջ իմաստային հատվածների, նրանց նշանակության առանձնացում, պլանի մշակում

- Կրկնակի ընթերցանություն մտավոր վերամշակման համար և այլն:

Կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների ձևավորման ու զարգացման հիմնախնդիրը արդի ուսուցման գործընթացում կարևոր խնդիր է: Ճանաչողությունն ակտիվ գործընթաց է, այն ուսումնասիրվում է ուսուցման գործընթացի հետ փոխկապվածության մեջ և անմիջականորեն կապված է պրակտիկայի հետ: Ժամանակակից մանկավարժահոգեբանական հետազոտությունները /Լ.Զանկով, Ղէլկոնին, Վ.Դավիդով, Ժ,Պիաժե և այլք/ վկայում են, որ առավել նպատակահարմար է երեխաների ճանաչողական հետաքրքրությունների,ճանաչողական կարողությունների ձևավորումն ու զարգացումը սկսել վաղ տարիքից: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է որոնել, մշակել և ներդնել կրտսեր դպրոցականների ճանաչողական ակտիվության, ճանաչողական հետաքրքրության ու ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը միտված նոր մոտեցումներ ու գաղափարներ, քանի որ դա տարրական դպրոցում ուսուցման գործընթացի

հաջողության, արդյունավետության գլխավոր պայմաններից մեկն է: Փորձարարական հետազոտության արդյունքները վկայում են, որ քննադատական մտածողության տեխնոլոգիան կարող է արդյունավետ կիրառվել տարրական դպրոցում և նպաստել կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը մանկավարժական հետևյալ պայմանների դեպքում.

- բարենպաստ և զարգացնող կրթական միջավայրի ապահովում,
- սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառում,
- ուսուցման գործընթացի միջոցների, մեթոդների, ընթացակարգի ճիշտ ընտրություն,
- ուսումնական գործունեության բազմազան տեսակների կիրառում,
- ուսման դրական ու ներքին դրդապատճառների ձևավորում,
- դասարանում դրական հոգեբանական մթնոլորտի ապահովում,
- ուսուցչի մասնագիտական պատրաստվածության առկայություն[2]:

## Դիդակտիվ խաղերի ուսուցողական նշանակությունը կրտսեր դպրոցականի մոտ

Խաղը երեխայի ներաշխարհ թափանցելու յուրատեսակ միջոց է: Այն հնարավորություն է տալիս ձևավորել որոշակի արժեքային համակարգ, լուծել դաստիարակչական բազմաթիվ խնդիրներ, զարգացնել ստեղծագործական մտածողություն: Արդյունքում նրան թվում է, թե ինքն ուղղակի խաղում է, կատարում է որևէ դեր: Սակայն իրականում այդպես չէ, քանի որ յուրաքանչյուր դիդակտիկական խաղ երեխային առաջադրում է այնպիսի խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է մտավոր լարվածություն: Այլ կերպ ասած՝ երեխան սովորում է հաղթահարել կյանքի դժվարին իրավիճակները: Արդյունքում երեխաների մեջ դաստիարակվում են այնպիսի հատկանիշներ, ինչպիսին են՝աշխատասիրությունը, ընկերասիրությունը, հոգատարությունը, վճռականությունը և պատասխանատվության զգացումը: Այսպիսով, դիդակտիկական խաղի շնորհիվ երեխան դառնում է ուսուցման գործընթացի սուբյեկտ, ինչն էլ նշանակում է, որ նա ուսուցման գործընթացի ակտիվ մասնակիցն է՝ ունակ ինքնուրույն ձեռք բերելու անհրաժեշտ գիտելիքներ: Հետևաբար, կարող ենք առանձնացնել դիդակտիկական խաղի հետևյալ բնութագրումները՝

1. Անձի յուրահատուկ հարաբերություն շրջապատող աշխարհի հետ:

2. Երեխայի յուրահատուկ գործունեություն, որը փոփոխվում է և զարգանում՝ որպես նրա սուբյեկտիվ գործունեություն:

3. Երեխայի սոցիալականացման ու նրա կողմից յուրացված գործունեության ձև:

4. Յուրացման յուրահատուկ բովանդակություն:

5. Գործունեություն, որի ընթացքում տեղի է ունենում երեխայի հոգեկանի զարգացումը[4]:

Ըստ բովանդակության՝ դիդակտիկական խաղերը լինում են սյուժետա – դերային և խաղ – վարժություններ: Սյուժետադերային են այն խաղերը, որոնց ընթացքում լավագույնս դրսևորվում են երեխայի ազատության և ինքնուրույնության ձգտումները, ստեղծագործելու ցանկությունն ու կարողությունները, սեփական տպավորություններն ու պատկերացումները, կարծիքն ու վերաբերմունքը արտահայտելու հնարավորությունները: Սյուժետադերային խաղերն իրենց բնույթով ստեղծագործական են: Երեխան սյուժետադերային խաղերում արտացոլում է ոչ միայն առանձին տպավորություններ կամ պատկերացումներ, այլև տարբեր իրադրություններ, անձնական փորձից փոքրիկ դրվագներ կամ հասարակական երևույթներ: Բնականաբար, նշվածը վերարտադրվում է սեփական դիրքորոշմամբ և

պարունակում է վերլուծություն և նոր մոտեցումներ: Սյուժետադերային խաղի նպատակն ու արդյունքը երևակայական են, սակայն երեխայի կողմից ընկալվում են ամենայն լրջությամբ և ջանքեր են պահանջում նրանից: Խաղի նպատակին հասնելու համար նա փորձում է լուծել բարդ՝ իրական կյանքում անլուծելի խնդիրներ, ինչը հնարավոր է երևակայական կերպարների ստեղծման միջոցով: Խաղի ընթացքում նա փորձում է հորինել և ստեղծագործել: Սյուժետադերային խաղերի գլխավոր կառուցվածքային տարրը դերն է: Դերերի միջոցով երեխաները նույնացվում են իրենց սյուժեի կերպարներին և փորձում արտացոլել կերպարին բնորոշ գործառույթները և հարաբերությունները: Ցանկացած դեր պարտադրում է վարքագծի և հարաբերությունների կանոններ, որոնք ակամայից յուրացվում են և գիտակցվում խաղի ընթացքում, դառնում սովորական ու ընդունելի և աստիճանաբար փոխանցվում իրական կյանք: Այստեղ ուսումնական խնդիրը թաքնված է: Խաղ – վարժությունները նպաստում են երեխայի մաթեմատիկական պատկերացումների ձևավորմանը, որոնցում դիդակտիկական խնդիրը վառ կերպով է արտահայտված: Դրանք սովորական առաջադրանքներից տարբերվում են խնդրի անսովոր դրվածքով (գտնել, կռահել)՝ այն ներկայացնելով գրական հեքիաթի որևէ հերոսի անունով (Բուրատինո, Չեբուրաշկա) և պարունակում են ուսումնական խնդիր ու խաղային գործողություններ: Խաղ – վարժությունների նպատակն է՝ երեխաների կարողությունների ու հմտությունների մշակումը: Երեխաները խաղի մեջ որևէ այլ նպատակ չեն դնում, քան խաղալը: Խաղն աճող մանկական օրգանիզմի պահանջմունքն է: Մանկավարժության մեջ «ուսուցում» եզրով սահմանվում է մի գործընթաց, երբ գիտելիքն ու հմտությունները կիրառելի են դառնում, որի արդյունքում փոխվում է երեխայի վարքագիծը, նաև այնպիսի գործընթաց, երբ սովորողը, գիտելիքներից և տեղեկություններից բացի, կարիք ունի մտածողության մշակման և համագործակցային հմտությունների ձևավորման ու զարգացման: Այդ առումով անգնահատելի է խաղի՝ որպես ուսուցման և դաստիարակության մեթոդի կիրառումը դասագործընթացում, մասնավորապես տարրական դասարաններում: Արդյունավետ ուսուցումը նպաստում է երեխայի ինքնակազմակերպմանը և ինքնուրույնությանը. այն սկսվում է կրտսեր դպրոցականների համար ուսուցչի կողմից համապատասխան միջավայրի ստեղծումից: Ուսուցիչը լավ է հասկանում, որ վեց տարին նոր լրացած երեխայի մոտ իշխում է ընկերների հետ բացօթյա խաղերի ձգտումը: Այդ է պատճառը, որ տարրական դասարաններում ուսուցումը կազմակերպելիս պետք է հաճախ ստեղծել խաղային իրավիճակներ և աշակերտներին հնարավորություն ընձեռել՝ մտնելու իրենց համար հիմնական և կարևոր համարվող գործունեության ոլորտ: Չէ՞ որ խաղն առավել գրավիչ է դարձնում ուսուցումը, կենտրոնացնում երեխայի ուշադրությունը, խթանում մտածողությունը: Խաղի միջոցով ճշգրտվում և ընդլայնվում են երեխայի պատկերացումները շրջապատի, բնության, հայրենիքի, ծնողների և ընդհանրապես աշխարհի մասին, դաստիարակվում են ուշիմություն, աշխուժություն, զսպվածություն և այլ դրական հատկանիշներ: Հենց այդ նպատակով էլ տարրական դասարաններում (հատկապես՝

առաջին) հարկավոր է ավելի շատ կազմակերպել ուսուցողական խաղեր: Ուսուցիչը պետք է իմանա, որ խաղի բովանդակությունը և կանոնները պետք է հասկանալի լինեն երեխաներին, խաղի բովանդակությունը պետք է համապատասխանի աշակերտների գիտելիքների մակարդակին, խաղերը պետք է լինեն կոնկրետ և նպատակային, իսկ դրանց քանակն ու տևողությունը՝ չափավոր: Խաղը պետք է նպաստի գիտելիքների հարստացմանը և հետաքրքրությունների ձևավորմանը: Խաղը երեխայի համակողմանի զարգացման, ինքնահաստատման, ինքնակատարելագործման կարևոր միջոց է, որը բացահայտում է նրա բնավորության շատ կողմեր: Խաղի միջոցով երեխային կարելի է և՛ կրթել, և՛ դաստիարակել: Խաղի ընթացքում երեխան դրսևորում է որոշակի ինքնուրույնություն, ձգտում է ինքնահաստատման, ձևավորվում են բնավորության որոշակի գծեր: Խաղի ընթացքում երեխաները ազատ են և ինքնուրույն, ունեն հավասար իրավունքներ և ինքնադրսևորման լայն հնարավորություններ: Խաղն ապահովում է հասակակիցների հետ փոխշփումներ, հաճելի մթնոլորտ և համագործակցելու լավագույն պայմաններ: Դասի տարբեր փուլերում անցկացվող խաղերի տեսակներից կարելի է առանձնացնել այն ուսուցողական խաղերը, որոնք համապատասխանում են դասի թեմային և կազմակերպվում են առանձին թեմաների ուսուցումը նախապատրաստելու, անցածը խորացնելու, ամրապնդելու և ամփոփելու նպատակով: Երկրորդ դասարանում մայրենի լեզվի դասաժամերին իրականացվող բառակազմական և վերլուծական-գործնական աշխատանքները, որոնք կազմակերպվում են խաղերի ձևով, նպաստում են սովորողների՝ հայրենիքի ճանաչողության խորացմանը և լեզվական աշխատանք կատարելու հմտությունների ձևավորմանը: Երեխաներն աստիճանաբար կարողանում են պարզ բառերից կազմել բարդ և բարդածանցավոր, ինչպես նաև հոդակապով և անհոդակապ բառեր: Այդ կարողություններն առավել զարգացնելու նպատակահարմար միջոց են հաճախակի կազմակերպվող բառավերլուծական բնույթի մի շարք խաղեր, որոնց ժամանակ աշակերտներն առիթ են ունենում ընտրելու արմատը կամ ածանցը: Դասապրոցեսում խաղը որպես ակտիվ ուսուցման կազմակերպման ձև ակտիվացնում է երեխաներին: Խաղի միջոցով կարելի է լուծել ուսումնական բոլոր խնդիրները՝ հատկապես կրտսեր դպրոցում: Հարկավոր է ոչ թե դասը բաժանել ուսումնական աշխատանքի ու խաղի, այլ պարզապես խաղը տարրալուծել ուսումնական գործընթացի մեջ և ուսումնական նպատակներն իրականացնել խաղի օգնությամբ ու խաղի միջոցով: Ուսուցման ընթացքում խաղի կիրառումը օգնում է ուսուցչին ակտիվացնել անհամարձակ երեխային, որովհետև խաղալիս երեխան իրեն ազատ է զգում: Երեխային հնարավորություն է տրվում ազատ արտահայտելու իրենց մտքերն ու կարծիքները: Խաղային իրավիճակներում երեխան դառնում է առավել գործուն և ուշադիր: Խաղերը հաճախ տեղեկատվական բնույթ են կրում: Խաղի ընթացքում երեխան կարողանում է ազատ մտածել տվյալ հարցի շուրջ: Քննարկման փուլում նա լսում է ուրիշների կարծիքները և նույն հարցի վերաբերյալ տարբեր մեկնաբանություններ: Ինքն էլ հնարավորություն ունի համագործակցելու ընկերների հետ և սեփական որոշում կայացնելու: Արդյունքում

երեխան ինքնավստահություն է ձեռ բերում և զարգացնում զննողականությունը: Երեխաները հեշտությամբ են ներգրավվում խաղային գործունեության ոլորտ, և ինչքան այն բազմազան է, այնքան ավելի գրավիչ է դառնում: Մանկավարժական պրակտիկան ցույց է տալիս, որ ինչ նպատակով էլ խաղն ընտրված լինի և որքանով էլ այն ապահովված լինի անհրաժեշտ պարագաներով, ուսուցիչն է այն կարևոր դերակատարը, առանց որի խաղը կարող է ոչ միայն պարզապես ժամանց դառնալ, այլ նաև ունենալ հակադարձ ազդեցություն: Ուսուցիչը խաղի ժամանակ չպետք է հանդես գա երեխաներից ոչ մի կողմի խաղախմբի հետ:Ուսուցիչը բոլորովին հավասար խաղընկեր է, խորհրդատու կամ օգնական[13]:

Ներկայացնենք դիդակտիկ և շարժուն խաղերի ժամանակ ուսուցչի գործունեությանը վերաբերվող մի քանի հիմնական կանոնները:

1. Ուսուցիչը ինքը պիտի լրջորեն վերաբերվի խաղի կանոնների պահպանմանը, ձևավորելով նաև երեխաների խաղի կանոններին համապատասխան գործունակությունները:

2. Պիտի կարևորի և բարձր գնահատի երեխաների մասնակցությանը խաղին, որքան հնարավոր է սահմանափակելով դիտողությունները և քննադատական ակնարկները:
3. Ուսուցիչը պիտի խաղի ժամանակ կարևորի և բարձր գնահատի բոլոր երեխաների ցանկությունները, մասնավորապես դերային խաղերի ժամանակ չկատարի պարտադրողական քայլեր:

4. Խաղային թիմերը ձևավորելիս պիտի այնպես անի, որ նույն խմբի մեջ մտնեն տարբեր խառնված և պատրաստակամություն ունեցող երեխաներ:

5. Պարտվող թիմերին պիտի տա իրենց պարտության պատճառները որոշելու և այդ մասին դատողություններ անելու հնարավորություն: Պիտի օգնի երեխաներին որոշելու, թե ուսումնական որ նյութի իմացության կամ չիմացութունն է խաղում պարտվելու պատճառը, որ կարողանան բացահայտել հաղթելու կարողությունը: Խաղը պիտի բավականություն և հրճվանք պարգևի ոչ միայն հաղթող, այլ նաև պարտվող խմբին: Դրա համար բավական չէ խաղի ընթացքի ճիշտ կազմակերպումը, անհրաժեշտ է նաև մանկավարժահոգեբանական տեսանկյունով ճիշտ կազմակերպել արդյունքների ամփոփումը, գովասանքի և խրախուսանքի խոսքեր ասելով ոչ միայն այն խմբին, որ առաջինն և ճիշտ կատարեցին առաջադրանքի կատարումը, այլև նրանց, ովքեր վերջինն ավարտեցին, սակայն արդյունավետ կատարեցին[4]:

**Մեծ գրող Թումանյանի մոտեցումը խաղին.**

Հովհաննես Թումանյանի բազմաժանր ստեղծագործության մեջ յուրահատուկ տեղ են զբաղեցնում ժողովրդական թեմաների, ավանդապատումների, 19 առասպելների, լեգենդների, էպոսի, հեքիաթների մշակումները, մանկական անզերազանցելի բանաստեղծությունները, մանկական բանահյուսության նմուշների հանճարեղ

մշակումները, որոնք աչքի են ընկնում ամենից առաջ իրենց խաղային բաղադրիչի հարստությամբ, պարզությամբ, բնականությամբ Ուստի զարմանալի չէ, որ Հովհ. Թումանյանը եղել և մնում է ինչպես նախակրթարաններում, այդպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններում «ամենաբեմադրվող» հեղինակը:

«Ես,– գրում է Թումանյանը,– իմ բոլոր հեքիաթներն ու զրույցներն էլ իմ ժողովրդից ու ժողովրդականից առել ու միշտ աշխատել եմ ինչքան կարելի է մոտիկ ու հարազատ մնալ» :

Նա այն համոզմանն էր, որ երեխան խաղում ամեն ինչ ընկալում է ուրախ ձևով, ինչը չափազանց կարևոր է նրա ընդհանուր զարգացման համար: Հայ մեծ բանաստեղծը երեխաների համար ստեղծեց հայրենագիտական խաղեր: Նա գտնում էր, որ երեխաների համար խաղն անհրաժեշտություն է, մանկության ուղեկից, որը սնում է մանկան միտքը, նրան հաղորդում բազմապիսի գիտելիքներ շրջապատող աշխարհի, առարկաների, երևույթների մասին:

Հովհ. Թումանյանի համոզմամբ՝ մանկական խաղերը պետք է ուրախացնեն, զվարճացնեն, հաճելի լինեն երեխային և անպայման հարստացնեն նրա միտքը, «բան սովորեցնեն»: Հովհ. Թումանյանի ստեղծած խաղերն ունեն երեխաների ինչպես շարժողական ունակությունները զարգացնելու, այն է՝ ֆիզիկապես զարգացնող, այնպես էլ դիդակտիկ՝ ուսուցողական բնույթ («Առաջին Հարոյան Լիզա, Գրիգորյան Զարինե խաղ», «Աստղերի խաղ», «Գույների խաղ», «Հանելուկներ», «Հայկական առածներ», «Հայոց գետերը», «Աստղերի խաղը», «Դդումը», «Տառերի խաղ», «Սրամիտ հովիվը»):

Թումանյանը նամակներից մեկում գրում է. «Էս խառը ժամանակը ես էլ, ի միջի այլոց, զբաղված եմ և՛ հայրենագիտական, և՛ ուրիշ տեսակի խաղալիքներով, ասում եմ գուցե դրանով էլ մեր մանուկներին մի բանով օգնած լինենք հայանալու և մարդանալու…, էսպիսի ժամանակներում ոմանք իրենց գինուն են տալիս, ոմանք լռում ու ինքնամփոփ դառնում, ես որոշեցի էս տեսակ մի բան անեմ, օգուտ որ չլինի, վնաս հաստատ չի լինի»: Հովհ. Թումանյանը խաղն ու երգը համարում էր երեխայի հիմնական պահանջմունքը, հատկությունը: Խաղերն ուրախություն, բավականություն են պատճառում երեխային, զարգացնում ֆիզիկապես, մտավորապես: Ահա թե ինչու նույնիսկ «ամենախառը ժամանակներում» էլ խաղերի միջոցով երեխաների մտավոր, հոգևոր ու ֆիզիկական զարգացման խնդիրը Թումանյանի համար մնում էր կարևոր:

«Մանկությունը մարդու կյանքի էն ամենաընդունակ շրջանն է,– գրում է Թումանյանը,– երբ նա չորս կողմից ընդունում է, սնունդ է առնում ու զարգանում շարունակ… Ահա էստեղ էլ հարց է առաջ գալիս՝ ի՞նչ սնունդ տալ և ի՞նչ ձևով տալ: Եվ ամեն բան, ինչ տրվում է խաղով, ուրախությունով՝ ընդունում է, հեշտ էլ

յուրացնում»: Թումանյանը անհրաժեշտ էր համարում խաղի միջոցով երեխային տեղեկություններ տալ շրջապատող աշխարհի, իրական երևույթների մասին. «Մենք անծանոթ ենք մեր հայրենիքին, նրա բնությանը, նրա կյանքին, նրա անցյալին ու ներկային: Մեր պատմության էս սև ու դժբախտ ժամանակի շրջանում շատ ու շատ սովորությունների հետ, մենք թողել ենք և մեր ազգային գեղեցիկ ու իմաստալի խաղերը, մոռացել ենք նրա ահագին նշանակությունն ու ազդեցությունը կյանքի մեջ: Սա ժամանակավոր թմրություն է, որից հետո մենք մտնում ենք վերածնության, վերանորոգության, կազդուրման, նոր կենդանի աշխարհի առողջ ու հոգնոր շրջանը»: Կարևորելով հայեցի դաստիարակությունը՝ Հովհ. Թումանյանը հայ մտավորականի, արվեստագետի գերագույն նպատակը համարում էր հայրենիքին ու ժողովրդին նվիրված կիրթ քաղաքացու դաստիարակությունը, քաղաքացի, որի բնորոշ գծերից են նաև մարդասիրությունը, ազնվությունը, համեստությունը: Մեկ այլ տեղում մեծ մարդասերը խաղերի դաստիարակչական նշանակության մասին գրում է. «Աշխատենք խաղերի միջոցով ծանոթություն տալ թե՛ Հայաստանի, թե՛ Կովկասի ջրերից, լեռներից, լճերից, կենդանական ու բուսական աշխարհից, որ մեր երեխաներն ու պատանիները ճանաչեն ու սիրեն Խաղի դաստիարակչական նշանակության արժնորումը…. իրենց հայրենիքը: Սիրեն ոչ թե կույր ազգասերի սիրով, այլ գիտակից ինտիլիգենտ մարդու սիրով, որ սերն ազնիվ լինի առողջ ու բովանդակալի» : Թումանյանի՝ մանուկների համար հորինված խաղերի մեջ կա աստղային երկնքի մասին մի խաղ, որը բնութագրելիս բանաստեղծը գրում է. «Հաճախ նայեցեք երկնքին: Ձեր հոգին կմեծանա ձեր սիրտը կազնվանա: Մարդիկ միշտ ցած նայելով հոգով են ցածրանում» : Այդ խաղը համարվում է Թումանյանի կազմած խաղերից ամենաբարդը և որոշակի տարիքային հասունություն է պահանջում: Ընդհանրացնելով նկատենք, որ Հովհ. Թումանյանը երեխաների համար հավաքեց և մշակեց ժողովրդական բանահյուսության հոգևոր գանձերը՝ ստեղծելով հայրենագիտական խաղերայդ հարցում դրսևորելով ոչ միայն նրբամիտ գեղագետի հատկություններ, այլ նաև մանկավարժական խորաթափանցություն և հոգեբանի խոր ունակություններ: Թումանյանը գտնում էր, որ երեխաների համար խաղը անհրաժեշտություն է, մանկության պարտադիր ուղեկից, որովհետև խաղի միջոցով միայն կարելի է զարգացնել երեխայի միտքը, ձևավորել բարոյական որակներ, հաղորդել նրան բազմապիսի գիտելիքներ շրջապատող աշխարհի առարկաների, երևույթների մասին: Մեծ բանաստեղծի հորինած խաղերն այսօր էլ չեն կորցրել իրենց այժմեականությունը, ավելին՝ դրանք լայն տարածում են գտել հայկական դպրոցներում՝ շարունակելով պահպանել իրենց կրթական և դաստիարակչական ազդեցությունն ու նշանակությունը: 2007 թ. վերահրատարակվել է թումանյանական 5 խաղ՝ «Հայոց գետերը», «Հայկական առածանին», «Թանկագին խաղեր», «Հայկական հանելուկներ», «Տառերի խաղ»: Օգտագործելով այս խաղերը՝ ինչպես ծնողները, այնպես էլ դաստիարակները կարողանում են լուծել հայրենագիտական, կրթադաստիարակչական կարևոր, արդի խնդիրներ: Հարկ է նշել, որ մեծ բանաստեղծը ոչ միայն առաջարկեց տարբեր խաղեր, այլ ցույց տվեց դրանց

կազմակերպման մեթոդները, մեկնաբանման եղանակները, կանոնների մատուցման ձևերը:

Այսպիսով, հայ գեղարվեստական մտքի տիտանները Աբովյան, Աղայան, Թումանյան, միաժամանակ լինելով նաև իրենց ժամանակի լավագույն մանկավարժները, ըստ ամենայնի արժևորել են, թե ինչ դեր ունեն մանկական խաղերը երեխայի ընդհանուր զարգացման և դաստիարակության գործում: Խաղը եղել է ժողովրդական մանկավարժության ամենակարևոր բաղկացուցիչներից մեկը[12]:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտական աշխատանքի շրջանակներում կատարած մեր ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

- կարևոր է երեխայի մոտ նախապես ձևավորել որոշակի դիրքորոշում դպրոցական դառնալու, դպրոցում սովորելու նկատմամբ
- դպրոցում սովորելու համար երեխայից պահաջվում է մտավոր, հուզական և սոցիալական զարգացվածության որոշակի մակարդակ
- կրտսեր տարիքը կարևորագույն շրջան է անձի կայացման և բնականոն զարգացման համար
- գիտական հասկացությունների ձևավորման գործընթացում զարգանում են երեխայի մտածողության բոլոր գործընթացները
- կրտսեր դպրոցականի մոտ առաջնային են նաև բարոյական դրդապատճառների ձևավորումը
- ուսումնական գործընթացը կազմակերպելիս պետք է կիրառել շարժողական խաղեր

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան, Մանկավարժություն, Երևան, 2005
2. Ա. Վ. Պետրովսկու խմբագրություն Տարիքային և մանկավարժական հոգեբանություն Երևան,Լույս 1977թ
3. Բալյան Ա.Ա "Մանկավարժական հոգեբանության հարցեր" - Երևան: Լույս, 1983.
4. Գյուլամիրյան Ջ.Հ., Խաղը ուսուցման պրոցեսում, 1997թ
5. Էլկոնին Դ.Բ "Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն" - Երևան: Լույս, 1975
6. Խուդոյան Ս. "Անձի զարգացման ճգնաժամային տարիքները"-Երևան: Զանգակ-97, 2004.
Առաջին խնդիրն է՝ զարգացնել սովորողների ինքնուրույնությունը ճանաչողական գործունե ության մեջ .սովորեցնել նրանց ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, ձևավորել սեփական աշ խարհայացքը։

Երկրորդ խնդիրն է՝ սովորեցնել նրանց ինքնուրույն կիրառել ունեցած գիտելիքները գործնա կան աշխատանքների մեջ։

Ռ.Մ.Միքելսոնը ինքնուրույն աշխատանքը դիտում է որպես. «աշակերտները կատարում են ա ռաջադրանքները ուսուցչի հսկողության ներքո,բայց առանց անմիջական օգնության»[6,էջ8–9.]։

Ուսուցիչ Ա.Ալիմբեկովը միանում է այս գաղափարին և նշում, որ ինքնուրույն աշխատանքը սովորողների աշխատանքն է ուսուցչիցուցումներով, առանց նրա անմիջական օգնության և հստակ ժամկետում[2,էջ.163]։

Սովորողներին ինքնուրույն աշխատանքի նախապատրաստելիս կարևոր է հակիրճ և հստակ ներկայացնել առաջադրանքի նպատակը։ Այս նախապատրաստումը պետք է երեխաներին ծանոթացնի այն գաղափարների և հասկացությունների շրջանակին, որոնց նրանք կհանդիպեն առաջադրանքը կատարելիս։ Սովորողների ինտելեկտուալ զարգացման հետ կապված, ուսուցչի պահանջների մակարդակը պետք է բարձրանա։

Ի.Բ.Իստոմինան գրում է, որ ինքնուրույնության մեծացումը, նախաձեռնողականությունը, ուսման նկատմամբ ստեղծագործ վերաբերմունքը հենց կյանքի պահանջներն են, որոնք մեծապես որոշում են այն ուղղությունը, որով պետք է բարելավվի կրթական գործընթացը։

Ըստ ԲուրյակՎ.Կ.-ի, տարրական դասարանների աշակերտների ինքնուրույն աշխատանքը ուսումնական գործընթացի անբաժանելի տարր է։ Առանց դրա անհնար է ապահովել երեխայի կրթության և ինքնակրթության միասնությունը, ռացիոնալ կերպով համատեղել ինքնուրույն աշխատանքի մեթոդները դասավանդման այլ մեթոդների հետ։ Օրինակ՝ ինքնուրույն գործնական աշխատանքի մասնաբաժինը մեծացնելով, ուսուցիչը սովորողին ուղորդում է խնդրահարույց իրավիճակների ինքնուրույն լուծմանը[3,էջ.105]։

Ըստ Է․Թաշի՝«Ինքնուրույն աշխատանքը՝ որպես ճանաչողական գործունեության գործընթաց, ակտիվորեն ընդլայնում և խորացնում է սովորողի ստացած տեղեկատվությունը,ընկալում և կազմում է նոր տեղեկատվություն,լուծում է գործնական խնդիրներ՝ հիմնվելով տեսության և պրակտիկայի կապի վրա, ինչի հետևանքով սովորողը ձեռք է բերում կայուն, կյանքի համար կարևոր գիտելիքներ։»[5,էջ.19]։

Դասարանում ինքնուրույն աշխատանք կատարելը սովորողներին օգնում է զարգացնել խնդիրների նոր լուծումների ինքնուրույն որոնում; հնարավորություն է տալիս կիրառել առկա գիտելիքներն ու հմտությունները նոր իրավիճակներում: Սովորողների կողմից ուսումնական նյութի յուրացման որակը և ինքնուրույն աշխատանքի հմտությունների զարգացման մակարդակը կախված են կրտսեր դպրոցականների ինքնուրույն գործունեության կազմակերպման, անցկացման և վերահսկման պայմաններից: Ուսուցչից պահանջվում է արդյունավետ կերպով ընտրել սովորողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման և իրականացման մեթոդներն ու ձևերը: Բացի այդ, կրտսեր դպրոցականները պետք է գիտակցեն ինքնուրույն աշխատանք կատարելու նպատակը, եթե նրանք ցանկություն ունենան հասնելու այդ նպատակին, ապա ինքնուրույն աշխա տանք կատարելու արդյունքները կլինեն պատշաճ մակարդակի վրա:Վերը գրվածից պարզ է դառնում,թե որքան մեծ նշանակություն ունի ինքնուրույն աշխատանքը կրտսեր դպրոցականների ուսուցման գործընթացում:

## ԳԼՈՒԽ 2:ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ:

## ԻՆՔՆԱՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԱՀՍԿՈՒՄ

Ինքնուրույն աշխատանքը ուսուցման գործընթացում կազմակերպվում է հետևյալ փուլերով:

1.կազմակերպչական՝երեխաների աշխատանքային միջավայրի նախապատրաստում:

2․բառարանների, հուշաթերթիկների բաշխում,որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքի ընթաց քում:

3. նախապատրաստական՝այս փուլում ուսուցիչը սովորեցնում է կամմեկ անգամ ևս հիշեցնում է երեխաներին հանգիստ նստել,չխանգարել ընկերներին, պահպանել լռություն և կարգուկանոն, ուշադիր աշխատել, ինքնաստուգում կատարել և այլն, այսինքն՝ այն ամենը,ինչը կապահովի աշխատանքի արդյունավետությունը:

4. կողմնորոշիչ՝այս փուլում ուսուցիչը սովորեցնում է առաջադրանքի բովան դա կու թյունը: Նա ստանալով առաջադրանք՝ընթերցում կամ վերընթերցում է պայմանը, դիտարկում է առար կան կամ գծագիրը,ընթերցում է տեքստը և այլն: Այս փուլի ընթացքում սովորողն իմաստա վորում է առաջադրանքը,առանձնացնում է,թե ինչ է տրված,թե ինչ պետք է իմանալ կամ կատա րել ինչպիսի գիտելիքներ և գործողություններ են պահանջվում

աշխատանքի կատարման համար: Երեխաները ծանոթանում են հուշաթերթիկի բովանդակությանը: Բացի դրանից, այս փուլում, ուսուցիչը կարող է բաշխել աշխատանքի պլանը: Պլանը կարելի է գրառել նաև գրատախտակին: Գրատախտակին փակցվում է նաև թեմայի շուրջ մշակված պաստառները, սխեմաները այլն: Այս փուլում ձևավորվում է ուսում նական աշխատանք ծավալելու կարևորագույն կարողություններից մեկը՝ աշխատանքի համար կարևոր նյութեր ընտրելու կարողությունը:

5. հիմնական փուլ՝այս փուլում կատարվում է ինքնուրույն աշխատանքը:
6. ամփոփիչ փուլ՝այս փուլում ուսուցիչը գնահատում է, քննարկում, և վերլուծում է ամբողջ դասարանի աշխատանքի ընթացքը,արդյունքները:

Նպատակահարմար է առաջադրանքի կատարման ստուգման համար առանձնացնել ևս մեկ կառուցվածքային փուլ՝

7.ստուգիչ փուլ, որի ընթացքում աշակերտը կատարելով առաջադրանքը՝ ինքն իր սեփ ական նախաձեռնությամբ ստուգում է իր աշխատանքը և գնահատում այն, այսինքն՝ իրականացնում է ինքնաստուգում և ինքնավերահսկում:

Կազմակերպելով սովորողների ինքնուրույն աշխատանքը՝ ուսուցիչը պետք է կարողանա պատասխանել հետևյալ հարցերին.

Ինքնուրույն գործունեության կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում: Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել ինքնուրույն աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը, դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները: Միայն այս դեպքում ինքնուրույն աշխատանքը արդյունավետ կընթանա: Ընդ որում, մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ՝ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ց ու ցաբերվող օգնության և ստուգման ձևերի մասին:Հատկապես տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է կիրառել բազմազան մեթոդական հուշաթերթիկներ: Դրանք նպաստում են արագ յուրացնել գործո ղությունների որոշակի հաջորդականություն կատարելու և սեփական գործունեությունը կազ մակերպելու համար անհրաժեշտ կարողությունները:Ինքնուրույն աշխատելու կարողութ յունները մշակվում են նպատակաուղղված վարժություններին աստիճանաբար

բարդացող առաջադրանքների միջոցով: Մինչ ինքնուրույն աշխատանքի համար առաջադրանքներ տալը,այդառաջադրանքների տեսակները յուրացվում են նախապես ուսուցչի հետ միասին կատարվող աշխատանքների միջոցով: Այնուհետև առաջադրանքների այս կամայն մասը կատարում են աշակերտները, և, վերջապես, նրանք հնարավորություն են ստանում ամբողջ առաջադրանքը կատարել ինքնուրույն: Ուսուցիչը պետք է որոշի առաջադրանքների տեսակը, դրա տեղը դասի ընթացքում,բացատրի նպատակը և կատարման քայլերի հաջորդականությունը, հետևի սովորողների աշխատանքին՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով օգնություն առանձին աշակերտներին:Աշխատանքի ստուգումը ևս կատարվում է ուսուցչի ղեկավա րությամբ: Վերջինս արդյունքների քննարկմանը մասնակից է դարձնում ամբողջ դասարա նին:

Դիտարկենք,թե ինքնուրույն աշխատանքի ի՞նչ տեսակներ կարելի է կիրառել տարրական դասարաններում:

Ինքնուրույն աշխատանքի հիմնական տեսակները կարելի է դասակարգել ըստ մի քանի հատկանիշների, որոնք միևնույն ինքնուրույն աշխատանքը բնութագրում են տար բեր տեսանկյուններից:

I ինքնուրույն աշխատանքի դասակարգման հատկանիշներ՝ըստ ուսումնական նպատա տակների.

1.Հիմնարար գիտելիքների կրկնության և նոր նյութի ընկալմանը նախապատրաստող

2. Նոր նյութի ուսումնասիրությանը նպաստող

3. Գիտելիքները համակարգող

4. Որոշակի կարողություններ զարգացնող

5. Ստուգող,վերահսկող

IIԸստճանաչողական գործունեության բնույթի

1.Ըստ տրված նմուշի օրինակ՝ գրել տառեր, թվեր, սոսնձել տուփ և այլն, այսինքն՝ աշխատանք ներ, որոնք առավելապես հիմնված են ընդօրինակման վրա: Այսպիսի աշխատանքների կա

տարման ընթացքում աշակերտների ինքնուրույն գործողությունները սահմանափակվում են պարզ վերարտադրմանմիջոցով՝ ըստ նմուշի կրկնելով գործողությունները: Այնուամենայնիվ, այսպիսի աշխատանքների դերը բավականին մեծ է: 2.Կառուցողական,որոնք ստեղծագոր ծա կան մոտեցում են պահանջում: Ընդ որում, կամ ցույց են տալիս առարկան, որի շուրջ պետք է աշխատել, կամ էլ նշում են հարցը, թեման, որը պետք է բացահայտեն: Օրինակ՝ պատրաստել որևէ խաղալիք, հորինել շարադրություն որևէ թեմայով և այլն: Սովորողներին ներկայացվում է նշանակալի ազատություն, ինքնուրույնություն ինչպես բովանդակության որոշման, այնպես էլ աշխատանքի հնարների ընտրության մեջ: Կառուցողական ինքնուրույն աշխատանքները սովո րեցնում են վերլուծել իրադարձությունները, երևույթները, փաստերը, ձևավորում են ճանաչո ղական գործունեության հնարները և մեթոդները, նպաստում են ճանաչողության նկատմամբ ներքին դրդապատճառների զարգացմանը, պայմաններ են ստեղծում դպրոցա կանների մտա վոր ակտիվության զարգացման համար: Այս տիպի ինքնուրույն աշխատանք նե րը հիմք են ձևավորում աշակերտի ստեղծագործական գործունեության հետագա զարգացման համար;

3. Ստեղծագործական–հետազոտական, որոնք երեխաների ինքնուրույն գործունեության գագաթնակետն են հանդիսանում: Այդ աշխատանքները ամրապնդում են գիտեիքների ինք նուրույն որոնման հմտությունները: Դրանք ստեղծագործող անձի ձևավորման արդյունավետ միջոցներից են: Ստեղծագործական բնույթի ինքնուրույն աշխատանքները հնարավորություն են ընձեռնում աշակերտներին ձեռք բերել իրենց համար սկզբունքորեն նոր գիտելիքներ:

IIIԸստ կազմակերպման ձևի

1.ընդհանուր ճակատային,երբ բոլոր սովորողները կատարում են միևնույն աշխատանքը,

2.խմբային,երբ սովորողների տարբեր խմբեր աշխատում են տարբեր առաջադրանքների վրա,

3.անհատական,երբ սովորողներից յուրաքանչյուրն աշխատում է հատուկ առաջադրանքների վրա:

IV Ըստ ինքնուրույն աշխատանքի ընթացքում դիդակտիկ նյութերի կիրառության

1. Աշխատանք դասագրքով,տեղեկատու գրականության շուրջ բառարաններ, հանրագիտարան ներ և այլն: Տարրական դասարաններում մեծ տեղ է հատկաց վում գրքի, գեղարվեստական տեքստի, նկարազարդման շուրջ կատարվող ինքնուրույն աշխատանքին: Գրքի շուրջ ինքնու

րույն աշխատելու կարողությունը սովորելուն նպաստող ամենակարևոր կարողութ յուններից է: Առանց այդ կարողության յուրացման հնարավոր չէ իրականացնել գիտելիքների լիարժեք յուրա ցումը քանի որ յուրացման գործընթացի կարևոր կառուցվածքային տարրերը, ինչպիսիք են՝ իմաստավորումը նամրապնդումը, իրականացվում է դասագրքի շուրջ կատարվող աշխատանքի ընթացքում :Գրքի շուրջ աշխատելու անկարողության պատճառով ուսումնական աշխատանքն աշակերտի համար դառնում է տանջալի աշխատանք:Գրքի շուրջ աշխատելու կարողություն նե րի զարգացումն իրականացվում է բոլոր առարկաների դասերի ընթացքում:

2. Շարադրություններ ըստ հենակետային բառերի,նկարների շուրջ և այլն:

3.Դիտումներ և գործնական աշխատանքներ: Դիտումների համար որպես դիտարկվող առարկաներ կարող են լինել շրջապատող առարկաները ներևույթները: Սովորողները հաշվում են, չափում, ստեղծում: Նրանք դիտարկում են առարկաները ներևույթները անմիջականորեն բնության մեջ, անցկացնում են փորձեր ՝կատարելով գործնական աշխատանքներ:

Դիտարկումների, փորձերի,գործնական և լաբորատոր աշխատանքների հետ կապված ինքնուրույն աշխատանքները ունեն շատ մեծ նշականություն, քանի որնպաստում են աշակերտների դիտողականության, հետազոտական կարողությունների և հմտությունների զարգացմանը:

4.Աշխատանք բաշխիչ նյութերի կիրառմամբ

5.Գրաֆիկական աշխատանքներ

6.Ինքնուրույն աշխատանքներ,որոնք կախված են դիդակտիկ նյութերի ստեղծման հետ: Սովորողները պատրաստում են ինքնաշեն գրքեր «Ես և շրջակա աշխարհը » առարկայի ալբոմներ, զանազան թեմաներով քարտեր և այլն:

V Ըստկատարմանտեղի

1. Դասարանում,
2. Արտադասարանական կամ արտադպրոցական ուսումնական միջոցառումների ժամանակ
3. Տանը:

Իսկ ի՞նչ ծավալով և ի՞նչ բնույթի առաջադրանքներ են անհրաժեշտ առաջադրել ինքնուրույն կատարելու համար: Այսպես.

1. Առաջադրանքների ծավալը պլանավորելու համար, անհրաժեշտ է հաշվի

առնել սովորողների աշխատանքի տեմպը: Ժամանակը ճիշտ կազմակերպելու համար պետք է նախապես կատարել ինքնուրույն աշխատանքի համար պլանավորված առաջադրանքը: Այդ դեպքում մենք առաջադրանքի կատարման համար ուսուցչի կողմից ծախսված ժամա նակը անհրաժեշտ է բազմապատկել երեքով, հենց հատկապես այդքան րոպե է անհրաժեշտ առա ջադրանքի կատարման համար: Առաջադրանքի կատարման ընթաքում ուսուցիչը կարող է հասկանալ,թեինչ տարրեր կարող են արգելակել կամ արագացնել սովորողների աշխա տան քը:

2.Սովորողների ինքնուրույն ուսումնական գործունեության համար նախատեսված առաջադրանքերի բնույթը անհրաժեշտ է աստիճանաբար բարդացնել:

3.Առաջադրանքները պետք է ընտրել այնպես, որ նպաստեն դրանց նկատմամբ հետաքրքրու թյան զարգացմանը:

4.Սովորաբար,աշակերտներըոչ միաժամանակ են ավարտում ինքնուրույն աշխատանքը: Ինքնուրույն աշխատանքների համար առաջադրանքներ
ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ գիտեիլքների, կարողությունների և հմտությունների յուրացման գործընթացում սովորողներից պահանջում է տարբեր ժամանակահատված: Այդ պատճառով նպատակահարմար է նախապես պատրաստել առաջադրանքներ, լրացուցիչ առաջադրանքներ՝ արագ աշխատող աշակերտների համար:

5.Դժվար է ընտրել այնպիսի առաջադրանքներ, որոնք համապատասխանում են բոլոր աշակերտների ներուժին:Եթե առաջադրվում է պարզ,միատիպ վարժություններ, օրի նակ՝բազմապատկման կամ բաժանման, ապա առաջադրանքների տարբերակումը կարգավորվում է ծավալով: Առավել դժվար է, օրինակ ընտրել յուաքանչյուր աշակերտի ներու ժի համապատասխան առաջադրանքներ: Այդպատճառով նպատակահարմար է առաջադրել տարբերակված առաջադրանքներ՝հաշվի առնելով սովորողների առանձին խմբերի ներուժը: Սակայն պետք է նշել, որ ըստ բարդության աստիճանի տարբեր առաջադրանքներ ընտրելը բավականին բարդ է:Ընտրել հեշտ առաջադրանք, որը համապատասխանում է թույլ աշակերտի ներուժին, դժվար չէ: Բայց այստեղ մի մեծ վտանգ է թաքնված: Եթե թույլ կարողություններ ունեցող աշակերտը դասից դաս անընդհատ դյուրին աշխատանք կատարի նույն պահանջով, ապա այդպես կարող ենք խորացնել նրա զարգացման հետ կապված խնդիրները: Այդ պատճառով այդպիսի սովորողների համար ճանաչողական առաջադ րանքների ընտրության ընթացքում ուսուցիչն իր առջև նպատակ է դնում. Սկզբում աշխատան

քում ներառել պարզ առաջադրանքներ, ապաաստիճանաբար յուրացման համար ներմուծել առավել բարդ նյութեր:

6. Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված առաջադրանքները ցանկալի է, որ Աշակերտներից պահանջեն կամային ջանքեր:

7. Ինքնուրույն աշխատանքի համար ցանկալի է առաջադրել այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարման համար կպահանջվի գիտելիքների կիրառում նոր իրավիճակներում:Միայն այդ դեպքում ինքնուրույն աշխատանքը կնպաստի սովորողների ճանաչողական ունակու թյունների ձևավորմանը և նախաձեռնողականության դրսևորմանը:

8.Ցանկալի է,որ ինքնուրույն աշխատանքի համար նախատեսվող առաջադրանքները հետաքր քրեն սովորողներին:

9.Առաջադրանքների բովանդակությունը պետք է մատչելի լինի աշակերտին, հենված լինի երեխաների կենսափորձի վրա, բայց միևնույն ժամանակ գտնվի նրանց զարգացման «մերձակա գոտում»,պարունակի որոշակի դժվարություն,որը երեխան կարող է հաղթահարել:

10.Յուրաքանչյուր թեմայի շուրջ առաջադրանքների ընտրության ընթացքում պետք է հատուկ ուշադրություն դարձնել հասկացության բոլոր հատկանիշների բազմակողմանիորեն ամրապնդմանը,հստակ առանձնացնել այն կարողություններն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ է ձևակերպել և ամրապնդել: Պատահականության բացառումը նպաստում է դասի արդյունավետության բարձրացմանը:

11.Առաջադրանքների համակարգը պետք է կազմակերպել փուլ առ փուլ: Անհրաժեշտ է սկսել տիպային առաջադրանքներից, մանրամասն բացատրել դրանց լուծման մեթոդները: Ընդ որում աշակերտներին պետք է առաջարկել գործողություններ կատարել ըստ օրինակի: Այնու հետև անհրաժեշտ է առաջադրել նույնատիպ առաջադրանքներ : Հետո կարելի է առաջար կել առաջադրանքներ՝ չափազանց համառոտ հրահանգտալով:Վերջին փուլում անհրաժեշտ է առաջարկել առաջադրանքներ ամբողջովին ինքնուրույն կատարման համար: Այս փուլում նպատակահարմար է սովորողներին առաջարկել ստեղծագործական բնույթի առաջադրանքներ[7]:

## ԳԼՈՒԽ 3:Կրտսեր դպրոցականների մոտ ինքնաստուգման, ինքնագնահատման ևինքնավերահսկմանձևավորում

Սովորողի կրթական գործունեության ձևավորման ամենակարևոր հոգեբանական գործոնը

Ինքնագնահատականն է: Այն էական դեր է խաղում նրա անհատական հատկանիշների և տարիքային առանձնահատկությունների զարգացման գործում: Հետևաբար, ներկայումս արդիական է ինքնագնահատականի և ինքնավերահսկման ձևավորման հարցը: Ինքն իրեն և իր գործունեությունը գնահատելու և վերահսկելու կարողությունը դրված է վաղ մանկությունից, և դրա զարգացումն ու բարելավումը տեղի է ունենում մարդու ողջ կյանքի ընթացքում:

Ինքնագնահատականը մարդու գնահատականն է իր որակների, կարողությունների և գործունեության առանձնահատկությունների մասին: Այսպիսով, ինքնագնահատականը արտացոլում է անձի իրազեկվածության առանձնահատկությունները իր գործողությունների, դրանց դրդապատճառների և նպատակների, իր հնարավորություններն ու կարողությունները տեսնելու և գնահատելու կարողությունը:

Ինքնավերահսկում:Սեփականկրթական գործունեության արդյունքների գիտակցված գնահատում և, անհրաժեշտության դեպքում, գործունեության հետագա կարգավորում՝ պահանջվող արդյունքի հասնելու համար՝ ցանկանալով ստուգել իր կրթական նվաճումները:

Ինքնագնահատականի ձևավորումը կապված է երեխայի ակտիվ գործողությունների, Ինքնավերահսկման և ինքնաստուգման հետ: Խաղերը, գործունեությունը, հաղորդակցությունը անընդհատ նրա ուշադրությունըհրավիրումեն իրվրա,դնումնրան մի իրավիճակում,երբ նա պետք է ինչ-որ կերպ վերաբերվի իրեն. Քանի որ կրտսեր դպրոցական տարիքում առաջատար գործունեությունը կրթական գործունեությունն է. Հենց նրա առաջընթացից է, որ որոշիչ չափով կախված է երեխայի ինքնագնահատականի ձևավորումը,այնուղղակիորեն կապված է նրա ակադեմիական առաջադիմության և ուսուցման հաջողությունների հետ: Ավելին, հոգեբանա կան հետազոտությունները ցույց են տալիս, որ կրտսեր դպրոցականների ինքնագնահատա կանը դեռ հեռու է անկախ լինելուց, դրանում գերակշռում են ուրիշների, հատկապես ուսուցչի գնահատականները: Այն, թե ինչպես է երեխան գնահատում իրեն, կրկնօրինակն է, ուսուցչի կողմից տրված գնահատականների գրեթե բառացի պատճենը:

Ինչպե՞ս կարելի է ինքնաստուգում և ինքնավերահսկում կազմակերպել տարրական դասա րանների աշակերտների հետ:

Ներկայացնում եմ ամենապարզ մեթոդը՝ **գունավոր հետքերի կամ լուսացույցների** մոթոդը:

Գունավոր հետքերը թույլ են տալիս աշակերտին, օգտագործելով գունավոր մատիտներ, ինքնուրույն գնահատել, թե որքանով է նա հասկանում նյութը, արդյո՞ք կարող է կատարել առաջադրանքը և արդյոք նա վստահ է զգում հարցին պատասխանելիս :Ընտրելով երեք

գույներից մեկը՝ սովորողները նշումներ են կատարում իրենց տետրում տնային կամ դասարանային աշխատանքի կողքին: Կարմիրը տագնապի ազդանշան է. ես չեմ կարող դա անել, ինձ համար դժվար է, դեղինը անորոշություն է. ես դա այնքան էլ չեմ հասկացել, կանաչը՝ ինձ համար ամեն ինչ պարզ է, ես կարող եմ դա անել: Ուսուցիչը, վերցնելով աշակերտների տետրերը, տեսնում է,թե նրանցից ով օգնության կարիք ունի և ինչ հարցում:

**«Ծիածան».**սովորողներին տրվում է բացիկ՝ շրջան, որը բաժանված է այնքան մասերի, որքան առաջադրանքների թիվը, որը ուսուցիչը ներկայացնում է վերահսկման: Երեխաները կարմիրով նշում են ճիշտ կատարված առաջադրանքները, մեկ սխալով՝ կանաչ, 3 և ավելի սխալներով՝ դեղին:

Կատարողականի վերլուծություն: Ինքնավերահսկումը սաների ինքնուրույն գործունեությունն ապահովող կարևորագույն գործոններից է: Դա անհրաժեշտ է արդեն իսկ թույլ տրված սխալների ժամանակին կանխարգելման կամ հայտնաբերման համար:

Այս ոլորտում կանոնավոր աշխատանքով, ուսումնառության առաջին տարուց հետո, արդեն իսկ նկատվում են կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման ուղղությամբ աշխատանքի դրական արդյունքները:Երեխաների գործո ղություններում արդեն կարելի է զգալ նրանց գործունեության արդյունքները կանխատեսելու ունակությունը, մեծամասնու թյունը կարողանում է կանխատեսել հետևանքները. Վստահության ինքնաիրացման և ինքնա հաստատման համար սոցիալական փորձը տիրապետելու ունակության նկատ մամբ. «մեծահասակ-հասակակից-ես» սոցիալական հարաբերությունների համակարգում սեփական դիրքը գնահատելու ունակություն. կրթական գործունեության համար պատասխա նատվության մակարդակի բարձրացում. Ինքնագնահատականը և ինքնավերահսկումը աստիճանաբար անցնում են արտադասարանական գործունեության:

Ինքնաստուգման,ինքնագնահատման և ինքնագնահատականի ձևավորման ուղղությամբ տարված աշխատանքի արդյունքում իմ սոովորողները սովորում են ստուգել և գնահատել իրենց աշխատանքը ըստ տրված չափանիշների՝տարբեր տեսակի աշխատանքով.

. փոխկապակցում են ուրիշի գնահատականը իրենց գնահատականի հետ,

. բացահայտում են իրենց գործողությունների համընկնումը և տարբերությունը մոդելի հետ, սովորում են հիմնավորել իրենց գնահատականը փոխադարձ ստուգման ժամանակ:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անցյալ դարասկզբից սովորողների ինքնուրույնության խնդիրը զգալի ուշադրության է արժանացել ինչպես գիտնականների, այնպես էլ գործնական ուսուցիչների կողմից: Ներկայումս այն մնում է արդիական կրթության խնդիրը: Պետք էր նդգծել նաև տարրակա նդպրոցի առանձնահատուկ դերը դպրոցականների ինքնուրույնության ձևավորման և ինքնուրույն աշխատանքի կազմակերպման գործում:

Այսպիսով,կրտսեր դպրոցականների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման խնդիրը կրթական գործունեության մեջ արդիական և պահանջված է:

Այսպիսով,ես գալիս եմ այն եզրակացության, որ սովորողների կողմից ինքնուրույնության, ինքնաստուգման հմտությունները նպաստում են իրենց մոտ ինքնավերահսկողություն իրականացնելու անհրաժեշտության: Ինչի հետևանքով սովորողները կարողանում են համարժեք գնահատական տալ իրենց գործունեությանը:

Ինքնուրույն աշխատանքների համար նախատեսված առաջադրանքները պետք է աշակերտներից պահանջեն կամային ջանք :Պետք է առաջադրել այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարման համար աշակերտներից կպահանջվի գիտելիքների կիրառում նոր իրավիճակներում:Անհրաժեշտ է դպրոցում ստեղծել այնպիսի պայմաններ, որ երեխան ձգտի ինքնուրույն հասնել դրված նպատակներին: Սովորողը պետք է յուրացնի իր համար մատչելի գործելու միջոցները: Պատրաստի գիտելիքների մեքենայաբար ընկալումը միակողմանի գործողություն է և շատ քիչ է նպաստում ինքնուրույն մտածելու ունակությունների զարգացմանը:Ինքնավերահսկողության և ինքնաստուգման հմտությունների աստիճանական ձևավորումը նպաստում են աշակերտների ինքնագնահատման գործունեության կազմակերպմանը: Ժամանակակից տարրական դպրոցը պետք է սովորողների մոտ զարգացնի ինքնուրույնություն, ինչը բանալին է ոչ միայն հաջող ուսուցման, այլև ցանկացած գործունեության հաջող կառուցման համար:

Այսպիսով,ինքնավերահսկմանևինքնաստուգման հմտությունը շարունակական գործընթաց է: Այն իրականացվում է ուսուցչի ղեկավարությամբ՝ ուսուցման գործընթացի բոլոր փուլերում(նոր նյութ սովորելիս, գործնական աշխատանքների ժամանակ, սովորողների ստեղ ծագործական ինքնուրույն աշխատանքի ժամանակ և այլն): Այս ամենն իրենց հերթին օգնում և պայմաններ են ստեղծում կրտսեր դպրոցականի ինքնուրույնության ձևավորման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆՑԱՆԿ

1.ԹորոսյանԿ.,ՉիբուխչյանԿ., Մանուկյան Մ., Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, « Զանգակ»հրատարակչություն,2014թ.

2

.АлимбековА.А.Актуальныепроблемыразвитиясамостоятельнойработыстудентоввусловиирефор мациивысшегообразования//ВестникИссик-Кульскогоуниверситета.–2014.–№38,–С.163

3.БурякВ.К.Самостоятельнаяработаучащихся.–М.:Аспектпресс,2005.–272с.

4.ИстоминаН.Б.Активизацияучащихсянаурокахматематикивначальныхклассах.–М.:Наука,2002.–244с.

5

.ЭржанТаш.Педагогическиеусловияорганизациясамостоятельнойработышкольников(напримереа нглийскогоязыка):дис.…канд.пед.наук.–Бишкек,2016.–163с.

6.ЯмалтдиноваД.Г.Организациясамостоятельнойдеятельностиучащихся//Начальнаяшкола.–2008.–№2.–С.8–9.

7.Աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը(znanio.ru)

:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

# *ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ*

**ԹԵՄԱ՝ «Աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը»**

***ԿԱՏԱՐՈՂ՝ Արմինե Ճոկլինյան***

***ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. Միրաքյան***

***ՎԱՆԱՁՈՐ 2023***

## Բովանդակություն

1. Ներածություն --------------------------------------------------------------------------3
2. Գլուխ 1. Ինքնուրույն գործունեության կազմակերպումը տարրական դպրոցում ---------------------------------------------------------------------------------- 5
3. Գլուխ 2. Ինքնուրույն հետազոտական աշխատանքը որպես ինքնուրույն գործունեության կազմակերպման ձև --------------------------- 8
4. Փործարարական մաս ---------------------------------------------------------------13
5. Եզրակացություն ---------------------------------------------------------------------16
6. Գրականության ցանկ -----------------------------------------------------------------17

# Ներածություն

Ինքնուրույնությունն ու ինքնուրույն աշխատանքի հմտությունները հենց այնպես չեն առաջանում, դրանք պետք է ձևավորել նպատակաուղղված, համակարգված և հետևողական աշխատանքի միջոցով: Դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը: Սովորողների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար՝ դասից դաս, դասարանից դասարան:

Թեման արդիական է, քանի որ անհերքելի փաստ է, որ ինչպես դպրոցում, այնպես էլ ողջ կյանքի ընթացքում ինքնուրույն աշխատանքի միջոցով են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները: Ուստի առաջանում է հարց ՝ ի՞նչ պայմաններ պետք է ստեղծի ուսուցիչը տարրական դպրոցում սովորողի համար, որ ձևավորի և զարգացնի ինքնուրույն գործունեություն իրականացնելու հմտություններ:

Գաղտնիք չէ, որ տարրական դասարաններում սովորողների գործողությունները հիմնականում կախված են ուսուցչի անմիջական հրահանգներից: Իսկ արդեն միջին դպրոցում սովորողը կանգնում է խնդրի առջև, քանի որ արդեն պետք է կատարի ինքնուրույն ստեղծագործական աշխատանքներ, ինքնուրույն կատարի առաջադրանքները, ինչը դառնում է իր ուժերից վեր՝ համապատասխան հմտություններ չունենալու պատճառով

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել այն պայմանները, որոնք նպաստում են սովորողի ինքնուրույն գործունեության հմտությունների զարգացմանը և այդ գործում սովորողի կողմից իրականացվող ինքնուրույն հետազոտական աշխատանքների դերը:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են՝

- նկարագրել ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը և կարևորությունը:
- բացահայտել ինքուրույն հետազոտական աշխատանքների նշանակությունը ինքնուրույն գործունեության հմտությունների ձևավորման և զարգացման գործում:
- ներկայացնել ինքնուրույն հետազոտական աշխատանք կազմակերպելու սեփական փորձը:

Հետազոտական աշխատանքի համար ուսումնասիրվել է հիմնախնդրի վերաբերյալ գրականություն, իրականացվել է փորձարարական աշխատանք

տարրական դասարանի սովորողների հետ ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու ուղղությամբ: Աշխատանքը կազմված է բովանդակությունից, ներածությունից, երկու գլուխներից, փորձարարական մասից, եզրակացությունից, գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը 17 տպագիր էջ է: Օգտագործվել է 7 անուն գրականություն:

## Գլուխ 1. Ինքնուրույն գործունեության կազմակերպումը տարրական դպրոցում

Տարրական դպրոցը համարվում է հիմնաքար սովորել կարողանալու ընդունակության ձևավորման համար: Ուսումնական գործընթացում ինքնուրույնություն և ինքնուրույն աշխատել անհրաժեշտ է սովորել տարրական դպրոցում:

Ինքնուրույնությունը սեփական կյանքը կազմակերպելու, հնարավորությունները գիտակցելու, գնահատելու, իր զարգացման ուղին ընտրելու ընդունակությունն է: Արդի կրթական համակարգում հիմնարար դիտելիքներից զատ կարևորվում է սովորողին ինքնուրույնություն սովորեցնելը: Ինքնուրույնության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը: Այս դեպքում սովորողն ինքն է կազմակերպում, կարգավորում և հսկում իր իմացական գործունեությունը: Տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքը բավականին մեծ դեր ու նշանակություն ունի: Ինքնուրույն է համարվում այն աշխատանքը, որի ընթացքում սովորողները պարզորոշ պատկերացնում են աշխատանքի նպատակը, դրա կատարման կարգը և կատարում են այն առանց ուսուցչի անմիջական մասնակցության: Եթե սովորողը այս փուլում սովորում է աշխատել ինքնուրույն, ապա այդպես շարունակվում է ողջ կյանքի ընթացքում: Ուսուցիչը պետք է խթանի ինքնուրույն աշխատելու ցանկությունը, հնարավորություն տա սովորողին փորձել իրեն, իր ուժերը, և ամենակարևորը, սովորողը ինքը պիտի ցանկանա այդպես աշխատել, դրանից է կախված աշխատանքի հաջողությունը:

Տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքը կազմակերպվում է հետևյալ ձևերով՝

- աշխատանք դասագրքով
- աշխատանք լրացուցիչ տեղեկատու գրքերով՝ բառարան հանրագիտարան
- խնդիրների առաջադրում և լուծում
- նկարագրություն և շարադրանք
- հետազոտություն և փորձեր:

Գոյություն ունեն հստակ պահանջներ, որոնք պետք է պահպանվեն ինքնուրույն գործունեության ճիշտ կազմակերպման համար.

1. Յանկացած ինքնուրույն աշխատանք պետք է ունենա նպատակ:
2. Սովորողը պետք է իմանա պահանջները, կատարման կարգը և տիրապետի անհրաժեշտ հնարներին;
3. Ինքնուրույն աշխատանքը պետք է համապատասխանի սովորողի հնարավորություններին և տարիքային առանձնահատկություններին:
4. Ինքնուրույն աշխատանքի ընթացքում ձեռք բերած արդյունքները և եզրահանգումները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացում:
5. Ինքնուրույն աշխատանքի բովանդակությունն ու ընթացքը պետք է հետաքրքրի սովորողին:
6. Պետք է ապահովի ճանաչողական ընդունակությունների աճ:
7. Պետք է նպաստի ինքնուրույնության ձևավորմանը:
8. Ինքնուրույն աշխատանքի համար ընտրված հարցերը պետք է լինեն ոչ միայն պարզ՝ ի՞նչ, որտե՞ղ, ինչո՞ւ, ինչպե՞ս, այլ նաև տրամաբանական՝ ի՞նչ կլինի, եթե..., ինչո՞վ են տարբերվում և այլն [1]:

Տարրական դասարաններում կարելի է առանձնացնել ինքնուրույն գործունեության չորս տեսակ.

1. Օրինակին համապատասխան աշխատանք, որը ենթադրում է սովորողին ծանոթ առաջադրանքների օրինակներին նման հանձնարարություններ: Սա նպաստում է ինքնուրույն աշխատելու կարողությունների և հմտությունների ձևավորմանը և հիմք է հանդիսանում ինքնուրույն գործունեության ավելի բարդ տեսակների համար:
2. Վերլուծական ինքնուրույն աշխատանք, որը պահանջում է սովորողից և սովորեցնում վերլուծել իրադարձությունը, երևույթը, փաստերը: Սա ստեղծում է պայմաններ տրամաբանության զարգացման համար և հիմք է հանդիսանում հետագա ստեղծագործական գործունեության համար:
3. Որոնողական (հետազոտական) ինքնուրույն աշխատանք, որը ենթադրում է նոր լուծումների որոնում, ստացած գիտելիքների համակարգում: Սովորողի կողմից ոչ ստանդարտ մոտեցումների որոնումն ու հայտնաբերումը հող են նախապատրաստում ստեղծագործ անձի որակների ձևավորման համար:
4. Ստեղծագործական ինքնուրույն աշխատանք, որը ինքնուրույն գործունեության գագաթնակետն է: Այս աշխատանքները

պահանջում են սովորողից արտահայտել սեփական դիրքորոշումն ու վերաբերմունքը իրադարձության, երևույթի վերաբերյալ, ինքնուրույն առաջադրել խնդիրներ և լուծել:

Ինքնուրույն գործունեության այս տեսակները պետք է կիրառել համակարգված՝ աստիճանաբար փոխարինելով մեկը մյուսով, այլապես սովորողը չի կարող հասկանալ ինչ է անում, ինչպես և ինչու է անում, չի առաջանա ցանկություն և կարողություն ճանաչել նորը, ձգտել ինքնակրթության և ինքնակատարելագործման:

Ինքնուրույն գործունեությունը կապված է ինքնուրույն մտածողության, պլանավորման և ինքնավերահսկման հետ:

Հոգեբանների վերլուծությունները ցույց են տալիս, որ մտածելու հիմնական գործառույթը անհայտի և նորի բացահայտումն է: Այն ավելի արտահայտված է դրսևորվում, երբ մարդն առաջադրում և լուծում է կենսականորեն անհրաժեշտ զանազան խնդիրներ: Մտածողության գործընթացը ենթադրում է ոչ միայն նորի որոնում, այլև արդեն ձեռք բերած գիտելիքների օգտագործում: Հետևաբար ուսուցման ժամանակ սովորողների ինքնուրույն որոնումների կազմակերպումը ստեղծում է նպաստավոր պայմաններ նոր գիտելիքների յուրացման և մտածողության զարգացման համար:

Ինքնուրույն մտածողությունը բնութագրվում է հետևյալ կարողություններով՝

1. Առանձնացնել գլխավորը, տեսնել ընդհանուր օրինաչափությունը և անել համապատասխան հետևություններ:
2. Հետևողական և մտածված իրականացնել գործունեություն և վերահսկել դրանք:
3. Փորձել գիտելիքները նոր պայմաններում, հաճախ դժվար, ստեղծագործական տարրեր պարունակող մոտեցումներ դրսևորել նպատակին հասնելու ճանապարհին:

Պլանավորելու կարողությունը ենթադրում է նպատակադրում, խնդիրների և աշխատանքի փուլերի առանձնացում, ժամանակի բաշխում:

Ինքնավերահսկումը ենթադրում է կարողանալ վերահսկել գիտելիքների ձեռք բերման ամբողջ ընթացքը:

Այսպիսով՝ սովորողի ինքնուրույն գործունեությունը մեծ ազդեցություն ունի գիտելիքների խորության, ճանաչողական հմտությունների զարգացման, նյութի յուրացման տեմպի վրա:

## Գլուխ 2. Ինքնուրույն հետազոտական աշխատանքը որպես ինքնուրույն գործունեության կազմակերպման ձև

Արդի պայմաններում անձից պահանջվում է նախաձեռնելու, ժամանակի մեջ և իրադրային պայմաններում արագ կողմնորոշվելու, գործունեություն պլանավորելու, անհրաժեշտ տեղեկատվությունն իր համար վերաիմաստավորելու և մշակելու, մարդկանց հետ հաղորդակցվելու, որոշումներ կայացնելու, գիտելիքների ձեռքբերման ուղուն անդրադարձ կատարելու, կշռադատելու, կատարված աշխատանքը ներկայացնելու, գնահատելու հմտություններ և կարողություններ: Այս բոլոր խնդիրները պետք է լուծվեն ուսումնառության ընթացքում: Այդ նպատակով հարկավոր է ուսուցումը կազմակերպել այնպես, որ ճանաչողական գործընթացն իրականանա հիմնականում ինքնուրույն կերպով: Ինքնուրույն մտավոր գործունեության զարգացման հիմքում հետազոտական աշխատանքն է: Դրա ակտիվ մասնակիցը պետք է դառնա սովորողը: Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ նա օժտված լինի ստեղծագործական, հետազոտական հմտություններով: Այդպիսի հատկությունննները ձևավորվում և զարգանում են համապատասխան աշխատանքներ կատարելու ընթացքում:

Հետազոտական գործունեությունը գործողությունների և քայլերի ամբողջություն է, հնարավորություն է տալիս իրագործել որևէ նպատակ, լուծել խնդիր և այն վերածել տեսանելի նյութի: Այն կիրառվում է որպես ստեղծագործական մտածողության զարգացման և ուսուցման դրդապատճառ առաջացնող միջոց:

Հետազոտական գործունեության ընթացքում սովորողների մեջ ձևավորվում է հետևյալ հմտությունները՝

- ինքնուրույն հասնել արդյունքի,
- կանխատեսել նպատակին հասնելու ճանապարհին առաջացած խնդիրները և դրանց լուծման ուղիները,
- կարողանալ օգտագործել տեղեկատվական աղբյուրները,
- գնահատել իրենց և ընկերների աշխատանքի արդյունքները,

Սեփական հետազոտության և փորձերի արդյունքում նոր գիտելիք յուրացնելը երեխայի համար ավելի հեշտ է, քան ինչ որ մեկի հայտնագործած գիտելիքները վերցնելը: Հետազոտությունների նկատմամբ հակումը հատուկ է բոլոր երեխաների, սակայն այն առավել բնորոշ է օժտվածներին: Նոր տպավորությունների անհագ ծարավը, հետաքրքրասիրությունը, փորձ անելու, ճշմարտությունն ինքնուրույն որոնելու մշտական ձգտումը դիտարկվում են որպես մանկան օժտվածության

ցուցիչներ: Երեխան իր բնույթով հետազոտող է: Հետազոտական ունակությունները նրա մեջ դրսևորվում են դեռևս վաղ տարիքից: Սակայն երբեմն թերագնահատում ենք մանկական հետաքրքրասիրությունը և այդ կերպ նվազեցնում երեխայի հետազոտական ակտիվությունը:Օրինակ՝ երբ երեխան քանդում է խաղալիքը, կոտրում կենցաղային իրերը, կահույքը, մենք բարկանում ենք, բայց երեխաները հիմնականում այդպես վարվում են ուսումնասիրելու նպատակով:

Տարրական դպրոցում հետազոտական աշխատանքի կազմակերպման ընթացքում անհարաժեշտ է հաշվի առնել կրտսեր դպրոցականների տարիքային և հոգեֆիզիոլոգիական ունակությունները: Երբ ուսուցիչ ուսումնական գործընթացում առաջադրում է խնդրահարույց իրավիճակներ, որոնց լուծմանն աշակերտները հանգում են ինքնուրույն իրենց համար մատչելի հետազոտական աշխատանքի շնորհիվ, սովորելը դառնում է հետաքրքիր և հաճելի:

Առանձնացվում են հետազոտական աշխատանքի իրագործման երեք մակարդակներ՝ կախված սովորողի ինքնուրույնության աստիճանից:

1. Առաջին մակարդակում ուսուցիչն է առաջադրում խնդիրը, ինքն էլ ուղենշում դրա լուծման քայլերը: Այս դեպքում սովորողին մնում է ինքնուրույն դտնել լուծումը:
2. Երկրորդ մակարդակում ուսուցիչն է ձևակերպում խնդիրը, սակայն դրա լուծման մեթոդը սոովորողը որոնում է ինքնուրույն:
3. Երրորդ մակարդակում սովորողը ինքնուրույն առաջադրում է խնդիրը, որոնում և մշակում հետազոտմաան մեթոդները [2]:

Ինքնուրույն հետազոտական աշխատանքը ներառում է հետևյալ հիմնական փուլերը.

1. Խնդրի առանձնացում և առաջադրում
2. Թեմայի ընտրություն
3. Վարկածների առաջքաշում
4. Լուծման հնարավոր տարբերակների փնտրում և առաջարկում
5. Նյութերի հավաքագրում
6. Ստածված տվյալների ընդհանրացում
7. Նախագծի նախապատրաստում՝ հայտարարություն, զեկուցում և այլն
8. Նախագծի պաշտպանություն [4]:

Ցանկացած գործունեության՝ այդ թվում հետազոտական աշխատանքի, իրականացումը կախված է դրա ճիշտ կազմակերպումից: Այստեղ կարևոր է

ուսուցչի, սովորողի, ծնողի համագործակցությունը, որտեղ ուսուցիչը ուղղորդում, շտկում, խորհուրդ է տալիս և ոգևորում, աշակերտը գաղափարի կրողն է, իսկ ծնողը օգնում է նրան գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը և իրականացնել գաղափարները: Այս տարիքային խմբի հետ հետազոտական աշխատանք իրականացնել առանց ծնողի մասնակցության հնարավոր չէ [7]:

Տարրական դասարաններում ինքնուրույն հետազոտական աշխատանքի թեմաները լավ կլինի ընտրել ուսումնական առարկաների բովանդակությունից կամ մոտ բնագավառներից, պետք է լինի նրանց ճանաչողական հետաքրքրությունների շրջանակում և գտնվի մոտակա զարգացման գոտում: Շատ կարևոր է նաև աշակերտներին ներգրավել ուսումնական նպատակները սահմանելիս, այդպես սովորողը ավելի հստակ կգիտակցի ինչ պետք է անի, ինչպես պետք է անի ու ինչի համար:

Թեմաները պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի.

- երևակայական՝ գոյություն չունեցող առարկաների ու երևույթերի մշակմանն ուղղված թեմաներ
- էմպիրիկ՝ սեփական դիտարկումների ու փորձերի անցկացում ենթադրող թեմաներ
- տեսական՝ տեսական փաստերի, նյութերի ուսումնասիրությանն ու ընդհանրացմանը նվիրված թեմաներ [1]:

Թեման այնքան հետաքրքիր պետք է լինի, որ ոգևորի, ոգեշնչի սովորողին, հետազոտելու ցանկություն առաջ բերի, լինի գրավիչ և զարմացնող: Խնդիրը պետք է լինի լուծելի և վերջում ինչ-որ բան տա սովորողին:

Վարկածների առաջքաշումը բավականին դժվար է կրտսեր դպրոցականի համար, ուստի ուսուցչի միջամտությունը այս փուլում զգալի է լինում: Սակայն վարկածների առաջքաշումը, ենթադրությունների առաջադրումը ձևավորում է մտածական կարևոր հմտություններ: Դա ենթադրում է խնդրի լուծման հնարավոր տարբերակներ, որոնք ստուգվում են հետազոտությունների միջոցով: Վարկածի կառուցումը ստեղծագործական մտածողության գործընթացի հիմքն է: Վարկածները թույլ են տալիս բացահայտել նոր հնարավորություններ, գտնել խնդրի լուծման նոր տարբերակներ և փորձի միջոցով պարզել դրանց արժանահավատությունը:

Լուծման հնարավոր տարբերակների որոնումն ու առաջադրումը պահանջում է սովորողներից խորանալ խնդրի մեջ: Պետք է օգնել սովորողին գտնել նպատակին հասնելու բոլոր ճանապարհները, առանձնացնել ընդունված և ոչ ստանդարտ

եղանակները, ապա գնահատելով յուրաքնչյուր եղանակի արդյունավետությունը՝ ընտրություն կատարել:

Նյութի հավաքման փուլն սկսելուց առաջ պետք է անպայման սովորողին տեղեկացնել, թե ինչպես և որտեղից դա անել՝ ինքնուրույն մտածել, նայել գրքեր, հարցնել մեծերին, դիմել համակարգչի օգնությանը, դիտարկել, խորհրդակցել մասնագետի հետ, իրականացնել փորձ և այլն: Ծնողներին ևս պետք է իրազեկել և առաջարկել տանը ստեղծել առանձին անկյուն, աշխատանքին խթանող պայմաններ, ոգևորել երեխային, օգնել անհրաժեշտության դեպքում: Նպատակահարմար է նաև տանել էքսկուրսիա:

Հետազոտության արդյունքում ձեռք բերած տվյալների ընդհանրացումը բավականին բարդ է ու հատկապես տարրական դպրոցում առանց ուսուցչի կամ ծնողի անմիջական միջամտության՝ գրեթե անհնար: Այս փուլը ենթադրում է ստացված տվյալները վերլուծել, ընդհանրացնել, առանձնացնել գլխավորը, ինչպես նաև ընտրել ներկայացնելու եղանակը:

Նախագծի նախապատրասման փուլում աշխատանքն է տարվում ներկայացման ընտրված ձևի շուրջ, իսկ ներկայացման ձևերը բազմազան են ՝ պաստառ, սահիկահանդես, բեմականացում, բաց դաս, միջոցառում և այլն: Ցանկալի է ներկայացման ժամանակ անդրադարձ կատարվի աշխատանքի իրականացման ամբողջ ընթացքին:

Սովորողի ուսումնառության կարևորագույն փուլերից մեկը հետազոտական աշխատանքի պաշտպանությունն է, որի ժամանակ սովորողը սովորում է խոսել իր կատարած աշխատանքի մասին, պաշտպանել սեփական տեսակետը, պատասխանել առաջադրվող հարցերին:

Ինքնուրույն հետազոտական աշխատանքի արդյունքը կարելի է դիտարկել երկու տեսանկյունից: Մի կողմից սովորողը ինքնուրույն ստեղծում է որևէ նյութ, գտնում իրեն հուզող հարցերի պատասխանները, հարստացնում գիտելիքները, մյուս կողմից ուսուցիչը ստանում է ինքնուրույն ստեղծագործող, հետազոտող սովորող: Ինքնուրույն հետազոտական աշխատանքը անգնահատելի փորձ է յուրաքանչյուր սովորողի համար:

Հետազոտական աշխատանքի գնահատման ձևերը պետք է լինեն թափանցիկ և բացատրելի, սովորողը ի սկզբանե պետք է տեղեկացված լինի, թե ինչ սկզբունքով ու չափանիշներով պետք է իրականացվի գնահատումը:

Այսպիսով՝ ինքնուրույն հետազոտական աշխատանքը նպաստում է անձի ինքնազարգացմանը, համապատասխան կարողություններով և ինքնուրույն աշխատելու փորձով օժտված, մտավոր գործունեության հնարներին տիրապետող և համագործակցելու պատրաստ սովորողների մի նոր տեսակի ձևավորմանը:

## Փորձարարական մաս

Սովորողի ինքնուրույնության ձևավորման գործում ինքնուրույն հետազոտական աշխատանքի դերը բացահայտելու համար իրականացվել է հետազոտական աշխատանք տարրական դպրոցի երկրորդ դասարանի սովորողների հետ « Գարունն իմ քաղաքում» թեմայով: Հետազոտական աշխատանքի նպատակն էր ձևավորել ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու, համագործակցելու կարողություններ: Հետազոտական աշխատանքին մասնակցել են երկրորդ դասարանի թվով 19 աշակերտ, ժամկետը սահմանվել է 11 շաբաթ, որի ընթացքում պետք է իրականացվեր հետևյալ աշխատանքները՝

| Ամիսը | Ընթացիկ հաշվետվության ժամանակացույց | Ընտրված տեղանքի կամ ծառի լուսանկարում | Օդի ջերմաստիճանի փոփոխության արձանագրում | Մասնակցություն գյուղատնտեսական աշխատանքների | Այցելություն էյ-Թի- Փի բնապահպանական կենտրոն | Մրգեր և բանջարեղենի արժեքի փոփոխության արձանագրում | Ծաղիկների աճեցում ինքնաշեն ծաղկամաններում |
|---|---|---|---|---|---|---|---|
| Մարտ | 1.03-8.03 | | | | | | |
| | 8.03-15.03 | | | | | | |
| | 15.03-22.03 | | | | | | |
| | 22.03-29.03 | | | | | | |
| Ապրիլ | 29.03-5.04 | | | | | | |
| | 5.04-12.04 | | | | | | |
| | 12.04-19.04 | | | | | | |
| | 19.04-26.04 | | | | | | |
| Մայիս | 26.04-3.05 | | | | | | |
| | 3.05-10.05 | | | | | | |
| | 10.05-17.05 | | | | | | |

Սովորողների հետ քննարկումների արդյունքում ընտրվեց թեման: Առաջ էր քաշվել հետևյալ վարկածները՝

1. Գարունն սկսվելուն զուգահեռ բնությունն աստիճանաբար է փոփոխվում:
2. Մրգերի և բանջարեղենի գինը տարբեր են գարնան սկզբում և վերջում:
3. Օդի ջերմաստիճանը կտրուկ փոփոխությունների է ենթարկվում:

Դասարանը բաժանվեց խմբերի, յուրաքանչյուր խումբ ստանձնեց պատասխանատվություն պլանավորված աշխատանքի իր բաժինը կատարելու: Խմբերից մեկն ընտրելու էր որևէ տեղանք և շարունակաբար լուսանկարելով արձանագրի շաբաթվա կտրվածքով տեղի ունեցող փոփոխությունները: Մյուս խմբի

աշակերտները պետք է իրականացնեին ուսումնասիրություն մրգերի և բանջարեղենի խանութներում՝ արձանագրելով գների փոփոխությունները: Մեկ այլ խումբ պետք է հեռախոսների համապատասխան հավելվածի միջոցով արձանագրեր օդի ջերմաստիճանի փոփոխությունները: Սովորողների մի խումբ էլ աճեցնելու էր բույսեր:

Աշխատանքի 11 շաբաթների ընթացքում յուրաքանչյուր շաբաթվա ավարտին խմբերը ներկայացրել են կատարված աշխատանքները, ուղղորդվել են հետագա աշխատանքների կատարման համար, հանդիպումներ են տեղի ունեցել ծնողների հետ աջակցության ճիշտ կազմակերպման համար, քանի որ սովորողների այս տարիքային խումբը նախատեսված աշխատանքներն ամբողջապես ինքնուրույն չէր կարող իրականացնել:

Որպես ինքնուրույն հետազոտական աշխատանքի պաշտպանություն ընտրվել էր բաց դաս- միջոցառումը, որի ժամանակ յուրաքանչյուր խումբ սահիկաշարի օգնությամբ ներկայացրեց իր կատարած աշխատանքը՝ զուգահեռաբար ներկայացնելով եզրակացությունները:





Հետազոտական աշխատանքի իրականացման ողջ ընթացքում մեծ ոգևորություն էր տիրում դասարանում, ինչպես ծնողներն են հավաստում՝ նաև տանը: Ու քանի որ հետազոտական աշխատանքին զուգահեռ մայրենիից ուսումնասիրվում էր «Գարուն է, սիրուն է» թեմատիկ խումբը, բացի ինքնուրույն աշխատելու որոշակի կարողությունների ձևավորումը, աշակերտները խորությամբ յուրացրին թեման. չէ՞ որ տեսականը և գործնականը փոխլրացնում էին իրար և ամրապնդվում մեկը մյուսով:

Հետազոտական աշխատանքի պաշտպանության ժամանակ նկատելի էր սովորողների խոսքի, մտքերի, կարծիքների ներակայացման հստակությունը, ինքնավստահությունը, մեկը մյուսին լրացնելով իրենց աշխատանքը ոգևորված ներկայացնելը, ինչը իմ կարծիքով մեծ ձեռքբերում է այս տարիքում:

Այսպիսով՝ ուսումնասիրելով ինքնուրույն հետազոտական աշխատանքի կազմակերպման փուլերը և դրանք իրականացնելով գործնականում, կարելի է վստահ ասել, որ տարրական դասարաններում ինքնուրույնության հիմքերը դնելու առումով մեծ դեր ու նշանակություն ունեն ինքնուրույն հետազոտական աշխատանքները:

# Եզրակացություն

Ուսումնասիրելով սովորողների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերի վերաբերյալ գիտական և մեթոդական գրականություն, գործնականում իրականացնելով ինքնուրույն հետազոտական աշխատանք սովորողների կողմից՝ եկանք եզրակացության, որ անձի ինքնուրույնության հիմքերը պետք է դրվի դեռևս տարրական դասարաններում ճիշտ կազմակերպված աշխատանքների միջոցով, այլապես ուսումնառության հաջորդ փուլերում սովորողը կշարունակի կախման մեջ լինել ուսուցչի և ծնողի անմիջական հրահանգներից և աջակցությունից: Ինքնուրույն հետազոտական աշխատանքը նպաստում է անձի ինքնազարգացմանը, համապատասխան կարողություններով և ինքնուրույն աշխատելու փորձով օժտված, մտավոր գործունեության հնարներին տիրապետող և համագործակցելու պատրաստ սովորողների մի նոր տեսակի ձևավորմանը:

Ինքնուրույնությունն ու ինքնուրույն աշխատանքի հմտությունները հենց այնպես չեն առաջանում, դրանք պետք է ձևավորել նպատակաուղղված, համակարգված և հետևողական աշխատանքի միջոցով: Դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը: Սովորողների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար՝ դասից դաս, դասարանից դասարան: Ուսուցման գործընթացում ինքնուրույնության ձևավորումը ներառում է աշակերտների, սովորողների կրկնօրինակման և վերարտադրողական գործողություններից անցում արդյունավետ ինքնուրույն աշխատանքի: Ինքնուրույնության հմտությունների ձևավորումը անձի հետագա զարգացման, կրթության և ինքնակրթության անհրաժեշտ պայմաններից է:

Ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելով տարրական դպրոցի սովորողը ոչ միայն ձեռք է բերում նման աշխատանք կատարելու հմտություն, այլ նաև դառնում է առավել ինքնավստահ, սեփական տեսակետը արտահայտելու և պաշտպանելու, ինքնակազմակերպվելու, սեփական գաղափարներն իրագործելու որակների հիմքն է դրվում:

Այս հետազոտական աշխատանքի նպատակներից էր բացահայտել ինքնուրույն հետազոտական աշխատանքի իրականացման դերը ինքնուրույնության ձևավորման գործում, ինչը բացահայտվեց և հիմնավորվեց փորձնականում կիրառման արդյունքում: Այսինքն՝ վստահ կարելի է ասել, որ նպատակահարմար և արդյունավետ է տարրական դպրոցում կիրառել ինքնուրույն աշխատանքի այս ձևը:

## Գրականության ցանկ


1. Горностаева З.Я “Проблема самостоятельной познавательной деятельности” // Открыт. школа.–1998.№2
2. Ёсипов Б.П. “Самостоятельная работа учащихся на уроках”. – М.: Учпедгиз, 1961.
3. Микельсон Р.М. О самостоятельной работе учащихся в процессе обучения. – М.,1960. – 28.
4. Нильсон О.А. “Теория и практика самостоятельной работы учащихся” - Тал., 1976.
5. Пидкасистый П.И. Самостоятельная познавательная деятельность школьников в обучении. –М.,1980.
6. Пименова Л.М. Воспитание у школьников самостоятельности как черты личности. –Л.,1960.
7. www.infourok.ru

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

# *ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ*

ԹԵՄԱ՝ ԹԵՍՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ: ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԹԵՍՏ

ԿԱՏԱՐՈՂ՝ ՝ Ա. ՁԱԴՈՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. Գ. Թ. Լ. ՄԻՐԱԲՅԱՆ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1.Ներածություն -------------------------------------------------------------------------------------------3

Գլուխ 1:Թեստի տեսակները ---------------------------------------------------------------------------4

Գլուխ 2:Թեստի կառուցման սկզբունքները ---------------------------------------------------------9

Գլուխ 3: Հայտորոշիչ թեստ ---------------------------------------------------------------------------12

Գլուխ 3.1:Փորձարարական մաս---------------------------------------------------------------------13

Եզրակացություն------------------------------------------------------------------------------------------16

Գրականություն-------------------------------------------------------------------------------------------17

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Արդիականություն**. Ժամանակակից աշխարհում ակտիվորեն զարգանում են համակարգչային տեխնոլոգիաները: Այս առումով, հետազոտության նպատակ դնելիս կարևոր է հաշվի առնել յուրաքանչյուր սովորողի անհատականությունը, այսինքն՝ կարևոր է ուսուցման գործընթացում տարբերակված մոտեցումը: Դա կարելի է բացատրել նրանով, որ ոչ բոլոր աշակերտները կարող են հավասարապես յուրացնել ուսուցանվող նյութը: Ինչ վերաբերում է ուսումնական նյութի բովանդակությանը, ապա յուրացման ավելի մեծ էֆեկտի հասնելու համար նպատակահարմար է նյութը ներկայացնել որոշակի մասերով, որոնք փոխկապակցված են: Սովորողների կողմից նոր նյութի յուրացման գործընթացում պետք է լինի փոխհարաբերություն ուսումնական գործընթացի մասնակիցների միջև, որը ենթադրում է համագործակցություն սովորողի և ուսուցչի միջև՝ դժվարության դեպքում. Միաժամանակ ուսուցիչը պետք է ժամանակին ճշգրտումներ կատարի աշակերտի ուսումնական գործունեության մեջ, որպեսզի խուսափի լուրջ սխալներից:

Սովորողին, որևէ առարկայից որոշակի գիտելիքներ յուրացնելուց հետո, ուսուցիչը պետք է գնահատի, իսկ գնահատումը պետք է լինի օբյեկտիվ՝ ցույց տալով սովորողի կողմից ներկայացված ուսումնական նյութի յուրացման աստիճանը:

Վերջերս մանկավարժական պրակտիկայում գիտելիքների, հմտությունների և կարողությունների վերահսկման ավանդական ձևերի հետ մեկտեղ ավելի ու ավելի են կիրառվում թեստավորման տարբեր ձևեր:

Թեստերը ամենաարդյունավետ, տեղեկատվական գործիքներ են, որոնք թույլ են տալիս միաժամանակ լուծել մեծ թվով առաջադրանքներ: Որպեսզի թեստային առաջադրանքը և թեստը արդյունավետ լինեն, դրանք մշակվում են որոշակի կանոններով՝ հիմնվելով թեստոլոգիայի սկզբունքների հիման վրա :

Եթե, ըստ թեստի արդյունքների, յուրաքանչյուր սովորողի համար կատարվող առաջադրանքների կանոնավոր գրանցում է պահպանվում, ապա ուսումնական նվաճումների և բացերի բավականին հստակ պատկեր կստեղծվի ինչպես առանձին սովորողների, այնպես էլ ուսումնական խմբի համար որպես ամբողջություն:Այս ամենը յուրաքանչյուր սովորողի համար կապահովի ուսումնական գործընթացի անհատականացում և ծրագրի արագ ճշգրտում: Ավանդական և թեստային հսկողության ողջամիտ համադրությունը սոովորողների ակտիվության խթանման գործոններից մեկն է:

***Հետազոտական աշխատանքի նպատակն է.***

.ուսումնասիրել թեստի տեսակները և կառուցման սկզբունքները,

***Հետազոտության խնդիրը.***

.լուսաբանել թեստեր կազմելու սկզբունքները

.բացահայտել հայտորոշիչ թեստի կառուցվածքային առանձնահատկությունները,

.կատարել եզրահանգումներ ։

**Հետազոտական աշխատանքի կառուցվածքը.** սույն հետազոտությունը կազմված է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից։Ծավալը 16 տպագիր էջ է։

**ԳԼՈՒԽ1:Թեստ: Թեստի տեսակները:**

**Թեստը (հարցարան) որոշակի նպատակով բարեխղճորեն ընտրված առաջադրանք է կամ առաջադրանքների խումբ, որի նպատակն է հնարավորինս ճիշտ գնահատել սովորողների ձեռքբերումները և արժևորել նրանց ուսումնական գործունեությունը:**

Թեստի միջոցով ստուգվում են սովորողի գիտելիքը, կարողությունները, հմտություններն ու արժեքային համակարգը: Թեստի նպատակն է՝ պարզել, թե սովորողը որքանով է յուրացրել ուսումնական նյութը: Արդյունքներն օգտագործվում են միավորային գնահատման կամ հայտորոշման նպատակով:Ըստ նպատակի թեստը կարող է լինել.

**ամփոփիչ** (առաջադիմության ստուգման) թեստ, որը տրվում է կիսամյակի, կամ յուրաքանչյուր թեմայի վերջում՝ ուսումնական նյութի յուրացման մակարդակը ստուգելու համար, **նախնական, հայտորոշիչ** (դիագնոստիկ)թեստ, որը տրվում է պարբերաբար՝ հայտորոշելու սովորողների թույլ և ուժեղ կողմերը՝ հետագայում ուսուցումը բարելավելու նպատակով,

**տեղակայման** թեստ, որը տրվում է դասընթացի սկզբում՝ սովորողներին տեղակայելու՝ ըստ իրենց գիտելիքի և կարողությունների:

Հարկավոր է թեստային առաջադրանքներում ներառել այնպիսի հարցեր, որոնք սովորողը սովորել է առարկան ուսումնասիրելու արդյունքում, հետևաբար թեստի գործածությունը արդյունավետ է, եթե այն պարունակում է անցած նյութի բովանդակային միջուկը [4, էջ 97,]:

Եթե թեստը խնամքով ընտրված, ուղղորդող ցուցումներով առաջարանքների կամ առանձին հարցերի շարք է, պարզենք, թե ի՞նչ է հարցը.

Հարցը առաջադրանքը կատարելու հանձնարարական է՝ համապատասխան ցուցումներով, որն ակնկալում է պատասխան:

Ինչպիսի՞ն պետք է լինի հարցը:Պարտադիր չէ, որ հարցն ուղեկցվի հարցական նշանով.առաջադրանքի հանձնարարականը կարող է ձևակերպվել նաև որպես անավարտ նախադասություն, հրահանգ: .Կարևոր է, որ պահանջը ձևակերպվի պարզ,հասարակ և միանշանակ:

Հայտորոշիչ թեստը կիրառվում է սովորողների գիտելիքների և մակարդակը նախապես ստուգելու նպատակով:

.Ուսուցման և ուսումնառության գործընթացը հայտորոշելու ու բարելավելու նպատակով:
.Ընդհանուր գիտելիքների ստուգման՝ ընտրության նպատակով/ մասնակցություն օլիմպիադաներին, ԲՈՒՀ-ի ընդունելություն և այլն/:
.Առարկայի չափորոշիչներով և համապատասխան ծրագրերով սահմանված գիտելիքների, հմտությունների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու նպատակով / թեմատիկ գրավոր աշխատանք/:

**Հայտորոշիչ թեստի բնութագրիչ առանձնահատկություններ են.**

կարճ ժամանակի համար է, արագ է, որոշակի է, արագ է ստուգվում և արժևորվում, բոլոր առաջադրանքներն ուղղված են նույն գիտելիքի, կարողության կամ հմտության ստուգմանը, սովորողների մեծ մասի համար թեստը մատչելի է, արդյունքները հեշտ վերլուծելի են:

Թեստի արդյունքները վերլուծելով և մեկնաբանելով՝ կարելի է որոշել աշակերտների հետ հետագա անելիքները, ինչպես նաև ուսուցանվող նյութի առավել ընկալելի մեթոդի ընտրությունը:

**Թեստ կազմելիս պետք է հաշվի առնել մի շարք գործոններ:**

Թեստը պետք է լինի հուսալի, հավաստի և արդյունավետ: Թեստը համարվում է հուսալի, եթե թեստի արդյունքները գրեթե նույնն են տարբեր օրերին նույն խմբին ստուգելու դեպքում, կամ միաժամանակ երկու համարժեք թեստերի տրամադրման դեպքում ստացվում են գրեթե նույն արդյունքները:

Յուրաքանչյուր թեստին կից պետք է մշակվեն գնահատման չափանիշներ: Այդտեղ բացահայտ ներկայացվում են ստուգման կամ ուսումնասիրման համար անհրաժեշտ որակներն ու հարակից պահանջները, որոնք պետք է դրսևորի առաջադրանքները կատարող սովորողը: Կատարված աշխատանքի արդյունքներն ստուգվում են գնահատման կամ հետազոտման և ուսուցանման նպատակով:

Թեստի արդյունքներն ավելի հուսալի են, եթե այն նախատեսվում է ավելի քիչ ուսումնական որակներ կամ ձեռքբերումներ ստուգելու համար:

Թեստը պետք է լինի հավաստի, այսինքն, ստուգի այն գիտելիքը, կարողությունն ու հմտությունը, որը նախատեսված է ստուգել: Օրինակ՝ լեզուներում, եթե ուզում ենք ստուգել գրելու կամ կարդալու որևէ հմտություն, ապա ընտրված վարժությունը պետք է ստուգի միայն այդ հմտությունը: Կարևոր է, որպեսզի հավաստի լինի վարժության տիպը կամ ձևաչափը: Այն պետք է ծանոթ լինի սովորողներին:

Թեստի արժևորման և կատարելագործման համար առավել հիմնարար բնութագրիչ է հավաստիությունը, քանի որ այն իր նշանակությամբ բացարձակ որակ է, որով արժևորվում և որակապես բարելավվում է թեստը:Թեստի արդյունքում ստացված թվանշաններն ինքնին այնքան հետաքրքրական չեն, որքան դրանց ինչ-որ բնութագրիչներով օժտված լինելը և այն, թե դրանց մեկնաբանություններից ինչ հետևություններ են արվում սովորողների, սովորելու, դասավանդման, կրթակարգի, չափորոշչի և ծրագրերի մասին: Թեստի կրթակարգային կամ չափորոշչային հավաստիությունը պայմանավորված է նրանով, թե որքանով են չափորոշչային պահանջներն արտահայտված գնահատման մեջ՝ առաջադրանքների միջոցով:

Թեստը պետք է լինի իրագործելի թե մարդկային ռեսուրսների, թե ֆինանսական, թե տեխնիկական, և թե ժամանակի առումներով:

Թեստը պետք է լինի արդյունավետ: Արդյունավետ թեստը ենթադրում է նվազագույն առաջադրանքների քանակով և ժամանակի ծախսով առավելագույն արդյունքի ապահովում: Բովանդակության տեսակետից արդյունավետ է այն թեստը, որն ընդգրկում է ուսումնական ծրագրով նախատեսված հիմնական կարևոր նյութը՝ ամփոփ ներկայացված որպես ծրագրային պարտադիր միջուկ: Թեստն արդյունավետ է, եթե բարդության աստիճանը համապատասխանում է թեստավորվողի պատրաստվածության մակարդակին: Համապատասխանել նշանակում է, որ միջին պատրաստվածություն ունեցող սովորողի համար թեստը պետք է ոչ շատ հեշտ և ոչ էլ շատ դժվար լինի: Այն պետք է լինի միջին բարդության:Թեմատիկ և կիսամյակային գրավոր աշխատանքներում պետք է ներառվեն չափորոշչային բոլոր մակարդակներին համապատասխան առաջադրանքներ, ինչպես նաև համեմատաբար դժվար առաջադրանքներ, որոնք պահանջում են նյութի խորքային յուրացում, բարդ և անծանոթ իրադրություններում կողմնորոշվելու կարողություն, գիտելիքներն ստեղծագործաբար կիրառելու հմտություն:

Թեստում կիրառվող առաջադրանքների տեսակները.

Թեստը բաղկացած է առաջադրանքներից: Առաջադրանքի պահանջ համարվում են տարբեր հարցադրումները: Կարևոր է, որ առաջադրանքը ձևակերպվի պարզ, հստակ և միանշանակ:

Թեստը կազմելիս անհրաժեշտ է իմանալ, թե ինչն ենք չափում(սովորողի գիտելիքը, կարողությունը, հմտությունը), և ինչ նպատակով ենք չափում: Առաջադրանքների տեսակներն ընտրվում են նշված պահանջներին համապատասխան: Թեստում ընդգրկված յուրաքանչյուր առաջադրանք պետք է օգնի չափման գործընթացին՝ տարբերակելով սովորողների ունակությունները:

Թեստում կարող են ներառվել առաջադրանքների տարբեր տեսակներ, որոնցից են՝

- պատասխանի ընդարձակ շարադրմամբ,
- ճիշտ պատասխանի ընտրությամբ, կարճ պատասխան պահանջող,
- ապացուցում պահանջող,
- գործնական, կիրառական նշանակություն ունեցող,
- կառուցվածքի փոփոխություն պահանջող,
- գծապատկերի կազմման պահանջով,
- համապատասխանեցման պահանջով,
- բաց թողածը լրացնելու պահանջով,

• ստեղծագործական մոտեցում պահանջողկամ դրանց համադրմամբ:

Թեստը բաղկացած է առաջադրանքներից: Առաջադրանքի պահանջ համարվում են տարբեր հարցադրումները: Կարևոր է, որ առաջադրանքը ձևակերպվի պարզ, հստակ և միանշանակ:

Սովորողներին ուսուցչի կողմից առաջադրվող հարցերը կարող են լինել.

• գիտելիքների յուրացումը ստուգող հարցեր, որոնք ճանչողական ցածր մակարդակ են պահանջում,աշակերտը թվարկում է, սահմանում է, նկարագրում է (ո՞վ, ե՞րբ, որտե՞ղ),

• ընկալումն ու կիրառման հմտությունը ստուգող հարցեր, որոնք միջին մակարդակ են ապահովում, աշակերտը ամփոփում է, մեկնաբանում և գիտելիքը կիրառում,

• վերլուծությունը, համադրումը ևգնահատումը ստուգող հարցեր, որոնք ճանաչողական բարձր մակարդակ են ենթադրում, աշակերտը վերլուծում է, առանձնացնում, դասակարգում, համադրում, ընդհանրացնում, գնահատում և արժևորում: Բարձր մակարդակի համար տրվող հարցերի ընթացքում ուսուցիչը շեշտ ը պետք է դնի մաթեմատիկական մտածողության զարգացման վրա: Որպեսզի աշակերտները կարողանան դատողություններ անելու հմտություններ ձեռք բերել, անհրաժեշտ է կիրառել այնպիսի հարցեր, որոնց դեպքում աշակերտը հնարավորություն ունենա համեմատել, համադրել, վերլուծել, հիմնավորել:[1, էջ 6]

Թեստի բովանդակությունը որոշվում է մի շարք մանկավարժական սկզբունքների հիման վրա՝ թեստի բովանդակության համապատասխանություն թեստավորման նպատակներին. ստուգվող գիտելիքների նշանակությունը որոշելը. բովանդակության և ձևի փոխհարաբերությունները, թեստային առաջադրանքների իմաստալից ճիշտությունը. ակադեմիական կարգապահության բովանդակության ներկայացուցչականությունը թեստի բովանդակության մեջ. թեստի բովանդակության համապատասխանությունը գիտության ներկա վիճակի մակարդակին. թեստի բովանդակության բարդությունը և հավասարակշռությունը, բովանդակության հետևողականություն և բազմազանություն: Ոչ պակաս կարևոր է թեստի տեսական և գործնական առաջադրանքների հարաբերակցությունը, ինչպես նաև հարցի ու պատասխանի տառատեսակի և գույնի ընտրությունը [3, էջ 56]:

## ԳԼՈՒԽ 2: ԹԵՍՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Թեստ մշակելիս պետք է ուշադրություն դարձնել, թե.

.ու՞մ պետք է ստուգել,

.ինչպիսի՞ գիտելիքներ և հմտություններ ենք ստուգելու ,

.ինչպե՞ս ենք օգտագործելու արդյունքները,

.ի՞նչ որոշումներ ենք կայացնելու արդյունքների հիման վրա :

Թեստ կազմելիս շատ կարևոր է պարզ պատկերացնել այն ուսումնական նպատակը, որի համար այն նախատեսված է: Ամենադանդաղաշարժ մարդը, եթե նա միայն տեսադաշտից չի կորցնում նպատակը, գնում է ավելի արագ, քան նա, ով դեգերում է աննպատակ:-**Լեսինգ**

Թեստերի կազմման գործընթացում գոյություն ունեն ճանաչողական չորս մակարդակներ. I մակարդակում տեղի են ունենում ինֆորմացիայի ընկալում, ծանոթացում առարկային: Նրա նպատակն է օբյեկտների , երևույթների ճանաչումը:

II մակարդակում կատարվում է ոչ միայն ինֆորմացիայի ընկալում, այլև նրա մեխանիկական արտապատկերումը, որի նպատակն է ստացված ինֆորմացիայի փոխանցումը, վերապատմումը:

III մակարդակում ինֆորմացիան ընկալվում, արտապատկերվում,վերլուծվում, գիտակցվում է և դրա հիման վրա ընդունվում:III մակարդակի նպատակն է ստացված գիտելիքների գործնական կիրառումը զանազան իրավիճակներում:

IV մակարդակում ստացված գիտելիքները ոչ միայն կիրառվում են, այլև դրանց հիման վրա ստեղծվում են նորերը:Չորրորդ մակարդակի բնորոշ հայտանիշը նոր գիտելիքների ստեղծագործական վերարտադրումն է:

**Ճանաչողական գործունեության մակարդակներին համապատասխան՝ կարելի է առանձնացնել ստուգիչ առաջադրանքների չորս տեսակ**:

I	տեսակին են պատկանում այն առաջադրանքները, որոնք օժանդակում են ինֆորմացիայի յուրացումը ծանոթության մակարդակում ։

II	տեսակին պատկանում են այն առաջադրանքները, որոնք ենթադրում են սովորողի կողմից ինֆորմացիայի յուրացումը և վերարտադրումը պարզ տրամաբանական գործողությունների մակարդակով:

III	տեսակին են պատկանում այն առաջադրանքները, որոնք ինֆորմացիայի յուրացման համար պահանջում են համեմատաբար բարդ տրամաբանական գործողություններ և ոչ ստանդարտ դրույթներում գործելու ունակություն:

IV	տեսակը պրոբլեմային առաջադրանքներ են, որոնք զարգացնում են արդյունավետությունը, ստեղծագործական գործունեությունը, այդ թվում՝ բարդ իրավիճակների վերլուծության, էվրիստական որոնման, պրոբլեմային հարցերի ձևավորման առաջադրանքները:

Այդպիսի առաջադրանքները կարող են լինել մի քանի սկզբունքորեն ճիշտ և չափանմուշից չնչին տարբերվող պատասխաններ:Դրանից բացի շատ կարևոր է իմանալ, թե սովորողը ինչպես է հանգել այս կամ այն լուծմանը, պարզել նրա դատողությունների ընթացքը, ծանոթանալ նրա հաշվարկներին և կատարած ենթադրություններին: Այսպիսի պրոբլեմային առաջադրանքների կատարման և գնահատման համար օգտագործում են հիմնականում գրավոր աշխատանքներ: Պրոբլեմային առաջադրանքների թեստային ձևով մշակումը և սովորողների ունակությունների ստուգման ավտոմատացումը բարդ գիտամեթոդական խնդիրներ են, որի լուծման ճանապարհներից մեկը համակարգչային իմիտացիոն գործարար խաղերի օգտագործումն է: Իսկ ինչպիսի՞ն պետք է լինի թեստային առաջադրանքները: Գրավոր և բանավոր ստուգարքների և քննությունների ժամանակ օգտագործվող ավանդական հարցերը և խնդիրները, որպես կանոն, չեն կարող առանց փոփոխության կիրառվել թեստերի մեջ: Դրանց համար մշակվում են հատուկ առաջադրանքներ թեստային ձևով: Այդ աշխատանքը, ըստ աշխատատարության, դժվարության և կարևորության, կարելի համեմատել ուսումնական նոր առարկայի դասագրքի փուլ առ փուլ մշակման հետ: Փորձը ցույց է տալիս, որ կազմված առաջադրանքների մի զգալի մասը բազմակի վերամշակվում և խմբագրվում է: Սովորողների տարբեր խմբերի վրա ստուգումների արդյունքում հանվում են

ամենահասարակ, ամենաբարդ և վատ ձևակերպված առաջադրանքները: Ըստ սովորողի կողմից կատարվող գործողությունների բովանդակության՝ առաջադրանքները կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

.մեկ պատասխանի ընտրության,

.մի քանի պատասխանի ընտրության,

.երկու բազմությունների տարրերի մեջ համապատասխանության հաստատման/որոնման/, .առաջարկվող տարրերի շարքում ճիշտ հերթականության հաստատման, .առաջարկվող տարրերի նպատակային դասավորման,

.բացթողումների լրացման,

.տեղադրման, .պատասխանը կազմելու,

.պատասխանը հաշվելու:

Թեստային առաջադրանքները կարող են լինել՝

.հարցական,

.հաստատողական,

.տեքստային,

.աղյուսակային,

.գրաֆիկական և այլն:

Թեստային առաջադրանքների ձևի ընտրությունը կախված է ուսումնական առարկայից, թեստի նշանակումից, համակարգչային թեստավորման հնարավորություններից և այլն: Ըստ անվանման՝ միևնույն ուսումնական առարկան տարբեր մասնագիտության ուսանողների համար անցնում են տարբեր ծավալներով:Դրանցից էլ կախված է նրանց համար թեստային տարբեր առաջադրանքներ մշակելու հարցը:Սովորաբար առավելություն են տալիս առաջադրանքների այն ձևերին, որոնց մեջ ճիշտ պատասխանը գուշակելու հավանականությունը մոտ է կամ հավասար է զրոյի: Քիչ հավանական է հաշվումներ պահանջող առաջադրանքների ճիշտ պատասխանների գուշակումը: Բավականին դժվար է նաև համապատասխանության հաստատման, ճիշտ հաջորդականության, ըստ ինչ-որ հայտանիշի դասավորման և լրացման առաջադրանքների ճիշտ պատասխանները միանգամից գուշակելը:

Ամեն դեպքում մշակված թեստային առաջադրանքները պետք է ապահովեն սովորողների գիտելիքների գնահատման օբյեկտիվությունը և հուսալիությունը: Թեստային առաջադրանքները պետք է բավարարեն հետևյալ պահանջները՝

.առարկայական մաքրություն, /ուսումնական առարկաների չհատվելու պահանջը, այսինքն՝ առաջադրանքը պետք է պարունակի միայն տվյալ ուսումնական առարկայի վերաբերվող հարցեր/, .բովանդակության տրամաբանական ճշտություն, .լոկալ անկախություն, .արդյունավետություն և այլն:

## ԳԼՈՒԽ 3: ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԹԵՍՏ

**Հայտորոշիչ թեստը առաջադրանքների հատուկ կազմակերպված համակարգ է, որը թույլ է տալիս ոչ միայն որոշել սովորողի գիտելիքների, հմտությունների և կարողությունների մակարդակը և դժվարություններ առաջացնող թեմաները, այլև օգնում է պլանավորել և արդյունավետ կազմակերպել ուսումնական գործընթացը** :

Մենք արդեն գիտենք, որ հանրակրթության պետական նոր չափորոշիչով սահմանվել է սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման նոր սկզբունքներ, ներդրվել է գնահատման նոր մեթոդաբանություն: Ըստ հանրակրթության պետական նոր չափորոշիչի հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացվում է միավորային և ձևավորվող գնահատում, իսկ տարրական դպրոցում միայն ձևավորող գնահատում: Ներկայացնեմ ձևավորող գնահատման մեթոդաբանությունը հայտորոշիչ թեստի մշակման և կիրառման համատեքստում, որը հնարավորություն է տալիս ուսուցչին և սովորողին պարզելու, որտեղ են գտնվում իրենց ուսումնական գործընթացը, ո՞ր ուղղությամբ և ինչպե՞ս պետք է շարժվել լավագույն արդյունքների հասնելու համար:

**Հայտորոշիչ թեստի բնութագրիչ առանձնահատկություններ են.**կարճ ժամանակի համար է, արագ է, որոշակի է, արագ է ստուգվում և արժևորվում, բոլոր առաջադրանքներն ուղղված են նույն գիտելիքի, կարողության կամ հմտության ստուգմանը, սովորողների մեծ մասի համար թեստը մատչելի է, արդյունքները հեշտ վերլուծելի են:

ՀԱՅՏՈՐՈՇՈՒՄԸ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է .

նյութի ուսումնասիրումից առաջ

.նյութի ուսումնասիրման ընթացքում

.նյութի ուսումնասիրումից հետո

ՀԱՅՏՈՐՈՇՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Հետադարձ կապի ապահովման միջոցով ուսուցիչը և աշակերտը բարելավում են իրենց գործունեության որակը:

Ի՞ՆՉ Է ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԹԵՍՏԸ .

Հայտորոշման ձևերից մեկն է .հիմնական նպատակն է որոշել՝ արդյոք սովորողն ընկալե՞լ է ուսումնասիրվող նյութը:

Ի՞ՆՉ ԽՆԴԻՐ Է ԼՈՒԾՈՒՄ ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԹԵՍՏԸ

Թեստի միջոցով ուսուցիչը կարողանում է բացահայտել աշակերտի ուժեղ և թույլ կողմերը:Վեր են հանվում բացթողումները և մշակվում դրանց վերացման ուղիները: Հայտորոշիչ թեստով ստուգվում են մեկ կամ երկու հիմնական գիտելիքներ կամ հմտություններ:Առաջադրանքներն ունեն որոշակի ուղղվածություն և վերաբերվում են նույն թեմային:Բարդության աստիճանը պետք է լինի պարզից միջին, այնպես, որ սովորողների մեծ մասի կողմից թեստը հաղթահարվի:Տևողությունը համապատասխանաբար կարճ է՝ մինչև 15րոպե:

**ԳԼՈՒԽ 3.1: Փորձարարական մաս**

Ընթացիկ հայտորոշիչ թեստի և հատկորոշիչների օրինակ.

Դասարան 4-րդ

Նպատակը՝ լեզվական գիտելիքների ստուգում

Առաջադրանքների ուղղվածությունը՝ ուղղագրություն, բառապաշար

Վերջնարդյունքները՝ գիտելիքը կիրառելու կարողություն

Բարդության աստիճանը՝ պարզ

Առաջադրանքների տիպը `մեկ ճիշտ պատասխանով համապատասխանեցում

Հարցերի քանակը՝ երկու

Առաջադրանքներին հատկացվող ժամանակը՝ 10րոպե

ԹԵՍՏ 1

1.Արտագրի՞ր ընդգծված բառերը՝ դատարկ վանդակի փոխարեն լրացնելով բաց թողնված տառը. կարապների .րամ ընձու.տի նկար , գեղեցիկ արևածա. դար.ին Սարգիս:

2.Գտիր և համապատասխանեցրու տրված բառերի հականիշները.

բարձր մեծ ուժեղ գեղեցիկ սիրուն երկար կարճ

թույլ գեղեցիկ ցածր

Քանի որ նման թեստեր հաճախակի կարելի է կիրառել, կարևոր է մշակել ստուգման համար արագ և արդյունավետ տարբերակներ:Գործընթացը մեթոդապես ճիշտ կիրառելու դեպքում հնարավոր կլինի խնայել ժամանակը և ջանքերը:Օրինակ՝ ուսուցիչը առաջադրանքների պատասխանները գրել գրատախտակին կամ ցուցապաստառին և սովորողներին ցույց տալ թեստի կատարման ավարտից հետո:Սովորողները հնարավորություն կունենան համեմատելու իրենց աշխատանքի արդյունքները ճիշտ պատասխանների հետ և ինքնուրույն շտկել բացթողումները:Ստուգման տարբերակ է նաև դասընկերոջ հետ աշխատանքների փոխանակումը, փոխադարձ ստուգումը և քննարկումը:Ուսուցիչը կարող է թեստում ներառված բովանդակությունը ներկայացնել մի փոքր այլ տարբերակով և սովորողները ոչ թե մեխանիկորեն, այլ մտավոր աշխատելով հասկանան, ճիշտ են կատարել աշխատանքը թե՝ ոչ:

ԹԵՍՏ 2

1.Ստուգվող բառերը գտի՞ր նախադասություններում:

.Կռունկները երամ-երամ չվեցին տաք երկրներ:

.Մեր կենդանաբանական այգում ընձուղտներ չկան:

.Ցուցահանդեսում ներկայացված են հայ դարբինների գեղեցիկ աշխատանքները:

. Այսօր արևածագը 6:18 րոպեին էր:

2.Հականիշ բառերը կարելի է գործածել նույն նախադասության մեջ:

.Գիշեր- ցերեկ լսվում է գնացքների անիվների ձայնը:

.Վարդավառին մեծ ու փոքր դուրս են գալիս փողոց:

.Երեխաները Զատիկի ծառից կախեցին լայն ու նեղ ժապավեններ:

Հայտորոշիչ թեստի միջոցով ուսուցիչը յուրաքանչյուր սովորողի կողմից տվյալ դասանյութի յուրացման աստիճանը պարզելուց բացի, իր համար հստակեցնում է ուսուցման արդյունավետությունը:

Աշխատանքը վերլուծելիս անհրաժեշտ է յուրաքանչյուր սովորողի ներկայացվի նյութի յուրացման իր մակարդակը: Օրինակ՝ «Դասանյութը բավարար չափով յուրացված է, բայց անծանոթ իրավիճակում կիրառման ժամանակ կան որոշ դժվարություններ» և այլն: Այդ վերլուծումները և մեկնաբանությունները պետք է այնպես արվեն, որ օգնեն աշակերտին բա րելավելու իր արդյունքները:

Այսպիսով, թեստերի միջոցով գիտելիքների ստուգումը ենթադրում է ուսուցչի հետևողական արձագանք աշակերտի կատարած  աշխատանքին ինչպես ամբողջ դասի ընթացքում, այնպես էլ առարկայի ուսումնասիրության ամբողջ ժամանակահատվածում [3, էջ 20]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով մասնագիտական գրականություն և ուսումնամեթոդական ձեռնարկներ՝ հանգում են հետևյալ եզրակացությանը

- թեստը միտված է բարելավված ուսուցմանն ու ուսումնառությանը, ուստի թեստ կազմելիս պետք է հաշվի առնել՝ ու՞մ պետք է ստուգել, ինչպիսի՞ գիտելիքներ և հմտություններ ենք ստուգելու, ինչպե՞ս ենք օգտագործելու արդյունքները, ի՞նչ որոշումներ ենք կայացնելու արդյունքների հիման վրա :

-հայտորոշիչ թեստը հայտորոշման գործիք է , որի հիմնական նպատակը ուսուցման փուլի սկզբում կամ ընթացքում նյութի յուրացման աստիճանը որոշելն է՝ սովորողների կարիքները հստակեցնելու և ուսուցման գործընթացը պլանավորելու և կազմակերպելու համար,

-հայտորոշիչ թեստը տրվում է աշակերտին հետադարձ կապի հաստատման նպատակով, ուստի շատ է կարևորվում գրավոր կամ բանավոր եղանակով ուսուցչի արած հետևությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Ն. Մայորով , Կրթական համակարգի համար թեստեր ստեղծելու տեսություն և պրակտիկա. 2001:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարություն, կրթության ազգային ինստիտուտ, գիտամեթոդական ամսագիր, Մաթեմատիկան դպրոցում, N 1, 2012:

3. Չելիշկովա, Մ. Բ. Մանկավարժական թեստերի նախագծման տեսություն և պրակտիկա, 2002:

4.Ս. Հայրապետյան, Կ. Նազարյան, Զ. Տոնոյան, Սոցիալական հավասարությունը դպրոցում, 2020:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

## Պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

# *ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ*

ԹԵՄԱ ԱՆՀԱՏԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ՄՈՏԵՑՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

ԿԱՏԱՐՈՂ՝ Գ. ԴԱՎԹՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. Գ. Թ. Լ. ՄԻՐԱՔՅԱՆ

*ՎԱՆԱՁՈՐ 2023*

ԲՈՎԱՆԴԱԿԱՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……………………………………………………………………………………3

Գլուխ1:Գիտական ակնարկ:Անհատակողմնորոշիչ դաստիարակության տեխնոլոգիաները տարրական դպրոցում……………………………………………………………………………4

ԳԼՈՒԽ2:Անհատակողմնորոշիչ մոտեցում կրտսեր դպրոցականի ուսումնադաստիարակչական գործընթացում……………………………………………………………………………………7

ԳԼՈՒԽ 3:Անհատակողմնորոշիչ դաստիարակության սկզբունքների էությունը տարրական դպրոցում……………………………………………………………………………………9

ԳԼՈՒԽ 4:Կոմպետենտություն………………………………………………………………12

Եզրակացություն……………………………………………………………………………14

Գրականություն……………………………………………………………………………15

**Ներածություն**

Հետազոտության արդիականությունը: Այսօր չափազանց արդիական են աշակերտակենտրոն, անհատակողմնորոշված դաստիարակության հայեցակարգերը:Ըստ անհատակողմնորոշիչ դաստիարակության սկզբունքների՝ անհրաժեշտ է ապահովել սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերումը՝ շեշտադրելով ուսումնադաստիարակչական գործընթացում նրանց անձնային որակների ձևավորումը, աշակերտներին ընդունելով որպես ինքնագնահատման, ինքնիրացման և ինքնակատարելագործման ակտիվ սուբյեկտներ:

Ժամանակակից պայմաններում, երբ քաղաքակիրթ հասարակության առաջատար գաղափարը անձի հաստատումն է որպես գոյության բարձրագույն արժեք, կրթությունը պահանջում է ներդաշնակ անհատականության զարգացում, նրա հումանիստական կողմնորոշումների, հոգեբանական աջակցության և հոգեբանական առողջության վերաբերյալ: Ուստի, ժամանակակից մանկավարժության զարգացման հիմնական միտումը կրթական գործընթացին, անձին ուղղված բնույթ տալն է:

Վ.Ա.Սուխոմլինսկին գտնում էր, որ երեխային աջակցելու, նեցուկ լինելու համար մանկավարժն իր մեջ պետք է պահպանի մանկության զգացողությունը, պետք է ճանաչի իր սաներին, իմաստուն վերաբերմունք ցուցաբերի երեխայի արարքների նկատմամբ, հավատա երեխային, ամենագլխավորը՝ չկոտրի մանկան անհատականությունը, այլ ուղղի և ուղղորդի նրա զարգացումը՝ չմոռանալով, որ երեխային նույնպես ներհատուկ է և ինքնաճանաչողության, և ինքնաիմաստավորման, և ինքնադաստիարակության ձգտում մը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է.

.ուսումնասիրել մեթոդական գրականություն և բացահայտել անհատակողմնորոշիչ մոտեցման կարևորությունը ուսուցման և դաստիարակության գործընթացում,

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ.

.նկարագրել անհատակողմնորոշիչ մոտեցման արդյունավետությանը միտված տեխնոլոգիաներ, .լուսաբանել անհատակողմնորոշիչ մոտեցման կարևորությունը,

.կատարել եզրահանգումներ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ:Սույն հետազոտությունը կազմված է ներածությունից, 4 գլխից, եզրակացությունից և գրականության ցանկից:Ծավալը 15 տպագիր էջ է:

**Գլուխ1:Գիտական ակնարկ:Անհատակողմնորոշիչ դաստիարակության տեխնոլոգիաները տարրական դպրոցում**

Այն մանկավարժը, ով չի կաշկանդում, այլ ազատում է, չի ճնշում, այլ բարձրացնում է, չի խեղաթյուրում, այլ ձևավորում է, չի թելադրում, այլ սովորեցնում է, ոգեշնչման շատ պահեր է ապրում երեխայի հետ միասին: Յ. Կորչակ

Նշանավոր հայ մանկավարժների հայացքներում միշտ էլ արծարծվել են այնպիսի մոտեցումներ, որոնք համապատասխանում են անձնակողմնորոշիչ ուսուցման սկզբունքներին և գաղափարներին: Այսպես, երեխային ակտիվ գործելու հնարավորություն տալու, հակումները և կարողությունները խթանելու, անհատական և տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելու հարցերին են անդրադարձել Հ. Երզնկացին, Դ. Տաթևացին, Հ. Ալամդարյանը, Խ. Աբովյանը, Ղ. Աղայանը, Հ.Հինդլյանը, Մ Մանդինյանը, Դ. Պերպերյանը և այլոք: Ժամանակակից մանկավարժներից այս հիմնախնդիրը կարևորել են Լ. Ասատրյանը, Ա.Թոփուզյանը, Ի.Կարապետյանը, Ջ.Գյուլամիրյանը և այլոք: Անձնակողմնորոշված կրթադաստիարակչական գործընթացի հիմնական բնութագրիչներն են՝

-կրթադաստիարակչական գործընթացի կենտրոնում անձն է,

-կրթադաստիարակչական գործընթացը հարմարեցված է երեխայի պահանջմունքներին և հնարավորություններին,

-խթանվում է երեխայի զարգացումը,

-ապահովված է դաստիարակության գործընթացի հուսալի հայտորոշումը,

-ստեղծված է համագործակցային մթնոլորտ և ստեղծագործական միջավայր: Ըստ անձնակողմնորոշված դաստիարակության հայեցակարգի՝ կրտսեր դպրոցականը պետք է լինի՝ ---

-ազատ,

-ակտիվ,

-իրեն և իր շրջապատը հարգող,

-համագործակցող,

-նախաձեռնող,

-ստեղծագործ և այլն:

Ըստ անհատակողմնորոշված դաստիարակության հայեցակարգի՝ տարրական դպրոցի ուսուցչի կարևոր որակներն են՝

-հասկանալ երեխային,

-ճանաչել երեխայի առանձնահատկությունները և ընդունել նրա եզակիությունն ու բարձրարժեքությունը,

-երեխային ընդունել այնպիսին, ինչպիսին նա կա:

Անհատակողմնորոշիչ դաստիարակության տեխնոլոգիան միտված է կրտսեր դպրոցականի անձնային որակների ձևավորմանը, նրա ընդհանուր զարգացմանը ոչ թե ինչ-որ մեկի պատվերով, այլ բնահարմարության սկզբունքով: Հասկանալ երեխաներին նշանակում է ներթափանցել նրանց ներաշխարհ, ճանաչել և ընդունել նրանց ինքնատիպությունը, իմանալ և հաշվի առնել նրանց առանձնահատկությունները, հետաքրքրությունները և այլն: Այս գործընթացի իրականացումն ուսուցչից պահանջում է սովորողների նկատմամբ ցուցաբերել մանկավարժական օգնություն, աջակցություն: Սրանք անհատակողմնորոշիչ դաստիարակության տեխնոլոգիայի առանցքային հասկացություններն են: Աջակցությունը ուսուցչից առաջին հերթին պահանջում է երեխային հասկանալու կարողություն:

Մանկավարժության պատմության մեջ գոյություն են ունեցել մի շարք դպրոցներ, որոնք աշխատել են որոշակի գիտատեսական հիմունքներով և ունեցել են իրենց տեսական բազան ու առանձնահատկությունները: Դրանց թվին է պատկանում 20-րդ դարի վրացի մանկավարժ և հոգեբան Շալվա Ամոնաշվիլու «Կյանքի դպրոցը,, որի հիմքում ընկած է անձնակողմնորոշված դաստիարակությունը: Նրա ողջ մանկավարժական գործունեությունը նվիրված է հատկապես տարրական դպրոցին և կրտսեր դպրոցականի դաստիարակությանը: «Երեխաներին պետք է սիրել ամբողջ սրտով և նրանց այդպես սիրելու համար պետք է սովորել նրանցից, ինչպես հարկն է դրսևորել այդ սերը: Դպրոցի յուրաքանչյուր օր, յուրաքանչյուր դաս պետք է մանկավարժի կողմից նվեր լինի երեխաներին: Մանկավարժի հետ յուրաքանչյուր հանդիպում պետք է երեխային ուրախություն և լավատեսություն ներշնչի,, [1,էջ 257]: Ըստ Շ.Ա.Ամոնաշվիլու՝ մանկավարժական աջակցությունը խարսխվում է հետևյալ երեք սկզբունքների վրա՝

-սիրել երեխային,

-մարդկայնացնել այն միջավայրը, որտեղ նա ապրում է,

-երեխայի մեջ ապրել սեփական մանկությունը:

Շ.Ամոնաշվիլու «Կյանքի դպրոցի,, հիմնական նպատակը երջանիկ մարդու, ազնիվ անձնավորության, ազատ քաղաքացու ձևավորումն է: «,Կյանքի դպրոցը,, ստեղծագործական կրթօջախ է, ուր տեղ չունեն կոպտությունը, պատիժները, բռնությունը, ուր չկան վատ կամ ետ մնացող աշակերտներ, սա ինքնահաստատման ճանապարհ է, որը երեխաներին տանում է հաջողությունից դեպի նոր հաջողություններ:

Վալդորֆյան մանկավարժությունը աշխարհի մեծագույն այլընտրանքային մանկավարժական շարժումներից մեկն է: Նրա նպատակը յուրաքանչյուր երեխայի բնածին կարողությունների զարգացումն է և սեփական ուժերի նկատմամբ հավատի ամրապնդումը: Այս ամենը նրան պետք է գալու հետագա հասուն կյանքում: Վալդորֆյան մանկավարժության հիմնական սկզբունքներն են՝ -մարդակենտրոնություն, երեխայի կրթությունը նրա պահանջմունքների հետևանքն է, ոչ թե այս կամ այն հասարակության սոցիալ-հասարակական պահանջը,

-մարդու կազմվածքի, կառուցվածքային բոլոր տարրերի (մարմին, զգացմունք, բանականություն և այլն) ներդաշնակ զարգացումը: Ռ. Շտայների մանկավարժության գլխավոր հատկանիշը սովորողների վրա ուղղակի ազդեցության բացառումն է՝ ուսուցման ու դաստիարակության անընդհատ հուզական ոլորտի ձևավորմամբ:

Վալդորֆյան դպրոցին հատուկ են ջերմ մթնոլորտը, ազնվությունը, փոխադարձ հարգանքն ու վստահությունը, ուսուցչի կողմից կողմնապահ վերաբերմունքի բացակայությունը, գնահատականի բացառումը՝ որպես սովորողներին ճնշելու միջոց, ուսումնական գործընթացի հուզական հագեցվածությունը:

Ռ.Շտայների մանկավարժության էությունը ոչ միայն մեծերի կողմից հասարակական փորձի փոխանցումն է երեխաներին, այլև նրանց ներդաշնակ, համակողմանի զարգացումը՝ տարիքային տարբեր փուլերում անձի ներքին պահանջմունքներին համապատասխան, ուղղված անհատի ազատ և ստեղծագործական ինքնորոշմանը: Նա հավատում էր, որ կրթությունը պետք է բավարարի երեխայի փոփոխվող պահանջմունքները, նրա ֆիզիկական, մտավոր և հուզական զարգացմանը համապատասխան: Նա վստահ էր, որ այդ ամենը կօգնի երեխային լիակատար օգտագործել իր ողջ ներուժը նպատակին հասնելու համար: Ռ. Շտայների մանկավարժության առանձին տարրեր նույնիսկ տարբեր խնդիրներով երեխաների հետ աշխատելիս օգնում են գտնել յուրաքանչյուր

երեխայի անհատական զարգացման ինքնատիպ լուծումներ՝ ընդլայնելով նրա վերականգնման և սոցիալական հարմարման հնարավորությունները:

Վալդորֆյան մանկավարժությունն այլընտրանքային մանկավարժական համակարգ է, որ հիմնված է ինքնազարգացման մեթոդների, մտածողության և գիտակցության վրա: Ռ. Շտայներն ու նրա հետևորդներն արմատապես փոխեցին դպրոցականների կրթության ձևերն ու բովանդակությունը: Նրանք ստեղծեցին դպրոց, որի հիմքում նախ և առաջ ընկած էր երեխաների ներդաշնակ զարգացումը, գեղագիտական դաստիարակությունը, պրակտիկ հմտությունները և շրջապատող աշխարհի ընկալումը:

Մարդու զարգացման գործընթացում առանձնացնում են ընդհանուրը և անհատականը: Ընդհանուր զարգացումը հատուկ է տվյալ տարիքային խմբի բոլոր երեխաներին: Իսկ այն, ինչ հատուկ է առանձին մարդուն, որոշվում է իբրև անհատական հատկանիշ: Անհատականությունը բնութագրվում է անձի մտավոր, կամային, բարոյական, սոցիալական այլ հատկանիշների միասնությամբ, որոնցով էլ տվյալ երեխան տարբերվում է մյուսներից: Անշուշտ, յուրաքանչյուր երեխա եզակի է և անկրկնելի, իր անհատականությամբ՝ բացառիկ, և համարվում է հասարակության համար բարձրագույն արժեք:

Անձի անհատականությունն արտահայտվում է նրա անհատական ինքնատիպությամբ, զգայությունների յուրահատկությունները, ընկալման, մտածողության, հիշողության, երևակայության, հետաքրքրության, հակումների, ընդունակությունների, խառնվածքի, բնավորության զանազանությունը: Ճանաչելով մարդու անհատական-հոգեբանական և տարիքային առանձնահատկությունները, իմանալով նրա կենսապայմանները՝ կարելի է արդյունավետ կրթական միջավայր ստեղծել նրա իմացական ներուժի, ակտիվության, ունակությունների, օժտվածության, տաղանդի բացահայտման և զարգացման համար:

Անհատական առանձնահատկությունների հաշվառումը և երեխայի բացառիկության, անկրկնելիության արժևորումը հումանիստական մանկավարժության հիմնարար սկզբունքներից են և երեխայակենտրոն կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման հիմնական պահանջը

**ԳԼՈՒԽ2:Անհատակողմնորոշիչ մոտեցում կրտսեր դպրոցականի ուսումնադաստիարակչական գործընթացում**

Արդի դաստիարակչական գործընթացում մանկավարժն իրականացնում է մի շարք դերեր՝ դասավանդող, աջակցող, ուղղորդող, երեխայի իրավունքների պաշտպան, ավագ ընկեր, օգնող, խորհրդատու և այլն: Բազմագործոն դերերն ուսուցչին օգնում են ծագած խնդիրներում արագ կողմնորոշվել, համագործակցության շնորհիվ երեխայի սեփական «Ես,,-ը ձևավորելու, որոշակի հասարակության մեջ նրա պատկանելիությունը հստակեցնելու հարցերում: Լեհ հայտնի մանկավարժ Յանուշ Կորչակը գրում է. «Այն դաստիարակը, որը չի կաշկանդում, այլ ազատում է, չի ճնշում, այլ բարձրացնում է, չի խեղաթյուրում, այլ ձևավորում է, չի թելադրում, այլ սովորեցնում է, ոգեշնչման շատ պահեր է ապրում երեխայի հետ միասին,, [4, էջ 104]:

Ժամանակակից տարրական դպրոցի առջև դրված են դաստիարակությանը համընդհանուր, նպատակային բնույթ տալու և դպրոցականի բազմակողմանի և ամբողջական դաստիարակությունն ապահովելու խնդիրներ: Կրտսեր դպրոցականի դաստիարակության խնդիրներն են՝

-տարրական դպրոցում իրականացվող դաստիարակության գործընթացն ուղղել կրտսեր դպրոցականի անձի ամբողջական ձևավորմանը՝ հաշվի առնելով նրա համակողմանի և ներդաշնակ զարգացման նպատակը,

-կրտսեր դպրոցականներին հաղորդակից դարձնել հասարակական, հոգևորբարոյական, ազգային և համամարդկային արժեքներին, գիտությանը, արվեստին, մշակույթին,

-ձևավորել կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումները,

-կազմակերպել աշակերտների իմացական գործունեությունը՝ ապահովելով նրանց հասարակական գիտակցության զարգացումը,

-զարգացնել ինքնահարգանքի, սեփական բարձրարժեքության գիտակցումը, դաստիարակել բարյացակամ վերաբերմունք շրջապատի մարդկանց /թե մեծերի, թե տարեցների/նկատմամբ,

մշակել մարդկանց հետ վստահելի հարաբերություններ ստեղծելու, երկխոսություն ու հաղորդակցում վարելու կարողություններ,

-սիրո և հարգանքի միջոցով բավարարել երեխայի պահանջմունքները, ձևավորել մանկական հասարակության մեջ իր դերի և սոցիալական կարգավիճակի գիտակցում, երեխայի շուրջ ստեղծել բարենպաստ պայմաններ և այլն:

Տարրական դպրոցում իրականացվող կրթադաստիարակչական գործընթացի բովանդակության մեջ կարևորվում են նաև տվյալ ազգի, ժողովրդի ավանդույթների, սովորույթների, դաստիարակությունն ու կրոնաբարոյական արժեքների ձևավորումը: Դաստիարակության բովանդակության մեջ, բնականաբար, ընդգրկվում է նաև գիտելիքների, կարողությունների ու հմտությունների համակարգը, ինչպես նաև անձի վարքագիծը:

**ԳԼՈՒԽ 3:Դաստիարակության սկզբունքների էությունը տարրական դպրոցում:**

Դաստիարակության սկզբունքներն ընդհանուր դրույթներ են, որոնցում արտահատված են դաստիարակության գործընթացի բովանդակության, մեթոդների կազմակերպմանը ներկայացվող հիմնական պահանջները: Դրանք են՝

-պարտադիրությունը,

-համալիր բնույթը,

-նույնանշանակությունը (համարժեքությունը): Դաստիարակության ժամանակակից համակարգը ղեկավարվում է հետևյալ սկզբունքներով.

-երեխայի բարձրարժեքություն,

-դաստիարակության անձնային-հասարակական ուղղվա ծո ւթյ ո ւն,

-դաստիարակության կապը կյանքի և աշխատանքի հետ,

-անձի դրական որակների վրա հենվելը,

-դաստիարակության մարդասիրական բնույթը,

-անձնակենտրոն մոտեցումը,

-դաստիարակչական ներգործությունների ձևերի միասնությունը,

-երեխան իր դաստիարակության գործընթացի սուբյեկտն է:

Դաստիարակության մեթոդների էությունը տարրական դպրոցում Դաստիարակության մեթոդները դաստիարակողի և դաստիարակվողի համագործակցության հիմնական եղանակներն են: Առանձնացնում են դաստիարակության մեթոդների չորս խումբ՝

1. անձի գիտակցության ձևավորման մեթոդներ,

2. վարքի և գործունեության կազմակերպման մեթոդներ,

3. խթանման մեթոդներ,

4. ինքնադաստիարակության մեթոդներ: Ընդ որում՝ չկան լավ կամ վատ, դյուրին կամ դժվար, արդյունավետ կամ անարդյունավետ մեթոդներ:

Մանկավարժական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է դաստիարակության տվյալ մեթոդի ճիշտ և տեղին կիրառմամբ: Սանկավարժական գործընթացում դաստիարակության մեթոդների կիրառման արդյունավետության հարցում կարևոր է տարրական դպրոցի ուսուցչի մանկավարժական վարպետությունն ու փորձը: Նա պետք է ունենա բծախնդիր դիտողականություն, ուսումնասիրող, զննող ոգի, որպեսզի կարողանա երեխային ուսումնասիրել, բացահայտել, ճանաչել և ըստ այդմ էլ ընտրել ու կառուցել մանկավարժական գործընթացը: Կրտսեր դպրոցի դաստիարակչական գործունեության գլխավոր խնդիրներից է աշակերտների և նրանց շրջապատող մարդկանց (ընկերներ, ծնողներ, ուսուցիչներ, բարեկամներ և այլք), շրջակա միջավայրի (բուսական և կենդանական աշխարհ), ինչպես նաև հոգևոր արժեքների միջև շփման մշակույթի ձևավորումը: Վերոհիշյալ խնդիրների լուծման միջոցներն են ծնողական ժողովները, հանդիպումները, իրադրային և շարժական խաղերը, թատերականացված բեմականացումները, զրույցները, քննարկումները, մրցույթները, օլիմպիադաները, կրտսեր դպրոցականների աշխատանքների ցուցահանդեսները, էքսկուրսիաները և այլն: Պետք է նկատի ունենալ նաև այն, որ տարրական դասարաններում են ձևավորվում սովորողների այնպիսի որակներ, ինչպիսիք են համագործակցելը, աշխատասիրությունը, ինքնուրույնությունը, հաղորդակցումը, հետաքրքրասիրությունը, կազմակերպվածությունը, ազնվությունը և այլն: Ակնկալվում է, որ նշված միջոցառումները կնպաստեն ոչ միայն նրանց հաղորդակցման մշակույթի ձևավորմանը, այլև ինքնաճանաչման, ինքնաարտահայտման և ինքնագնահատման հմտությունների, ինքնուրույնության մշակմանը: Հայ անվանի մանկավարժ Հ.Հինդլյանը գտնում էր, որ դաստիարակը

պետք է լավ ճանաչի այն հոգին, որը ստանձնել է կերտել: Նա պետք է «,խորաչափի տղուն բնությունը,,, ուսումնասիրի նրա հոգեբանությունը, հասկանա բնավորությունը, ճանաչի խառնվածքը, որպեսզի նրան առաջնորդելու համար ճիշտ ուղին գտնի, ընտրի դաստիարակության հարմար միջոցները: Ամենակարևորն այն է, որ դաստիարակը երբեք չպետք է փշրի, խորտակի երեխայի անհատականությունը: Դրա համար պետք է ուսումնասիրել և ճանաչել երեխային [3,էջ 240]:

Ներկայացնենք դաստիարակության գործընթացին առնչվող մի շարք ուշագրավ դատողություններ, որոնք առաջադրել է մարդասիրական մանկավարժության ներկայացուցիչներից մեկը՝ մանկավարժ Շ.Ա.Ամոնաշվիլին իր «Բարև, երեխաներ,, գրքում, և որոնք պետք է հաշվի առնել կրթադաստիարակչական գործընթացում:

- Մարդասիրական հասարակության մեջ դաստիարակությունը կարող է միայն մարդասիրական լինել: Այդպիսի դաստիարակության գլխավոր սկզբունքը երեխային դաստիարակչական գործընթացի նկատմամբ դրականորեն տրամադրելն է, նրան իր իսկ դաստիարակության գործում օգնական դարձնելը:

- Հաղորդակցումը մարդկանց կյանքի էությունն է: Մարդասիրական դաստիարակության գլխավոր մոտեցումը երեխայի՝ մեծի հետ շփման գործընթացում ուրախություն պարգևելն է, համատեղ աշխատանքի, խաղի, հանգստի պահերին հաճույք պատճառելն է: Սովորական ամենօրյա կյանքը և մեծահասակների փոխհարաբերությունների բնույթը մի միջավայր է, որում ձևավորվում է ապագա մարդու անձը:

Այդ պատճառով շատ կարևոր է, որ մեր ամենօրյա կյանքը, միմյանց հետ շփումը որքան կարելի է շատ համապատասխանեն այն իդեալին, որը ձգտում ենք ներշնչել երեխային: Մարդու հավատը մարդկանց, սեփական կենսական դիրքորոշումների նկատմամբ՝ մարդկանց միջև լիարյուն շփման և անհատի վեհացման նախահիմքն է: Դրա համար մենք պետք է երեխայի մեջ զարգացնենք և պահպանենք մեր, իր դաստիարակների, ընկերների, մարդկանց, ինքն իր նկատմամբ ունեցած հավատը: Սոցիալական հասարակությունը հավասարների և միմյանց նկատմամբ հոգացող մարդկանց հասարակություն է: Մեր դաստիարակչական գործընթացը պետք է հարգանքով հագեցած լինի յուրաքանչյուր երեխայի անձի նկատմամբ, երեխաների մեջ հոգատարություն ձևավորի ընկերների, մտերիմների, ընդհանրապես մարդկանց հանդեպ: Մարդը պետք է դրսևորի և զարգացնի իր բոլոր ընդունակություններն ու ձիրքերը և երջանիկ լինի միայն այնպիսի հասարակության մեջ, որտեղ զգում է, որ ինքը պահանջված է, պիտանի, որտեղ իրեն

արհեստականորեն չեն մեծարում և չեն նսեմացնում: Այսպես պետք է իրեն զգա երեխան այն հասարակությունում, որում ինքն ապրում է:

-Երեխան արձագանքող էակ է: Նրա համար դժվար կլինի մեզ հասկանալը: Այդ մենք՝ դաստիարակներս ենք պարտավոր երեխային հասկանալ և մեր դաստիարակչական պլանները կառուցելիս հաշվի առնելնրա հոգու մղումները:

-Դաստիարակությունն աննկատ և երկարատև գործընթաց է, և դրա համար մենք պետք է խորաթափանցություն, հետևողականություն և համբերատարություն հանդես բերենք դաստիարակչական խնդիրների լուծման բոլոր կոնկրետ դեպքերում:

-Մենք՝ մանկավարժներս, պետք է ղեկավարվենք նրբազգացությամբ, զթասրտությամբ, բարեհոգությանբ, սիրով, քնքշանքով, անմիջականությամբ, օգնության հասնելու մշտական պատրաստակամությամբ, ապրումակցության զգացումով: Այս բոլորը պետք է զուգակցվի երեխայի նկատմամբ պահանջկոտության, պատասխանատվության զգացումով, հայրենիքի, ապագայի հանդեպ հոգատարությամբ:

-Մենք պետք է վճռականորեն հրաժարվենք մարդասիրական դաստիարակությանը հակասող և երեխայի անձը ճնշող հեղինակային հավակնություններից և դրանց դրսևորման այնպիսի ձևերից, ինչպիսիք են գոռալը, լուտանքը, ինքնասիրության ոտնահարումը, ծաղրը, կոպտությունը, սպառնալիքը, հարկադրանքը: Գործնականում այս «,պատգամների,, իրականացման պատրաստի մեթոդիկա չկա: Այդ պատճառով անհրաժեշտ է մշտապես ստեղծագործորեն և մարդասիրական հիմունքներով երեխաների դաստիարակության ուղիներ որոնել: Հենց դրանում էլ պետք է արտահայտվի յուրաքանչյուր երեխայի նկատմամբ դաստիարակողի անսահման հոգատարությունը [1, էջ 50]:

**ԳԼՈՒԽ 4:Կոմպետենտություն**

Կոմպետենտությունը գործունեության սուբյեկտի մասնագիտական որակների համալիր ձեռքբերումն է, որը ենթադրում է համապիտանի (ունիվերսալ) գիտելիքների, կարողությունների, հմտությունների և անձնային որակների դրսևորում: Կոմպետենտությունը անձի կողմից որոշակի մասնագիտական որակների համակարգի տիրապետումն է, իսկ կոմպետենցիան՝ սովորողի գործունեության ընթացքում առարկայացված գիտելիքների, կարողությունների, անձնային որակների, գործնական փորձառության համակարգը, որով էլ որոշվում է ցանկացած գործունեությանը անձի պատրաստ լինելը:

Տպավորիչ է XX դարի հոգեբան Կառլ Ռոջերսի «Հարցեր,,, որ կուղղեի ինքս ինձ, եթե ուսուցիչ լինեի» զեկույցում ներկայացված այն միտքը, որ ուսուցիչը պարտավոր է իր մանկավարժական գործունեությունն սկսել մի շարք հարցերի ճիշտ ու ազնիվ պատասխանների դեպքում.

Կարո՞ղ եմ արդյոք մտնել երեխայի ներաշխարհ:

Կարո՞ղ եմ այդ աշխարհին վերաբերվել առանց նախապաշարումների ու կանխակալության, անձնական ու զգայական ճիշտ գնահատական տալ երեխայի անհատական դրսևորումներին:

Կարո՞ղ եմ սովորողների հետ հաստատել բաց, զգացմունքային, փոխադարձ վստահության վրա հենված փոխհարաբերություններ:

Կարո՞ղ եմ արդյոք հայտնաբերել իմ դասարանի յուրաքանչյուր աշակերտի հետաքրքրությունների շրջանակը և ուղղորդել նրան՝ զարգանալու այդ ուղղությամբ:

Կարո՞ղ եմ օգնել իմ աշակերտներին՝ պահպանելու հետաքրքրասիրությունն իր և իրեն շրջապատող աշխարհի նկատմամբ:

Ունե՞մ արդյոք այնքան ստեղծարար ուժ, որ կարողանամ մեր երեխաների մեջ զարգացնել սեր ու հետաքրքրասիրություն գրքերի ու գիտելիքների, այլ աղբյուրների նկատմամբ:

Կարո՞ղ եմ ընդունել և խրախուսել այն բոլոր անկատար գաղափարներն ու մտահղացումները, որ ծնվում են սովորողների գլխում:

Կարո՞ղ եմ զարգացնել բոլոր ոչ ստանդարտ վարքի ու մտքի տեր երեխաների ստեղծագործական մտածողությունն ու ունակությունները:

Կկարողանա՞մ օգնել երեխային մեծանալու որպես անհատականություն, այնպիսին, որի մեջ գաղափարները զգացմունքներ կառաջացնեն, իսկ զգացմունքները՝ գաղափարներ:

Այս հարցերի պատասխաններով, կարծում եմ՝ կարելի է հստակորեն պատկերացում կազմել ուսուցչի հոգեբանամանկավարժական դիմանկարի մասին, ինչն էլ ապահովում է սովորողի նկատմամբ անհատակողմնորոշիչ մոտեցում և աշակերտակենտրոն կրթություն:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով համապատասխան գիտական գրականություն և ուսումնամեթոդական ձեռնարկներ՝ հանգում եմ հետևյալ եզրակացությանը.

.անհատակողմնորոշիչ մոտեցմամբ երեխան դրվում է ուսումնական գործընթացի կենտրոնում: Այս մոտեցումը կրթական գործընթացի կազմակերպումն է՝ հիմնված երեխայի անհատականության նկատմամբ մեծ սիրո ու խոր հարգանքի վրա: Ուսուցիչը հաշվի է առնում սովորողի անհատական զարգացման առանձնահատկությունները՝ նրան վերաբերվելով որպես ուսումնական գործընթացի գիտակից, լիարժեք մասնակից,

.անհատակողմնորոշիչ մոտեցման շնորհիվ զարգանում է սովորողի տաղանդն ու անհատականությունը, ստեղծարար ոգին:Մեր ժամանակներն էլ հասարակությունից պահանջում են ոչ ստանդարտ մտածողության, ստեղծագործ, աճի ընդունակ մարդկանց, քանի որ ստեղծագործ մարդն ավելի հեշտ է հարմարվում կյանքին և կյանքի արագ փոփոխվող պայմաններին: Նա կարողանում է որոշել իր գործունեության ուղղությունը, գտնել օրիգինալ լուծումներ, ապահովել իր պահանջմունքները,

.հենց կրտսեր դպրոցական տարիքում են դրվում մարդու ողջ ապագա զարգացման բոլոր հիմքերը: Կրտսեր դպրոցական տարիքը անհատի զարգացման և կրթության կարևորագույն փուլն է:Այն երեխային շրջապատող աշխարհին ծանոթացնելու և սոցիալականացման շրջանն է: Հենց այս տարիքում է ակտիվանում մտածողությունը, զարգանում է երեխաների ճանաչողական հետաքրքրությունը :

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամոնաշվիլի Շ.Ա., Բարև երեխաներ, Ձեռնարկ ուսուցչի համար, 1990.
2. Էլկոնին Դ.Բ., Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն, Եր., 1975.

3. Հինդլյան Հ., Փունջ մանկավարժական բանախօսութեանց, Կ.Պոլիս, Բերա, 1900.

4. Бабаева А.Х., Гуманистическая направленность подготовки будущего учителя к воспитательной работе с младшими школьниками. Автореф. дис. канд. пед. наук, М., 1992.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

## Պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

# *ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ*

ԹԵՄԱ՝ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԿԱ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ՝ Գ. ՓԻԼՈՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. Գ. Թ. Լ. ՄԻՐԱԲՅԱՆ

*ՎԱՆԱՁՈՐ 2023*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ-----------------------------------------------------------------------------------3

ԳԼՈՒԽ 1: ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ:----------------------------------------------------4

ԳԼՈՒԽ 2:ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ-----6

ԳԼՈՒԽ 3: ԹԵՐԱՊԻԱՆԵՐ ----------------------------------------------------------------------10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ..........................................................................................…………14

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.............................................................................................…………15

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Թեմայի արդիականությունը:**Ուսման մեջ դժվարություններ ունեցող երեխաների հիմնական կարիքները նույնն են, ինչ մյուս երեխաներինը. նրանց անհրաժեշտ է սնունդ, սեր, ուշադրություն, պաշտպանություն և կրթություն:

Կրթության մասին ՀՀ օրենսդրությամբ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին » ՀՀ օրենքով, « Հանրակրթության պետական կրթակարգով» դպրոցահասակ երեխաներին հիմնական կրթության մեջ ինտեգրելու համար նախատեղվել են հավասար պայմաններ, հավասար հնարավորություններ, ինչպես նաև ներառական կրթություն:ՀՀ իրականացվող կրթական բարեփոխումների համատեքստում հատուկ կրթական կարիքներ ունեցող ունեցող երեխաների համար նախատեսվում են հավասար պայմանների ստեղծում , հասարակությանը նրանց լիարժեք ինտեգրման հնարավորությունների ընձեռում՝ ինքնակազմակերպման և ինքնասպասարկման հմտությունների զարգացման միջոցով:

Հատուկ կարիքներով երեխաներին ներգրավելով հանրակրթական դպրոց, անհրաժեշտ է ապահովել նրանց ինտեգրումը կոլեկտիվում. նոր միջավայրում ոչ թե հատուկ կարիքներով երեխան պետք է հարմարվի միջավայրին, այլ միջավայրը՝ նրան:

Վաղուց ժամանակն է, որ հասարակությունը ոչ թե մատնացույց անի նման սովորողներին, այլ փնտրի նոր ուղիներ՝ նրանց ինտեգրացիան սահուն կազմակերպելու համար:

Հետազոտության նպատակը .

.ուսումնասիրել մեթոդական գրականություն և բացահայտել ներառական կրթության իրականացման առանձնահատկություններն ու դժվարությունները:

Հետազոտության խնդիրը.

. նկարագրել ներառական կրթության արդյունավետությանը միտված հնարներ,

.լուսաբանել ներառական կրթության իրականացման ժամանակ ի հայտ եկած դժվարությունները,

.իրականացնել թերապիաներ:

Հետազոտության կառուցվածքը.

Սույն հետազոտությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:Ծավալը 15 տպագիր էջ է:

## ԳԼՈՒԽ 1: ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ներառական կրթությունը միտված է ԿԱՊԿՈՒ սովորողների կրթության որակի բարելավմանը: Ներառական կրթությունը ուղղված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների տարբերակումը վերացնելուն:Ելնելով նրանից, որ յուրաքանչյուր անհատ տարբեր կերպ է սովորում, որ բազմազան մոտեցումների կիրառումը կօգնի բոլոր սովորողներին: Միաժամանակ, ներառումը ավելի խոր իմաստ ունի : Ըստ Էդիբերնի, համընդհանուր ձևավորումը ուսուցիչների կողմից բազմազանության արժևորման փիլիսոփայական դիրքորոշման և, միաժամանակ, անընդմեջ սովորելու և կատարելագործվելու անհրաժեշտության ընդունումն է: Հեշտ չէ ունենալ համընդհանուր ձևավորման սկզբունքներին համապատասխանող դասարան: Սակայն, երբ ուսուցիչները հիմնավորապես ընդունում են դասարաններում տարբեր ունակությունների տեր սովորողների ներկայությունը և դասապրոցեսը կազմակերպում են այնպես, որպեսզի ներգրավեն բոլոր սովորողներին, ՈՒՀՁ-ն կատարելագործվում է:

Գոյություն ունեն դասավանդման ամենատարբեր մոտեցումներ, որոնք ուսուցիչների կողմից կարող են օգտագործվել դասարանում համընդհանուր ձևավորման խթանման համար : Ուսումնական տարվա ընթացքում, իրենց սովորողներին ճանաչելով ու օգտվելով աշակերտներին նկարագրող տեղեկատվական աղբյուրներից, ուսուցիչները կարող են դասավանդումը հարմարեցնել իրենց սովորողների կարիքներին:

Միևնույն ժամանակ համընդհանուր ձևավորման գաղափարական հիմքը համահունչ է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիայի (Միավորված ազգեր, 2006) առավել լայն փիլիսոփայությանը:

Կոնվենցիան առաջադրում է հաշմանդամություն ունեցող անձանց օժանդակության ավելի լայն մոտեցում ներառական կրթության միջոցով, որը մանկավարժներից պահանջում է ապահովելու մատչելիություն բոլորի համար: Ըստ կոնվենցիայի 9-րդ հոդվածի՝ Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռելու նպատակով մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, որպեսզի նրանց համար, մյուսների հետ հավասար հիմունքներով, ապահովեն ֆիզիկական միջավայրի, փոխադրամիջոցների, տեղեկատվության և հաղորդակցության (ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներն ու համակարգերը), ինչպես նաև այլ պայմանների ու ծառայությունների մատչելիությունը, որոնք հասանելի են և տրամադրվում են հանրությանը և՛ քաղաքներում, և՛ գյուղական վայրերում: Այս միջոցները ներառում են խոչընդոտների և արգելքների բացահայտումը և վերացումը: Գործնականում, բազմազան միջոցների կիրառմամբ նյութը ներկայացնելը, արտահայտվելու համար բազմաթիվ հնարավորություններ ընձեռելը, և սովորողի համար ներգրավվածության բազմազան միջոցների տրամադրումը կարող է տարբեր դասարաններում տարբեր լինել: Այսպես, դա կարող է նշանակել ընդհանուր առմամբ, բազմազան մոտեցումների կիրառում նյութը ներկայացնելիս, բազմազան հնարավորությունների ընձեռում աշակերտներին՝ սովորածը վերարտադրելիս և դասապրոցեսում ներգրավվելիս: Օրինակ՝ ուսուցիչը կարող է ցուցադրել տողատակերով տեսահոլովակ, որպեսզի սովորողները միաժամանակ կարողանան կարդալ տեսահոլովակում ներկայացվող տեղեկատվությանը վերաբերող տեքստը: Սա կարելի է համարել պայմանների բարելավում լսողության խանգարում ունեցող սովորողի համար, սակայն բովանդակությունը հասկանալի դարձնելու առումով՝ ճկուն մոտեցում է բոլոր սովորողների համար:

ԱՈւՊ-ները և համընդհանուր ձևավորումը Հայաստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները ունեն անհատական ուսոըմնականան պլաններ: Անհատական ուսոըսումնական պլաններն ունեն երեք հիմնական նպատակ՝ հասանելիություն, մասնակցություն և առաջընթաց:

Խորհուրդներ , որոնք սովորեցի համապատասխան գրականություն ուսումնասիրելիս:

1.Համընդհանուր ձևավորմամբ նախատեսվում է դասի պլանի կազմում յուրաքանչյուր սովորողի համար, ինչը պահանջում է հոգատարություն և հասանելիության ապահովում բոլորի համար:

2. Սովորողները կարող են տեղեկատվություն ստանալ զանազան ձևերով: Դրանք կարող են լինել տեսողական, լսողական, շոշափելու կամ մուլտիմեդիայի միջոցով: Աշակերտներին տեղեկատվությունը բազմազան միջոցներով փոխանցելը ապահովում է նյութի մատչելիությունը:

3. Սովորողները կարող են իրենց յուրացրածը արտահայտել զանազան ձևերով: Դա կարող է լինել գրելու, խոսելու, թատերական ներկայացման, արվեստի կամ ցուցադրման այլ եղանակներով: Իրենց գիտելիքները ցույց տալու համար սովորողին տրամադրվող բազմազան ձևերը մեծացնում են սովորածը արտահայտելու հնարավորությունը:

4. Աշակերտների մեջ հարկավոր է հետաքրքրություն առաջացնել սովորելու նկատմամբ: Յուրաքանչյուր սովորողի բնորոշ է զարգացման, առաջադիմության ուրույն մակարդակ, սովորելու սեփական ոճ և ընդունակություններ: Հարկավոր է կիրառել սովորողներին հետաքրքրող տարբեր ձևեր՝ սովորելու նկատմամբ հետաքրքրությունը պահպանելու համար:

5. Համընդհանուր ձևավորմամբ կազմակերպված դասարանում, առանձին աշակերտների դեպքում կարող են պետք գալ լրացուցիչ նյութեր ու սարքավորումներ: ՈՒՀՁ-ի նպատակն է գնալ բոլոր սովորողների կրթական կարիքներին ընդառաջ, սակայն որոշ սովորողներ միևնույնն է ունեն անհատականացված մոտեցման կարիք[2, էջ 21 ]:

## ԳԼՈՒԽ 2: ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ի վերջո, ինչի՞ց է սկսվում ներառական կրթությունը, որի արդյունքում երաշխավորվում է որակյալ կրթությունը: Սկսվում է մանկավարժների վերաբերմունքի (սիրտ), հմտության (ձեռք) և գիտելիքի(գլուխ) եռամիասնության դրսևորումից: Առանց այս հավասարասրուն եռանկյունու գոյության, շատ դժվար կլինի խոսել որակյալ կրթության մասին, ուստի ուսուցիչներն ու դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողները իրենց մեջ պե՛տք է ունենան այս հավատամքը՝ սիրտ (վերաբերմունք), գլուխ (գիտելիք) և ձեռք (հմտություն), որոնցով նրանք կհաղթահարեն բոլոր այն դժվարությունները, որոնց նրանք բախվում են ամեն օր:

Ներառական որակյալ կրթություն. համագործակցություն, հավասարություն և մասնակցություն: Երեք քայլ, որ տանում է դեպի իրական ներառում:

- Թե ի՛նչ խորությամբ է առանձին աշակերտը դիտարկվում որպես դժվարություններ ունեցող, կարող է պայմանավորված լինել մի շարք գործոններով: Հատկապես անհրաժեշտ է նշել, որ դպրոցի

միջավայրը՝ կազմակերպվածությունը, կիրառվող մեթոդները, տիրող վերաբերմունքը, կարող է կենտրոնական դեր ունենալ աշակերտի անհատական որակները դժվարությունների վերագրելու հարցում:

- Կարևորն այն է, որ ախտորոշումը, որը հին մոտեցմամբ (դեֆեկտոլոգիա) ընդգծում էր աշակերտի «թերությունները», այլևս չի դիտարկվելու: Հիմնական մոտեցումը պետք է բխի այն գաղափարի ընդունումից, որ յուրաքանչյուր աշակերտ կարող է սովորել և ստեղծագործել: Դպրոցը պետք է պատասխանատվություն կրի՝ ստեղծելու այնպիսի միջավայր, որ յուրաքանչյուր աշակերտ կարողանա սովորել և ստեղծագործել: Դպրոցի միջավայրը պետք է միտված լինի զարգացնելու յուրաքանչյուր աշակերտի ներուժը և կարողությունները:

Հաջորդ մոտեցումը չմեկուսացնելու սկզբունքն է, որը ներառական որակյալ կրթության գաղափարախոսության երրորդ հիմնաքարն է և վերաբերում է բոլոր սովորողների կարիքներին: Բոլոր խնդիրներն իրենց հանգուցալուծումները պետք է ստանան դպրոցի ներսում: Կազմակերպվածությունն ու ռեսուրսների հատկացումը պետք է բավարար չափով ճկուն լինեն, որպեսզի հնարավոր լինի անհրաժեշտ աջակցությունը անմիջապես տրամադրել դասարանում: Բացի վերը նշված երեք «հիմնաքարերից», շատ որոշիչ է, որ դպրոցի անձնակազմն իր աշխատանքում որդեգրի երեք առավելապես կարևոր հասկացություններ, որոնք պետք է վեր դասվեն ուսումնական ծրագրից: Դրանք որակյալ կրթության իրական երեք ցուցանիշներն են՝ մասնակցություն, համագործակցություն և հավասարություն: Դրանք պետք է ուղղորդող սկզբունքներ լինեն կրթության պլանավորման և իրականացման բոլոր գործընթացներում: Երբ բոլոր սովորողների համար ապահովված է լիարժեք մասնակցության և համագործակցության միջավայր, և բոլորն ունեն զարգանալու հավասար հնարավորություններ, ապա կարելի է ասել, որ կրթությունը բարձր որակի է[1, էջ 40 ]:

«Կրթություն բոլորի համար » կարգախոսի հիմքում դրված են հետևյալ հիմնական սկզբունքները՝

1. երեխայակենտրոն ուսուցում
2. կառուղողական մոտեցում
3. տարբեր զգայարաններով ուսումնառություն
4. տարբերակված ուսուցում

5. գործողությունների իրականացում

6. սոցիալական ուսուցում:

Ուսումնառության ընթացքում այս սկզբունքների կիրառման պարագայում հատուկ կարիքներով երեխան ակտիվ է, մտածող, որոնող և ստեղծագործող:Ուսուցման ծրագրի բովանդակությունը մեծ մասամբ հիմնված է կառուցողական մոտեցման վրա, որը ենթադրում է`

1. զարգացում սեփական փորձառության վրա և ինքնավարություն

Հատուկ կարիքներով երեխան մեկնաբանում է այն ուսոռումնասիրված և փորձված տպավորությունները, որոնք հիմնված է միայն նրա նախկին սեփական փորձի վրա: Նկատի է առնված, որ մարդու ուղեղն անընդհատ կառուցում է իր սեփական` անհատական, առանձնահատուկ ճանաչողական կառուցվածքները և աշխարհընկալումը:

2. հարմարվողականություն

Հատուկ կարիքներով երեխան կյանքի համար կարողություններ և հմտություններ ձեռք բերելով , հաղթահարում է կյանքի փորձությունները: Նրա ուղեղը վերցնում է միայն իրեն անհրաժեշտ տեղեկատվություն` ճիշտ ժամանակին և ճիշտ ձևով:Սա նշանակում է որ սովորողին միայն կարելի է խրախուսել ճիշտ առաջարկներով ու միջամտությամբ` հարմար պահն ու մոտեցումն ընտրելով:

3. համակարգված մտածողություն

Հատուկ կարիքներով երեխայի սովորելը կախված է անհատից և սոցիալական պայմաններից:Նրա ուսումը համալիր գործողություն է` կազմված ընկալման, շարժողական, հաղորդակցման, ճանաչողական և սոցիալական տարբեր գործընթացներից:Ուստի անհրաժեշտ է , որ ուսումնական նյութերը ներառեն անհատի ողջ գործունեությունը, գործողություններըև փորձը:

Ուսուցումը կազմակերպելիս անհրաժեշտ է սովորեցնել տարբեր զգայարաններով` ապահովելով տարբեր ընկալման ձևեր:

Այս ամենի սկզբնաղբյուրն է հանդիսանում շոշափողաշարժողական զգայական համակարգը:

Կանադացի մարդաբան Է. Մոնտեգյուն շոշափողաշարժողական զգայական համակարգն անվանում է բոլոր զգայարանների մայր:Այն սովորեցնում է աչքերին տեսնել, ականջներին՝ լսել:Նա շատ է կարևորում նաև մաշկի դերը անձի զարգացման գործում. մարդաբանի պնդմամբ՝ ուղեղից ուղեղից հետո մաշկը երկրորդ կարևոր օրգանն է մարդու համար:Քանի որ ուղեղն ու մաշկը կազմված են միևնույն բջիջներից, ապա մաշկը դեպի դուրս շրջած ուղեղն է, իսկ ուղեղը՝ դեպի ներս շրջած մաշկը:Ուղեղի զարգացման խթանիչները գալիս են մաշկից[5, էջ 146]:

Հատուկ կարիքներով երեխաները, ովքեր ունեն վատ զարգացած շոշափողաշարժողական զգայական համակարգ, չունեն զարգացած միտք:Շոշափողաշարժողական զգայական համակարգը համարվում է արմատ, որը հնարավոր է դարձնում ողջ ծառի աճը:Անձի զարգացումը, սովորելը լայն իմաստով, դրա վրա է կառուցվում[4, էջ 83]:

Այս հիմքի վրա կարելի է կառուցել հետևյալ մոդելը.

Երեխան շոշափողաշարժողական ընկալումից աշխարհի հետ մշտական ինտերակցիայի միջոցով հասնում է դեպի իմաստի հայտնաբերում և ավելի հեռու՝ դեպի մարմնավորված խոսք և, վերջ ի վերջո, դեպի հաղորդականություն:Սովորողը հայտնագործում է, որ ինքը սովորում է երկկողմանի ակտիվ գործունեության մեջ:Ստեղծվում է երկկողմանի փոխադարձ հարաբերություն՝ սովորող-ակտիվ միջավայր:Բացառապես շոշափողաշարժողական համակարգն ու մոտորիկան են հնարավոր դարձնում այս շփումը:

Ընկալման և խոսքի խանգարում ունեցող սովորողին այս ամենը հնարավորություն է տալիս ավելի վաղ առօրյայում կատարել զգայական փորձեր:Հատուկ մանկավարժի կամ ծնողի հետ առօրյա կոնկրետ խնդիրներ լուծելիս սովորողը ստանում է շատ տարբեր տեղեկություններ զգայարանների միջոցով:Նրա մոտ կազմվում են պատկերացումներ իրականության մասին, թե ինչպիսին է այն, թե ինչպես է այն արձագանքում իր գործողություններին:Լոգոպեդի և հատուկ մանկավարժի խնդիրն է ծնողների հետ համագործակցության միջոցով երեխային այս կոնկրետ իրադարձությունների մեջ, որտեղ նա հասկանում է ոչ խոսքային բնույթի բովանդակությունները, համապատասխան խոսք առաջարկել, որպեսզի սովորողը հայտնաբերի, թե ինչ կարելի է արտահայտել խոսքի օգնությամբ, ինչպես է խոսքային հաղորդակցությունը (օրինակ սավածի տարբեր հնարավոր նշանակությունները) հարստացնում:

Հատկապես սահմանափակ շոշափողաշարժողական ընկալման ունակություններ ունեցող երեխաների ուսուցումը պետք է կազմակերպվի առօրյա

իրադարձություններում:Ամենաբնական փորձ ձեռք բերելու վայրն է հայրենի օջախը, ամենամոտ մարդիկ՝ ծնողները:Երեխայի մարմինը վարելով՝ երեխային օգնում են զգալ բնական ձևերով:

Թերապևտիկ վարման առանձնահատկությունները պետք է սովորեն ընտանիքի բոլոր մեծահասակները:

**ԳԼՈՒԽ 3: ԹԵՐԱՊԻԱՆԵՐ**

Թերապիաներ կարելի է անցկացնել

. խոհանոցում (մասնակցություն աղցանի պատրաստմանը),

. այգում (սերմերի ցանում , բույսերի խնամք),

. արհեստանոցում (ինչ-որ աշխատանքի կատարում),

Այս համատեղ գործունեության շրջանակներում՝ հաջորդելով գործողությունը, զգացածը, մտքերը, սովորողը ճանաչում է աշխարհը, որը դրսևորվում է նաև խոսքի միջոցով:Ինտերակցիան դառնում է հաղորդակցություն, գործընկերները դառնում են զրուցակիցներ[6, էջ 67]:

Այսպիսի սովորողների հետ աշխատելիս հատուկ մանկավարժը խոսքի բովանդակությունը կարող է նկարել և գրի առնել խոսակցության կարևոր մասերը:

Այսպիսով, երեխան միևնույն ժամանակ հնարավորություն է ստանում հայտնաբերել կարդալը:Սիմվոլային խաղում արդյունավետորեն խորանում է ինտերակցիահաղորդակցություն միասնությունը:Սովորողը հասկանում է, որ խոսքը մի միջոց է, որը հնարավոր է դարձնում արտահայտել մտքերը և դրանք հասցնել ուրիշներին: Նպատակաուղղված իրավիճակները, ինչպիսիք են՝ կարծիքները, հետաքրքրությունները, միշտ կապված են ինչ-որ մի բանի հետև կարող են խոսակցության մեջ փոխանակվել և փոփոխվել՝ ելնելով հասկացված լինելու պահանջից[4, էջ 125-132]:

Ժամանակակից հատուկ մանկավարժությունը հաստատում է, որ չսովորող երեխաներ չկան:Մանկավարժական արվեստը և ժամանակակից կրթական տեխնոլոգիաները , սերը երեխաների հանդեպ, համբերատարությունը և հաստատակամությունը կարող են հրաշքներ գործել:

Այդ են վկայում ժամանակակից ուսուցման ձեռքբերումները հոգեկան և մտավոր զարգացման խանգարումներով երեխաների ուսուցման մեջ[3, էջ 163] :

Հատուկ կարիքներով երեխաների (ուսուցան միջին և խոր դժվարություններ ունեցող )ուսուցման գործընթացը պետք է նպատակաուղղված լինի նրանց կարողությունների զարգացմանը:Բնական զարգացման արդյունավետ մեթոդներից են.

. խոսքի թերապիան

.ֆիզիկական թերապիան

. աշխատանքային թերապիան

.խաղային թերապիան

. պարային թերապիան

. արտթերապիան:

Այսպիսի միջոցներով ընթացող ուսումնառությունը ուղղված է շատ մեծ շրջանակի խնդիրների լուծմանը, այն է՝ հոգեկանի զարգացում, արատի շտկում, հոգեբանական շեղումների կանխարգելում, ինչպես նաև սովորողի կարողությունների ներդաշնակ զարգացում և անհատի ձևավորում :Վերը նշված մեթոդներով հնարավորինս դրական արդըունքների հասնելու համար անհրաժեշտ է հատուկ կարիքներով երեխայի հետ աշխատող բազմամասնագիտական խմբի մասնագետների սերտ համագործակցությունը:

Խոսքի թերապիան վարողը սովորողի մոտ առաջացնում է խոսքային հաղորդակցման հնարավորություն, զարգացնում է խոսակցական լեզուն, շտկում է խոսքը:

Ֆիզիկական թերապիան վարողը զարգացնում, աջակցում և բարելավում է սովորողի շարժողական և փունկցիոնալ հնարավորությունները:

Աշխատանքային թերապիան վարողը վեր է հանում խանգարումները կամ էլ զարգացնում է սովորողի ֆունկցիոնալ հնարավորությունները, որոնք անհրաժեշտ են առօրյա կյանքում(ակտիվություն ), օգնում է բացահայտել և օգտագործել սեփական ներուժը և հասնել նպատակին:Աշխատանքային թերապիան օգնում է անհատին ինքնուրույնություն ձեռք բերելու հարցում, բարելավվում է սովորողի կյանքի որակը:

Խաղային թերապիան վարողը սովորողին առաջարկում է զանազան խաղեր, որոնց ընթացքում նա հայտնաբերվում է և զարգացնում սեփական ուժերն ու իր ներուժի հնարավորությունները:

Խաղային մեթոդների պաշարը բազմազան է և ներառում է զույգերով և խմբակային խաղեր ՝ տեխնիկական միջոցների, տիկնիկների և խամաճիկների օգտագործմամբ, լարվածության թուլացման (կարճ դադար ), մեթոդների կիրառմամբ: Սովորողը դառնում է շփվող, ձերբազատվում է բարդույթներից, ձեռք է բերում հմտություններ:

Արտթերապիան վարողը սովորողին հնարավորություն է տալիս նկարելու միջոցով ոչ միայն բուժվել հոգեպես, այլև բարելավել ինքնարտահայտվելը, հաղթահարել սթրեսը:Արտթերապիան ոչ խոսքային հաղորդակցման հնարավոր ձև է, քանի որ սովորողի ամենակարևոր մտքերը, ապրումները, որոնք գտնվում են
ենթագիտակցության մեջ, արտահայտվում են ոչ խոսքով , այլ պատկերների միջոցով :Արտթերապիան հիմնավորում է, որ ստեղծագործելը բուժիչ է և կյանքի համար կարևոր:Սովորողը գտնում է կյանքի համար կարևոր:Սովորողը գտնում է ինքնարտահայտման տեսողական միջոց , մաքրում է իր ներաշխարհը:

Պարային-երաժշտական թերապիան վարողը երաժշտության և պարերի միջոցով գտնում է ճանապարհներ, լուծումներ՝ զգացմունքային հոգեբանական բացասական երևույթները չեզոքացնելու համար:Պարի ժամանակ սովորողը միացնում է միաժամանակ տեսողական, լսողական , ռիթմի զգացողության բոլոր զգայարանները:Սովորողներն այս թերապիայից հետո թեթևանում և դուրս են գալիս սրված վիճակներից, շարունակում են իմացական ուսումնառության գործընթացը:

Յուրաքանչյուր թերապիա ընտրվում է՝ հիմնվելով սովորողների կարիքների հիման վրա :Թերապիա ստանալը անհատական խնդիր է . սովորողը թերապիա է ստանում ,,Դեմ դիմաց ,, մեթոդով, այլ ոչ թե խմբային հիմունքներով :

Վերը նշված թերապիաները կատարվում են համապատասխան մասնագետների կողմից:

,,Որքան ցածր է երեխայի հոգեկան զարգացման մակարդակը, այնքան բարձր պետք է լինի նրան ուսուցանող մանկավարժի կրթության մակարդակը,,-հավաստում է գերմանացի մանկավարժ – դեֆեկտոլոգ Պ. Ծուրմանը [3, էջ 203]:

Հատուկ կարիքներով երեխաների կրթությունն իրականացվում է դպրոցներում ՝ բազմամասնագիտական խմբի համագործակցությամբ (հատուկ մանկավարժ, լոգոպեդ, սոցիալական մանկավարժ, դաստիարակ, հոգեբան ):

Ներառական կրթության իրագործմանն ուղղված բոլոր ջանքերը հենվում են իրավահավասարության գաղափարի վրա. եթե ներառումը կատարվում է խղճահարությունից կամ բարեգործական մղումներով , հնարավոր չէ հասնել արդյունքի:Բոլոր երեխաներն էլ կարող են սովորել, պետք է ապահովել համապատասխան պայմաններ նրանց կրթության համար:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան դառնում է իրավահավասար բոլոր երեխաների հետ: Նրա կրթության և հասարակական կյանքին մասնակցությունը իր փոխարեն չեն որոշում, այլ տրվում է հնարավորություն բացահայտվելու իր բոլոր ունակություններով և դրսևորվելու իր համար հաղթահարելի ձևով: Ճեշտը դրվում է երեխայի ուժեղ կողմերը զարգացնելու, իսկ թույլ կողմերը ուժեղացնել կրթության առանձնահատուկ պայմանի կարիքը գնահատելու և միջավայր ապահովելու միջոցով: Այսինքն, երեխան ոչ թե ունի «ֆիզիկական ու մտավոր արատներ», այլ տարբեր պատճառներով ունի դժվարություններ՝ կրթությանը լիարժեք մասնակցելու համար: Դրանք կարող են լինել, ֆիզիկական և սոցիալմշակութային միջավայրը, տեխնիկական սարքերը, մասնագետի աշխատանքը, ուսուցման մեթոդը և մեթոդաբանությունը, ուսուցողական նյութերի մատչելիությունը և այլն[3, էջ 23 ]:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով համապատասխան գրականություն՝ իմ կատարած հետազոտության արդյունքում եզրակացնում եմ.

.ներառական կրթության իրագործմանն ուղղված բոլոր ջանքերը հենվում են իրավահավասարության գաղափարի վրա:Եթե ներառումը կատարվում է խղճահարությունից կամ բարեգործական մղումներով , հնարավոր չէ հասնել արդյունքի:Բոլոր երեխաներն էլ կարող են սովորել, պետք է ապահովել համապատասխան պայմաններ նրանց կրթության համար:

.ներառական կրթությունն իրականացնելու գործընթացում առաջ են գալիս բավական շատ դժվարություններ, բայց բազմամասնագիտական խմբի համակարգված աշխատանքի շնորհիվ լուծվում են այդ դժվարություններն ու խնդիրները:

.հատուկ կարիքներով երեխաները առանձնացման խնդիր չունեն: Ժամանակակից հատուկ մանկավարժությունը որպես ներառական կրթության հատուկ մաս, հատուկ կարիքներով երեխաների համար ապահովում է լավ կրթություն(թերապիաներ), որը սոցիալական առումով հիմնավորված է:Միայն ներառական կրթությունը կարող է նվազեցնել այսպիսի երեխաների վախը և նպատակային կազմակերպել նրանց ուսուցումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Ներառական կրթություն. Ուսումնամեթոդական ձեռնարկ.-Երևան 2017.146 էջ: 2.

Ներառական կրթության ռազմավարություններ:Դասագիրք.-Երևան, 2016.249 էջ:

3. Н.М Назарова Специальная педагогика , М., 2000.

4. Зузанне Рабе, Эльке рамер, Франциска Готан. Обучение воспитание детей в условиях центра корекционного развивающего обучение и реабилитацие. Минск 2008.

5. A. Montagu, Touching KolumbiaUniversiti Press, 1971.

6. F. Affolter, Wahrnehmung, Wirklichkeit, Sprach, Nekar Verlag, Villingen – Schwenningen 1987.

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**

## Պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

# *ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ*

**ԹԵՄԱ՝ «ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ**

**«ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ»**

***ԿԱՏԱՐՈՂ՝ ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ***

**ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. Գ. Թ. ԼՈՒՍԻՆԵ ՄԻՐԱԲՅԱՆ**

***ՎԱՆԱՁՈՐ 2022***

*ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ*

Ներածություն-----------------------------------------------------------------------------------------------*3*

ԳԼՈՒԽ 1:Ինտեգրված դասընթացի ուսուցման էությունը, առանձնահատկությունները------------------------------------------------------------------------------5

ԳԼՈՒԽ 2 : Բնագիտական և հասարակագիտական ոլորտների ինտեգրման հիմնախնդիրները------------------------------------------------------------------------------------------7

ԳԼՈՒԽ 3: «Ես և շրջակա աշխարհը» առարկայի բովանդակությունը տարրական դասարաններում, ինտեգրման դասընթացի ուսուցման բնորոշումը առարկայի շրջանակներում-----------------------------------------------------------------------------------------------9

ԳԼՈՒԽ 4: ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ: ԴԱՍԻ ՊԼԱՆ -----------------------------------------------------11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ-----------------------------------------------------------------------------------15

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ------------------------------------------------------------------------------------16

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Մենք գիտենք, որ «Ես և շրջակա աշխարհը» առարկայի ուսումնական նպատակը կոչվում է օգնելու աշակերտին ճանաչելու իրեն հասարակության ու բնության մասնիկ, որը հիմք է ապահովում «Բնագիտություն», «Հասարակագիտություն», «Ֆիզիկա», «Կենդանաբանություն», «Քիմիա», «Աշխարհագրություն», «Պատմություն» առարկաների համար: Տեղին է հիշել Գ.Գալիլեյի խոսքերը՝ «Բնության գիրքը փիլիսոփայության գիրքն է»: «Ես և շրջակա աշխարհը» առարկան աշակերտների մեջ արթնացնում է սեր, հետաքրքրություն շրջակա աշխարհի, կենդանի ու անկենդան բնության նկատմամբ, հնարավորություն է տալիս մտքով հասնել Երկիր մոլորակի ջրային և ցամաքային տարածքները, մասնակից լինել յուրաքանչյուր հայտնագործությանը( օվկիանոսներ, կղզիներ, անապատներ, ջրվեժներ), բացահայտել անծայրածիր տիեզերքի գաղտնիքները, իմանալ Արեգակնային համակարգի և ամեն պահ «ծնվող» նոր աստղի մասին, այսինքն՝ նպաստում է աշակերտների աշխարհընկալմանը, ճանաչողական մտահորիզոնի ընդլայնմանը:

Չնայած այն հանգամանքին, որ «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացը կոչված է օգնելու երեխային ճանաչել իրեն ոչ միայն որպես անհատ, այլև որպես հասարակության և բնության մասնիկ, այնուամենայնիվ, կարծում ենք, որ յուրաքանչյուր դասաժամի համար պետք է ընդգծվեն ինտեգրված դասընթացի սահմանները, ինտեգրվող առարկաների՝ տվյալ դասաժամի ընթացքում շոշափվող սահմանները:

Ինտեգրված դասընթացում ուսուցման մանկավարժական գործընթացի կազմակերպման խնդիրների կարգավորման, այդ գործընթացի արդյունավետության բարձրացմամբ է պայմանավորված թեմայի գծով հետաքրքրությունը, ընտրությունը և այժմեականությունը:

Միջառարկայական կապերը նպաստում են սովորողների ինքնաճանաչմանը, ինքնարտահայտմանը, մտահորիզոնի ընդլայնմանը, քննադատական մտածողության զարգացմանը: Կարճ ասած՝ սովորողների մոտ ձևավորվում է ինտեգրված մտածողություն: Ինտեգրված դասերը ժամանակակից մեթոբանության նորամուծություններից է: Այն իրար է կապում անհամատեղելի թվացող առարկաները: Ինտեգրված դասերը զարգացնում են աշակերտների ներուժը, նպաստում են խոսքի զարգացմանը, համեմատելու, ընդհանրացնելու, եզրակացություններ անելու ունակության ձևավորմանը: Բնության երևույթները մի միասնական ամբողջություն են կազմում և որպեսզի հասկանանք, անպայման պետք է միասնական մոտեցում ցուցաբերենք և դրանք ուսումնասիրենք այլ երևույթների հետ իրենց

բազմակողմանի կապերի հետ և այդ կապերն իրականացնենք դեռևս տարրական դպրոցից[3, էջ329-330]:

***Հետազոտության նպատակը .***

. կատարել «Ես և շրջակա աշխարհը» առարկայի բովանդակության մեջ բնագիտական և հասարակագիտական ոլորտների ինտեգրման ընդհանրական տեսագործնական ուսումնասիրություն՝ ուսումնական գործընթացի կազմակերպման խնդիրների կարգավորման, այդ գործընթացի արդյունավետության բարձրացման համատեքստում:

***Հետազոտության խնդիրները.***

-նկարագրել ինտեգրված դասընթացի ուսուցման էությունը, և առանձնահատկությունները,

- բացահայտել «Ես և շրջակա աշխարհը» առարկայի բովանդակությունը տարրական դասարաններում, ինտեգրման դասընթացի ուսուցման բնորոշումը առարկայի շրջանակներում,

- անցկացնել փորձարարական դաս և ներկայացնել դասի պլանը:

***Հետազոտության կառուցվածքը և ծավալը:*** Հետազոտությունը բաղկացած է ներածությունից, 4 գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը կազմում է 16 տպագիր էջ :

**ԳԼՈՒԽ 1:Ինտեգրված դասընթացի ուսուցման էությունը, առանձնահատկությունները**

Այնուամենայնիվ պետք է նշել, որ ինտեգրված ուսուցումն իրենից ներկայացնում է բարդ և բազմակողմանի հասկացություն: Առաջին հերթին դա պայմանավորված է հենց ինտեգրված ուսուցման գործընթացի բարդությամբ: Վերջինս իր մեջ ներառում է երեք կարևոր խնդիր՝ *ի՞նչ սովորեցնել* (կրթության բովանդակություն), *ինչո՞ւ, ինչի՞ համար սովորեցնել* (կրթության նպատակներ) և *ինչպե՞ս սովորեցնել* (ուսուցման մեթոդիկա): Կրթության բովանդակությունը (ի՞նչ սովորեցնել) մատուցելու և կրթության նպատակներն (ինչո՞ւ սովորեցնել) իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ, ձևեր, եղանակներ: Հանդիսանալով ուսուցման գործընթացի միջուկը՝ մեթոդը իրար է կապում ուսուցման՝ նախապես պլանավորած նպատակը և վերջնական արդյունքը: Այսպիսով՝ ուսուցման գործընթացում մեթոդն ունի կապող օղակի բարդ և առանձնահատուկ դեր:

Տարրական դպրոցում ինտեգրված ուսուցման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար յուրաքանչյուր ուսուցիչ ամեն մի դասից առաջ կանգնում է մի քանի կարևոր խնդիրների առջև.

– ինչպե՞ս հաջող պլանավորել,

– ինչպե՞ս հաջող անցկացնել դասը,

– ինչպե՞ս կանխատեսել արդյունքները,

– ինչպե՞ս հասնել նպատակներին,

– ինչպե՞ս վերլուծել հաջողություններն ու բացթողումները:

Այս խնդիրների իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է ուսուցման բազմազան մեթոդների լավ իմացություն, որոնց կանդրադառնանք հաջորդ ենթահարցերում:

**Ուսումնական ծրագրի ինտեգրման գործընթացի ուղենիշները**

Ինտեգրված դասընթացի ուսուցման արդյունքում ձևավորվում են օբյեկտների և երևույթների միջև առկա կապերի վերլուծության և համեմատության կարողություններ: Դասը դադարում է լինել միայն սովորելու և վերապատմելու նյութ: Այդպիսով ուսուցիչը խուսափում է սովորողների մոտ ձանձրույթի և հոգնածության առաջացումից: Սրանով մենք ամենևին միտում չունենք թերագնահատել ավանդական ուսուցման մոտեցումները, սակայն պետք է փաստել, որ վաղուց լոկ ավանդական մոտեցումների կիրառումն արդյունավետ չի համարվում:

Ուսուցչակենտրոն մոտեցումից անցումը աշակերտակենտրոն մոտեցման թույլ է տալիս դասին հաղորդել համագործակցային, հետազոտական, ստեղծագործական բնույթ: Սովորողը լայն պատկերացում է կազմում իրեն շրջապատող աշխարհի վերաբերյալ: Ուսուցիչը ևս կարողանում է ինքնադրսևորել: Ինտեգրված ուսուցումը թույլ է տալիս ուսուցչին բացահայտել սովորողների ունակությունները, զարգացնել քննադատական մտածողությունը:

Ուսումնական ծրագրի ինտեգրման գործընթացին բնորոշ է 4 հիմնական ուղենիշ.

1. Աշակերտները և ուսուցիչները համատեղ պլանավորում են ուսումնական ծրագիրը և դրա իրագործման կարգը:
2. Ուսումնառության հիմքը թեմաներն են:
3. Ուսումնառությունն ընթանում է դպրոցական համայնքում ժողովրդավարական սկզբունքով:
4. Ուսումնական ծրագիրն այլևս կազմված չէ առանձին առարկաներից:

Ինտեգրված դասընթացի ուսուցման կարևորագույն բաղադրիչ է համարվում համակարգային մասը: Այն ենթադրում է առանձին հասկացությունների, կանոնների, օրենքների, գաղափարների, մեթոդների, ուսումնառության միջոցների սահմանում: Համակարգային մասի կարևորությունը բխում է նրանից, որ հենց դրանից է կախված ինտեգրման ձևը:

Ինտեգրված ուսուցման կարևորությունը դրսևորվում է նրանում, որ բացառվում է ուսումնական գործընթացում առարկայական սահմանափակումների առկայությունը: Դրա հիմքով էլ ինտեգրված ծրագիրը բնութագրվում է հետևյալ առանձնահատկություններով՝

. սովորողների հմտությունների, գիտելիքների զարգացում,

. ուսումնական ծրագրի բոլոր հնարավոր առարկաների միջև կապերի հաստատում,

. դասի ընթացքում այնպիսի գործողությունների կազմակերպում, որոնք թույլ են տալիս ապահովել տարբեր ունակությունների դրսևորում,

.աշակերտակենտրոնության դրսևորում,

.նախագծային ուսուցման տարրերի ներգրավում,

.սովորողների քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացման պայմանների ապահովում,

. դասագրքերից զատ այլ տարաբնույթ տեղեկատվական աղբյուրների օգտագործում (առանձնապես կարևորվում է սովորողին ուղղորդել օգտվել ճշգրիտ և արժանահավատ աղբյուրներից, այլ խոսքով, սովորեցնել աշակերտին զտել տեղեկատվությունը):

Ինտեգրված ուսուցումը հնարավորություն է տալիս դրսևորել ուսուցչի ստեղծագործական ունակությունները, դասի վարումն իրականացնել տրամաբանական փոխկապակցվածության համատեքստում՝ չշեղվելով համակարգային տարրերից, համատեղել ընտրված դիդակտիկ նյութերը դասագրքային և լրացուցիչ աղբյուրներից ստացված տեղեկությունների հետ, ներգրավել այլ ուսուցիչների:

Այս ամենի կիրառման արդյունքում սովորողները հնարավորություն են ունենում դրսևորել իրենց գործնական հմտությունները և ինքնադրսևորվել: Վերջինս նպաստելու է հարմարվողական ընդունակությամբ, ճկուն մտածողությամբ օժտված անհատների ձևավորմանը:

Ամփոփելով ինտեգրված ուսուցման վերաբերյալ տեսամեթոդական հիմքերի վերհանումը՝ փաստենք, որ այն թույլ է տալիս ուսուցչին նպատակային աշխատանքի միջոցով ապահովել աշակերտների կողմից այնպիսի տրամաբանական հաջորդական գործողությունների կատարման, որպիսիք են համեմատումը, ընդհանրացումը, համադրումը, զուգորդումը, դասակարգումը, վերլուծումը: Այսպիսի հաջորդական գործողությունները խորացնում են առարկայի նկատմամբ սովորողների պատկերացումների շրջանակը՝ նյութի լիարժեք և բազմաշերտ ընկալման հիմքով: Վերջնարդյունքն առավել հետաքրքիր ուսումնական գործընթացն է, իսկ աշակերտների մոտ ուսումնական մոտիվացիայի ձևավորումը և զարգացումը ներկայիս կրթական համակարգի կարևորագույն հիմնախնդիրներից է: Ուսուցիչը ինտեգրված ուսուցման իրականացման միջոցով կարողանում է լուծել դիդակտիկայի կարևոր խնդիրը՝ աշակերտների ճանաչողական որակների զարգացումը՝ ուսուցման գործընթացին տալով ստեղծագործական բնույթ:

## ԳԼՈՒԽ 2 : ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Աշակերտները, միևնույնն է, չեն սովորում այն ամենը, ինչ անհրաժեշտ է, որ յուրացնեն միջնակարգ դպրոցում: Նրանց հետ աշխատանքում մենք՝ ուսուցիչներս, ձգտում ենք խրախուսել, որպեսզի նրանք ողջ կյանքի ընթացքում դառնան սովորողներ, որոնք շարունակելու են խորացնել դպրոցում դասավանդվող տարբեր առարկաներից իրենց գիտելիքներն ու պատկերացումները [2,էջ 88] :

Այսօրվա մեր խնդիրն  է կրթել մտածող, բազմակողմանի զարգացած անձնավորություն: Իսկ դրա համար շատ կարևոր է, որ նրանք ճանաչեն տարբեր երևույթների, գիտությունների միջև

եղած կապերը: Երբ սովորողներին մատուցվում են նեղ առարկայական գիտելիքներ, վերջիններիս յուրացման արդյունավետությունը խիստ ընկնում է: Պատճառն այն է, որ բնության երևույթները մի միասնական ամբողջություն են կազմում և դրանք հասկանալու համար էլ պահանջվում է միասնական մոտեցում, այսինքն՝ ուսումնասիրել դրանք այլ երևույթների հետ իրենց բազմակողմանի կապերի ու հարաբերությունների մեջ[1, էջ56]:

Ինտեգրված կրթությունը մանկավարժական գործընթացի կարևորագույն բնագավառներից է: Այն միտված է համակարգի մեջ մտնող յուրաքանչյուր տարրի որակական փոփոխությանը: «Ինտեգրացիա» թարգմանաբար նշանակում է ներգրավում, մասերի ամբողջացում, այլ կերպ՝ միջառարկայական կապերի օգտագործում: Միջառարկայական կապերի ինտեգրումը նպաստում է գիտելիքների կայունացմանը, խորացմանը, ձևավորմանը և համակարգմանը, ինչպես նաև ստացած գիտելիքների ամրապնդմանը և կիրառմանը, որի շնորհիվ դասապրոցեսը դառնում է հետաքրքիր, ամբողջական և արդյունավետ: Ինչպես կասեր Խ.Պ. Պողլասը, «Ինտեգրված դասերին միավորվում են մեկ թեմային նվիրված տարբեր առարկաներից գիտելիքների բլոկները»:

Իհարկե, շատ կարևոր է դասապրոցեսին ՏՀՏ-ի կիրառումը՝ «Ցույց տուր և ես կիմանամ» սկզբունքով, ինչն էլ նպաստում է ուսուցումը պարտադիրից վեր ածել հաճելիին: Մենք գիտենք, որ այդ տարիքի երեխաներն ունեն վառ երևակայություն և ապրում են «ինչու»ների շրջանում, երբ ամեն ինչ նոր է, հետաքրքիր, զարմացնող. Օրինակ՝

Մայրենիից_թռչող գորգ, խոսող ձուկ, կախարդական ծաղիկ,

Մաթեմատիկայից_օվկիանոսների մեծությունները, խորությունը, օրվա ժամերի և տարվա եղանակների հաջորդականությունը, ջրվեժների բարձրությունը,

Երաժշտությունից_ «Մարտը», «Ծաղիկներ», «Աշուն» (որպես կենդանի և անկենդան բնության մասեր),

Աստղագիտությունից_աստղերի մեծությունը, մոլորակների հեռավորությունը,

Ֆիզկուլտուրայից_ առողջ ապրելակերպ, ճիշտ սնունդ, օրվա գրաֆիկ ռեժիմ (իհարկե այս ամենից առաջ պետք է ճանաչել սեփական օրգանիզմն ու օրգան համակարգերը):

Այսինքն՝ «Ես և շրջակա աշխարհն» ինտեգրվելով բնագիտական և հասարակագիտական ոլորտներին, օգնում է, որ սովորողը բացահայտի իրեն «ես»ը:

Հասարակագիտական թեմաներում հատկապես շեշտադրվում է ինքնությունը, ազգային արժանապատվությունը, հայրենիքի, համայնքի, բնության պահպանման արժեհամակարգերը:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի ուսուցման ընթացքում աշակերտները կատարում են հետազոտական աշխատանքներ, վերլուծություններ և ընդհանրացումներ: Իհարկե ցանկալի է, որ դասաժամերից շատերն անցկացվեն բնության գրկում, որտեղ օրինակ աշակերտը կտեսնի ջրի երեք ագրեգատային վիճակները, կիմանա ինչ է հողը, հողի տեսակները, ինչից են սկիզբ առնում վտակները, առվակները, ջրի շրջապտույտը բնության մեջ: Նրանք կտեսնեն և եզրահանգումներ կանեն բնության «անտեսանելի» կապերի մասին:

Այսպիսով սովորողների մոտ ձևավորվում է էկոլոգիական դաստիարակություն: Այս ամենի հետ շատ կարևոր է, որպեսզի սովորողը իմանա իր ժողովրդի անցյալի և ներկայի նշանակալի որոշ իրադարձություններ, իմանա մշակութային հուշարձանների, ազգայինպետական տոների մասին, ճանաչի ՀՀ խորհրդանիշները ( դրոշ, զինանշան, պետական օրհներգ), իմանա արվեստի ներկայացուցիչների և նրանց թողած հարուստ ու խոսուն ժառանգության մասին, պետք է իմանան Հայաստանում գործող թանգարանների ու դրանց գործունեության մասին և այլն: Այլ կերպ, հետաքրքիր ու բովանդակալից դասը վարելու դեպքում շահում է թե՛ աշակերտը, թե՛ ուսուցիչը: Փորձը ցույց է տալիս, որ ինտեգրված դասերը նպատակային են և ճանաչողական, ապահովում են սովորողների բազմակողմանի զարգացումը և բարձրացնում են ուսուցման որակը:

**ԳԼՈՒԽ 3**

**1. «Ես և շրջակա աշխարհը» առարկայի բովանդակությունը տարրական դասարաններում, ինտեգրման դասընթացի ուսուցման բնորոշումը առարկայի շրջանակներում**

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի հիմնաքարը «ես»-ի գաղափարն է, որի շուրջ կառուցվում է բազմաշերտ իրականությունը՝ ընդլայնելով և բացահայտելով «ես»-ի անձնային առանձնահատկությունները: Տարրական դասարաններում «Ով եմ ես», «Ես և մյուսները», «Ես և բնությունը» և «Ես և տիեզերքը» ինտեգրված դասերը թույլ են տալիս
կրտսեր դպրոցական տարիքի սովորողներին ընկալել իրենց շրջապատող աշխարհը՝ փոխադարձ կապվածությունների, փոխկախվածությունների ամբողջականության մեջ:

Ինչպես գիտենք, 2020թ-ին շրջանառության մեջ դրվեցին առարկայական չափորոշիչների նախագծեր, որոնք, արդարացիորեն կարող ենք պնդել, որ էականորեն բարձրացնելու են ուսումնական գործունեության արդյունավետությունը: Առաջարկվող նախագծում ներառված են այս պահին գործող առարկայական ծրագրերի բովանդակային և թեմատիկ բոլոր բաղադրիչները՝ որոշ լրացումներով:

• Հիմնական բովանդակային նորությունները նախատեսվում են բնագիտական բնագավառի թեմաներում, որոնք հարստացվել են փորձարարական, հետազոտական և գործնական գործունեության ձևերով: Ավելացել են որոշ թեմաներ՝ շարժում, ուժեր (ձգում, հրում), էներգիա և այլն: Կան որոշ թեթևացումներ աշխարհագրական թեմաներից, որոնք նախորդ ծրագրում գերակշռում էին:

• Հասարակագիտական թեմաներում բովանդակային փոփոխություններ գրեթե չկան. առավել շեշտադրված է ինքնության, ազգային արժանապատվության, համայնքի, հայրենիքի, դրա մշակույթի և բնության պահպանման և պատասխանատվության վերաբերյալ արժեհամակարգային բաղադրիչը: Առողջ ապրելակերպի վերաբերյալ թեմաներում որոշ շեշտադրումներ կլինեն ծխախոտի վնասակարության, բուլիինգի (հալածանքի) և համաճարակների ժամանակ անհրաժեշտ վարքականոնների վերաբերյալ:

• Չափորոշչում և ծրագրում ներկայացված են և՛ միջառարկայական, և՛ ներառարկայական կապերը՝ ապահովելով ինտեգրված ուսուցումը:

Առարկայի ծրագրով նախատեսված բաժիններում մեծ ուշադրություն է դարձված և ընդգրկուն պարզաբանումներ են տրված թե՛ գործունեության ձևերի նկարագրության, թե՛ խաչվող գաղափարների վերաբերյալ, որպեսզի տարրական դպրոցի ուսուցիչը բնագիտական թեմաներում բավարար աջակցություն ունենա[2, էջ 35 ]:

Առարկայի բովանդակության հիմքում ընդհանրական խաչվող հասկացություններն են, որոնք իրենցից ներկայացնում են ընդհանրական հասկացություններ տարբեր գիտությունների համար: Դրանք նպաստում են որպեսզի սովորողը կարողանա փոխկապակցել առանձին առարկաներից ստացած գիտելիքները ամբողջականության մեջ: «Ես և շրջակա աշխարհը» առարկայի տարրական դպրոցի չափորոշչի և ծրագրի նախագծում առանձնակի կարևորություն է տրվել այդ հասկացությունների սահմանմանը: Առանձնացվել են յոթ հիմնարար խաչվող գաղափարներ, որպիսիք են օրինաչափությունները, պատճառ-հետևանքը, համակարգ-մոդելները, էներգիան և նյութը, կառուցվածքը և գործառույթը, կայունությունն ու փոփոխությունը:

Առկա են նաև ընդհանրական գաղափարներ: Դրանք առավել համապատասխան են հասարակագիտական առարկաներին և թեմաներին.

1. Անհատ և հարաբերություններ
2. Ժամանակ և տարածություն
3. Անհատական և մշակութային արտահայտություն
4. Գիտատեխնիկական նորարարություն

5. Գլոբալիզացիա և կայունություն

6. Արդարություն և զարգացում

Այս երկու ցանկով ներկայացված խաչվող հասկացություններն էլ կիրառելի են «Ես և շրջակա աշխարհը» առարկայում՝ որպես ինտեգրված առարկա:

**ԳԼՈՒԽ 4: ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ: ԴԱՍԻ ՊԼԱՆ**

Կցում եմ դասի պլան, որտեղ կներկայացնեմ հաջողված ինտեգրված դասի օրինակելի պլան:

**Դասի պլան**

**Դասարան՝ 4-րդ**

**Առարկա՝ Ես և շրջակա աշխարհ**

**Դասի տիպը՝** ինտեգրված դաս

**Թիրախ խումբ՝** աշակերտներ

**Դասի թեման՝** Անցած ուսումնական նյութի կրկնություն

**Դասի նպատակը՝** Աշակերտները .

.Կկրկնեն ձևավորված հիմնարար կարողությունները և հմտությունները,

. «Շրջված դասարան» մեթոդով կընդլայնեն ճանաչողական մտահորիզոնը,

.Կհամակարգեն Արեգակնային համակարգի, շուրջերկրյա ճանապարհորդությունների մասին ունեցած գիտելիքները,

.Կամրապնդեն քարտեզից օգտվելու նախնական գիտելիքները, կարողությունները,

.Կբացահայտեն մայրցամաքների հայտնագործման, դրանց հետազոտման, շուրջերկրյա ճանապարհորդություններ իրականացնելու դրդապատճառները:

**Դասի կահավորում՝** պաստառներ, դիդակտիկ նյութեր (քարտեզ, գլոբուս, հանրագիտարան, համակարգիչ, էլեկտրոնային գրատախտակ)

**Դասի ընթացքը՝ ԽԻԿ համակարգ**

ԽԹԱՆՈՒՄ՝

Աշակերտները նախապես կբաժանվեն 6 խմբի, քանի որ «շրջված դասարան» մեթոդով ունեն հանձնարարականներ:Խմբերից յուրաքանչյուրը կանվանվի մի մայրցամաքի անունով և կներկայացնի համապատասխան մայրցամաքի մասին իրենց հետազոտական աշխատանքները:

Մինչ աշխատանքները ներկայացնելը, աղյուսակի միջոցով կբնութագրեն Արեգակն ու Լուսինը:

Վիենի դիագրամի միջոցով կհամեմատեն՝

Երկնային մարմիններ

| Արեգակ | ԼՈՒՍԻՆ |
|---|---|
| Աստղ | Բնական արբանյակ |
| Հրեգունդ | չունի սեփական լույս և ջերմություն |
| Ունի սեփական լույս և ջերմություն | լուսնի դիտվող ձևերը կոչվում են Լուսնի փուլեր |




Միջառարկայական կապ՝

**Մայրենի՝** արեգակ-արև, արփի, արփագունդ, հրարփի,

**Մաթեմատիկա՝** ժամանակի չափման միավորներ- օր, շաբաթ, ամիս, տարի, դար,

**Կերպարվեստ՝** լուսնի փուլերի պատկերում, ուրվագծային քարտեզների վրա մայրցամաքների պատկերում,

**Երաժշտություն՝** ունկնդրել Անահիտ Շահզադյանի «Պայծառ արեգակ» երգը Փիզղադար «Օվկիանոսներ և մայրցամաքներ»

**Աստղագիտություն՝** Արեգակնային համակարգի ըստ արևից ունեցած իրենց հեռավորության ու մեծության

**Աշխարհագրություն՝** ուրվագծային քարտեզներ :

**Կշռադատման փուլում** աշակերտները կներկայացնեն իրենց հետազոտական աշխատանքները մայցամաքների վերաբերյալ: Խմբերը կատարելով ինքնագնահատում և փոխադարձ գնահատում, կարժանանան «Գիտունիկ»-ի գլխարկը կրելու պատվին: Ակտիվ մասնակցություն ունեցող աշակերտները կարժանանան «Ամենահետաքրքրասեր», «Ամենախելացի», «Փոքրիկ գիտնական» տիտղոսաթղթերի:

**Դասի անդրադարձ** փուլում կառաջադրվեն բլից հարցեր՝



Ամենաբարձր ծառը...

Ամենամեծ մայրցամաքը...

Ամենաբարձր լեռը...

Ամենամեծ հարթավայրը...

Ամենամոտ աստղը...

Ամենամեծ կղզին...

Ամենամեծ անապատը...

Ամենամեծ օվկիանոսը...

Ամենասիրուն հայրենիքը...

Համոզված եմ, որ այդ օրվա դասից սովորողը քաղեց շատ կարևոր տեղեկություններ, համակարգեց ստացած գիտելիքները, տեսավ բնության մեջ անտեսանելի կապերը: Կատարվեց ձևավորող գնահատում: Ինտեգրված դասերի արդյունքում մենք ունենում ենք բազմակողմանի զարգացած մարդ-անհատ, չէ՞ որ մարդն օժտված է բանականությամբ և նա պետք է հասկանա ու նպաստի շրջակա աշխարհի ներդաշնակ զարգացմանը: Ինչպես ասել է Յոհան Գյոթեն՝ «Բնությունը կատակներ չի ճանաչում, այն միշտ ճիշտ է, միշտ լուրջ, միշտ խիստ է»: Մենք գիտենք, որ հասարակական գիտությունների հենասյուներից է ընտանիքը, որը մարդկային

հասարակության ամենաառանցքային սոցիալական ինստիտուտներից է: Դեռ վաղ տարիքից պետք է երեխային սովորեցնել հարգել ընտանիքի անդամներին, հոգ տանել նրանց մասին, չէ՞ որ ընտանիքը մի վայր է, որտեղ տիրում է սեր, հոգատարություն և փոխադարձ ջերմ վերաբերմունք միմյանց նկատմամբ: Սովորողը պետք է իմանա իր դերն ու նշանակությունըընտանիքի մեջ, իմանա, որ յուրաքանչյուր պետության հիմքն ընտանիքն է, որ հայրենիքն սկսում է իրենից, իր ընտանիքից, իր ընկերներից:

Առարկայի շրջանակներում երեխան սովորում է ընկերության, ընկերների շփման մասին, թեև ընկերական հարաբերություններ ստեղծելու համար չկան հստակ սահմանափակումներ, այլ կա ավելի շատ ընդհանրություններ, շահերի համընկնումներ:

Երեխան պետք է հասկանա, որ ընկերը մեծ դեր է խաղում մարդու կյանքում, որ լավ ընկեր ունենալը բախտավորություն է, ինչպես կասեր Պաբլիոս Սիրոսը, «Անհավատարիմ ընկերները արևային ժամացույցներ են, որոնք օգտակար են միայն այնքան ժամանակ, քանի դեռ լուսավորում է արևը»: «Իմ տունը, իմ բակը, իմ փողոցը» թեմայի ժամանակ սովորողը պետք է իմանա իր հասցեն, նկարագրի իր բնակության վայրը, իմանա և կարողանա կիրառել հասարակական վարքի կանոնները, սահմանի որն է կոչվում համայնք, ինչ պարտականություններ ունեն համայնքի բնակիչները (մաքուր պահել շրջակայքը, կանաչապատել և բարեկարգել բակերը): Իսկ «Քաղաք և գյուղ» թեմայի ուսուցման ժամանակ կարելի է ուսումնասիրել տեղանքի կարևոր պատմամշակութային հուշարձանները, պատմել նրանց նշանակության, ստեղծման շարժառիթների մասին, այդ թեմաներով գրել շարադրություն: «Անվտանգ կենսագործունեություն» թեման ուսումնասիրելու ժամանակ սովորողը պետք է գիտակցի սեփական մարմնի խնամքին և առողջությանը հետևելու, անձնական հիգիենայի նշանակության և սննդի կարևորությունը: Գիտակցի մաքրակենցաղ ապրելակերպի դերը, բնական աղետների ժամանակ պաշտպանվելու տարրական կանոնները, իմանա երթևեկության կանոնները, հասկանա սեփական առողջության և վարքագծի կապը: Ինտեգրված դասերը զարգացնում են սովորողների տրամաբանությունը, վերլուծահամադրական մտածողությունը, ստեղծագործական միտքը: Այս ամենի հետ շատ կարևոր է նաև ուսուցչի մասնագիտական և մանկավարժական հմտություններն ու վարպետությունը, դասավանդումը հետաքրքիր և գրագետ անցկացնելու համար:



## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով համապատասխան գրականություն՝ հանգում եմ հետևյալ եզրակացությանը.

. «Ես և շրջակա աշխարհը» առարկան ինտեգրելով բնագիտական և հասարակագիտական ոլորտները, օգնում է աշակերտի աշխարհընկալմանը,

. մարդ-տեսակի ձևավորմանը, միևնույն ժամանակ սովորողին հասցնում այն գիտակցությանը, որ մարդը լինելով բնության մասնիկ, օգտվելով բնության բարիքներից, ստեղծելով բարիքներ, պետք է չվնասի բնությանը (անտառների հատում, ջրային տարածքների ճահճացում, կենդանական աշխարհի վերացում, օդի աղտոտվածություն, պետք է հարգի անցյալը, ունենա խնայող վերաբերմունքի դաստիարակություն), կոնֆլիկտային իրավիճակների, ճանաչողական, անձնային կրթական գործելակերպի հմտություններ:

. ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի կիրառումը ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից մեկն է:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Մ. Աղաջանյան, «Միջառարկայական կապերը՝ գիտելիքների յուրացման արդյունավետության պայման,Մանկավարժություն 3-2015, 64 էջ

2.Ուսուցման կոնստրուկտիվիստական մեթոդաբանություն, Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, «Այրեքս», 2002, 455 էջ

3.Տաթևիկ Ավոյան, Գայանե Վարդանյան, «Միջառարկայական կապերի դերն ու նշանակությունը ֆիզիկայի դասավանդման գործընթացում», Մանկավարժական միտք 2022, 1_2(78-79), Տաթև գիտակրթական համալիր, 486 էջ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

*ԹԵՄԱ՝ Անձի և պատասխանատու վարքագծի ձևավորմանն ուղղված մեթոդները «Ես և շրջակա աշխարհը» առարկայում:*

*ԿԱՏԱՐՈՂ՝ Եվա Գրիգորյան*

*ՂԵԿԱՎԱՐ՝ Լուսինե Միրաբյան*

**ՎԱՆԱՁՈՐ 2023**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն
Ներածություն
Գլուխ 1. Անձի և պատասխանատու վարքագծի ձևավորմանն ուղղված մեթոդները «Ես և շրջակա աշխարհը» առարկայում
Գլուխ 2. Դպրոցահասակ անձի պատասխանատու վարքի ձևավորմանն ու զարգացմանն ուղղված հիմնական օրինաչափություններն ու առանձնահատկությունները
Հետազոտական մաս
Եզրակացություն
Գրականություն

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տարրական դպրոցը համարվում է կրթության առաջին օղակը, այն հաջորդող մեծ շղթայի հիմքն  է հանդիսանում :Այս օղակում են դրվում անձի ճիշտ ձևավորման հիմնասյուները :

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի բովանդակության հիմքում ընկած է  « ես»-ի գաղափարը , վերջինս բացահայտում է անձի և նրանից դուրս գտնվող շրջանակների տարաբնույթ փոխազդեցությունները: Առարկան կրտսեր դպրոցականներին թույլ է տալիս պատկերացնել իրենց շուրջը եղած ամբողջական  միևնույն ժամանակ տարաբնույթ էությունը փոխադարձ կապվածություններով ՝ ինքնաճանաչումից մինչև աշխարհաճանաչողություն:

Բնություն – առօրյա հասարակական կյանքին կապող գործառույթի կարևորության իմացությունը հնարավորություն է տալիս երեխաների մեջ սերմանել առավել ուշադիր և հոգատար վերաբերմունք դեպի  բուսական և կենդանական աշխարհը :

« Ես և շրջակա աշխարհը » առարկայի դասավանդման շրջանակներում երեխաները պետք է հասկանան կամ ինքնուրույն գան այն  եզրահանգմանը,որ շրջակա աշխարհի պահպանումից կամ ոչնչացումից է կախված իրենց և շրջապատող մարդկանց ապագան:

Այս առարկայի ուսուցման նպատակն այն է ավելի ընդլայնել երեխաների տարրական գիտելիքները շրջակա միջավայրի , փոխադարձ կապերի մասին : Ուսուցումը իրենից ներկայացնում է տարբեր մեթոդների փունջ , որոնք ճիշտ օգտագործելու արդյունքում կարող ենք հասնել ցանկալի արդյունքի զարգացնելով երեխաների գործնական ունակությունները ,ինչպես նաև դաստիարակել հայրենասեր անձնավորություն ,քանի որ հայրենասիրությունը սկիզբ է առնում իր իսկ հայրենիքի բնության պահպանումից :

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդումը բարձր դասարաններում դասավանդվող պատմողական առարկաների հիմքն է հանդիսանում :

Արդի ժամանակներում առավել ակտուալ ու կարևոր է դարձել պատասխանատու և արժանապատիվ անձնավորություն կրթելու ,դաստիարակելու հարցը :Առարկան այս հարցում կարևոր դեր ունի սկսած տարրական դպրոցից երեխաների մեջ սերմանում է սեր դեպի բնությունը , շրջապատող աշխարհը :

Ընտրելով այս թեման ցանկացել եմ ավելի հիմնովին և խորապես ուսումնասիրել թեմային ուղղված մեթոդները:

Թեման է ՝ Անձի և պատասխանատու վարքագծի ձևավորմանն ուղղված մեթոդները «Ես և շրջակա աշխարհը» առարկայում:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ՝

Ուսումնասիրել այն մեթոդները ,որոնք անհրաժեշտ է կիրառել «Ես և շրջակա աշխարհը» առարկան դասավանդելու ժամանակ `անձի և պատասխանատու վաքագծի համար:

Ելնելով նշված նպատակից առանձնացրել եմ հետևյալ խնդիրները :

- Ուսումնասիրե՛լ թեմային առնչվող գրականությունը :
- Նշե՛լ այն մեթոդները ,որոնք կօգնեն անձի և  պատասխանատու վարքագծի ձևավորմանը:
- Բացահայտել «Ես և շրջակա աշխարհը» առարկայի կարևորությունը երեխաների դաստիարակության մեջ :

Աշխատանքը բաղկացած է` ներածությունից ,երկու  գլխից , հետազոտական մասից , եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից , ընդհանուր ծավալը համակարգչային շարվածքով կազմում է 17 էջ:

## ԳԼՈՒԽ 1 . ԱՆՁԻ և ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՎԱՐՔԱԳԾԻ ՁևԱՎՈՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐԸ «ԵՍ և ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՅՈՒՄ

Հանրապետության պետական չափորոշչի (ՀՊՉ) համաձայն «Ես և շրջակա ուսումնական առարկան «ԲՏԾՄ» , «Հասարակական գիտություններ», «ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն » և «Հայրենագիտութուն» ուսումնական բնագավառները ներկայացնող ինտեգրված պետական պարտադիր առարկա է 2-4-րդ դասարանների համար :7-10 տարեկան հասակը լավագույնն է հետաքրքրությունների ձևավորման, հարցեր ձևակերպելու (այդ թվում՝ արտահայտվելու այլընտրանքային եղանակներով) և այդ հարցերի պատասխանները քննելու, վերլուծելու և գտնելու, ինչպես նաև համագործակցությունը, քննադատական և ստեղծագործական մտածողությունը զարգացնելու համար: Դա մարդու կյանքում սոցիալական ինքնագիտակցության աճի ժամանակաշրջանն է , և անհրաժեշտ է , որ հենց այս տարիքում ուսումնական գործընթացում քննարկման հիմնական թեմա դառնան յուրաքանչյուրի նկատմամբ արդարացի վերաբերմունքի, սեփական արժանապատվության զգացման,հանդուրժողականության,շրջապատի մարդկանց և բնության նկատմամբ բարյացակամության,հոգատարության ձևավորմանն ուղղված հարցերը: Երեխայի համար շատ կարևոր է հենց այս տարիքում ընդունված լինել կոլեկտիվի կողմից,լինել նրա լիիրավ անդամը:[3]Առարկան կրտսեր դպրոցականներին հնարավորություն է տալիս զարգանալ որպես անձ և անհատականություն ընդունել մարդուն որպես բարձրագույն արժեք , ընդունել իր հասակակիցներին հարգելով նրանց առանձնահատկությունները ,դրսևորել շրջապատի նկատմամբ ,հարգալից ,ոչ խտրական վերաբերմունք :

Հաճախ մանկավարժական գրականության մեջ չեն տարբերակվում «մարդ» և «անձ» հասկացությունները , այսինքն , խոսում են մարդու զարգացման ու դաստիարակության մասին , չնայած սա միևնույնը չէ:

Դեռևս Կ. Մարքսն է նշել , որ «անձ» հասկացության մեջ բացահայտվում է մարդու հասարակական էությունը :Մարդու էությունը ,գրել է նա ,« առանձին անհատին հատուկ վերացություն չէ : Իրականությամբ այդ էությունը հասարակական բոլոր հարաբերությունների ամբողջությունն է[1, էջ 53]

Որպեսզի երեխայի մոտ ձևավորենք պատասխանատու վարքագիծ ,պետք է զարգացնել նրա մտավոր ընդունակությունները :

Մտավոր դաստիարակության խնդիրների հաջող լուծումը ամենից առաջ կախված է ուսուցման բովանդակությունից աշակերտների իմացական գործունեության կազմակերպման մեթոդներից ու եղանակներից : Դպրոցական կրթության

բովանդակության կատարելագործման ուղղությամբ տարվող անընդհատ աշխատանքը նպատակաուղղված է ոչ միայն նրա բովանդակության նորացմանը , այն գիտության տեխնիկայի , կուլտուրայի , ժամանակակակից մակարդակին համապատասխանեցնելուն , այլ նաև փոփոխություններ մտցնել ուսումնական նյութի կազմակերպման բուն սկզբունքների մեջ:Նրանց թվում ՝ առաջատար գիտական , աշխարհայացքային գաղափարների առանձնացում , միջառարկայական կապերի ուժեղացում, աշակերտների տարիքային հնարավորություններին մեծ չափով համապատասխանեցման ապահովում :

Մտավոր դաստիարակության խնդիրների իրականացումը կապված է նաև այնպիսի մեթոդների կիրառման հետ ,որոնք ուղղված են աշակերտների իմացական և ստեղծագործական ուժերի առավելագույն զարգացմանը :

Հաշվի առնելով այն մեծ նշանակությունը ,որ այժմ տրվում է գիտելիքների ինքնուրույնաբար կիրառող մարդու պատրաստմանը ,ուսուցչի ուշադրության կենտրոնում կանգնած են նաև աշակերտներին մտավոր աշխատանքի կուլտուրայի հիմնական հնարների ուսուցման հարցերը: [1,էջ 81]

Կրտսեր դպրոցում պետք է ստղծել անպիսի միջավայր ,որտեղ կզարգանան սովորողների անձնային հատկանիշները ՝ ինքնուրույնություն, սովորելու հակում ,հետաքրքրասիրություն, որոնք հիմք կհանդիսանան երեխայի «ես» -ի հետագա կայունացմանը:

Դպրոցի առաջին տարիներին ուսուցիչը աշակերտի համար դառնում է միակ հեղինակությունը , այս պատճառով ուսուցիչը կարող է ուղղորդել նրան ՝ներկայացնել ,բացատրել,պահանջել և այլն: « Շրջակա աշխարհը» առարկան նպաստում և թույլ է տալիս ավելի ընդլայնվել , միջառարկայական կապեր ստեղծել հարակից առարկաների հետ: Այս առարկայի դասաժամերին կարելի է կիրառել տարբեր մեթոդներ անձնավորություն ձևավորելու հարցում : Փոքր տարիքում երեխայի վրա ավելի մեծ ազդեցություն է ունենում գեղագիտական ընկալումը : Երեխան ուսումնասիրում է բնական միջավայրը հենց իր օրինակով , բնության գրկում ժամանակ անցկացնելով ՝ պաշտպանելով բուսական ու կենդանական աշխարհը և այնտեղ հանգստանալով :

Երեխային պետք է ծանոթացնել բնական և արհեստածին աղետների վնասակարությանը : Այսօր մարդկությունը անտեսում ու կարևորություն չի տալիս միջավայրի պահպանմանը ,ամենուրեք բնությունը ենթարկվում է փոփոխման ՝ վնասվում է երկրի հողային և ջրային շերտը ,մթնոլորտը և այլ բնական հարստություններ :Այս փոփոխություններն ավելի են մոտեցնում տարատեսակ բնական աղետների մեծ ալիքին, որոնցից է բույսերի ու կենդանիների անհետացումը:

Կրտսեր դպրոցականի մեջ անհատի ձևավորումը և զարգացումը մանկավարժական կարևոր խնդիր է: Յուրաքանչյուր անհատ ինքն է ստեղծում իր ապագան իր իսկ հնարավորություններից, ունակություններից ելնելով : « Ես և շրջակա աշխարհը» առարկան աշակերտին շրջակա միջավայրի վերաբերյալ գիտելիք տալուց զատ նրանց մեջ ձևավորում է պատասխանատու վարքագիծ, գեղեցիկ վարվելաձևի , հաղորդակցվելու ,համագործակցելու ,որոշումներ ընդունելու հմտություններ :
Մարդու գիտակցության մեջ բնության նկատմամբ սերն ու հարգանքը ստեղծվում է դաստիարակության և կրթության միջոցով :
Դպրոցում դասավանդվող յուրաքանչյուր առարկա միտված է երեխայի անձնավորության դաստիարակմանը :
Վերջիններիս դասին է պատկանում «Ես և շրջակա աշխարհը» առարկան ,իսկ առարկայի միջոցով երեխայի անձնավորություն դաստիարակելու համար անհրաժեշտ են բազմաբնույթ և նպատակահարմար մեթոդներ : Ցանկացած մեթոդ ունի իր դրական և բացասական կողմերը:
Օրինակ՝ 1. «Խմբային աշխատանք »-ի ժամանակ երեխաները պարտավորված են զգում միմյանց նկատմամբ , ավելի լավ են ծանոթանում դիմացինի մտավոր ընդունակություններին, բացասական կողմն այն է ,որ մեծ խմբերով աշխատելու ժամանակ աշակերտներից ոմանք կարող են դուրս մնալ ուշադրության կենտրոնից :
2. « Պրոբլեմային ուսուցման» մեթոդը օգնում է աշակերտներին ինքնուրույն կատարել վերլուծություն և վեր հանել խնդրի գաղափարը . օրինակ «ինչու է պետք օդը մաքուր պահել », « ինչ է պետք դրա համար » և այլն :
3. «Հետազոտության» մեթոդի շնորհիվ ձեռք են բերում ինքնուրույնություն :Կատարում են փորձեր,դիտումներ ,այս ամենը օգնում է երեխայի տրամաբանության զարգացմանը երեխան դառնում է ավելի պատրաստակամ ,ուշադիր , նպատակասլաց ու ընկերասեր :

ԳԼՈՒԽ 2

## ԴՊՐՈՑԱՀԱՍԱԿ ԱՆՁԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՎԱՐՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կրտսեր դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է , որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի շրջանի ,երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել ,պատասխանատու լինել , տարբեր պահանջներ իրականացնել :

Կրտսեր դպրոցականների մոտ ձևավորվում է ճիշտ վերաբերմունք ուսման նկատմամբ: Նրանք դեռ չեն հասկանում, թե ինչու պետք է սովորեն: Բայց շուտով պարզվում է, որ ուսումը աշխատանք է, որը պահանջում է կամային ջանքեր, ուշադրության մոբիլիզացում, ինտելեկտուալ ակտիվություն և ինքնազսպում: Եթե երեխան սովոր չէ սրան, ապա նա հիասթափվում է և բացասաբար վերաբերվում սովորելուն: Որպեսզի դա տեղի չունենա, ուսուցիչը պետք է երեխայի մեջ սերմանի այն միտքը, որ ուսուցումը տոն չէ, խաղ չէ, այլ լուրջ, լարված աշխատանք, բայց շատ հետաքրքիր, քանի որ դա թույլ կտա. Սովորել շատ նոր, զվարճալի, կարևոր, անհրաժեշտ բաներ: Կարևոր է, որ ուսումնական աշխատանքի ինքնակազմակերպումն ամրապնդի ուսուցչի խոսքերը:

Սկզբում տարրական դասարանների աշակերտները լավ են սովորում՝ առաջնորդվելով ընտանիքում ունեցած փոխհարաբերություններով, երբեմն երեխան լավ է սովորում՝ հիմնվելով թիմի հետ հարաբերությունների վրա: Մեծ դեր է խաղում նաև անձնական դրդապատճառը՝ լավ գնահատական ստանալու ցանկությունը, ուսուցիչների և ծնողների հավանությունը: Սկզբում նրա մոտ հետաքրքրություն է առաջանում բուն կրթական գործունեության գործընթացի նկատմամբ՝ չգիտակցելով դրա նշանակությունը: Միայն այն բանից հետո, երբ առաջանում է հետաքրքրություն սեփական կրթական աշխատանքի արդյունքների նկատմամբ, ձևավորվում է հետաքրքրություն կրթական գործունեության բովանդակության և գիտելիքների ձեռքբերման նկատմամբ: Այս հիմնադրամը պարարտ հող է կրտսեր դպրոցականների մոտ սոցիալական բարձր կարգի ուսուցման մոտիվների ձևավորման համար՝ կապված ակադեմիական գործունեության նկատմամբ իսկապես պատասխանատու վերաբերմունքի հետ: Կրթական գործունեության բովանդակության և գիտելիքների ձեռքբերման նկատմամբ հետաքրքրության ձևավորումը կապված է դպրոցականների հետ, ովքեր զգում են իրենց ձեռքբերումներից բավարարվածության զգացում:

Եվ ամրապնդվում է հավանության այս զգացումը, ուսուցչի գովեստը, ով շեշտում է ամեն, նույնիսկ ամենափոքր հաջողությունը, ամենափոքր առաջընթացը: Ավելի

երիտասարդ դպրոցականները հպարտության զգացում են ապրում, հատուկ վերելք են ապրում, երբ ուսուցիչը գովաբանում է նրանց: Ուսուցչի դաստիարակչական մեծ ազդեցությունը կրտսերների վրա պայմանավորված է նրանով, որ ուսուցիչը երեխաների դպրոցում գտնվելու հենց սկզբից դառնում է նրանց համար անվիճելի հեղինակություն: Ուսուցչի հեղինակությունը տարրական դասարաններում դասավանդման և կրթության կարևորագույն նախապայմանն է:
Տարրական դպրոցական տարիքում հիշողության տարիքային բնութագրերը զարգանում են ուսուցման ազդեցության տակ: Ամրապնդվում է բանավոր-տրամաբանական, իմաստային մտապահման դերն ու տեսակարար կշիռը, և զարգանում է հիշողությունը գիտակցաբար կառավարելու և դրա դրսևորումները կարգավորելու կարողությունը: Առաջին ազդանշանային համակարգի գործունեության տարիքային հարաբերական գերակշռության պատճառով ավելի երիտասարդ դպրոցականների մոտ տեսողական-փոխաբերական հիշողությունն ավելի զարգացած է, քան բանավոր-տրամաբանական հիշողությունը: Նրանք ավելի լավ են հիշում, ավելի արագ և ավելի ամուր պահում կոնկրետ տեղեկատվություն, իրադարձություններ, անձինք, առարկաներ, փաստեր իրենց հիշողության մեջ, քան սահմանումները, նկարագրությունները, բացատրությունները: Ավելի երիտասարդ դպրոցականները հակված են մեխանիկական անգիր սովորելու՝ առանց տվյալ նյութի իմաստային կապերի իմացության:
Տարրական դպրոցական տարիքում երևակայության զարգացման հիմնական միտումը վերստեղծվող երևակայության կատարելագործումն է: Այն կապված է նախկինում ընկալվածի ներկայացման կամ պատկերների ստեղծման հետ՝ համաձայն տվյալ նկարագրության, դիագրամի, գծագրի և այլն: Վերստեղծվող երևակայությունը բարելավվում է իրականության ավելի ճիշտ և ամբողջական արտացոլման շնորհիվ: Զարգանում է նաև ստեղծագործ երևակայությունը՝ որպես նոր պատկերների ստեղծում՝ կապված անցյալի փորձի տպավորությունների վերափոխման, վերամշակման, դրանք նոր համակցությունների մեջ համատեղելու հետ:
Ուսուցման ազդեցության տակ աստիճանական անցում է տեղի ունենում երևույթների արտաքին կողմի իմացությունից դեպի դրանց էության իմացություն: Մտածողությունը սկսում է արտացոլել առարկաների և երևույթների էական հատկությունները և բնութագրերը, ինչը հնարավորություն է տալիս կատարել առաջին ընդհանրացումները, առաջին եզրակացությունները, անել առաջին անալոգիաները և կառուցել տարրական եզրակացություններ: Այս հիման վրա երեխան աստիճանաբար սկսում է ձևավորել տարրական գիտական հասկացություններ: Վերլուծական-սինթետիկ գործունեությունը տարրական դպրոցական տարիքի սկզբում դեռ շատ տարրական է, այն հիմնականում

տեսողական և արդյունավետ վերլուծության փուլում է՝ հիմնված օբյեկտների անմիջական ընկալման վրա: Կրտսեր դպրոցական տարիքը բավականին նկատելի անհատականության ձևավորման տարիքն է: Բնութագրվում է մեծահասակների և հասակակիցների հետ նոր հարաբերություններով, խմբերի մի ամբողջ համակարգում ընդգրկվածությամբ, գործունեության նոր տեսակի մեջ՝ ուսուցմամբ, որը մի շարք լուրջ պահանջներ է դնում աշակերտի առջև: Այս ամենը որոշիչ ազդեցություն ունի մարդկանց, թիմի, ուսուցման և նրանց հետ կապված պարտականությունների նոր համակարգի ձևավորման և ամրապնդման վրա, ձևավորում է բնավորություն, կամք, ընդլայնում է հետաքրքրությունների շրջանակը և զարգացնում կարողությունները: Տարրական դպրոցական տարիքում դրվում է բարոյական վարքի հիմքը, սովորում են բարոյական նորմերն ու վարքի կանոնները, սկսում է ձևավորվել անհատի սոցիալական ուղղվածությունը: Ավելի երիտասարդ դպրոցականների բնավորությունը տարբերվում է որոշ առանձնահատկություններով. Առաջին հերթին նրանք իմպուլսիվ են. նրանք հակված են անմիջապես գործելու անմիջական ազդակների ազդեցության տակ, առանց մտածելու և առանց կշռադատելու բոլոր հանգամանքները, պատահական պատճառներով: Պատճառը ակտիվ արտաքին լիցքաթափման անհրաժեշտությունն է՝ վարքի կամային կարգավորման տարիքային թուլությամբ: Տարիքի հետ կապված հատկանիշը նաև կամքի ընդհանուր բացակայությունն է: Կրտսեր դպրոցականը դեռևս չունի նպատակի համար երկարատև պայքարի, դժվարություններ ու խոչընդոտներ հաղթահարելու մեծ փորձ: Նա կարող է հանձնվել, եթե ձախողվի, կորցնի հավատը իր ուժեղ և անհնարին կողմերի նկատմամբ: Հաճախ նկատվում է քմահաճություն և համառություն: Դրանց սովորական պատճառը ընտանեկան դաստիարակության թերություններն են: Երեխան սովոր էր, որ իր բոլոր ցանկություններն ու պահանջները բավարարվում էին, նա ոչ մի բանում մերժում չէր տեսնում: Քմահաճությունն ու համառությունը երեխայի բողոքի յուրօրինակ ձևն են այն խիստ պահանջների դեմ, որոնք դպրոցը դնում է իրեն, իր ուզածը հանուն կարիքների զոհաբերելու անհրաժեշտության:[ 4. ]

Այս տարիքի երեխայի զարգացման հիմնական բնութագրերից է այն ,որ թեև կտրուկ փոխվում է գործունեության հիմնական ձևը , դեռևս պահպանվում է խաղալու պահանջմունքը :Այդ իսկ պատճառով դպրոցական կյանքի սկզբնական շրջանում չափազանց կարևոր է ուսումնական գործընթացում խաղային էլեմենտների առկայությունը ,ինչը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը ուսման հանդեպ : Մեծ է նաև շարժվելու պահանջմունքը ,հետևաբար , ուսուցիչը ուսումնական գործընթացը կազմակրպելիս պետք է կիրառի շարժողական խաղեր ,որոնք նպաստում են երեխայի ուշադրության զարգացմանը ,կենտրոնանալու կարողությանը: Ողջ համակարգում կարևոր դեր են խաղում սոցիալական

դրդապատճառների ձևավորումը , որը ի հայտ է գալիս 2-3 դասարաններում : Աշակերտի համար կարևորվում են ուսուցչի գովասանքը ,գնահատականը ,ավելի ուշ հասակակիցների կարծիքը իր անձի վերաբերյալ :Այս ամենը նպաստում է երեխայի կողմից սոցիալական իր նոր դերի գիտակցմանը , իր ես-ի ինքնահաստատմանը : Երեխայի դրդապատճառների առաջացմանը ,հետաքրքրության պահպանմանը ,ես-ի ինքնահաստատման գործընթացում չափազանց կարևորում է ուսուցչի դերը:
Ուսումնական գործընթացում գիտելիքների ,հմտությունների ,կարողությունների ձեռքբերումը ենթադրում է աշակերտի ինքնակառավարում ,ինչը հնարավոր է իրականացնել լավ զարգացած կամածին ուշադրության դեպքում :Առաջնային պլան է մղվում նաև մտածողության զարգացումը ,այն դառնում է առավել տրամաբանական, ինքնուրույն ,ճկուն : Կրտսեր դպրոցական տարիքում ինտենսիվ զարգանում և հարստանում է երեխայի խոսքը : Ուսուցիչը կարող է օժանդակել այս գործընթացին՝ ապահովելով հարուստ խոսքային միջավայր, գրքերի ընթերցում , ֆիլմերի դիտում ,խոսքի ունկնդրում ,ստեղծելով դասաժամերին արտահայտվելու և շփվելու հնարավորություններ ,ձևավորելու բավարար բառապաշար , ձևավորելով գեղեցիկ խոսք օգտագործելու պահանջմունք և այլ : Այս տարիքում նաև ձևավորվում է գրավոր խոսքը , որը բավականաչափ ծանր , երկարատև և կամային ճիգեր պահանջող գործունեություն է :
Կրտսեր դպրոցական տարիքում երեխաները ունենում են հետևյալ ձեռքբերումները ՝

- Իմացական ոլորտի զարգացում
- Աֆեկտիվ- պահանջմունքային նոր մակարդակի ձևավորում, ինչը թույլ է տալիս գործել ոչ թե անմիջականորեն ,այլ առաջնորդվելով հստակ գիտակցված նպատակներով , բարոյական նորմերով և արժեքներով :
- Հարաբերականորեն կայուն վարքաձևերի ձևավորում
- Երեխայի սոցիալական ուղղվածության զարգացում : [5]
  Դաստիարակությունը ՝
- Անձնավորության նպատակաուղղված ձևավորման գործընթաց է
- Ավագ սերունդների կողմից նոր սերունդներին հասարակական- պատմական փորձի փոխանցման գործընթացն է ՝ նրանց կյանքի և աշխատանքի նախապատրաստելու նպատակով ,որն անհրաժեշտ է հասարակության հետագա զարգացումն ապահովելու համար :
- Նոր սերնդին հասարակական – պատմական փորձի փոխանցման գործունեությունն է, մարդու գիտակցության և վարքի վրա պլանաչափ և նպատակասլաց ներգործությունների համակարգը:

- Մարդու ֆիզիկական և հոգևոր ուժերի , նրա աշխարհայացքի , բարոյական կերպարի , գեղագիտական իդեալների ու ճաշակի նպատակաուղղված ձևավորումն է :

Ուսուցումը `

- Հասարակական – պատմական փորձի նպատակաուղղված փոխանցման գործընթացն է գիտելիքների ,կարողությունների և հմտությունների ձևավորման կազմակերպումը:
- Կրթություն ստանալու հիմնական ուղին է: Սովորեցնողների և սովորողների համատեղ գործունեությունը:
- Կրթությունը `
- Աշակերտների կողմից գիտական գիտելիքների համակարգի և իմացական կարողությունների և հմտությունների տիրապետման և դրանց հիման վրա անձնավորության աշխարհայացքի ,բարոյական և այլ որակների ձևավորման , նրա ստեղծագործական ուժերի և ընդունակությունների զարգացման գործընթացն է ու արդյունքը :
- Բնության , հասարակության և մարդու մասին գիտելիքների որոշակի մակարդակի:[2,էջ 142]

  «Ճիշտ դաստիարակությունը կոչված է ներդաշնակել մարդկանց ընդունակություններն ու պահանջմունքները »: [2,էջ 143]

  Դաստարակություն ասվածը չի կաղապարվում միայն դպրոցի պատերի ներսում , այն երկարատև ու ակտիվ գործընթաց է , որը իրականացվում է թե՛ տանը ,թե՛ դպրոցում :Դաստիարակության սերմերը ավելի ցայտուն են երևում հետագայում:

  Ըստ Ի. Ֆ. Խարլամովի ՝ դաստիարակության մեթոդ ասելով պետք է հասկանալ դաստիարակչական աշխատանքի այն առանձնահատուկ եղանակներն ու հնարները ,որոնք օգտագործվում են աշակերտների բազմազան գործունեության կազմակերպման գործընթացում ՝ նրանցում զարգացնելու համար համապատասխան պահանջմունքներ և դրդապատճառներ ,հայացքներ ու համոզմունքներ ,մշակելու վարքի հմտություններ ու սովորություններ ,ինչպես և վարքի սրբագրում ու կատարելագործում ՝ անձնային հատկությունների ու որակների ձևավորման նպատակով :

Ահա այդ եղանակները ՝ համոզում , դրական օրինակ , վարժեցում (ընտելացում),հավանություն տալ ,պարսավանք ,պահանջ ,հսկողություն վարքի նկատմամբ ,գործունեության ուրիշ տեսակների մեջ ընդգրկելը :

Ըստ Ի. Պ. Պոդլասիի ՝ « Դաստիարակության մեթոդը սաների գիտակցության, կամքի, զգացմունքների ու վարքի վրա ներգործելու եղանակներն են ՝ դաստիարակության նպատակին համապատասխանող որակներ ձևավորելու համար »: [ 2,էջ 147]

Եթե դաստիարակությունը մարդու գործունեության շնորհիվ նրանում իրականացվող փոփոխությունների գործընթացն է ,ուրեմն , կան փոփոխություններ ,որոնք նախատեսվում են և այս կամ այն չափով իրականացվում հատկապես այդ նպատակով կազմակերպված գործունեությամբ :Օրինակ ՝ ճշտապահությամբ աչքի չընկնող մարդու մեջ այդ որակը ձևավորելու համար անհրաժեշտ է լինում նրան ընդգրկել այնպիսի գործունեության կամ արարքների կատարման մեջ ,որոնք պահանջում են արտակարգ ճշտապահություն ,և ամեն մի խախտում իսկույն ակնհայտ է դառնում իր հետ բերելով պատասխանատվություն պատճառելով տհաճ ապրումներ՝ ստացող խրախուսանքների շնորհիվ ևս:

Դպրոցականների դաստիարակության մեթոդներ են կոչվում այն բոլոր մեթոդական հնարների համակարգը ,որով դաստիարակը նախ՝ սովորողների գիտակցության մեջ ռաջացնում է իր նպատակին հասնելու համար նախատեսված ուսումնական գործունեության աշակերտական նպատակ ,որն էլ առաջացնում է այդ գործունեությունը ,և ապա ՝ կառավարում դա մինչև մանկավարժական և աշակերտական նպատակներին հասնելը :

Ընդհանրապես մեթոդը հունարեն բառ է և նշանակում է ինչ-որ նպատակին հասնելու ,խնդիր լուծելու եղանակ , իրականության տեսական կամ գործնական յուրացման հնարների միագումար : Ի տարբերություն մանկավարժականի ՝ մարդկային գործունեության համարյա բոլոր հնարները ապահովում են սուբյեկտի և օբյեկտի այնպիսի հարաբերակցություն ,որտեղ միշտ էլ սուբյեկտն է ակտիվ ,իսկ օբյեկտը սուբյեկտի ներգործությունները կրողն է ,նրան ենթարկվողը : [ 2, էջ 151]

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

Սեփական փորձից ելնելով կարող եմ  նշել ,որ երեխաները դասաժամերին առավել պատրաստակամ և ակտիվ են լինում ,եթե դասապրոցեսը ընթանում է դիդակտիկ կամ խաղային մեթոդների միջոցով  :

Ես և շրջակա աշխարհը  առարկայի ուսումնասիրման շնորհիվ աշակերտը ձեռք է բերում `

- Հետաքրքրասիրություն
- Պատասխանատվություն
- Պարտաճանաչություն
- Ընկերասիրություն
- Հոգատարություն բնության և շրջակա միջավայրի հանդեպ:

ԴԱՍԻ ՊԼԱՆ

| | |
|---|---|
| Դասարան | 4-րդ |
| Ուսուցիչ | Եվա Գրիգորյան |
| Առարկա | Ես և շրջակա աշխարհը |
| Թեմա | Հայաստանի Հանրապետություն |
| Նպատակը | 1. Սովորեցնել՝ հետազոտական աշխատանք կատարելու ,առցանց գործիքներից օգտվելու, եզրակացություն և սեփական վարկած արտահայտելու, թեմային առնչվող համապատասխան նյութ ընտրելու հմտություններ և կարողություններ:<br>2. Զագացնել՝ բառապաշարը, բանավոր և գրավոր խոսքը, վերլուծելու, համեմատելու,համադրելու, դատողություններ և |

| | |
|---|---|
| | եզրակացություններ անելու կարողությունները, ինքնաարտահայտման հմտությունները:<br>3. Սովորողները կճանաչեն և կնկարագրեն Հայաստանի Հանրապետությունը, ՀՀ պետական խորհրդանիշները, հայ ժողովրդի ամենահայտնի գործիչներին՝ գրողներ, գիտնականներ, նկարիչներ, երաժիշտներ, ազգային հերոսներ: |
| Ակնկալվող վերջնարդյունքները | Աշակերտների մոտ ձևավորել առաջադրանքը համագործակցելով կատարելու հմտություններ: Ցույց տալ խմբային աշխատանքի առավելությունները: Կարողանալ գնահատել իր և ընկերոջ աշխատանքը:<br>Զարգացնել կրթական առցանց Գործիքներից օգտվելու կարողությունները: |
| Կիրառված մեթոդիկա | Հարցարան, դիդակտիկ նյութեր: |
| Խթանում | Դասն ամփոփում ենք «Պրիզմա» մեթոդի միջոցով և գիտելիքներն ամրապնդում ենք https://quizizz.com/ խաղի միջոցով: |
| Ամփոփում | Ամփոփիչ հարցերով<br>Կատարել անդրադարձ |
| Արժևորում | Գնահատում ենք նոր նյութի կարևորությունը և արժևորում այն: |

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թեման ուսումնասիրելով եկա այն եզրահանգմանը, որ այս առարկան տարրական դպրոցում դասավանդվելով ապահովում է բարձր որակ՝ անձնավորության ձևավորման հարցում :Տարաբնույթ մեթոդների կիրառությունը դասապրոցեսը դարձնում է ավելի հետաքրքիր ու արդյունավետ , երեխան ինքնուրույն է փնտրում հանձնարարության պատասխանը ,ուսումնասիրում է ,քննարկում և արդյունքում ձեռք է բերում գիտելիքներ, անձնային և բարոյական որակներ:

Աշակերտները ճանաչում են իրենց շրջակա միջավայրը ,իրավունքներն ու պարտականությունները:

Ես և շրջակա աշխարհը առարկայի դասավանդման շրջանակներում աշակերտը ձեռք է բերում պատասխանատու վարք , գիտակցում է իր դերը ծննդավայրի բարելավման գործում, գնահատում է ընկերական հարաբերությունների կարևորությունը դասարանում և արտաքին միջավայրում:

Առարկան նպաստում է երեխաների ՝ ճանաչողության ,մտածողության , հիշողության , ուշադրության զարգացման հարցում:

Կրտսեր դպրոցականը հասակը լավագույն տարիքն է համագործակցության, փոխըմբռնման, մարդու իրավունքների հիմնախնդիրները հասկանալու համար: Դա մարդու կյանքում սոցիալական ինքնագիտակցության աճի ժամանակաշրջանն է, և անհրաժեշտ է, որ հենց այս տարիքում ուսումնական գործընթացում քննարկման հիմնական թեմա դառնան յուրաքանչյուրի նկատմամբ արդարացի վերաբերմունքի, սեփական արժանապատվության զգացումի, հանդուրժողականության, շրջապատի մարդկանց նկատմամբ բարյացակամության ձևավորմանն ուղղված հարցերը: Երեխայի համար կարևոր է հենց այս տարիքում ընդունված լինել կոլեկտիվի կողմից, լինել նրա լիիրավ անդամը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բաբանսկի Յու. Կ. «Մանկավարժություն» Երևան լույս 1986 թ. մաս I

2. Մանուկյան Սերգեյ «Ընդհանուր մանկավարժություն» Երևան , 2005 թ .

3. Հանրակրթության պետական չափորոշիչներ

4. https://cloud.mail.ru/attaches/16974577480731549200%3B0%3B1?folder-id=0&x-email=evagrigoryan1998%40mail.ru&cvg=f

5. https://cloud.mail.ru/attaches/16974559390038187514%3B0%3B1?folder-id=0&x-email=evagrigoryan1998%40mail.ru&cvg=f

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

***ԹԵՄԱ՝*** Ոչ ստանդարտ դասերը մայրենիի դասընթացում

***ԿԱՏԱՐՈՂ՝*** Անուշ Դավթյան

***ՂԵԿԱՎԱՐ՝*** մ. գ. թ. Լ. Միրաբյան

***ՎԱՆԱՁՈՐ 2023***

## ՈՉ ՍՏԱՆԴԱՐՏ ԴԱՍԵՐԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Ներածություն……………………………………………………………………………….2

Գլուխ 1. Դասի տիպերը………………………………………………………………………4

1.1 Ավանդական և ոչ ստանդարտ դասերի տարբերությունը…………………………..4

1.2.Դասի ոչ ստանդարտ ձևերը………………………………………………………..5

Գլուխ 2. Ոչ ստանդարտ դասերին կիրառվող մեթոդները………………………………..7

2.1. Ոչ ստանդարտ դասի պլան………………………………………………………….14

Եզրակացություն…………………………………………………………………………...16

Գրականության ցանկ……………………………………………………………………..17

## Ներածություն

**Թեմայի արդիականությունը:** Այս թեման արդիական է, որովհետև այսօր ուսուցչից պահանջվում է լավագույն մեթոդների օգնությամբ աշակերտներին զինել տարրական հմտություններով ու գիտելիքներով: Այլևս բավարար չէ երեխաների նկատմամբ ուսուցչի ջերմ ու սիրառատ վերաբերմունքը, ոչ էլ սոսկ ըմբռնման, անձնական նախընտրության կամ ավանդական մտածելակերպի հիման վրա դասավանդման որևէ մեթոդի կիրառման հիմնավորումը: Ժամանակակից ուսուցիչները պարտավոր են կիրառել դասավանդման այնպիսի մեթոդներ և հնարներ, որոնց արդյունավետության մեջ համոզվել են գործնականում: Ուսուցիչը պետք է պատրաստ լինի հնարավորինս մեծ թվով անակնկալների, պատրաստի օրինակներ ունենա և կարողանա դրանք օգտագործել կամ ուշադրություն գրավելու, կամ որոշակի գաղափարներ լիարժեք բավարարելու համար՝ կախված աշակերտի արձագանքից:

**Նպատակը:** Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ոչ ստանդարտ դասերի միջոցով սովորողների ուսումնական գործընթացը խթանող գործոնները:

**Խնդիրները:**

1. Նկարագրել ոչ ստանդարտ դասերի պլանավորման և իրականացման գործընթացը տարրական դասարաններում:
2. Վերլուծել ուսուցման ակտիվ, փոխներգործուն մեթոդների կիրառման առանձնահատկությունները և դրանց դրական ազդեցությունը ոչ ստանդարտ դասերում:
3. Նկարագրել ոչ ստանդարտ իրավիճակներում սովորողների տեսակետը, արձագանքը, իրավիճակին համապատասխան ճիշտ որոշումներ կայացնելու հմտությունները:

Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, հիմնական մասից՝ երկու գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից:

## Գլուխ 1. Դասի տիպերը:

### 1.1 Ավանդական և ոչ ստանդարտ դասերի տարբերությունը:

Եթե մենք սովորեցնենք այնպես, ինչպես սովորեցրել ենք երեկ, ապա մենք երեխաներից կգողանանք նրանց վաղվա օրը:

Ջոն Դյուի

Այլ ընտրանքային դասերը պետք է լինեն ստանդարտից դուրս, ունենան հետևյալ սկզբունքները.

- Լինեն ոչ ալգորիթմային, գործողությունների կարգը նախապես չպետք է հստակեցված լինի:
- Պետք է լինի բարդ: Ճանապարհը տեսանելի չլինի:
- Երբեմն ներկայացվի բազմակի իրավիճակներ, որոնցից յուրաքանչյուրնունենա իր արժեքն ու նպատակները՝ մեկ լուծում գտնելու փոխարեն:
- Սեփական մտքերի ինքնակառավարումը պարտադիր է:
- Պահանջվում է բազմաթիվ չափանիշների կիրառում, որոնք երբեմն հակասության մեջ են գտնվում մեկը մյուսի հետ:
- Պահանջվում է ջանքեր, իսկայական մտավոր աշխատանք, մշակում և եզրահանգում:
- Երբեմն առկա են անհստակության տարրեր: Հանձնարարության հետ կապված ոչ ամեն բան ի սկզբանե հստակ:[2]

Այսպիսի կառույցը հնարավորություն է տալիս աշակերտին սովորել մտածել, հիմնվելով սովորողների մտածողության բնածին առավել զարգացած ձևերի վրա՝ խթանվում է երեխաների օժտվածության զարգացումը, նպաստում մասնագիտական կողմնորոշմանը, ինչը միշտ էլ համարվել է մանկավարժության գերնպատակը:

## 1.2. Դասի ոչ ստանդարտ ձևերը:

Դասի ոչ ստանդարտ ձևերն են`

- դերային խաղեր,
- դաս-ներկայացում,
- հեքիաթային դիպաշարի կատարում,
- ստուգատես,
- մտապատկերների դաս,
- դաս-խաղ,
- գործարար խաղ,
- դաս-ստուգարք,
- դաս-փոխուսուցանում,
- դաս-ճանապարհորդություն,
- կլոր սեղան կամ կոնֆերանս,
- դաս-մրցույթ,
- դաս-մամլո ասուլիս,
- բաց մտքերի դասավանդման,
- դաս-երկխոսություն,
- դաս-վիկտորինա,
- խաղ «Հետաքննությունը վարում են գիտակները»,
- արդիական հարցազրույցներ,
- գիտելիքների աճուրդ,
- իմիտացիոն-դերային մոդելավորում,
- դաս-բանավեճ,
- դաս-մրցաշար,
- դերային խաղ-բիզնես,
- դաս-էվրիկա,
- դաս-դասախոսություն,
- խաղ "Կախարդական ծրար»,
- միջառարկայական ինտեգրված դաս,
- ստեղծագործական դաս և այլն:

## Գլուխ 2. Ոչ ստանդարտ դասերին կիրառվող մեթոդները:

Գոյություն ունեն ոչ ստանդարտ դասերին կիրառվող դասավանդման մեթոդների բազմաթիվ դասակարգումներ: Այն մեթոդները, որոնք հիմնված են ուսումնառության գործընթացում աշակերտների դերի վրա, բաժանվում են 3 խմբի՝




**Պասսիվ-** այստեղ աշակերտները հանդիսանում են ուսումնառության «օբյեկտ», որը պետք է յուրացնի և վերարտադրի գիտելիքների աղբյուրի՝ ուսուցչի փոխանցած նյութը: Հիմնական մեթոդներն են դասախոսությունը, ընթերցանությունը և հարցումը:

**Ակտիվ-** այստեղ աշակերտները հանդիսանում են ուսումնառության «սուբյեկտ» և կատարում են ստեղծագործ առաջադրանքներ, ուսուցչի հետ երկխոսության մեջ են մտնում: հիմնական մեթոդներն են ստեղծագործ առաջադրանքները, հարցերը ուղղված աշակերտից ուսուցչին և ուսուցչից՝ աշակերտին







**«Ինտերակտիվ» նշանակում է փոխազդող, փոխներգործող** («Inter»՝ փոխադարձ, «act»՝ գործողություն): Ինտերակտիվ դասը փոխգործակցություն է ոչ միայն դասավանդողի և սովորողի, այլև հենց իրենց՝ սովորողների միջև, ոսումնական նյութի և սովորողների միջև: Ավանդականների հետ համեմատած, ուսուցման ինտերակտիվ մոդելներում փոխվում է նաև փոխգործակցությունն

ուսուցչի հետ. նրա ակտիվությունն իր տեղն է զիջում սովորողների ակտիվությանը, ուսուցչի խնդիրն է ստեղծել պայմաններ նրանց նախաձեռնության համար:[2]

Ինտերակտիվ տեխնոլոգիաներում սովորողները հանդես են գալիս որպես լիիրավ մասնակիցներ, նրանց փորձը պակաս կարևոր չէ ուսուցչի փորձից: Վերջինս ոչ այնքան տալիս է պատրաստի գիտելիքներ, որքան խթանում է սովորողների ինքնուրույն որոնումը: Ինտերակտիվ տեխնոլոգիաներում ուսուցիչը հանդես է գալիս մի քանի հիմնական դերերով: Նրանցից յուրաքանչյուրում նա կազմակերպում է մասնակիցների փոխգործողությունը տեղեկատվական միջավայրի այս կամ այն հատվածի հետ: Իրազեկիչ-փորձագետի դերում ուսուցիչը շարադրում է տեքստային նյութը, ցուցադրում տեսաշարքը, պատասխանում մասնակիցների հարցերին, հետևում է գործընթացի արդյունքներին և այլն: Կազմակերպչի դերում նա կազմակերպում է սովորողների փոխգործակցությունը սոցիալական և ֆիզիկական շրջապատի հետ (բաժանում է խմբերի, խթանում է նրանց ինքնուրույն տվյալներ հավաքելը, համաձայնեցնում է առաջադրանքների կատարումը, մինի շնորհանդեսների նախապատրաստումը և այլն): Խորհրդատուի դերում ուսուցիչը դիմում է աշակերտների փորձին, օգնում է գտնել արդեն ձևակերպված խնդիրների լուծումը, ինքնուրույն ձևակերպել նորերը և այլն:

Վերջին տարիներին տարրական դասարանների ուսուցիչների առջև բացվում է գործունեության լայն դաշտ՝ ստեղծագործել, փորձարարել և որոնել ուսուցման իդեալական տարբերակ: Այսօր տարրական կրթությունը ձևավորում է երեխաների կրթական գործունեութունը, պահպանում է կրթական համակարգը և ճանաչողական դրդապատճառները, իրականացնում է կրթական նպատակները, վերահսկում և գնահատում է ուսումնական նպատակներն ու նրանց արդյունքները:

Կրտսեր դպրոցականն ունի տարիքային առանձնահատկություններ. անկայուն ուշադրություն, տեսողական-պատկերավոր մտածողության գերակշռում, բարձր շարժողական ակտիվություն, ձգտում խաղային գործունեության, ճանաչողական հետաքրքրությունների բազմազանություն:

Դասի ընթացքում երեխաների ուշադրությունը պահելու համար անհրաժեշտ է ակտիվ և հետաքրքիր դասաժամի կազմակերպում: Իմ դիտարկումների ընթացքում ես հանգել եմ այն եզրակացության, որ առանց շարժառիթի կամ թույլ շարժառիթով

գործունեությունը ցանկացած ձևերի և մեթոդների կիրառման դեպքում կամ ընդհանրապես չի իրականացվում, կամ ծայրաստիճան անկայուն է լինում: Թե աշակերտն իրեն ինչպես է զգում որոշակի իրավիճակում, կախված է այն ջանքերի ծավալից, որոնք նա գործադրում է իր ուսման ժամանակ: Այդ պատճառով կարևոր է, որ ուսուցման ամբողջ գործընթացը երեխայի մոտ առաջացնի ինտենսիվ և ներքին դրդում՝ լարված մտավոր աշխատանքի համար: Դպրոցականի զարգացումն ավելի ինտենսիվ և արդյունավետ է տեղի ունենում, եթե նա ներառված է գործունեության մեջ, որը համապատասխանում է նրա տարիքային առանձնահատկություններին: Եթե դրական հույզեր է առաջացնում ուսուցումը, իսկ կրթական գործընթացի մասնակիցների մանկավարժական ներգործությունը հիմնված է վստահության վրա, ապա ուժեղացնում է հույզերի և ըմբռնման դերը:[3]

Կայուն ուսումնական շարժառիթի (մոտիվացիայի) և ճանաչողական ակտիվության զարգացման նպատակով ես կիրառում եմ աշակերտների գործունեության բազմազան մեթոդներ՝ խրախուսում, հաջողության իրավիճակների ստեղծում, պրոբլեմային իրավիճակների ստեղծում, ստեղծագործական առաջադրանքների կատարում, պատասխանատվության ձևավորում, օգտակար լինելու ցանկության ձևավորում, փոխօգնության իրավիճակների ստեղծում, կոլեկտիվ աշխատանքի արդյունքների նկատմամբ հետաքրքրություն, ինքնաստուգման և փոխստուգման կազմակերպում, դրդում այլընտրանքային լուծումների որոնման:

**Հետևաբար, կրտսեր դպրոցականների ուսուցման հաջողության գրավականը կայուն ուսումնական շարժառիթի առկայությունն է:**

Իմ աշխատանքային պրակտիկայում ես կիրառում եմ նաև **նախագծերի մեթոդը,** որը ուղղված է երեխաների հետազոտական, ստեղծագործական ակտիվությանը, ունիվերսալ ուսումնական գործողությունների ձևավորորմանը, տրամաբանական-ճանաչողական մտածողության զարգացմանը:

Ի՞նչ է նախագիծը (հետազոտությունները) փոքր երեխայի համար: Դա, նախ և առաջ, կյանքի դիտարկումն է, շատ երևույթների բացահայտումը: Նախագծերի մեթոդի կիրառումը ավելի արդյունավետ է լինում, երբ ուսուցիչը հարցում է անցկացնում աշակերտների միջև, թե ինչ թեմայի շուրջ կցանկանային աշխատել:

Տնային կենդանիների կյանքին, բույսերին, մարդու գործերին հետևելը. այս ամենը ներառվում է նախագծերի մեջ: Դիտարկումների օրագիրը նախագծի հիմքն է: Այդպիսի դիտարկումների արդյունք է դառնում բանավոր պատմությունը կամ նկարը: Տնային կենդանիների վերաբերյալ նախագծերը գրեթե միշտ շատ հաջող են ստացվում՝

հագեցած հետաքրքիր պատմություններով, դիտարկումներով և հիանալի լուսանկարներով: Նախագծերի տվյալ տեսակը ես կիրառում են ես և շրջակա աշխարհը առարկայի դասերին:

**Կառուցողական նախագծերը** ես կիրառում եմ աշխատանքի ուսուցման դասերի ժամանակ: Դրանց թվին է դասվում շնորհավորական բացիկների, գրքերի էջանիշների, խաղալիքների, հուշանվերների պատրաստումը: Այսպիսի նախագծման հիմնական գաղափարը ինքնասպասարկման գաղափարն է: Այսպիսի նախագծի խնդիրը կայանում է նրանում, որ ավանդական առաջադրանքներին տրվի նախագծային ձև՝ պատրաստման հնարավոր տարբերակների մշակում, մեկ տարբերակի ընտրությունը և <u>ռեֆլեքսիան</u> աշխատանքի վերջում: Նախագծերի բարդ չլինելն ապահովում է նրանց կատարման հաջողությունը և հանդիսանում է խթան, որն աշակերտին ոգեշնչում է կատարելու ուրիշ, ավելի բարդ և ինքնուրույն նախագծեր:

Կարծում եմ՝ նախագծերի մեթոդի կիրառումը նպաստում է ներդաշնակ անձի զարգացմանը և համապատասխանում է արդի հասարակության պահանջներին.

- ընդունելու ինքնուրույն որոշումներ;
- խնդիրներ առաջադրելու և հարցեր տալու ունակություն;
- ոչ ստանդարտ, յուրօրինակ լուծումների որոնում;
- շրջապատողներին ընտրված թեմայով գրավելու, հետաքրքրելու ունակություն;
- անհատական ներուժի բացահայտում:

Շփման պահանջմունքի իրականացման համար ես կիրառում եմ **բանավեճի կամ կառուցվածքային երկխոսության մեթոդը,** ինչը ենթադրում է մասնակցողների իրավահավասարություն: Աստիճանաբար երկխոսությունը ձեռք է բերում սուբյեկտների միջև կոլեկտիվ ուսումնական գործունեության լայն շփման ձև:

Միմյանց հետ շփվելու, բանավեճ վարելու ունակությունը յուրաքանչյուր երեխայի հնարավորություն է տալիս ապրել ճշմարտության համատեղ որոնման զգացումը: Ես դպրոցականներին սովորեցնում եմ երկխոսության մեջ աշխատանքի հետևյալ կանոնները.

**կանոն 1** – պատասխանել տրված հարցին;

**կանոն 2** – յուրաքանչյուրն ունի իր տեսակետի իրավունք;

**կանոն 3** – յուրաքանչյուրն իրավունք ունի պաշտպանել ուրիշի տեսակետը;

**կանոն 4** – յուրաքանչյուրն իրավունք ունի քննադատել ուրիշի տեսակետը:[1]

Այս մեթոդի կիրառման մեջ առավել արժեքավորն այն է, որ ուսմունքը գալիս է սովորողներից, իսկ ես ուղղորդում եմ կոլեկտիվ որոնումը, բռնում եմ անհրաժեշտ միտքը և նրանց տանում եզրակացությունների: Պատասխանում են և՛ ուժեղները, և՛ թույլերը: Սովորողները չեն վախենում պատասխանի մեջ սխալ անելուց, քանի որ գիտեն, որ իրենց դասարանցիները միշտ օգնության կհասնեն, և իրենք բոլորը միասին ճիշտ որոշում կընդունեն: Աշխատանքում կարևորը շփվելու, բանավեճ վարելու ունակությունն է, լսելով յուրաքանչյուրին՝ պատասխանները հմտորեն և աննկատ դեպի անհրաժեշտ հունն ուղղելը:

Բանավեճի դրական կողմերը.

- աշակերտը ներգրավվում է ակտիվ ճանաչողական գործունեության մեջ, սովորում է մասնակցել բանավեճերին, հստակ ձևակերպել հարցը, պարզ արտահայտել մտքերը, պաշտպանել իր կարծիքը, լսել ուրիշ տեսակետներ,
- փոխազդեցության ընթացքում տեղի է ունենում դպրոցականների փոխադարձ հարստացում, քանի որ յուրաքանչյուրը հնարավորություն է ստանում դիմել պարզաբանում ստանալու համար և ստանալու ավելի ամբողջական ինֆորմացիա;
- միասին մտածելով, միմյանց վիճարկելով՝ սովորողները հասնում են քննարկվող հարցերի իրական բովանդակությանը:

Ըստ իս՝ տարրական դպրոցի կարևոր խնդիր է հանդիսանում երեխաներին հաղորդակցության տարբեր ձևեր սովորեցնելը: **Խմբային ուսուցման մեթոդի** կիրառումը շատ արդյունավետ է տվյալ խնդիրը իրականացնելիս: 1-ին և 2-րդ դասարաններում ես կիրառում եմ **զույգերով աշխատանքը:** Զույգերով աշխատանքը ես դիտում եմ որպես առաջին դասարանցիների գործնական միջանձնային հարաբերությունների ձևավորման սկզբնական փուլ:

Զույգերով աշխատանքը ուսումնական գործընթացի կազմակերպման առավել հարմարավետ ձևն է, որի նպատակն է գործնական միջանձնային հարաբերությունների ձևավորումը: Զույգերով աշխատանքը երեխաների մոտ ձևավորում է ընդհանուր նպատակն ընդունելու, պարտականությունները բաժանելու, առաջարկված նպատակին հասնելու եղանակները համաձայնեցնելու, իր գործողությունները համատեղ գործունեության մեջ գործընկերոջ գործողությունների հետ հարաբերակցելու, աշխատանքի նպատակի և արդյունքի համեմատության մեջ

մասնակցություն ունենալու ունակությունները: Զույգերով աշխատանք անցկացրել եմ առաջին դասարանցիների հետ ադապտացիոն ժամանակահատվածում:[4]

Այսպիսով, հիմք ընդունելով իմ դիտարկումները, ես կազմակերպում եմ ուսուցման գործընթացը՝ հաշվի առնելով գործնական միջանձնային հարաբերությունների զարգացման անհատական բնույթը: Հենց այդ դիրքորոշումից ելնելով եմ երեխաներին սովորեցնում պլանավորել համատեղ գործունեությունը, պայմանավորվել առաջադրանքի կատարման եղանակների մասին, իրենց գործողությունները զուգընկերոջ գործողությունների հետ հարաբերակցել, մասնակցություն ունենալ գործունեության նպատակի և արդյունքի համեմատության մեջ: Դա համատեղ գործունեության նկատմամբ դրական վերաբերմունքի առաջացման պայմանն է:

Երրորդ դասարանից սկսած՝ ես իմ պրակտիկա եմ ներմուծում սովորողների **խմբային փոխազդեցության մեթոդը:** Խմբերում աշխատանքը կազմակերպելիս անհրաժեշտ է պահպանել մի քանի պայմաններ:

1. Խումբը ստանում է հստակ և կոնկրետ ձևակերպված առաջադրանք՝ լրիվ կանխատեսելի արդյունքով:
2. Խնդրի լուծման համար անհրաժեշտ իրերի ապահովում՝ դասագրքերի, լրացուցիչ տեղեկատու գրականության տեսքով:
3. Նախապես տրվում է խմբի հաշվետվության ձևը. հարցերի գրավոր կամ բանավոր պատասխաններ, աղյուսակների լրացում և այլն:

Այստեղ յուրաքանչյուրն աշխատում է յուրաքանչյուրի համար: Քննարկման ընթացքում սովորողներն իրենց ուժերի ներածին չափով ինտելեկտուալ ներդրում են ունենում ընդհանուր գործի մեջ: Տեղի է ունենում գիտելիքների, գաղափարների փոխանակում: Փոխվում է հոգեբանական մթնոլորտը: Նույնիսկ խմբում ետ մնացող աշակերտները չեն բարդույթավորվում, նույնպես սկսում են ակտիվորեն մասնակցել քննարկմանը և առաջադրված խնդիրների լուծմանը: Կոլեկտիվ քննարկման ընթացքում երեխաները սովորում են բանավեճի, շփման և համագործակցության կուլտուրան, սովորում են լսել իրար: Յուրաքանչյուր նոր ուսումնական խնդրի հետ նրանք կատարելագործում են ճանաչողական որոնման իրենց մարտավարությունը: Նրանք իրենք են ստեղծում հաջողության իրենց բանաձևը:

Տարրական դպրոցում դասերի ժամանակ անհրաժեշտ է կիրառել ոչ ստանդարտ դասերի՝ ինտերակտիվ մեթոդներ, քանի որ դրանք թույլ են տալիս նյութը մատուցել

մատչելի, հետաքրքիր, վառ և պատկերավոր ձևով, նպաստում են գիտելիքների ավելի խորը յուրացմանը, հետաքրքրություն են առաջացնում գիտելիքների ձեռքբերման հանդեպ, ձևավորում են հաղորդակցական, անձնական, սոցիալական, ինտելեկտուալ բանիմացություն (գրագիտություն):

## 2.1.Ոչ ստանդարտ դասի պլան:
## Նախագծի մեթոդով դասի պլան

**Թեման**՝ Սուրբ Զատիկ:

**Դասարան**՝ 2-րդ (դասղեկ՝ Ա. Դավթյան)

**Մասնակիցներ**՝ 27 աշակերտ

**Նպատակը**՝ Ուսուցանել և տարածել ազգային մշակույթը՝ տոնը, ծեսը, ժողովրդական երգերը, պարերը, խաղերը:

Նպաստել հայրենասիրական դաստիարակությանը:

Զարգացնել աշակերտների ստեղծագործական միտքը:

Հարստացնել բառապաշարը:

Ծանոթացնել ծիսական տիկնիկներից Ակլատիզ և Ուտիս տատի հետ:

**Վերջնարդյունքները**՝ Կիմանան «Բուն Բարեկենդան» տոնի խորհուրդը:

Կպատրաստեն Ակլատիզ տիկնիկը:

Կծանոթանան «Սուրբ Զատիկ» տոնի պատմությանը:

Կծանոթանան հայկական խոհանոցի՝ ծիսական ուտեստների հետ:

Կերգեն և կպարեն զատկական երգեր և պարեր:

Կխաղան զատկական խաղեր:

Կցանեն ածիկ:

Կիմանան Ծառզարդի խորհուրդը, կպատրաստեն գույնզգույն ձվիկներ:

**Աջակցել են**՝ Երաժշտության ուսուցչուհի՝ Ա. Հակոբյան

«Անի» պարային համույթի պարուսույց՝ Լ. Աղաջանյան

Ծնողներ:

| Ժամկետը | Աշխատանքի բովանդակությունը | Կատարող |
|---|---|---|
| 19.02.2023թ | Այցելել ենք Վանաձորի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, մասնակցել ենք Բուն Բարեկենդանին նվիրված պատարագին և տոնական միջոցառմանը: | Ուսուցիչ, աշակերտներ, ծնողներ: |
| 20.02.2023-24.02.2023թթ | Ծանոթացել ենք Ակլատիզ տիկնիկի պատմությանը, մեր ձեռքով տեխնոլոգիայի ժամին պատրաստել ենք տիկնիկը: | Ուսուցիչ, աշակերտներ: |
| 27.02.2023-03.03.2023թթ | Ծանոթացել ենք «Սուրբ Զատիկ» տոնին, ավանդույթներին: | Ուսուցիչ, աշակերտներ: |
| 06.03.2023-10.03.2023թթ. | Ծանոթացել ենք հայկական խոհանոցի՝ զատկական ուտեստների հետ: | Ուսուցիչ, աշակերտներ: |
| 13. 03.2023-17.03.2023թթ | Ծանոթացել ենք զատկական երգերի և պարերի հետ: | Ա. Հակոբյան, Լ. Աղաջանյան, աշակերտներ: |
| 20.03.2023-24.03.2023թթ | Ծանոթացել ենք ծիսական խաղերի հետ: | Ուսուցիչ, աշակերտներ: |
| 27.03.2023-31.03.2023թթ<br>02.04.2023թ | Աճիկի ցանում:<br>Այցելել ենք Վանաձորի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, մասնակցել ենք Ծաղկազարդին նվիրված պատարագին: | Ուսուցիչ, աշակերտներ, ծնողներ: |
| 03.04.2023-07.04.2023թթ | Ծանոթացել ենք Կենաց ծառի հետ, պատրաստել ենք գույնզգույն ծվիկներ և զարդարել ենք Կենաց ծառը: | Ուսուցիչ, աշակերտներ: |
| 10.04.2023թ | Միջոցառում՝ «Սուրբ Զատիկ»: | Աշակերտներ: |

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իմ կարծիքով ոչ ստանդարտ դասերը խթանում են դասավանդման գործընթացին: Այսպիսի աշխատանքները նպաստում են սովորողների ճանաչողական ոլորտների, լեզվամտածողության և լեզվի մշակույթի յուրացման որոշակի մակարդակի, միջանձնային և ներանձնային հատկանիշների դրսևորմանը: Այն սովորողներին հնարավորություն է տալիս կառուցել իրենց պատասխանը, ոչ թե պարզապես առաջարկված տարբերակներից որևէ մեկը ընտրել:

Այսօր կրթական ոլորտը զարգանում է շատ արագ: Այժմ պետք է ապահովել սովորողների մտածողության բազմակողմանի զարգացումը, ձևավորել աշխարհայացք, դրսևորվելու հնարավորություն, որպեսզի երեխան իրեն զգա հասարակության լիարժեք անդամ: Իսկ այս ամենին չենք կարող հասնել ստանդարտ դասեր անցկացնելով: Այս տեխնոլոգիաներով հարուստ դարաշրջանում պետք է հետաքրքրություն մտցնել դասի մեջ, այն պետք է լինի հագեցած:

Ոչ ստանդարտ դասերը մայրենիի դասընթացում թույլ են տալիս նյութը մատուցել մատչելի, հետաքրքիր, վառ ու պատկերավոր ձևով: Նպաստում են գիտելիքների ավելի խորը յուրացմանը, հետաքրքրություն են առաջացնում գիտելիքների ձեռքբերման հանդեպ, ձևավորում են ստեղծագործական կարողություններ, հաղորդակցական, անձնական, սոցիալական, ինտելեկտուալ բանիմացություն:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Թորոսյան Կ., «Մայրենի 4, մեթոդական ձեռնարկ», Երևան ,2009թ.:
2. Վարդումյան Ս., Հարությունյան Լ., Ջաղինյան Ն., Վարելլա Գ. «Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ, գնահատում», Երևան, 2003:
3. Վարդումյան Ս. և ուրիշներ, «Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, 20-րդ դարի մանկավարժական տեսություններ»: (Ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար): Երևան, 2005թ.:
4. Փարսադանյան Ա., « Գիտելիքների շտեմարան», Երևան, 2003թ.
5. «Մանկական գանձարան»: Տաթև գիտակրթական համալիր:
6. Նախաշավիղ, 2015թ..: